կազմակերպում և այլն: Ուղեղային կենտրոնների կողմից իրականացվող հետազոտությունների և վերլուծությունների թեմաները սովորաբար բավականին բազմազան են և պայմանավորված են տվյալ կենտրոնի մասնագիտացմամբ և հետազոտական առաջնահերթություններով: Դրանց աշխատանքները հաճախ ունեն միջգիտակարգային բնույթ և վերաբերում են հասարակայնորեն նշանակալի հիմնախնդիրների (քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլն) լուծումների բացահայտմանը: Հետազոտությունների ակնարկը ներկայացնում է որոշակի թեմայի կամ ուսումնասիրության առարկա հանդիսացող հարցի առանձնահատկություններով: Այս գործառնություն կարելի է վերագրել նաև իշխանության մարմինների ընդունած որոշումների և նախագծերի, տարբեր նորմատիվակտերի ու ծրագրերի փորձաքննությունը, դրանց վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցումը, հայեցակարգերի և ռազմավարությունների մշակումը, դրանց իրագործման արդյունքների գնահատումը: Առավել հաճախ օգտագործվող մեթոդներից են սոցիոլոգիական և փորձագիտական հարցումները, համապատասխան մասնագետների, պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների, գիտական շրջանակների հետ խորհրդատվությունը: Նման ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվում են հետազոտության հետազոտության հաշվետվության ձևաչափով: Տարածված է նաև տարաբնույթ վարկանիշների հրապարակումը: Օրինակ՝ կանադական հայտնի Ֆրեյզերի ինստիտուտի կողմից երկրի հանրակրթական հաստատությունների կամ աշխարհի տարբեր երկրների տնտեսական ազատության մակարդակի վարկանիշավորումները⁴² կամ ամերիկյան

⁴² Տե՛ս The Fraiser Institute official website // URL: <https://www.fraserinstitute.org/>

«Ժառանգություն» հիմնադրամի կողմից իրականացվող ու հանրայնացվող Տնտեսական ազատության համաթիվը ⁴³:

Վերոնշյալի համատեքստում կարելի է համաձայնել Դ. Իվանովի դիպուկ ձևակերպման հետ, ըստ որի՝ ուղեղային կենտրոնների վերլուծական գործառնությունը, այսինքն՝ քաղաքական գործընթացի և քաղաքական իրավիճակի հետազոտությունը, կրում է հակասական բնույթ: Մի կողմից՝ ուղեղային կենտրոնները մասնակցում են քաղաքական դաշտի իրադարձությունների վերլուծությանը, իսկ մյուս կողմից՝ իրենք են ձևավորում քաղաքական իրադարձություններ՝ դրանով իսկ կառուցելով քաղաքական իրականությունը ⁴⁴:

Ինչպես նշում է Փ. Դիքսոնը, ուղեղային կենտրոններն իրականացնում են տարաբնույթ գործառնություններ, և դրանցից յուրաքանչյուրն արժանի է ուսումնասիրության, իսկ աճող հետաքրքրությունը հեռանկարային պլանավորման և ապագայի շուրջ մտորումների նկատմամբ վառ օրինակ է, որը ցուցադրում է դրանց նշանակությունն ինչպես ներկայի, այնպես էլ ապագայի համար ⁴⁵: Այդ համատեքստում նշենք, որ աշխարհի առաջատար ուղեղային կենտրոնների վերլուծական կարևոր գործառնություններն են նաև ապագայի կանխատեսումների, ինչպես նաև կանխատեսումային մոդելների մշակումը և հանրայնացումը, տարբեր գործընթացների զարգացման սցենարների և սպասվելիք մարտահրավերների համարժեք պատասխանների մշակումը կամ, այսպես կոչված, ապագայի պլանավորումը: Ինչպես

⁴³ Տե՛ս The Heritage Foundation official website // <http://www.heritage.org/index/>

⁴⁴ **Иванов Д.Ю.**, Формирования политической аналитики негосударственных аналитических центров в современной России // Дис. на соиск. уч. ст. канд. пол. н., специальность 23.00.02 – Политические институты, процессы и технологии, Санкт-Петербург, 2013, с. 29-30.

⁴⁵ **Диксон П.**, Фабрики мысли. М.: ООО «Издательство АСТ», 2004, с. 74.

ճշմարտացիորեն նշում է քաղաքագետ Ս. Յոզիաննիսյանը, ուժեղ պետություն ունի այն ազգը, որը նախապես գիտե, թե զարգացման ինչ ուղի է ընտրել և ուր է գնում: Իսկ որպեսզի նա նախապես ամբողջական պատկերացում ունենա ուժեղ պետություն դառնալու մասին, պետք է ստեղծի իր հոգածություն տակ առած ռազմավարական-ապագայ արժանական, ռազմաքաղաքական հետազոտություններով զբաղվող կենտրոններ⁴⁶: Վերջին գնահատականին ավելացնենք նաև, որ ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման շարժընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ երկրներում ուղեղային կենտրոնները, իրենց վերլուծական գործառնություններն իրականացնելով, աստիճանաբար ստանձնում են նաև քաղաքական համակարգի առանցքային բաղադրիչներին մեկի գործառնություն: Դրանք ոչ միայն մշակում են ներկայիս արտաքին և ներքին, այդ թվում՝ համաչափ և անհամաչափ սպառնալիքներին դիմագրավման մեթոդները, այլ նաև փորձում են կանխատեսել ապագան: Իսկ կանխատեսելով զարգացումների հնարավոր սցենարները, պատրաստվելով դրանց հետևանքներին, կանխելով մեզ համար հնարավոր բացասական զարգացումները, ներագդելով և ուղղորդելով գործընթացները մեզ համար ցանկալի հոլանով՝ մենք փոխում, ձևավորում և կերտում ենք առավել ցանկալի ապագան:

| Ուղեղային | կենտրոններին | կրթական |
|-----------------------|---------------------|------------------|
| գործառնություն | ենթադրում է տարբեր | թիրախային |
| խմբերի համար | ոչ | \$ որմալ կրթական |
| ծառայությունների | մատուցում և | հանրային |

⁴⁶ **Յոզիաննիսյան Ս.**, Ազգային անվտանգության գաղափարախոսություն (Ազգային անվտանգության հայեցակարգի հիմնադրողների ուղղագիծ) // Ուսումնական ձեռնարկ, Յայաստանի պետ. ճարտ. համալս., Եր., 2002, էջ 27:

քաղաքականության խնդիրների վերաբերյալ հանրության գիտելիքների հարստացմանն ուղղված գործունեությանն, այդ թվում՝ հատուկ թեմատիկ դասընթացների, սեմինարների, վարպետաց դասերի կազմակերպում:

XXI դարում այս գործառնությունը դարձել է աշխարհի քազմաթիվ ուղեղային կենտրոնների գործունեության հիմնական ուղղություններից մեկը: Կրթական ծրագրերի թեմատիկ ընտրությունը սովորաբար պայմանավորված է որոշակի ուղեղային կենտրոնի մասնագիտական կողմնորոշմամբ: Նման չֆորմալ կրթական ծրագրեր մատուցվում են պետական, քաղաքացիական ծառայողների, կուսակցությունների ներկայացուցիչների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կամ ուսանողների համար: Քիչ չեն նաև որոշակի ոլորտի մասնագետների վերապատրաստմանն ու գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված կրթական ծրագրերը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ուղեղային կենտրոններում, ուսուցման ձևերից առավել հաճախ կիրառվում են կարճաժամկետ ինտերակտիվ սեմինարները, որոնք վարում են փորձագետներ, նախկին և ներկա պետական բարձրաստիճանի պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ և գործարար միջավայրի ներկայացուցիչներ: Պետք է, սակայն, նշել, որ ներկայումս մի շարք ճանաչված ուղեղային կենտրոններ աստիճանաբար դուրս են գալիս գուտ ոչ ֆորմալ կրթական ծառայություններ մատուցող հաստատության կարգավիճակից, և նման դեպքերում բավականին աղոտ է դառնում ուղեղային կենտրոնների ու ավանդական բարձրագույն կրթական հաստատությունների միջև սահմանը:

Այսպես, աշխարհում ամենահայտնի ուղեղային կենտրոններից մեկի՝ ամերիկյան ՌԵՆԴ կորպորացիայի (RAND Corporation) կազմում գործող Pardee RAND Graduate School-ը 1970 թվականից Վերհամարվում է ԱՄՆ-ում հանրային քաղաքականության բնագավառում ամենախոշոր դոկտորական ծրագիր (Ph.D.) իրականացնող հաստատությունը: Ըստ վերջինիս պաշտոնական կայքում ներկայացված տեղեկատվության՝ այն նաև ԱՄՆ-ի հանրային քաղաքականության հետազոտական հաստատությունների բազայի վրա հիմնված միակ նման ծրագիր իրականացնող կազմակերպությունն է⁴⁷: Այստեղ հարկ է հիշատակել նաև Մեծ Բրիտանիայի ամենահայտնի Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի (Chatham House) համակարգում գործող Առաջնորդության և միջազգային հարաբերությունների՝ Եղիսաբեթ II թագուհու ակադեմիան, որը շահառուների համար միջազգային հարաբերությունների ոլորտի վերաբերյալ երկարաժամկետ գիտակրթական նախագծեր իրականացնող եզակի հարթակ է⁴⁸: Ինչ վերաբերում է հետխորհրդային տարածքի երկրների ուղեղային կենտրոններին, ապա պետք է նշել, որ հանրային քաղաքականության բնագավառում մասնագիտացված ուղեղային կենտրոնները նման ձևաչափի երկարաժամկետ պարբերական ծրագրեր չեն իրականացնում: Առավել կարճաժամկետ ձևաչափի միջազգային բնույթի դասընթացներից թերևս կարելի է առանձնացնել ՌԴ նախագահին առընթեր գործող Ռազմավարական հետազոտությունների ռուսաստանյան ինստիտուտի ամենամյա Երիտասարդ քաղաքագետների միջազգային դպրոցը⁴⁹: Այնուամենայնիվ, հետխորհրդային տարածքի

⁴⁷ Տե՛ս Pardee RAND Graduate School official website // URL: <http://www.prgs.edu/about.html>

⁴⁸ Տե՛ս The Queen Elizabeth II Academy for Leadership in International Affairs // URL: <https://www.chathamhouse.org/academy>

⁴⁹ Տե՛ս Российский институт стратегических исследований // URL: <https://riss.ru/>

Երկրներին հիմնականում տնտեսագիտական կամ պաշտպանական ոլորտի հետազոտությունների բնագավառում դիրքավորված որոշ ուղեղային կենտրոններ վերածվել են նաև կրթական ծրագրերի րականացնող հեղինակավոր հաստատությունների: Օրինակ՝ ՌԴ-ում գործող «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանը կամ ՀՀ պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը, որոնք մի կողմից իրականացնում են ֆորմալ կրթական ծրագրեր, սակայն մյուս կողմից տնտեսագիտության, քաղաքագիտության կամ պաշտպանության բնագավառներում իրենց երկրներում դասվում են ամենաճանաչված ուղեղային փորձագիտական կենտրոնների շարքում, որոնց մշակումներից հաճախ օգտվում են համապատասխան քաղաքականություն մշակողներն ու իրականացնողները:

Հաղորդակցական գործառնություն ուղեղային կենտրոններին երրորդ առանցքային գործառնություն է, որի դեպքում հաստատությունը հանդես է գալիս որպես.

- միջևորդ կառավարության և ակադեմիական հանրության, քաղաքական վերնախավի ու քաղաքացիական հասարակության կառույցների և հասարակության միջև (հասարակական լսումների կազմակերպում, որոնք հանրային կարևորություն ունենցող խնդիրներում հասարակական մասնակցության ապահովման, բնակչության խնդիրներն իշխանություններին հասցնելու առավել արդյունավետ ձևերն են),

- միջևորդ ակադեմիական հանրության և բիզնեսի միջև (հանդիպումների կազմակերպում, երկխոսության մշակույթի ձևավորում, ի հայտ եկած հիմնախնդիրների քննարկում և համատեղ

մոտեցնում ենք ի, ծրագրերի մշակում),

- միջնորդ փորձագիտական հանրություն և ՉԼՄ-
ների միջև (փորձագետ - լրագրող կապի ապահովում,
մամուլի ասուլիսների կազմակերպում, մեկնաբա-
նություններ),

- հաշվի առնելով ակադեմիական /փորձագիտական
հանրություն, գործարար-կառույցների
առաջարկությունները՝ իշխանությունների
քաղաքականության բարելավման գործում հանդես է
գալիս փորձագիտական գնահատականներով:

Ինչպես նշում է Ջ. Մաք-Գանը, այս
հաստատությունները հաճախ գործում են որպես
կամուրջ ակադեմիական և քաղաքականության
ձևավորման համար պատասխանատու շրջանակների
միջև, որպես անկախ ձայն ծառայում են հանրային
շահին, որը քաղաքականություն ձևավորողների ու
հանրության համար կիրառական և հիմնարար
հետազոտությունները «թարգմանում է» հասկանալի,
վստահելի և ընդունելի լեզվով և ձևաչափով: Ի-
տարբերություն ժամանակավոր հանձնաժողովների
կամ հետազոտական խմբերի՝ ուղեղային
կենտրոնները, կառուցված լինելով որպես մշտական
մարմիններ, իրենց ֆինանսական և մարդկային
ռեսուրսների նշանակալի մասն ուղղորդում են
դեպի հասարակական գիտությունների
բնագավառում հետազոտություններ և հանրային
քաղաքականության առնչվող
վերլուծությունների իրականացումն ու
հրապարակումը: Այս կազմակերպությունների
հիմնական արդյունքներն են գրքերը,
մենագրությունները, զեկուլյցները, քաղաքական
համառոտագրերը, գիտաժողովները, սեմինարները,
պաշտոնական ճեպագրույցներն ու
քաղաքականության ձևավորման համար պատասխա-
նատուների, կառավարության ներկայացուցիչների

և առանցքային շահագրգիռ կողմերի հետ ոչ պաշտոնական քննարկումները⁵⁰:

Հարկ է նշել, որ ուղեղային կենտրոններն այն եզակի հարթակներն են, որտեղ հաճախ միավորվում են հասարակության ու պետության զարգացմամբ մտահոգ և կառավարման արվեստին տիրապետող փորձառու նախկին պետական պաշտոնյաները, գործարարները, ինտելեկտուալները, այսինքն՝ համապատասխան խորքային գիտելիքների և պրակտիկայի տիրապետող մարդիկ: Իսկ նմանատիպ գույքակցումը որպես հետևանք դյուրացնում է ակադեմիական և փորձագիտական հանրության համագործակցությունը պետական կամ տեղական իշխանությունների հետ: Ուղեղային կենտրոններում փորձառության, տեսական և գործնական գիտելիքների սիներգիայի արդյունքում կյանքի են կոչվում որոշակի գաղափարներ, և մշակվում են առաջարկություններ՝ հասարակական-քաղաքական ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին նպաստելու նպատակով: Դրանք տարբեր ոլորտների բարեփոխման ուղղությամբ իրականացվող աշխատանքների ինքնատիպ հանգուցային կետեր են, որտեղ հաճախ այս կամ այն չափով ներգրավվում են տարբեր ոլորտների փորձառու մասնագետները:

Բացի դրանից, քաղաքականության փոփոխման մեջ էական դեր է հատկացվում գիտելիքին՝ որպես համակարգված և մտածված տեղեկատվության, իսկ որպես դրա կրողներ՝ գիտնական-վերլուծաբաններին և փորձագետներին: Գիտելիքը և դրա կրողները՝ տարբեր ոլորտների և գործնական կյանքին տարբեր չափով մոտ գիտնականները, դառնում են հանրային քաղաքականության ոլորտում նորարարությունների ի հայտ գալու

⁵⁰ *McGann J.*, Think Tanks and Policy Advice in the US // *Academics, Advisors and Advocates*. Rutledge, NY, 2007, p. 11.

կարևորագույն քաղաքաքաղաքի չնեղ ⁵¹:

Ուղեղային կենտրոնները կարող են խաղալ շատ ավելի ակտիվ միջնորդական դեր, իրականացնել քաղաքական հաղորդակցություն՝ կազմակերպելով երկխոսություններ միջազգային մակարդակի նշանակություն քարոզիչներին և լուծման վերաբերյալ և իրականացնելով, այսպես կոչված, «Track II Diplomacy»-ն կամ ոչ պաշտոնական դիվանագիտության գործառնությունը: Ավելորդ է նշել, որ այդ առումով ամերիկյան հայտնի մի շարք ուղեղային կենտրոններ նպաստել են ոչ միայն իրենց երկրին առնչվող, այլ նաև մի շարք գլոբալ, միջազգային նշանակություն ունեցող հակամարտություններին և հիմնախնդիրներին և լուծմանը, որի կիրառման առանձին օրինակներն առավել մանրամասն քննարկվում են այսատեսախոսությունների III գլխում:

Չարկ է նշել, որ արևմտյան քաղաքագիտական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, որ ուղեղային կենտրոններն Արևմուտքի մի շարք երկրներում առավել նկատելի տեղ են զբաղեցրել այն պատճառով, որ վերջիններս հաճախ կարող են ավելի, քան պետական վարչական համակարգը: Այսպես, Ջ. Մաք-Գանի կարծիքով ուղեղային կենտրոնները.

- առավել արդյունավետորեն են կողմնորոշված դեպի ապագան, քան պետական կառավարման ոլորտում ներգրավված հետազոտողները, որոնք աշխատում են այնպիսի պայմաններում, որտեղ հազվադեպ է խրախուսվում ստեղծագործական մոտեցումը,
- առավել հակված են առաջադրել ու քաղաքական խնդիրներ նոր փոխդասավորությունում, այն ժամանակ, երբ

⁵¹ *Сунгуров А.Ю.*, ук. соч., с. 55.

վարչարարությունը «ծաղկում է»
հաստատուն աշխատանքային գործընթացի
առավելագույնս անվտանգ կենսակարգում,

- առավել և՛ ավել և՛ կարողանում աջակցել
հետազոտողների տարբեր խմբերի միջև
համագործակցությանը, քանի որ չունեն
տվյալ ոլորտի նկատմամբ մշտական
հետաքրքրություն:

Ավելին, ուղեղային կենտրոններն աջակցում են
ինտելեկտուալ համադրությունը, որն առաջանում է
վարչական արգելքների վերացման շնորհիվ, քանի
որ դրանք.

- առավել և՛ ավել և՛ կարողանում
կառավարություններում և դրա սահման-
ներից դուրս քաղաքական վերնախավի, ՉԼՄ-
ների և հասարակության մեջ տարածել
քաղաքական հետազոտությունների
արդիական արդյունքները, քան
կառավարական հաստատությունները,
- առավել ունակ են հաղթահարել ու
համակարգային բնույթի գլոբալ քաղաքա-
կան խնդիրները,
- առավել և՛ ավել և՛ կարողանում
ուսումնասիրել ամբողջ քաղաքական
գործընթացը՝ տվյալների հավաքագրումից
մինչև գիտելիքի ստեղծում ու քաղաքա-
կանություն,
- ունեն առավել ամբողջական պատկերացում
դրված նպատակների իրականացման
միջոցների մասին, քան պետական վարչական
համակարգը, որոնք լինում են ներսից
տրոհված վարչությունների և

մասնագիտացման ոլորտների⁵²:

Ընդհանուր առմամբ, համաձայն լինելով այս մոտեցմանը, հարկ է ավելացնել, որ, ի տարբերություն վարչական ապարատի պահպանման ծախսերի, ուղեղային կենտրոնները նույնն իրականացնում են ավելի փոքր գումարի դիմաց, ինչով նպաստում են նաև պետական ծախսերի արդյունավետ վերաբաշխմանը: Բանն այն է, որ ուղեղային կենտրոնները, կախված չլինելով միայն պետական \$ինանսավորումից և ունենալով \$ինանսավորման բազմազանեցված աղբյուրներ, հնարավորություն ունեն «պահպանելու» ավելի մեծ թվով արհեստավարժ հետազոտող փորձագետների, որոնք իրականացնում են բազմաթիվ հետազոտական պատվերներ և բնականաբար իրենց մշակումների համար պետությունից պահանջում են վճարել միայն մատուցված փորձագիտական ծառայությունների դիմաց և ոչ թե վճարել իրենց աշխատակազմի պահպանման ծախսերը, ինչն ուղեղային կենտրոնը լուծում է ինքնուրույն: Այսինքն՝ պետությունը հնարավորություն է ստանում անհրաժեշտության դեպքում օգտվելու արհեստավարժ փորձագիտական ծառայություններից՝ վճարելով միայն մատուցված ծառայության գինը և իր վրա չվերցնելով հետազոտողների մշտական աշխատակազմի պահպանման բեռը:

Պետք է նշել, որ գոյություն ունեն նաև այլ հաստատություններ, որոնք նույնպես քաղաքական համակարգում իրականացնում են հաղորդակցային գործառնություն: Օրինակ, զանգվածային լրատվական միջոցները քաղաքական գործընթացի հիմնական մասնակիցներին ապահովում են քաղաքական կյանքի ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ

⁵² *McGann J.*, Tanks and the Transnationalization of Foreign Police// “The Role of Think Tanks in U.S. Foreign Policy”. U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of the U.S. Department of State), Vol. 7, N 3, 2002, pp. 16-17. URL: http://www.usembassy-mexico.gov/bbf/ej/1102_RoleThinkTanks.pdf

տարաբնույթ տեղեկատվությունը ամբ, վերնախավի և լայն հասարակություն միջև հանդես են գալիս միջնորդի դերում: Այնուամենայնիվ, քաղաքական որոշումներին ընդունման և ընտրական գործընթացում հիմնական քաղաքական դերակատարներին անհրաժեշտ է նաև այլ տեսակի՝ առավել խորքային, վերլուծված, համակարգված ու ընդգրկուն տեղեկատվություն, ինչի հիմնական աղբյուրները կիրառական հետազոտությունները և մշակումներն են, ընթացիկ քաղաքական իրավիճակի վերաբերյալ փորձագիտական գնահատականները և իրավիճակի (կամ պետություն, տարածաշրջանի և այլն) զարգացման վերաբերյալ կանխատեսումները: Քաղաքական գործընթացի հիմնական մասնակիցներին այդպիսի տվյալներ կարող են ներկայացնել փորձագիտական կազմակերպությունները⁵³: Բացի դրանից, նման փորձագիտական կառույցները ոչ միայն կարող են զտել կարևոր և առաջնային տեղեկատվությունը երկրորդայինից և ոչ պիտանի տեղեկատվությունը, այլև հնարավորություն ունեն պետական պաշտոնյաներին, քաղաքական գործիչներին և քաղաքական գործընթացում շահագրգիռ այլ անձանց (որոնք, որպես կանոն, ունեն ժամանակի սղություն) ապահովելու այնպիսի տեղեկատվությամբ, որը կլինի օբյեկտիվ, ժամանակին, համառոտ, ընկալելի, հավաստի, մատչելի, օգտակար, հիմնված փաստերի վերլուծության վրա և համակողմանի կլուսաբանի հիմնախնդիրը՝ տալով դրա վերջին փորձագիտական երաշխավորություններ:

Կարևոր է նշել նաև, որ ժողովրդավարական քաղաքական գործընթացում զբաղեցրած դիրքից և քաղաքական որոշումներին ընդունման վրա ունեցած ազդեցությունից կախված՝ առանձնացվում են

⁵³ *Зайцев Д.Г.*, укр. соч., с. 32.

ուղեղային կենտրոնների հետևյալ, առավել նեղ գործառույթները.

1. *քաղաքական ուղեգծի ձևավորում*. այս գործառույթի տակ հասկացվում է, առաջին հերթին, ընտրարշավների ընթացքում ռազմավարական քաղաքական խորհրդատվությունը, պետական ռազմավարությունների և մարտավարությունների մշակումը, ինչպես նաև այս կամ այն քաղաքական այլ ընտրանքային մոտեցման քննարկումը և առաջմղումը: Այսինքն՝ վերլուծական կենտրոնները կարող են նպաստել թեկնածուի կամ քաղաքական կուսակցության վարկանիշի ձևավորմանը, մշակել ընտրական պայքարի ռազմավարությունը, մարտավարությունը, գաղափարախոսությունը և նախընտրական ծրագիրը: Բացի դրանից, դրանք որպես հրավիրված փորձագետներ կամ վերլուծաբաններ պետական իշխանության մարմինների աշխատակազմերում մասնակցում են քաղաքական ուղեգծի, ռազմավարության մշակմանը, ինչպես նաև հանրային քննարկումների, այս կամ այն քաղաքական նախաձեռնությունների՝ առաջմղելով սեփական մշակումները:

2. *Քաղաքական ուղեգծի փորձագիտական ուղեկցում*. նախքան քաղաքական որոշմամբ սահմանված ռազմավարական ծրագրի իրականացումը կամ անմիջականորեն դրա իրականացման ընթացքում պատասխանատու կատարողների առաջի հայտեգալիս փորձաքննության և քաղաքական ուղեգծի արդյունավետության գնահատման անհրաժեշտություն: Նման պարագայում ուղեղային կենտրոնները կարող են հանդես գալ որպես անկախ սուբյեկտ (կամ յուրօրինակ աուդիտոր), որը գործում է արդեն ընդունված քաղաքական որոշման շրջանակներում, քանի որ ընդունված որոշման փորձագիտական ուղեկցումը ենթադրում է դրա

ճշգրտումն ու լրացումը, ինչն ուղեղային կենտրոնին տալիս է տվյալ որոշման իրականացման ընթացքում կամ դրանից անմիջապես առաջ և հետո ազդեցություն ունենալ ու հնարավորություն:

3. *Քաղաքական ուղեգծի տեղեկատվական ուղեկցում կամ քարոզչություն*. ուղեղային կենտրոնները կարող են հանդես գալ քաղաքական որոշումների «քարոզիչների» դերում, ըստ էության, իբրև քաղաքական գործընթացի իրենց հետ կապված սուբյեկտների «անկախ» քարոզչական բաժիններ: Այս պարագայում քաղաքական ուղեգծի վրա ազդելու ուղեղային կենտրոնների հնարավորությունը նվազագույնն է, վերջինից միայն պահանջվում է ապահովել նպաստավոր տեղեկատվական միջավայր, որը, սակայն, բնույթով ու բովանդակությամբ կտարբերվի ՉԼՄ-ների կազմակերպած տեղեկատվական հոսքերից:

Այնուամենայնիվ, ազդեցիկ լինելու համար ուղեղային կենտրոնին ամենևին անհրաժեշտ է զբաղվել քաղաքական ուղեգծի ձևավորմամբ կամ ուղեկցությամբ: Ժողովրդավարական համակարգում խոշոր և ազդեցիկ ուղեղային կենտրոնները կարող են ազդեցություն ունենալ քաղաքական ուղեգծի ձևավորման վրա՝ անկախ նրանից՝ ուղղակիորեն մասնակցում են դիտարկվող գործառնությունների իրականացմանը, թե՛ ոչ: Ծանրակշիռ և հանրությանը հայտնի (և անվստահություն վայելող) կենտրոնի կողմից վերլուծական գեկույցների հրապարակումը կարող է առաջ բերել նշանակալի հասարակական արձագանք և հանգեցնել քաղաքական ուղեգծի ճշգրտմանը⁵⁴:

Ինչպես նշում է Դ. Իվանովը, անկախ ուղեղային կենտրոններն իրականացնում են նաև քաղաքական հնարավոր հիմնախնդիրների բացահայտման

⁵⁴ *Зайцев Д.Г.*, укр. соч., с. 74-75.

գործառույթ և, ի տարբերություն պետական վերլուծական կառույցների, իրենց գործունեությունը չեն տարածում միայն որոշում կայացնող անձանց վրա, այլ փոխգործակցում են առավել լայն շրջանակի հետ⁵⁵: Այստեղ, սակայն, կարելի է որոշակիորեն չհամաձայնել Դ. Իվանովի կարծիքի հետ, քանի որ անկախ ուղեղային կենտրոնի տեսակից (անկախ կամ պետական) դրանց գործունեության ուղղությունը չի սահմանափակվում միայն քաղաքական վերնախավի կամ որոշում կայացնող անձանց վրա ազդեցություն ունենալու նպատակադրումով: Պակաս կարևոր չեն նաև հասարակական կարծիքի ձևավորման վրա ազդեցություն ունենալու հնարավորությունը, ինչը ևս քաղաքական վերնախավի վրա ազդեցություն ունենալու անուղղակի ուղի է:

Այս կազմակերպություններն ունեն մի շարք ընդհանուր բնութագրիչներ: Առաջինը քաղաքականության հարցերի վրա դրանց կողմնորոշվածությունն է, ինչը նշանակում է՝ նրանց խնդիրն է տեղեկացնել ու միջոցով համախմբել գիտելիքն ու քաղաքականության իրականացումը և հնարավորության դեպքում ազդել քաղաքական գործընթացի վրա: Ուղեղային կենտրոններն իրականացնում և շրջանառում են հետազոտություններ, որոնց նպատակն է քննարկման դնել և լուծել քաղաքականության տարաբնույթ խնդիրներ: Երկրորդ ընդհանուր բնութագրիչն այդ ուղեղային կենտրոնների հասարակական նշանակությունն է: Ուղեղային կենտրոնների հիմնական մասը պնդում է, որ իրենք հետազոտություն են իրականացնում՝ տեղեկացնել ու համար հանրությանն ու կառավարությանը, թե ինչպես բարելավել հանրային

⁵⁵ *Иванов Д.Ю.*, ук. соч., с. 3.

քաղաքականությունը: Ուղեղային կենտրոնների գործունեությունը հաճախ միտված է հանրային բարիքի ստեղծմանը և հանրության կրթությանը: Երրորդ. ուղեղային կենտրոնների աշխատակազմի փորձագիտության մակարդակը, արհեստավարժությունը, ինտելեկտուալ ռեսուրսը՝ իրենց գործունեության ապահովման համար անհրաժեշտ \$ինանսավորման ապահովման հիմնական ուղին է:

Միաժամանակ ուղեղային կենտրոնների տարբերությունն այնպիսի կազմակերպություններից, որոնցից են շահերի խմբերը (interest groups), մասնագիտական ընկերակցությունները, խորհրդատվական կազմակերպությունները, գիտակրթական հաստատությունները, երբեմն կարող է աղոտլինել, ինչի արդյունքում ման հաստատությունները հնարավոր չէ միշտ հստակորեն տարանջատել ուղեղային կենտրոններից: Ավելին, բազմաթիվ երկրներում ուղեղային կենտրոնների ղեկավարները և փորձագետները սերտորեն կապված են քաղաքական գործիչների և պետական պաշտոնյաների հետ: Չաշվի առնելով այդ հանգամանքը՝ ուղեղային կենտրոնների համար երբեմն դժվար է պահպանել այնքան ինքնուրույնություն, որը նրանց թույլ կտար ծառայել որպես կամուրջ գիտելիքի և պետական քաղաքականության միջև: Բացի դրանից, ուղեղային կենտրոնները հաճախ բնութագրում են իրենց որպես կառույցներ, որոնք սպասարկում են հանրության շահերը, սակայն դրանք նույնպես ունեն իրենց սեփական շահերը, իսկ դրանց «անկախ» տեսակետները հաճախ կախված են հետազոտությունը \$ինանսավորողի շահերից, տեսակետներից և տեսլականից: Չաճախ սեփական հեղինակության վերաբերյալ անհանգստությունն ուղեղային կենտրոնների շրջանում սահմանափակում է

քաղաքականությունը վերաբերյալ հակասող
առաջարկություններին մոտիվացիան: Անորոշ է
նույնիսկ, թե որքանով են ուղեղային
կենտրոնները կարողանում սահմանել
հետազոտություններին սեփական օրակարգը, քանի որ
վերջինս մեծապես կախված է պայմանագրերից և
ֆինանսավորման հնարավորություններից:
Ուղեղային կենտրոններին ինտելեկտուալ
ռեսուրսները նույնպես կարող են սահմանափակ
լինել: Չնայած նրան, որ ուղեղային կենտրոնները
սովորաբար վարձում կամ ներգրավում են
փորձագետներ և իրականացնում են քաղաքական
վերլուծություններ, վերջիններս առավել հաճախ
վերամշակում, քան ստեղծում են ակադեմիական
գիտելիք: Դրանց նպատակը ակադեմիական
արտադրանքն առավել մատչելի և հարմարվեց
դարձնելն է ծանրաբեռնված քաղաքական
գործիչների և պաշտոնյաների համար: Դա
նշանակում է՝ ուղեղային կենտրոնները հաճախ
անկյունաքարային դեր ունեն հետազոտական և
քաղաքականության օրակարգի և
առաջնահերթությունների հստակեցման գործում⁵⁶:

Վերոնշյալի համատեքստում հետաքրքրական է
նաև Դ. Սթոունի դիտարկումը, ով, հանրագումարի
բերելով ուղեղային կենտրոնների
ծառայությունները, դրանք, ըստ իրականացվող
գործառնությունների, դասակարգել է երեք տեսակի.

- ա) գիտելիք, վերլուծություն և
փորձագիտություն,
- բ) շահապաշտպան գործունեություն,
- գ) կազմակերպական և տեխնիկական
ծառայություններ⁵⁷:

Ամփոփելով տարբեր հետազոտողներին

⁵⁶ Encyclopedia Britannica // <https://www.britannica.com/topic/think-tank>
⁵⁷ *Stone D.*, Think Tanks beyond nation-states // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by *Stone D.*
and *Denham A.*, Manchester University Press, Manchester and New York, 2004, p. 42.

տեսակետներն ու մոտեցումները՝ կարելի է առանձնացնել ուղեղային կենտրոնների հետևյալ հիմնական գործառույթները .

- ✓ հանրային նշանակություն ունեցող տարբեր հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ առավելապես կիրառական և միջգիտակարգային բնույթի հետազոտությունների ,
վերլուծությունների իրականացում ,
- ✓ պետական պաշտոնյաների և քաղաքական գործիչների համար տարբեր ոլորտներին առնչվող հարցերի , խնդիրների վերաբերյալ վերլուծությունների , կանխատեսումների , իրավիճակի զարգացման սցենարների , երաշխավորությունների մշակում ,
գեկոլոյցների հրապարակում և քաղաքականություն տարբեր ոլորտների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցում ,
- ✓ ակադեմիական գիտություն-հանրային քաղաքականություն , պետություն-հասարակություն , հասարակություն-հանրային քաղաքականություն , գործարար հատված-հանրային քաղաքականություն տիրույթներում մասնագիտական անաչառ ու համակողմանի տեղեկատվական հոսքերի ձևավորում և կառավարում ,
- ✓ պետական կառավարման մարմինների ծրագրերի անկախ գնահատում և որոշումների ընդունման համար անհրաժեշտ տեղեկատվության այլընտրանքային աղբյուրների տրամադրում ,
- ✓ մասնակցություն տարբեր գերատեսչությունների համար նորմատիվ-իրավական փաստաթղթերի , հայեցակարգերի

- մշակմանը կամ դրանց վերաբերյալ փորձագիտական կարծիքի տրամադրմանը ,
- ✓ ալադեմիական հաստատություններում ստեղծված գաղափարների գեներացում , դրանց կիրառական ուղղվածության հաղորդումն առաջմղում ,
 - ✓ սեփական նորարարական գաղափարների ստեղծումն տարբեր խնդիրների լուծման համար ոչ ստանդարտ , այլընտրանքային տարբերակների առաջադրում ,
 - ✓ պետական պաշտոնների համար կադրային քազայի ապահովում ,
 - ✓ նախկին քաղաքական գործիչների և պետական պաշտոնյաների համար «պահուստային» աշխատավայրի դերակատարում , որն ապահովում է սիներգետիկ արդյունք և դրական ազդեցություն ունենում ուղեղային կենտրոնի աշխատանքի վրա : Միաժամանակ թույլ է տալիս փորձառու գործիչներին պահպանել դերակատարությունն ու որոշակի ազդեցությունը հանրային քաղաքականության գործընթացներում ,
 - ✓ հանրային քաղաքականության տարբեր սուբյեկտների համար գաղափարների փոխանակումը դյուրացնող գործառույթի իրականացում (սեմինարներ , աշխատանքային քննարկումներ , լսումներ և այլն) ,
 - ✓ ՉԼՄ-ների համար քաղաքականության , այդ թվում արդի քաղաքական իրադարձությունների վերաբերյալ փորձագիտական մեկնաբանության գործառույթի իրականացում , որով ապահովվում է մասնագիտական մակարդակով հասարակության իրազեկվածությունը տարբեր միջազգային և տեղական

- նշանակություն հարցերի վերաբերյալ ,
- ✓ միջնորդ իշխանություն և հասարակություն միջև՝ բնակչության խնդիրների, ակնկալիքների և ձևավորված կարծիքների վերաբերյալ կառավարությունն իրազեկում ,
 - ✓ թիրախային տարբեր խմբերի համար նախատեսված (պետական պաշտոնյաների, քաղաքացիական հասարակություն կամ կուսակցությունների ներկայացուցիչներ, մասնագիտական խմբեր, ուսանողներ և այլն) կրթական ծառայությունների մատուցման գործառույթ, որն իրականացվում է, որպես կանոն, ոչ ֆորմալ կրթական ծրագրերի, սեմինարների, դասընթացների, վարպետաց դասերի միջոցով :

Հատկանշական է, որ պարտադիր չէ, որպեսզի ուղեղային կենտրոնն իրականացնի նշված բոլոր գործառույթները: Դրանք կարող են ուղեղային կենտրոնի կողմից այս կամ այն չափով կարևորվել՝ ելնելով երկրի քաղաքական մշակույթից, հանրային քաղաքականության բնագավառում իրենց կողմից ստանձնած առաքելությունից, հանրային քաղաքականության մյուս սուբյեկտների կողմից դրանց կարևորությունը նկատման աստիճանից, ուղեղային կենտրոնների մասնագիտացման բնագավառից, ուղեղային կենտրոն-հանրային քաղաքականության այլ սուբյեկտներ հարաբերությունների ձևաչափից, քաղաքական շուկայի կոնյունկտուրայից, ինչպես նաև հասարակության ու մասնագիտական շրջանակների վրա ուղեղային կենտրոնների ներազդեցություն գործող տեխնոլոգիաների առանձնահատկություններից ու դրանց գործունեություն կարգավորման և ֆինանսավորման կառուցակարգերից: Այնուամենայնիվ, սրանք այն հիմնական գործառույթներն են, որոնց մեծամաս-

նությունը այս կամ այն չափով պետք է ներառված լինի որևէ հետազոտական կազմակերպության գործունեության «պորտֆելում», որպեսզի վերջինը հնարավոր լինի դիտարկել որպես ուղեղային կենտրոն:

13.ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չանրային քաղաքականության հետազոտական հաստատության ներկայացրած, ինչպես առավել ընդունված է անվանել՝ ուղեղային կենտրոնների գործունեությանն ու դերակատարությունը հասկանալու կամ վերլուծելու առումով առանցքային նշանակություն ունի նաև վերջիններիս տիպաբանության խնդիրը: Այն հայտ է, որ այս խնդրի արդյունավետ զոնդումը բախվում է միջարք դժվարությունների, որոնք պայմանավորված են աշխարհում գործող հազարավոր ուղեղային կենտրոնների մասնագիտացման ուղղություններիով, իրենց առջև դրված առաջնահերթ նպատակներով, կառուցվածքային, իրավական կարգավիճակով, թողարկվող մտավոր արտադրանքի տեսակներով, ֆինանսավորման աղբյուրներով և ուղեղային կենտրոններում ընդգրկված փորձագետ-վերլուծաբանների մասնագիտական որակավորման տարբերություններով: Խնդիրն առավել բարդանում է այն պարագայում, երբ փորձ է արվում հաշվի առնելու նաև տարբեր երկրներում տեղական քաղաքական մշակույթի առանձնահատկությունները և քաղաքական որոշումների կայացման գործընթացում ձևավորված ավանդույթները: Բացի դրանից, վերջին տասնամյակներում ամբողջ աշխարհում ուղեղային կենտրոնների թե՛ քանակական, թե՛ տիպաբանական բազմազանության

պարբերական ավելացումն էլ ավելի է բարդացնում
նւղեղային կենտրոններին համապարփակ և
համընդգրկուն տիպաբանության մշակումը:

Յենց վերոնշյալ հանգամանքներով
պայմանավորված՝ համապատասխան մասնագիտական
գրականության մեջ և նւղեղային կենտրոններին
ոլորտին ուսումնասիրությամբ զբաղվող
հետազոտողներին աշխատանքներում կարելի է
հանդիպել նւղեղային կենտրոններին
տիպաբանության տարաբնույթ, երբեմն նույնիսկ
հակասական մոտեցումներ: Յետևաբար՝ բավական
դժվար է պատասխանել այս հարցի կապակցությամբ
արտերկրի քաղաքագիտական դիսկուրսում հնչող
բոլոր հարցերին, սակայն փորձենք հնարավորինս
ամբողջացնել տարբեր հետազոտողներին կողմից
մշակված մոտեցումները՝ միաժամանակ
ներկայացնելով նաև մեր տեսակետը:

Յարկ է նշել, որ, ընդհանուր առմամբ, ըստ
հետազոտվող թեմաների մասշտաբայնության,
նւղեղային կենտրոնները կարող են
մասնագիտացված լինել միջազգային, գլոբալ,
տարածաշրջանային կամ ներպետական
հիմնախնդիրներին ուսումնասիրություններում
կամ ունենալ առավել նեղ ոլորտային
նւղղվածություն: Ըստ քաղաքական,
գաղափարախոսական կողմնորոշման՝ հատկապես
Արևմուտքում, նւղեղային կենտրոնները կարող են
լինել գաղափարայնացված (որևէ քաղաքական
գաղափարախոսության կամ քաղաքական հոսանքին
հարող), ինչպես օրինակ՝ ամերիկյան «Ժառանգութ-
յուն» հիմնադրամը՝ որպես պահպանողական
գաղափարախոսության թևում գործող
հաստատություն, կամ Կատոնի ինստիտուտը՝ որպես
լիբերտարիստական քաղաքական կողմնորոշում
ունեցող կազմակերպություն: Մյուս կողմից՝

դրանք կարող են լինել նաև քաղաքականապես անկախ
ուղեղային կենտրոններ, ինչպես, օրինակ, Բրուկ-
քինգսի ինստիտուտը:

Հատկանշական է, որ քաղաքագիտական
գրականության մեջ առավել հաճախ կիրառվում է
ուղեղային կենտրոնների տիպաբանության
իրականացման երկու հիմնական սկզբունք՝
ինստիտուցիոնալ և ըստ գործունեության
ուղղությունների: Առաջին սկզբունքի համաձայն՝
հիմք են ընդունվում ուղեղային կենտրոնների
ինստիտուցիոնալ հատկանիշները՝ իրավական
կարգավիճակ, ֆինանսավորման ձևաչափեր ու
աղբյուրներ և այլն: Երկրորդ սկզբունքի
համաձայն՝ ուղեղային կենտրոնների գործու-
նեության ուղղությունները՝ առաքելությանը,
ռազմավարական նպատակներն ու ոլորտային
ուղղվածությունը:

Ուղեղային կենտրոնների
ուսումնասիրությանը նվիրված աշխատանքների
վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանցում
առավել տարածված և ընդունելի է համարվում
ամերիկացի հետազոտողներ է. Ռիչի և ք. Ուիլերի
կողմից առաջարկված մոտեցումը, որոնք
առանձնացնում են ուղեղային կենտրոնների երեք
հիմնական տեսակ.

- ակադեմիական ուղեղային կենտրոններ, որոնք
ստացել են «համալսարաններ առանց
ուսանողների» պայմանական անվանումը,
- պայմանագրային հետազոտական
հաստատություններ,
- քաղաքական գաղափարախոսությունն որդեգրած,
դրանք քարոզող և շահապաշտպան
հաստատություններ⁵⁸:

⁵⁸ Տե՛ս *Րիչ Է., Սևեր Կ.,* Пропагандисты и аналитики: «мозговые центры» и политизация экспертов // «Pro et contra», том 8, №2. М., 2003, с. 71.

Վերոնշյալ հաստատությունները տարբերվում են իրենց առջև դրված խնդիրներով, արտադրանքով, ֆինանսավորման աղբյուրներով, ինչպես նաև աշխատակիցների կազմով և որակավորմամբ: Այսպես, «Յամալ սարաններ առանց ուսանողների» տեսակին համապատասխանող ուղեղային կենտրոնների (ինչպիսիք են՝ ամերիկյան Բրուքլինգսի ինստիտուտը, Ռասել Սեյջի հիմնադրամը, Յարվարդի համալսարանի Գիտություն և միջազգային հարաբերությունների Բելֆորի կենտրոնը, բրիտանական Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտը և այլն) աշխատակիցներն առավել պես համալսարանների պրոֆեսորական կազմի գիտական աստիճան ունեցող մասնագետներ են, ինչն էլ հիմք է հանդիսացել նման կազմակերպություններն անվանակոչելու «համալսարան առանց ուսանողների»: Նման հաստատություններ կայացող չնչն էր ներկայացողներն իրենց աշխատանքում մեծ նշանակություն են տալիս ակադեմիական շրջանակներում ընդունված նորմերին և գիտական օբյեկտիվությունը: Ուղեղային կենտրոնների մյուս տեսակների համեմատ օբյեկտիվության առավել մեծ չափաբաժնի պահպանմանը մեծապես նպաստում է նաև ֆինանսավորման աղբյուրների բազմազանությունը, ինչը բնորոշ է հատկապես նման կազմակերպություններին: Վերջիններիս ֆինանսական հոսքերի գերակշիռ մասը ստացվում է մասնավոր հիմնադրամներից և նվիրատվություններից: Օրինակի համար նշենք, որ 2015 թ. Բրուքլինգսի ինստիտուտի տարեկան բյուջեի (ավելի քան 95 մլն ԱՄՆ դոլլար) եկամտային մասի շուրջ 86 %-ը ձևավորվել է նվիրատվություններից և դրամաշնորհներից, իսկ 10 %-ը՝ նպատակային հիմնադրամի կողմից ստացված

միջոցներին⁵⁹:

Ի տարբերություն «Համալսարաններ անց
ունանողների» տեսակի հաստատությունների՝
պայմանագրային ուղեղային կենտրոնները
(օրինակ՝ ԲԵՆԴ կորպորացիան և ՌԼՐբանիստիտուտը)
գործում են առավելապես պետական հաստատու-
թյուններից կամ մասնավոր ընկերություններից
ստացված պատվերների հիման վրա, հետևաբար՝
ֆինանսական միջոցները ևս գոյանում են այդ
պայմանագրերից: Այսպես, ԲԵՆԴ կորպորացիայի 2015թ.
բյուջեի եկամտային մասը կազմել է շուրջ 310 մլն
ԱՄՆ դոլլար, որից շուրջ 309 մլն ԱՄՆ դոլլարը
ստացվել է պայմանագրերից և դրամաշնորհներից,
այդ թվում՝ ավելի քան 80 %-ը ԱՄՆ
կառավարությունից⁶⁰: Հաշվի առնելով
գործունեության պայմանագրային բնույթը՝
վերջիններիս հետազոտությունների օրակարգը ևս
առավելապես թելադրվում է պատվիրատուների
կողմից, ինչը որոշակիորեն սահմանափակում է
փորձագետների ստեղծագործական ազատությունը և
սեփական նախասիրությունները հետազոտական
թեմաների ընտրությունը:

Երրորդ՝ գաղափարայնացված, քարոզչական կամ
շահապաշտպան ուղեղային կենտրոնները մեծապես
քաղաքականացված են: Վերջիններս ձգտում են
արձագանքել քաղաքական առաջնորդների ընթացիկ
պահանջներին և ազդեցություն գործել նրանց և
քաղաքական գործընթացի մեջ ներգրավված այլ
դերակատարների վրա⁶¹: Նման ուղեղային
կենտրոնների հրապարակումները հաճախ
թելադրված են իրենց գաղափարական և քաղաքական

⁵⁹ Տե՛ս Brookings Annual Report 2015, pp. 42-43 // URL: <https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/07/2015-annual-report.pdf>

⁶⁰ Տե՛ս RAND Corporation Financial Statements, 2015 // URL: http://www.rand.org/pubs/corporate_pubs/CP665.html

⁶¹ Տե՛ս Աթոյան Վ., Ազգային անվտանգության հիմնախնդիրներ. դասախոսություններ // Եր., «Տնտեսագետ» հրատ., 2014, էջ 58:

նախապատվո՞ւթյո՞ւն ներդրում ակադեմիական օբյեկտիվ-
 վո՞ւթյամբ գիշո՞ւմ են վերոնշյալ երկու տեսակի
 կազմակերպո՞ւթյո՞ւն ներքին: Նման կազմակերպո՞ւթ-
 յո՞ւն ներքին համար հիմնական դոնորներ են անհատ
 գաղափարակիցները, քաղաքական համակիրները և
 իրենց գաղափարախոսո՞ւթյո՞ւնը կիսող այլ
 հաստատո՞ւթյո՞ւններ: Այսպես, 2015 թ.
 «Ժառանգո՞ւթյո՞ւն» հիմնադրամի 99,5 մլն ԱՄՆ դոլլար
 կազմող բյուջեի շուրջ 75%-ը կամ շուրջ 74,5 մլն ԱՄՆ
 դոլլարը գոյացել է անհատների նվիրատվո՞ւթ-
 յո՞ւն ներքին⁶², որոնք կարելի է հիմնավորապես
 ենթադրել, որ առավելապես ԱՄՆ Յանրապետական
 կուսակցո՞ւթյան կողմնակիցներն են: Յամանման
 պատկեր է նաև Կատոնի ինստիտուտի պարագայում:
 Վերջինիս 2015 թ. բյուջեի եկամտային մասը կազմել է
 շուրջ 28,6 մլն ԱՄՆ դոլլար, որի 76%-ը ձևավորվել է
 անհատների նվիրատվո՞ւթյո՞ւն ներքին⁶³:

Յարկ է, սակայն, ընդգծել, որ վերոնշյալ
 տիպաբանո՞ւթյո՞ւնն առավելապես բնորոշ և
 ընդգծված է արևմտյան (հատկապես ԱՄՆ-ի) քաղաքական
 մշակույթի երկրներում: Մյուս կողմից՝ նույնիսկ
 ԱՄՆ-ում վերոնշյալ տիպաբանո՞ւթյանն ամբողջովին
 համընկնող կենտրոնները շատ չեն, և գործող
 կենտրոնների մեծամասնո՞ւթյո՞ւնը կարելի է
 պայմանականորեն անվանել «հիբրիդային», քանի որ
 այդ ուղեղային կենտրոններն օժտված են մի քանի
 տիպերի հատկանիշներով:

Ուղեղային կենտրոնների դաշտի
 ուսումնասիրո՞ւթյո՞ւնից ակնհայտ է դառնում, որ
 աշխարհի բազմաթիվ այլ տարածաշրջաններում
 գործող ուղեղային կենտրոնների տիպաբա-
 նո՞ւթյո՞ւնը հաճախ է ականորեն տարբերվում է: Այս

⁶² Տե՛ս The Heritage Foundation Annual Report 2015, p. 49 // URL: https://thf-membership.s3.amazonaws.com/2015_AnnualReport.pdf

⁶³ Տե՛ս Cato Institute Annual Report 2015, p. 41 // URL: <https://object.cato.org/sites/cato.org/files/pubs/pdf/cato-annual-report-2015-update-ii.pdf>

համատեքստում հարկ է հիշատակել ն. Մեդուշևսկու մոտեցումը, ով առանձնացնում է ուղեղային կենտրոնների հետևյալ գործառնական մոդելները.

- Ամերիկյան մոդել, որտեղ առկա է բաժանում ոչ միայն կառավարականի և ոչ կառավարականի, այլ նաև կառավարական կենտրոնները բազմազանեցված են իշխանությունների տարանջատման մեխանիզմին համապատասխան:
- Եվրոպական մոդել, որտեղ ուղեղային կենտրոնները գործառնում են տվյալ երկրի քաղաքական համակարգում գոյություն ունեցող ուժերի հարաբերակցությանը համապատասխան: Մասնավորապես ամեն մի իրական գոյություն ունեցող քաղաքական ուժ (օրինակ՝ կուսակցությունները) տիրապետում է սեփական վերլուծական կառույցի՝ ուղեղային կենտրոնի:
- Ասիական մոդել, որտեղ գոյություն ունենան աչառ ուղեղային կենտրոններ, սակայն մեծ մասամբ ուղեղային կենտրոնները գործում են կառավարության կամ անվտանգության կառույցներին առընթեր, ինչն անհրաժեշտ է բնակչության նկատմամբ տեղեկատվական գերակայության հասնելու և միջազգային գործընթացների վերաբերյալ համապատասխան այլընտրանքային տեղեկատվություն ստանալու համար⁶⁴:

Վերոնշյալ խնդրի շրջանակներում արժեքավոր է նաև հետազոտող Յ. Ուլրիխի՝ Եվրամիության (ԵՄ) տարածքում գործող ուղեղային կենտրոնների ընդհանրացման փորձը: Նրա դիտարկմամբ ԵՄ ուղեղային կենտրոններն ունեն թե՛ նմանություններ, թե՛ տարբերություններ:

⁶⁴ *Медушевский Н.А.*, Экспертное сообщество в политической сфере в конце XX – начале XXI века // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук. по спец. 23.00.02 - «Политические институты, процессы технологии», М., 2011, с. 46-47.

Վերջինս արտահայտվում է տարբեր ուղեղային կենտրոնների գործառնություն մեթոդներով, չափերով, ֆինանսավորման աղբյուրներով, թիրախային լսարանով և քաղաքական միջավայրով, որում վերջիններս գործառնություն են: Յետագոտողը ԵՄ ուղեղային կենտրոնները բաժանում է չորս տեսակի.

1. ԵՄ ներքին ուղեղային կենտրոններ. քաղաքական խորհրդատուների խումբ (*The Group of Policy Advisors*), որն առավել հայտնի է իր ֆրանսիական անվանումով՝ *Cellule de Prospective*. Գործում է եվրոպական հանձնաժողովին առընթեր և կապված է արտաքին հետազոտական հաստատությունների և ընկերակցությունների հետ:
2. Բրյուսելում տեղակայված ԵՄ ուղեղային կենտրոններ. Բրյուսելում տեղակայված ուղեղային կենտրոնները ԵՄ անդամ-երկրների ուղեղային կենտրոնների համեմատ ունեն երկու հիմնական տարբերություն: Առաջին, նրանց տեղաբաշխվածությունը ԵՄ քաղաքական կենտրոնում հնարավորություն է տալիս հաճախակի մուտք ունենալու ԵՄ այցելող անդամ-երկրների պաշտոնյաների մոտ: Երկրորդ, նրանց գործունեության վերագրված թվերը և անկախությունն առավել բարձր աստիճանը ԵՄ որևէ անդամ-երկրի կառավարությունից թույլ է տալիս համեմատաբար անձեռնմխելի լինել առանձին երկրների ազգային քաղաքականության օրակարգերից ունեցած ազդեցությունից:
3. ԵՄ խնդիրների հետազոտությունը մասնագիտացված առանձին անդամ-երկրների ուղեղային կենտրոններ. այս տեսակն ընդգրկում է ԵՄ անդամ-երկրներում գործող և

տեղական քաղաքական համակարգի բնույթով պայմանավորված՝ ԵՄ կողմնորոշումով տարբեր խնդիրներում մասնագիտացված և գործառնությամբ առանձնահատուկ մեթոդներով ուղեղային կենտրոնները:

4. Համալսարանական հետազոտական հաստատություններ. Եվրոպական համալսարանական հետազոտական կենտրոնները չնայած փորձում են պաշտպանել իրենց հետազոտական կախությունը, սակայն հաճախ նաև համագործակցում են՝ ներգրավվելով որոշակի հետազոտական նախագծերում⁶⁵:

Իհարկե, կարելի է փորձել ձևակերպել ամերիկյան, եվրոպական կամ ասիական միասնական մոդելներ և դրանց շրջանակներում համախմբված ներկայացնել ուղեղային կենտրոնների բնորոշիչ հատկությունները: Այնուամենայնիվ, մեր դիտարկմամբ յուրաքանչյուր առանձին վերցրած երկրում ուղեղային կենտրոնի գործառնությունը, դերակատարությունը, ազդեցությունը ու տիպաբանությունը որոշակիորեն կարող են տարբերվել: Ավելին, դրանք կարող են էապես տարբերվել նաև առանձին վերցրած երկրի ներսում: Մասնավորապես, օրինակ, չնայած միևնույն «Ասիական մոդելի» շրջանակներում ներառված ուղեղային կենտրոնների միջև առկա որոշ նմանություններին՝ տիպաբանությունը տարբեր երկրներում և տարածաշրջաններում էականորեն տարբերվում է: Այսպես, բավականին բարդ է պատկերացնել, մի կողմից՝ Հեռավոր Արևելքի երկրներում (օրինակ՝ Ճապոնիա, Չինաստան) գործող ուղեղային կենտրոնների, մյուս կողմից՝ Կենտրոնական Ասիայի կամ Մերձավոր Արևելքի

⁶⁵ *Ulrich H.*, European Union think tanks: generating ideas, analysis and debate // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004, p. 53.

(օրինակ՝ Իսրայելի) ուղեղային կենտրոնների միասնական մոդել: Ավելին, իրարից տարբերվում են նաև Յեռավոր Արևելքի երկրների հետազոտական կենտրոնները: Օրինակ, միասնական ասիական մոդելում համախմբել չինական ու ճապոնական ուղեղային կենտրոնները նույնպես ճիշտ չէ, քան ի որ ուղղակի անհնար է հիմնականում գործարար շրջանակներին սպասարկող ճապոնական ուղեղային կենտրոնները տիպաբանորեն ասոցիացնել հիմնականում պետության կողմից ձևավորված և դրավերահսկող ու թյամբ գործող չինական ուղեղային կենտրոնների հետ, միայն այն պատճառով, որ դրանք ասիական աշխարհամասի միևնույն տարածաշրջանի երկրներում գործող կենտրոններ են: Մասնավորապես, եթե ճապոնիայում առավել տարածված են պայմանագրային հիմունքներով ուսումնասիրությունները, իրականացնող ուղեղային կենտրոնները, ապա Չինաստանի ուղեղային կենտրոններն առավել հաճախ բաժանում են երեք տեսակի՝ պաշտոնական/պետական, կիսապաշտոնական/պետական մասնակցությամբ և քաղաքացիական (կամ անկախ): Առաջին տեսակին են պատկանում կառավարության ենթակայ ու թյան տակ գործող ուղեղային կենտրոնները, ինչպիսին է, օրինակ, Չինաստանի Ժողովրդական Յանրապետության (ՉԺԿ) Արտաքին գործերի նախարարությունն առընթեր Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտը: Կիսապաշտոնական ուղեղային կենտրոնների մեջ են մտնում հանրային, առավելապես ակադեմիական բնույթի ինստիտուտները: Որպես օրինակ կարելի է նշել ՉԺԿ-ի Յասարակական գիտությունների ակադեմիայի համակարգում գործող ինստիտուտները: Քաղաքացիական ուղեղային կենտրոնների շարքում են դասվում համալսարանական և մասնավոր

կենտրոնները, որոնցից է, օրինակ, Շենսիի Նորմալ համալսարանի Կենտրոնական Ասիայի ինստիտուտը: Չարկե ընդգծել, որ ՉԺՅ-ի դեպքում առավել ազդեցիկ են ուղեղային կենտրոնների առաջին երկու տիպերը⁶⁶: Մյուս կողմից, ի տարբերություն Չինաստանի ուղեղային կենտրոնների, միևնույն «Ասիական մոդելում» դիտարկվող իսրայելական ուղեղային կենտրոններն առավել ապեսոգրադաժեն անվտանգության ոլորտում հետազոտությունների անցկացման ուղղությամբ և մեծ մասամբ \$ինանսավորվում են նվիրատվությունների (հաճախ արտերկրից) հաշվին⁶⁷:

Անգամ էմ անդամ տարբեր երկրներում ուղեղային կենտրոնները միևնույն տիպաբանությունը չունեն, ավելին՝ դրանք երբեմն տիպաբանորեն խիստ տարբերվում են: Այսպես, որպես օրինակ, կարող ենք ներկայացնել իտալացի հետազոտողների կողմից իրենց երկրում գործող ուղեղային կենտրոնների տիպաբանությունը.

1. կուսակցապատկան ուղեղային կենտրոններ, որոնք կապված են քաղաքական համակարգի հետ և ունեն անկախության ցածրաստիճան:
2. Անկախության եական մակարդակ ունեցող քաղաքական և ինտելեկտուալ քննարկումների նշանակալիորեն օժանդակող ուղեղային կենտրոններ, որոնց նպատակն է երկարաժամկետ ժամանակահատվածում ազդել երկրի քաղաքական մշակույթի ձևավորման, իսկ միջնաժամկետ ժամանակահատվածում՝ քաղաքական քննարկումների վրա: Նման

⁶⁶ Տե՛ս **Աթոյան Վ., Մովսիսյան Շ.**, Չինաստանի ուղեղային կենտրոնները // «Տնտեսագետ» հրատ. «Ամբերդ» մատենաշար N29, Եր., 2016:

⁶⁷ Տե՛ս **Աթոյան Վ., Թադևոսյան Ռ.**, Իսրայելի ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականությունում // «21-րդ ԴԱԲ», N 6(70), 2016, էջ 70-84:

ուղեղային կենտրոնները հազվադեպ են
իրականացնում քաղաքականության
արհեստավարժ վերլուծություններ:

3. Ուղեղային կենտրոններ, որոնք
մասնագիտացված են քաղաքականության
գնահատման և ազդեցության չափման
խնդիրներում:
4. Քաղաքականության ակումբներ (Policy Clubs), որոնք
առավել մեծ չափով համախոհ քաղաքական
գործիչներին և ինտելեկտուալներին
հանդիպումներին և համաժողովներին համար
նախատեսված հաստատություններ են, քան
մշտական հիմունքներով գործող և
ուսումնասիրություններ իրականացնող
կազմակերպություններ⁶⁸:

Պետք է նշել, սակայն, որ վերոնշյալ մոտեցման
հատկապես երկրորդ և չորրորդ կետերում
ներկայացված հաստատությունները միայն
պայմանականորեն կարող են դասվել ուղեղային
կենտրոններին շարքում (դիտարկված
գործառնություններ և մոտեցումներին
համապատասխանության ընկալմամբ):
Յետագոտություններին և վերլուծություններին
իրականացնում ուղեղային կենտրոնների
առանցքային գործառնություններին շարքում է դասվում,
ուստի այն հաստատությունը, որը, որպես կանոն,
գործում է առավելապես քաղաքական ակումբի
ձևաչափով և հազվադեպ է իրականացնում
արհեստավարժ վերլուծություններ, մեծ
վերապահումով կարող է դասվել ուղեղային
կենտրոններին շարքում, թեև իտալացի
հետազոտողներին մոտեցմամբ դասվում է հենց այդ
շարքում:

⁶⁸ *Lucarelli S., Radaelli C.*, Italy: think tanks an the political system // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004, p. 90.

Ուղեղային կենտրոնների տիպաբանության թեմայի քննարկման համատեքստում արժեքավորելն անռուսաստանցի հետազոտող Ա. Սիտնիկովի մշակած բավականին համապարփակ տիպաբանությունը, որի համաձայն՝ ուղեղային կենտրոնները բաժանվում են հետևյալ սկզբունքով.

- ըստ գործունեության տեսակների (գործառնայթների)՝ վերլուծություն և հետազոտություն իրականացնող ուղեղային կենտրոններ, կրթական ծառայություններ մատուցող ուղեղային կենտրոններ, տարբեր խնդիրների վերաբերյալ քննարկումներ (սեմինարներ, համաժողովներ, կլորսեղաններ և այլն) կազմակերպող ուղեղային կենտրոններ, միջնորդային գործառնայթներ իրականացնող ուղեղային կենտրոններ և բազմաոլորտ ուղեղային կենտրոններ,
- ըստ գործունեության ոլորտների (ոլորտայիններ)՝ քաղաքական հիմնախնդիրներով զբաղվող ուղեղային կենտրոններ (ժողովրդավարացում և ժողովրդավարություն, կոռուպցիայի կանխարգելում), տնտեսական հիմնախնդիրներով զբաղվող ուղեղային կենտրոններ (տնտեսական զարգացում, ներդրումների ներգրավում, ճգնաժամերի կանխարգելում), բնապահպանական հիմնախնդիրներով զբաղվող ուղեղային կենտրոններ (շրջակա միջավայրի պաշտպանություն), սոցիալական հիմնախնդիրներով զբաղվող ուղեղային կենտրոններ (հանրային անվտանգություն, պայքար աղքատության դեմ), իրավական հարցերով զբաղվող ուղեղային կենտրոններ (օրենսդրական բարեփոխումներ, իրավական ինստիտուտների հիմնում և զարգացում) և այլ (բազմաոլորտ),

- *ըստ իրավական կարգավիճակի՝* հասարակական կազմակերպություններ (ոչ կուսակցական, ոչ առևտրային հասարակական կազմակերպություններ, ոչ կառավարական կազմակերպություններ), հանրային կազմակերպություններ, որոնց հիմնադիրներին դաշտն առնչվում է իշխանական, կուսակցական կամ գործարար կառույցներին (կրթական հաստատություններ, իշխանական կառույցներին դեպարտամենտներ, կոմերցիոն կազմակերպություններ, խորհրդատվական (կոնսալտինգային) կազմակերպություններ, ընտրական տեխնոլոգիաների կենտրոններ) և այլն,
- *ըստ անկախության մակարդակի՝* իշխանական մարմինների համար աշխատող (դաշնային, տարածաշրջանային, տեղական), քաղաքական կուսակցություններին, գործարար կառույցներին համար աշխատող, անկախ կենտրոններ⁶⁹:

Ոլորտի մեկ այլ հետազոտող՝ Դ. Չայցևը, համադրելով միշտ ք հետազոտողներին, այդ թվում՝ Է. Ռիչի, Բ. Ուիլերի, Ջ. Մաք-Գանի, Դ. Էյբելսոնի մոտեցումները խմբավորել և մշակել է ուղեղային կենտրոնների սեփական տիպաբանությունը⁷⁰:

1. Ըստ Չայցևի՝ առաջին տիպին են պատկանում, այսպես կոչված «Հիմնարար հետազոտությունները» կենտրոնները, որոնք կողմնորոշված են գիտական հետազոտությունների իրականացման ուղղությունում և բավարարում են, առաջին հերթին, սեփական հետազոտական հետաքրքրությունը: Նման

⁶⁹ *Ситников А.П.*, Фабрики мысли и независимые центры социально-политической деятельности: классификация и анализ // Вестник московского государственного областного университета, N 4, 2009, с. 187.

⁷⁰ Տե՛ս *Зайцев Д.Г.*, Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук., 23.00.02 – Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии. М., 2009, с. 53-56.

տեսակի վերլուծական կենտրոնների հետազոտություններն ու մշակումներն իրենց ձևաչափով, ծավալով և ոճով «հիմնարար» են, քան ի որպատմականորեն առավել մոտենավանդականակադեմիական կառույցներին: Միաժամանակ նման կենտրոնների մշակումներն առավել կիրառական են, քան ավանդական ակադեմիական կազմակերպությունների գիտական հետազոտությունները: Այս տեսակի կազմակերպությունների գործունեությունը չի սահմանափակվում հետազոտությունների անցկացմամբ: Դրանք զբաղվում են, առաջին հերթին, քաղաքական վերնախավի կրթություն և գաղափարների գեներացմամբ: Վերջիններիս վերլուծական արտադրանքը ներկայացվում է «բազմահատոր հաշվետվություններին», գրքերին, մենագրություններին, գիտական հոդվածներին տեսքով, որոնք ներկայացվում են գիտաժողովների, գիտական և փորձագիտական սեմինարների ընթացքում: Կախված կազմակերպական ինքնուրույնությունից՝ այս կենտրոնները բաժանվում են երկու տիպի՝ քաղաքական հետազոտությունների ինստիտուտների և ակադեմիական (համալսարանական) կենտրոնների: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտները կազմակերպական առումով ինքնուրույն հաստատություններ են, սակայն հաճախ ունենան ուղղակի կապ ակադեմիական ինստիտուտների և ուղղակի կապ փորձագիտական հանրույթի (քաղաքական դաշտի արհեստավարժ հետազոտողների հանրություն) հետ: Այդ պատճառով քաղաքական հետազոտությունների ինստիտուտների կառուցվածքը, որպես կանոն, կառուցված է ըստ «գիտելիքների ոլորտների»՝ քաղաքագիտական, սոցիալական, կորպորատիվ հետազոտություններ: Ընդգծված օբյեկտիվությունը և գիտական

սկզբունքներին հետևելը թույլ չեն տալիս նման կենտրոններին մշտապես հետևել որևէ գաղափարախոսական կողմնորոշման: Դրանով պայմանավորված՝ տարբեր իրավիճակներում քաղաքական հետազոտություններին ինստիտուտների ներկայացուցիչները կիսում են այս կամ այն «գաղափարախոսություն» կողմնակիցների կարծիքները կամ քննարկվող հարցի վերաբերյալ մշակում են սեփական միջինացված դիրքորոշումը: Այսինքն՝ քաղաքական հետազոտություններինստիտուտները, ըստ Դ. Չայցնի, պահպանում են կենտրոնամետ դիրքեր: Օրինակ, ԱՄՆ-ի քաղաքական հետազոտություններին ամենահին ինստիտուտները, ինչպիսիք են՝ Քարնեգի հիմնադրամը, Միջազգային հարաբերություններին խորհուրդը, Բրուքինգսի ինստիտուտը դասվում են կենտրոնամետ հաստատությունների շարքում: Քաղաքական հետազոտություններինստիտուտները գործում են հիմնականում ինստիտուցիոնալ նպատակային հիմնադրամների (endowment), դրամաշնորհների և մասնավոր հանգանակությունների միջոցով: *Այսօր է միակն և համալսարանական կենտրոնները* գործում են ակադեմիական կառույցներին կից, ինչպիսիք են՝ խոշոր համալսարաններն ու գիտությունների ակադեմիաները: Վերջիններս ունեն ինքնուրույնություն քաղաքական և այլ վերլուծական կենտրոններին հետ հավասար մասնակցում են հանրային քաղաքականությանը: Այնուամենայնիվ, իրենց հիմնադիրների, ֆինանսավորողների հետ հարաբերություններին քննադատական գոյություն է ունենում այս ենթատեսակին պատկանող կազմակերպությունների գործունեության կողմնորոշման վրա: Նման կազմակերպություններին գործունեության համար ֆինանսական միջոցները հիմնականում ստացվում են պետությունից կամ

հիմնադիր կազմակերպությունից: Բացի դրանից, բազմաթիվ առաջատար համալսարաններ, հատկապես ԱՄՆ-ում (և դրանց կից վերլուծական կենտրոնները) ունեն իրենց նպատակային հիմնադրամները:

2. Երկրորդ տեսակի ներկայացված պայմանագրի հիման վրա գործող կենտրոնները, որոնք կողմնորոշված են կիրառական հետազոտությունների և վերլուծությունների իրականացման ուղղությամբ և եկամուտ ստանալու նպատակով պայմանագրին համապատասխան մշակում են երաշխավորություններ: Այս հաստատությունների գործունեությունը կենտրոնացած է պատվիրատուների համար քաղաքական վերլուծության, խորհրդատվության և պլանավորման վրա: Կախված \$ինանսավորման հիմնական աղբյուրից և գլխավոր պատվիրատուից՝ Դ.2 այցեն առանձնացնում է պայմանագրային կենտրոնների երկու ենթատեսակ՝ կենտրոններ, որոնք աշխատում են պետական պատվերի համար և կենտրոններ, որոնք աշխատում են «բաց շուկայում»: Առաջին ենթատեսակի կենտրոնների հիմնական պատվիրատու և \$ինանսական աղբյուրը պետական կազմակերպություններն են: Նման կենտրոնները հաճախ ստեղծվում են պետական հաստատությունների կից, սակայն բավականաչափ ինքնուրույնություն ունեն պետությունից: Երկրորդ ենթատեսակի ներկայացված այն կազմակերպությունները, որոնք չեն կողմնորոշվում որոշակի պատվիրատուի ուղղությամբ և ունեն տարաբնույթ պատվիրատուներ, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածից և/կամ ունեն \$ինանսավորման մասնավոր աղբյուրներ՝ դրամաշնորհներ, նվիրատվություններ և առաջարկում են սեփական վերլուծական արտադրանքը «բաց շուկայում»: \$ինանսական աղբյուրների բազմազանեցումը

թ ու յ լ է տալ ի ս վ եր ջ ի ն ն եր ի ս պահ պան ե լ համ ե մատական չ ե գ ո ք ու թ յ ու ն :

3. Ուղեղային կենտրոնների երրորդ տեսակին են պատկանում, այսպես կոչված՝ հանրային շահերի ազդեցության կենտրոնները: Վերջիններս կողմնորոշված են կիրառական բնույթի հետազոտություններ իրականացնելու ուղղությամբ և առաջարկում են հանրային նշանակության ու սոցիալ-քաղաքական խնդիրների լուծումներ: Այս կենտրոնների գործունեությունը չի սահմանափակվում քաղաքական վերլուծությամբ, դրանք ակտիվորեն մշակում և առաջ են մղում երաշխավորություններ, զբաղվում են որոշակի քաղաքական և սոցիալական խմբերի շահերի առաջմղմամբ, քաղաքացիների լուսավորություն կրթություն և համեմատաբար առավել շատ են ազդում հանրային քաղաքականության վրա: Դրանց վերլուծական արտադրանքն առավել որոշակի է, ոչ ծավալուն, իսկ դրանց հանրայնացմանն ու տարածմանը շատ ավելի երկար ժամանակ է հատկացվում, քան պատրաստմանը, քանի որ նման հաստատություններն առավել կենտրոնացած են PR-ի, հատուկ ակցիաների և իրադարձությունների կազմակերպման ուղղությամբ: Ազդեցության կենտրոնների յուրահատուկ արտադրանքն են ուսուցման բազմապիսի դասընթացների ծրագրերը, կրթաթոշակներն ու դրամաշնորհները, որոնք տրվում են այս կենտրոնների գաղափարներն առաջմղող մարդկանց և նախագծերին: Նման կենտրոնների աշխատակիցները հաճախ ունեն քաղաքական և հասարակական գործունեության փորձառություն:

Կախված սոցիալ-քաղաքական կողմնորոշումից՝ Դ. 2այց և ն ազդեցության կենտրոնները բաժանել է *գաղափարախոսական (կուսակցական)* և

քաղաքացիական կենտրոններին: Գաղափարախոսական (կոլսակցական) կենտրոններն ունեն որոշակի գաղափարախոսական ուղղվածություն: Դրանք հաճախ կիսում են այն քաղաքական կոլսակցության գաղափարախոսությունը, որի հետ կապված են և/կամ գործում են որևիցե քաղաքական կոլսակցությանը կից: Առավել պատկերավոր օրինակներին է Գերմանիայի Կոնրադ Ադենաուերի հիմնադրամը, որը գործում է Քրիստոնեաժողովրդավարական միությունը կից, և Յանս Ծիդելի հիմնադրամը, որը գործում է Քրիստոնեասոցիալական միությունը կից: Այս համատեքստում պետք է շեշտել, որ Գերմանիան կոլսակցապատկան ուղեղային կենտրոններին ամենազարգացած համակարգ ունեցող երկրներին է: Նման հաստատությունները գործում են հովանավորների՝ քաղաքական կոլսակցությունների, անհատների և կորպորացիաների միջոցների հաշվին:

Յավել ենք, որ կոլսակցապատկան ուղեղային կենտրոններին աշխատակազմը հաճախ համալրվում է ներկայամ նախկին կոլսակցական պաշտոնյաներով, քաղաքական գործիչներով և կոլսակցության անդամներով: Վերջիններին օրակարգի վրա մեծապես ազդում են կոլսակցության պահանջները⁷¹: Բացի այդ, կոլսակցապատկան ուղեղային կենտրոնները մեծ դեր են խաղում քաղաքական սոցիալականացման տեսանկյունից: Վերջիններս փորձում են քաղաքական կյանք ներգրավել քաղաքականության նկատմամբ անտարբեր քաղաքացիներին և աջակցության համախմբման

⁷¹ McGann J., Weaver K., Think Tanks and Civil Societies: Catalysts for Ideas and Action // Transaction Publication, New Brunswick, 2000, p. 7.

նպատակով փոխակերպում են կուսակցության ծրագրահենքը (պլատֆորմ)⁷²:

Ի տարբերություն վերջիններիս՝ *քաղաքացիական կենտրոններն* իրականացնում են հանրության շահերից բխող կիրառական հետազոտություններ: Նման կենտրոնների ղեկավար մարմինը հաճախ ունենում է կոլեգիալ ղեկավարման բնույթ, կամ ղեկավարը որոշվում է ընտրության միջոցով: Ֆինանսական միջոցները գոյանում են անդամավճարներից, հիմնադրամների դրամաշնորհներից և մասնավոր նվիրատվություններից:

Ուղեղային կենտրոնների տիպաբանության ուսումնասիրության համատեքստում ներկայացնենք նաև Մ. Գորնոևի շակած աղյուսակի համառոտ տարբերակը, որում ամփոփվում են նրա կողմից առանձնացրած՝ ա) համալսարաններ առանց ուսանողների (ակադեմիական բնույթի), բ) հիմնականում պայմանագրային հիմունքներով հետազոտություններ իրականացնելու գործում մասնագիտացված, գ) որոշակի գաղափարախոսություն կրող խմբերի շահերը ներկայացնող և դ) քաղաքական կուսակցությունների հետ առնչվող ուղեղային կենտրոններն ու դրանց առանձնահատկությունները⁷³ (տե՛ս աղյուսակ 1): Սակայն անհրաժեշտ է նշել, որ հաճախ բավականին աղոտ են լինում աղյուսակում հիշատակված՝ «Որոշակի գաղափարախոսություն կրող խմբերի շահերը ներկայացնող ուղեղային կենտրոններ» և «Քաղաքական կուսակցությունների հետ առնչվող ուղեղային կենտրոններ» տեսակների միջև առկա

⁷² **Иванов Д.Ю.**, Формирования политической аналитики негосударственных аналитических центров в современной России // Дис. на соиск. уч. ст. канд. пол. н., специальность 23.00.02 – Политические институты, процессы и технологии, Санкт-Петербург, 2013, с. 22.

⁷³ **Горный М.Б.**, Фабрики мысли и центры публичной политики в конце XX – начале XXI веков // URL: http://www.civisbook.ru/files/File/Gomyi_fabriki.pdf

տարբերությունները: Կարծում ենք՝ շփոթ չառաջացնելու համար առավել տեղին կլիներ միավորել այս երկու տիպերը մեկ ընդհանուր՝ գաղափարայնացված/կուսակցապատկան ուղեղային կենտրոններին տեսակի մեջ:

Աղյուսակ 1.

Ուղեղային կենտրոններին տիպային առանձնահատկությունները՝ ըստՄ.Գորնոևեկնաբանության

| Տեսակ | Համալսարաններ առանց ուսանողների (ակադեմիական ուղեղային կենտրոններ) | Պայմանագրային հետազոտություններ (պայմանագրային ուղեղային կենտրոններ) | Որոշակի գաղափարախոսություն կրող խմբերի շահերը ներկայացնող ուղեղային կենտրոններ | Քաղաքական կուսակցություններին հետառնչվող ուղեղային կենտրոններ |
|------------------------------|---|---|--|---|
| Աշխատակազմ | Վստահելի, անկողմնակալ և ճանաչված գիտնականներ: | Վստահելի, ճանաչված գիտնականներ, ապագա գաղափարայնացված: | Գաղափարայնացված մասնագետներ: | Կուսակցականներ և համակիրներ: |
| Տիկանսական աղբյուրներ | Հիմնադրամներ, կորպորացիաներ, մասնավորանձինք: | Կառավարական գործակալություններ: | Հիմնադրամներ, կորպորացիաներ, մասնավորանձինք: | Կուսակցություններ, կառավարություն: |
| Օրակարգի որոշում | Հետազոտողներն ինքնուրույն, հիմնադրամներ: | Կառավարական գործակալություններ: | Ուղեղային կենտրոնի ղեկավարներ: | Կուսակցական ծրագրերի հիմնավորապես: |
| Արտադրանք և ոճ | Ակադեմիական մենագրություններ, հոդվածներ ամսագրերում: Ապագա գաղափարայնացված: | Չեկոլյցներ կառավարական գործակալություններին: Օբյեկտիվ և ապակուսակցական: | Ընթացիկ քաղաքական հիմնախնդիրներին վերաբերյալ համառոտ փաստաթղթեր: | Տարբեր: |
| Ենթատեսակներ | Էլիտար քաղաքական կուլմբներ, մասնագիտացված ուղեղային | Պայմանագրի հիման վրա աշխատող մասնագիտացված հետազոտակա | Ծահապաշտպան մասնագիտացված ուղեղային | --- |

| | | | | |
|------------------------------------|--|--|---|--|
| | կենտրոններ: | կենտրոններ: | կենտրոններ: | |
| Աջակցություն թյան պայմաններ | Ապակուսակցական փորձագետների աջակցման մշակույթ և նվիրատվությունների ավանդույթներ: | Քաղաքական հետազոտությունների պետական աջակցություն: | Հնարավոր աջակցություն հիմնադրամներին, բիզնեսի և շահերի խմբերին: | Կուսակցություններին հասանելի պետական \$ինանսավորում: |
| Օրինակ | Բրուքինգսի ինստիտուտ (ԱՄՆ): | ՌԷՆԴ կորպորացիա (ԱՄՆ), Ռազմավարական մշակումների կենտրոն (ՌԴ) Ժողովրդավարություն իսրայելական ինստիտուտ (Իսրայել): | «Ժառանգություն» հիմնադրամ (ԱՄՆ), Հայեկի ինստիտուտ (Ավստրիա): | Ադենաուերի հիմնադրամ (Գերմանիա), Էպիգենետ (ՌԴ): |

Ուղեղային կենտրոնները տիպաբանություններով հրականացման բավականին յուրահատուկ մոտեցում է առաջարկում Ա. Սունգուրովը, ով ուղեղային կենտրոնները տեսակավորում է ըստ իշխանական որոշումների ընդունման գործընթացի վրա ունեցած ուղղակի և անուղղակի ազդեցության: Ըստ հետազոտողի՝ որոշ ուղեղային կենտրոններ ուղղակիորեն նպատակաուղղված են հանրային քաղաքականության այս կամ այն կողմի բարելավմանը (advocacy-oriented groups): Վերջիններս քննադատում են առկա քաղաքականությունը, տալիս են երաշխավորություններ իրավիճակի բարելավման և լուծմանը հասնելու տարբեր գործիքների վերաբերյալ՝ ազդելով որոշում ընդունող պատասխանատու անձանց վրա: Նման ուղեղային կենտրոնները կարելի է անվանել բարեփոխիչ, այսինքն՝ նպատակաուղղված որոշակի ոլորտներում այս կամ այն բարեփոխման իրականացմանը: Մյուս ուղեղային կենտրոնները կողմնորոշված են կրթության ուղղությամբ (educated-oriented groups). դրանք քաղաքականության և որոշում

կայացնողների վրա ազդում են անուղղակիորեն՝ համաժողովների և սեմինարների կազմակերպման, գրքերի և հոդվածների հրատարակության և ՉԼՄ-ների հետ փոխգործակցության միջոցով: Դրանց գործունեությունն ուղղված է որոշակի լուծումների հասնելուն, այլ ավելի շուտ՝ հանրային քննարկումների օրակարգի հստակեցման և ապագա առաջնորդների մեջ որոշակի պատկերացումների ձևավորման վրա⁷⁴:

Ոլորտի մեկ այլ հայտնի տեսաբան Դ. Սթոունսն ուղեղային կենտրոնները բաժանում է հինգ տեսակի.

1. գործարար կառույցների առընթեր,
2. կառավարության կողմից ստեղծված կամ պետական հովանավորության ներքո գործող,
3. կուսակցապատկան,
4. քաղաքացիական հասարակության անկախ ուղեղային կենտրոն, որը հիմնադրվել է որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն,
5. քաղաքականության հետազոտության ինստիտուտ, որը գործում է համալսարանի առընթեր⁷⁵:

Իր հերթին Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի ղեկավար, ուղեղային կենտրոնների հայտնի մասնագետ Ջ. Մաք-Գանի կողմից 2016 թ. հրապարակված աշխատությունում տեղ է գտել ուղեղային կենտրոնների հետևյալ տիպաբանությունը.

1. *ինքնավար և անկախ*. ինչը ենթադրում է նշանակալի ազատություն շահերի որևիցե

⁷⁴ *Сунгуров А.Ю.*, Как возникают политические инновации: «фабрики мысли» и другие институты-медиаторы // Политическая энциклопедия, М., 2015, с. 100-101.

⁷⁵ *Stone D.*, Think Tanks and Policy Advice in Countries in Transition // Asian Development Bank Institutes symposium: How to Strengthen Policy Oriented Research and Training in Vietnam, 2005, pp. 4-5.

խմբից կամ դոնորից և անկախությունը իր գործունեության մեջ,

2. *քվազի-անկախ*. կառավարությունն իր անկախ, սակայն հիմնական ֆինանսավորողից և ուղեղային կենտրոնի գործունեության վրան շանակալի ազդեցությունը չափերի որևէ խմբից, դոնորից կամ պայմանագրային գործակալության կողմից վերահսկվող,
3. *կառավարությանն առընթեր*. կառավարությանը կից կամ որպես կառուցվածքային ստորաբաժանում գործող ուղեղային կենտրոն,
4. *քվազի-կառավարական*. բացառապես պետական դրամաշնորհներով և պայմանագրերով ֆինանսավորվող, բայց պաշտոնապես պետական կառավարման համակարգի մասնակցավորող կենտրոն,
5. *համալսարանին կից*. քաղաքականության հետազոտություններին համալսարանական կենտրոն,
6. *քաղաքական կոնսակցությունը կից*. պաշտոնապես քաղաքական կոնսակցությանը կից գործող կենտրոն,
7. *կորպորատիվ (շահույթ հետապնդող)*. որևիցե կորպորացիային առընթեր կամ պարզապես շահույթ հետապնդելու նպատակ ունեցող քաղաքականության ուսումնասիրություններին կենտրոն⁷⁶:

Այնուամենայնիվ, կարծում ենք՝ հնարավոր է չհամաձայնել Ջ. Մաք-Գանի՝ «կորպորատիվ (շահույթ հետապնդող)» կազմակերպություններն ուղեղային կենտրոններին շարքում դասելու մոտեցման հետ: Այս պարագայում առաջնային նպատակ դնելով շահույթի ստացումը՝ ուղեղային կենտրոնը շեղվում է հանրային քաղաքականության մեջ իր

⁷⁶ *McGann J.*, *The Fifth Estate: Think Tanks, Public Policy and Governance* // “Brookings Institution Press”, Washington D.C., 2016, p. 13.

ուսնեցած առաքելությունն ից՝ հանրային շահի սպասարկումից: Բացի այդ, շահույթ հետապնդող կազմակերպության տեսանկյունից առաջին պլան մղվող խնդիրներին է սեփական գործունեության արդյունավետությունը (շահույթաբերության տեսանկյունից), ինչը սահմանափակ ֆինանսավորման դեպքում ապահովվելու է ավելի քիչ արհեստավարժ փորձագետներ ներգրավելով կամ խնդրի մակերեսային ուսումնասիրության մեջ, այսինքն՝ գիտականության ու խնդրի լուսաբանման նպատակով համակողմանի տեղեկատվության տրամադրումը փոխարինվելու է «փաթեթավորմամբ» (երբ շեշտադրումը կատարվում է ոչ թե բուն հետազոտության, այլ դրա գեղեցիկ շնորհանդեսի կազմակերպման վրա):

Ամփոփելով ուղեղային կենտրոնների ուսումնասիրության մեջ գաղափարային տարբեր հետազոտողների կարծիքների ներկայացումն ու դրանց վերաբերյալ մեր վերլուծությանը՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև «Բրիտաննիկա» համացանցային հանրագիտարանում տեղ գտած տիպաբանությանը, որը մեր կարծիքով ուղեղային կենտրոնների տիպաբանության ակադեմիական նկարագրության լավագույն օրինակներին է: Ըստ հանրագիտարանային բացատրության՝ գոյություն ունեն ուղեղային կենտրոնների առնվազն չորս տեսակ: Առաջինը *գաղափարային անոթային կենտրոններն* են (ideological tanks), որոնք ունեն հստակ քաղաքական կամ, առավել լայն իմաստով, գաղափարախոսական փիլիսոփայական հենարան: Դրանք նմանվում են շահապաշտպան կենտրոններին (advocacy tanks), որոնք հիմնադրվել են խնդիրների հետազոտության ու լուծման նպատակով և օրենսդիրներին իրենց որոշումներն ընդունելու ուղղությամբ լոբբինգ են իրականացնում: Վերջիններս օրինակներն

ընդգրկում են Մեծ Բրիտանիայի Պահպանողական և Լեյբորիստական կուսակցությունների համար տնտեսական և քաղաքական ոլորտին առնչվող գաղափարներ մատակարարող, ինչպես նաև Գերմանիայի կուսակցությունների կից գործող ուղեղային կենտրոնները: Հաջորդ տեսակը *մասնագիտացված կենտրոններն են* (specialist tanks): Այս տեսակի մեջ են մտնում այն կենտրոնները, որոնք ունեն թեմատիկ ուղղվածություն: Առավել տարածված ուղղություններից է արտաքին և հանրային քաղաքականությունը, սակայն որոշ ուղեղային կենտրոններ մասնագիտացված են այնպիսի ուղղությունների վրա, որոնցից է շրջակա միջավայրի պաշտպանությունը: Երրորդ տեսակը ներառում է ոչ թե ազգային, այլ *տարածաշրջանային կամ վերազգային մակարդակում գործող կենտրոններ*, որոնցից են ԵՄ հարաբերությունների առնչվող՝ Բրյուսելում տեղակայված ուղեղային կենտրոնները: Վերջին՝ չորրորդ տեսակն են, այսպես կոչված՝ *«ուղեղային և իրականացնող կենտրոնները»* (think and do tanks), որոնք, բացի ավանդական հետազոտական գործունեությունից, ակտիվություն են դրսևորում նաև գործնական հարթությունում, ինչպես օրինակ՝ բարեգործական նախագծերի ֆինանսավորումը: Այս տեսակի ուղեղային կենտրոնները որոշակի նմանություն ունեն ոչ կառավարական կազմակերպությունների⁷⁷:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ ամերիկյան ուղեղային կենտրոնները տիպաբանվում են ըստ.

- ա) գաղափարական կողմնորոշվածության,
- բ) մեկ կամ մի քանի խնդիրներով մասնագիտացման,
- գ) նախագծերի իրականացման հրատապություն,

⁷⁷ Encyclopedia Britannica // URL: <https://www.britannica.com/topic/think-tank>

դ) գործունեության բնույթի:

Այսպես, առաջին՝ *գաղափարական առումով կողմնորոշված* ուղեղային կենտրոններին հետկապված նշենք, որ ներկայումս ԱՄՆ-ի խոշորագույն ուղեղային կենտրոններին մեծամասնությամբ ունենան անկախ (ապակուսակցական) կարգավիճակ: Նման ուղեղային կենտրոններին շարքում կարելի է դասել Միջազգային հարաբերությունների խորհուրդը, Քարնեգի հիմնադրամը, Պետերսոնի Միջազգային տնտեսության ինստիտուտը, Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոն, Գլոբալ զարգացման կենտրոնը, ՌԷՆԴ կորպորացիան և այլն: Սակայն ԱՄՆ-ում տարածված են նաև կուսակցությունների հարող ուղեղային կենտրոնները, ինչպիսին է «Ժամանակություն» հիմնադրամը, Ձեռնարկատիրության ամերիկյան ինստիտուտը, Յուզեթի ինստիտուտը, որոնք համագործակցում են ԱՄՆ-ի Յանրապետական կուսակցության հետ: Ինչպես նաև՝ Կատոնի ինստիտուտը, Վ. Վիլսոնի Միջազգային հարաբերությունների հետազոտությունների գիտական կենտրոնը, Պրոգրեսիվ քաղաքականության ինստիտուտը, որոնք աշխատում են ԱՄՆ-ի Դեմոկրատական կուսակցության հետ: Միաժամանակ ուղեղային կենտրոններն առաջատար դիրքը զիջում են միմյանց՝ կախված նրանից, թե որ կուսակցությունն է տվյալ պահին իշխանության: Ի տարբերություն դրանց՝ անկախ ուղեղային կենտրոններն արդեն երկար ժամանակ է՝ կարողանում են կայուն պահպանել սեփական դիրքերը, և նախագահական ընտրությունները, որպես կանոն, չեն ազդում դրանց վարկանիշի վրա: Յենց այդ պատճառով ԱՄՆ-ի ուղեղային կենտրոններին ուրիշում առաջատար դիրքեր են պահպանում

ՌԷՆԴ կորպորացիան, Քարնեգի հիմնադրամը և Բրուքինգսի ինստիտուտը:

Մեկ կամ մի քանի խնդիրներում մասնագիտացված ուղեղային կենտրոններ. ամերիկյան բազմաթիվ ուղեղային կենտրոններ պատմականորեն ստեղծվել են որոշակի խնդիրների լուծման նպատակով: Բացի դրանից, ժամանակի ընթացքում իրենց իրավասու թյան տակ ընկնող հարցերի շրջանակը պարբերաբար ավելանալու հետևանքով ներկայումս բոլոր խոշոր ուղեղային կենտրոններն ունեն գործունեություն բազմաթիվ ուղղություններ: Այնուամենայնիվ, մեկ խնդրի վրա կողմնորոշվածությունը որոշ ուղեղային կենտրոններում դեռևս պահպանվում է: Մասնավորապես կարելի է առանձնացնել Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոն, Մերձավորարևելյան քաղաքականության հետազոտությունների կենտրոնը և այլն:

Նախագծերի իրականացման հրատապություն. Նման կենտրոնները զբաղվում են երկարաժամկետ (տասնամյակների կտրվածքով) ազգավարական նախագծերով: Ներկայումս այդ ուղղությամբ մասնագիտացվել են միայն մի քանի խոշոր ուղեղային կենտրոններ՝ ՌԷՆԴ կորպորացիա, «Ժամանակություն» հիմնադրամ, Անվտանգության քաղաքականության կենտրոն և այլն: Սակայն ժամանակակից ուղեղային կենտրոնների մեծամասնությունը կողմնորոշված է կարճաժամկետ և նեղ մասնագիտացած նախագծերի մշակման գործում: Նման մշակումներով զբաղվում են մասնավորապես Բարեփոխումների ինստիտուտը (Reform Institute), Քաղաքի ինստիտուտը (Urban Institute), Միջազգային քաղաքականության հետազոտությունների (Foreign Policy Research) կենտրոնը և բազմաթիվ այլ հաստատություններ:

Գործունեության բնույթ. վերջին տարիներին նկատվում է ամերիկյան ուղեղային կենտրոնների

կողմնորոշման փոփոխման միտում դեպի տեղեկատվական-վերլուծական և խորհրդատվական բնույթի աշխատանքների իրականացում: Տեղեկատվական-վերլուծական աշխատանքը հաճախ նախաձեռնում և հետազոտության թեմայի ընտրությանը կատարում է հենց տվյալ կազմակերպությանը: Ի տարբերություն տեղեկատվական-վերլուծական աշխատանքի՝ խորհրդատվական գործունեությանը, որպես կանոն, կրում է պատվիրված բնույթ և մշտապես ունենում է հասցեատեր: Նման ուղեղային կենտրոններում վերլուծական աշխատանքը կարևոր է միայն նախապատրաստման փուլում, այն ժամանակ, երբ վերջնական արդյունքը հասարակության տարբեր ոլորտներում ի հայտ եկող խնդիրների լուծման «դեղատոմսերն» են: Նման իրավիճակը ոչ հազվադեպ դասավորվում է այնպես, որ խորհրդատվական ծառայության մատուցած հաստատության իրականացրած վիճակագրական և այլ հետազոտությանը արդյունքներն ընդհանրապես ենթակա չեն հրապարակման և չեն ուղարկվում նախագծի պատվիրատուին. անմիջականորեն իրականացված պատվեր են համարվում բացառապես իրադարձությաններին զարգացման սցենարները կամ խնդրի լուծմանն ուղղված գործողությունների ծրագիրը⁷⁸:

Ինչ վերաբերում է Չայաստանի ուղեղային կենտրոնների ոլորտին, ապա այս հարցին առավել մանրամասն կանդորամենանք այսատենախոսության չորրորդ գլխում: Միաժամանակ նշենք, որ հաշվի առնելով հարցի կապակցության վերոնշյալ մոտեցումները՝ մեր կողմից մշակվել է հայկական ուղեղային կենտրոնների տիպաբանությանը: Չարկ է

⁷⁸ Ведущие мировые фабрики мысли сегодня: новые смыслы на службе государства. // Электронная публикация: Центр гуманитарных технологий, (15.10.2010). URL: <http://gtmarket.ru/laboratory/expertize/2010/2760>

նշել նաև, որ չնայած մեզանում գործող մի քանի տասնյակ հաստատությունների, որոնք այս կամ այն չափով կարող են դասվել ուղեղային կենտրոնների շարքում, այդ թվում՝ մի շարք կայացած ուղեղային կենտրոնների առկայությունը, ցավոք, այս ոլորտը, ընդհանուր առմամբ, դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Վերջին հանգամանքով պայմանավորված՝ Չայաստանում հանրային քաղաքականության հետազոտական կենտրոնների տեսակները և սթաբիլությանը սահմանափակ են: Այնուամենայնիվ, հիմք ընդունելով ինստիտուցիոնալ բնորոշիչները՝ Չայաստանում առկա են հստակ ընդգծված չորս տեսակի ուղեղային կենտրոններ՝

1. անկախ, ոչ պետական ուղեղային կենտրոններ,
2. պետական կամ քվադրի-պետական ուղեղային կենտրոններ, որոնց տակ պետք է հասկանալ պետական կառավարման որևէ կառույցին առընթեր կամ պետության կողմից հիմնադրված և առավել ապես պետական ֆինանսավորմամբ գործող ուղեղային կենտրոններ,
3. համալսարանական կամ համալսարանին կից գործող ուղեղային կենտրոններ,
4. Արտերկրի ուղեղային կենտրոնների մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, ասոցացված կամ միջազգային ցանցային ձևաչափի տեղական կազմակերպություններ:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ քաղաքագիտական շրջանակներում ուղեղային կենտրոնների տիպաբանության վերաբերյալ միասնական մոտեցումներ դեռևս չեն ձևավորվել: Այս հանգամանքն առավել ապես պայմանավորված է տարբեր երկրներում հանրային քաղաքականության

մշակույթային և քաղաքական համակարգի
առանձնահատկություններով, ձևավորված
ավանդույթներով, ունի կայացած ության
մակարդակով, ինչը բարդացնում է համապարփակ
տիպաբանության մշակման աշխատանքները: Ավելին,
միասնական տիպաբանության մշակումը
նպատակահարմար լինել է չի կարող, քանի որ այն
արհեստական խմբավորման միջոց է, որն ուղեղային
կենտրոնի ընտրության կամ նրան որևէ
գործառնության պատվիրակման վրա էական
ազդեցություն ունենալ չի կարող: Սակայն
ուղեղային կենտրոնների տիպաբանության
դիտարկումն առանցքային նշանակություն ունեցող
հանգամանք է, քանի որ կախված
կազմակերպարավական կարգավիճակից,
գաղափարայնացված ության և անկախության
աստիճաններից, ֆինանսավորման եղանակներից ու
աղբյուրներից, ակադեմիան
հաստատության ներքին կից լինել է լինել ու
հանգամանքից, ինտելեկտուալ արտադրանքի
թիրախային լսարանների ընտրության հից ու դրանց
վրա կենտրոնացված ությունից՝ ուղեղային
կենտրոնները տարբեր կերպ են իրականացնում
իրենց հիմնական գործառնությունը, որոնք տարբեր
կերպ են ընկալվում ու գնահատվում նաև ինտելեկտուալ
արտադրանքի գնորդների ու սպառողների
կողմից: Այդ է պատճառը, որ ուղեղային
կենտրոնների ճնշող մեծամասնությունը
գործառնական իմաստով ունեն «հիբրիդային»
բնույթ: Ելնելով դրանից՝ կարծում ենք, որ ազդել
նպատակահարմար է ուղեղային կենտրոնները
դասակարգել ինստիտուցիոնալ բնորոշիչների
հիման վրա, այսինքն՝ հիմքում դնել դրանց
իրավական կարգավիճակը, ենթակայությունը, անկախ
խոսքայն մակարդակը, ֆինանսավորման ձևաչափերն

նւ աղբյուրները, որոնք էլ կանխորոշում են
նւղեղային կենտրոնների գործառնություն
տիպաբանությունը:

**ԳԼՈՒԽ 11. ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳԵՆԵԶԻՍՆՈՒ
ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ**

**2.1. ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՑՄԱՆ ԳՈՐԾԸ ՆԹԱՑԸ ՔԴԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ**

Պետու լ թ յ ա ն կ ո ղ մ ի ց փ ո Ր ձ ա գ ի տ ո լ թ յ ա ն ,
ար հ ե ս տ ա վ ար ժ խ ո Ր հ Ր դ ա տ վ ո լ թ յ ա ն և պ ե տ ա կ ա ն
ք ա ղ ա ք ա կ ա ն ո լ թ յ ա ն ի ն տ ե լ ե կ տ ո լ ա լ ա պ ա հ ո վ մ ա ն
ն կ ա տ մ ա մ ք պ ա հ ա ն ջ ա Ր կ ը ձ և ա վ ո Ր վ ե լ Է դ ե ռ և ս
հ ն ա գ ո լ յ ն ժ ա մ ա ն ա կ ն ե Ր ո լ մ : Պ ա տ մ ո լ թ յ ա ն ը հ ա յ տ ն ի
ե ն ք ա գ մ ա թ ի վ փ ա ս տ ե Ր , ե Ր ք թ ա գ ա վ ո Ր ա կ ա ն և
կ ա յ ս ե Ր ա կ ա ն պ ա լ ա տ ն ե Ր ո լ մ կ ա ռ ա վ ար մ ա ն ,
ք ա ղ ա ք ա կ ա ն ո լ թ յ ա ն և հ ա ն Ր ա յ ի ն կ յ ա ն ք ի տ ա Ր ք ե Ր
հ ա Ր ց ե Ր ի վ ե Ր ա ք ե Ր յ ա լ պ ե տ ո լ թ յ ա ն ա ռ ա ջ ն ո Ր դ ն ե Ր ի ն
ա ջ ա կ ց ե լ Է ն ի մ ա ս տ ո լ ն ն ե Ր ն ո լ խ ո Ր հ Ր դ ա կ ա ն ն ե Ր ը :
Ա վ ե լ ի ն , ո Ր ո շ տ ի Ր ա կ ա լ ն ե Ր ա յ ն ք ա ն Է ն կ ա Ր և ո Ր ե լ
ի Ր ե ն ց խ ո Ր հ Ր դ ա կ ա ն ն ե Ր ի ն , ո Ր մ ի ջ ո ց ն ե Ր Է ն
փ ն տ Ր ե լ ` ն ո լ յ ն ի ս կ մ ա հ ի ց հ ե տ ո ` ա ն դ Ր շ ի Ր ի մ յ ա ն
կ յ ա ն ք ո լ մ , ն Ր ա ն ց ծ ա ռ ա յ ո լ թ յ ո լ ն ն ե Ր ի ց օ գ տ վ ե լ ո լ
հ ա մ ա Ր : Ո Ր պ ե ս ա ս վ ա ծ ի պ ա տ կ ե Ր ա վ ո Ր օ Ր ի ն ա կ կ ա Ր ո ղ
Է ն ք ն շ ե լ 1974 թ . Չ ի ն ա ս տ ա ն ո լ մ հ ա յ տ ն ա ք ե Ր վ ա ծ Ց ի ն
դ ի ն ա ս տ ի ա յ ի ա ռ ա ջ ի ն կ ա յ ս ե Ր ` Ց ի ն Շ ի հ ո լ ա ն դ ի ի
(秦始皇帝) (մ .թ .ա . 259-210) դ ա մ ք ա Ր ա ն ը , ո Ր ն ա ռ ա վ ե լ հ ա յ տ ն ի Է
«Տ ե Ր Ր ա կ ո տ ա յ ի մ ա Ր տ ի կ ն ե Ր » ա ն վ ա ն ո լ մ ո վ , ո Ր տ ե ղ
գ տ ն վ ե լ Է ն ա վ ե լ ի ք ա ն 8000 կ ե Ր ա մ ի կ ա կ ա ն , գ ո լ ն ա վ ո Ր
կ ա վ ի ց պ ա տ Ր ա ս տ վ ա ծ ա Ր ձ ա ն ն ե Ր : Ա յ ս տ ե ղ
հ ա տ կ ա ն շ ա կ ա ն Է , ո Ր , ի թ ի վ ս կ ա յ ս ե Ր գ ի ն վ ո Ր ն ե Ր ի (ա յ դ
թ վ ո լ մ ` ք ա Ր ձ Ր ա ս տ ի ճ ա ն գ ո Ր ա վ ար ն ե Ր ի) ա Ր ձ ա ն ն ե Ր ի ,
ո Ր ո ն ք կ ո չ վ ա ծ Է ի ն պ ա շ տ պ ա ն ե լ ո լ կ ա յ ս Ր ի ն
ա ն դ Ր շ ի Ր ի մ յ ա ն կ յ ա ն ք ո լ մ , դ ա մ ք ա Ր ա ն ո լ մ ա ռ ա ն ձ ի ն
տ ե ղ Է գ Ր ա վ ո լ մ ն ա ն կ ա յ ս Ր ի ա ն մ ի ջ ա կ ա ն
խ ո Ր հ Ր դ ա կ ա ն ի կ ա վ ե ա Ր ձ ա ն ը :

Այնուամենայնիվ, մինչև XX դարը փորձագետները և փորձագիտական գիտելիքի ինստիտուցիոնալացումը տեղի չի ունեցել: Արհեստավարժ մակարդակում քաղաքական խորհրդատուները ի հայտ գալը կապված է պետական համակարգում, քաղաքական կուսակցություններում, այլ հասարակական-քաղաքական միավորումներում որոշումների ընդունման ինտելեկտուալ աջակցության ինստիտուտի ի հայտ գալու, իսկ հետագայում՝ պետական քաղաքականության ուսումնասիրության ուղղությամբ մասնագիտացված կազմակերպությունները կազմավորման հետ⁷⁹:

Նման մասնագիտացված կազմակերպությունները ծագման համար կարևոր խթան հանդիսացավ պետական քաղաքականության ոլորտում, քաղաքական և կառավարչական որոշումները կայացման գործընթացում ուսումնասիրության ներքին, վերլուծության ու ներքին, մշակումների և այլ ընտրանքային առաջարկությունները նկատմամբ պահանջարկի աճը: Մյուս կողմից, քաղաքական փորձագիտության ինստիտուտի ձևավորումն ու կայացումը կախված է ին որոշակի երկրի քաղաքական համակարգի, քաղաքական որոշումները ընդունման գործընթացի առանձնահատկություններից և պետական կառույցների հետաքրքրվածությունից՝ զարգացնելու սեփական կարողությունները, ծառայեցնելու պետության ինտելեկտուալ ներուժն առկա սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների լուծմանը և ձևավորելու ապագային ուղղված ազդավարական տեսլական:

⁷⁹ *Иванов Д.Ю.*, Формирования политической аналитики негосударственных аналитических центров в современной России // Дис. на соиск. уч. ст. канд. пол. н., специальность 23.00.02 – Политические институты, процессы и технологии, Санкт-Петербург, 2013, с. 13.

Այդպիսի կազմակերպությունների ցանցի ներքին 1831 թ. դուքս Վելլինգթոնի կողմից Մեծ Բրիտանիայում հիմնված և առայսօր գործող Պաշտպանական և անվտանգության հետազոտությունների թագավորական միավորված ծառայությունների ինստիտուտը (Royal United Services Institute for Defence and Security Studies - RUSI), որը սկզբնապես գործել է որպես զինվորականների գիտական, արհեստավարժ ընկերակցություն: XIX դարի երկրորդ կեսից ինստիտուտը ռազմական ռազմավարության լիարժեք հետազոտությունների, սցենարային մշակումների, կանխատեսումների և խորհրդատվությունների շնորհիվ սկսել է որոշակի ազդեցություն և ձեռք բերել: Ըստ Յու. Նիկիտինայի՝ RUSI-ն առաջին վերլուծական կենտրոնն էր, որը գործում էր միջազգային հարաբերությունների և անվտանգության լիարժեք հետազոտությունների մասին:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ այս լիարժեք հետազոտությունների կենտրոնների ցանցի սկզբնապես ձևավորվել է 1884 թ. Լոնդոնում սոցիալիստական քաղաքական կուլտուրայի կողմից ստեղծված «Ֆաբիանյան հանրությունը», որն այժմ էլ գործում է որպես Մեծ Բրիտանիայի Լեյբորիստական կուսակցության վերլուծական կենտրոն: Այս կազմակերպությունը, ի սկզբանե լինելով քաղաքական կուլտուրայի, զբաղվել է հասարակական գործընթացների վերլուծությամբ՝ ձգտելով հասնել սոցիալիստական համակարգին:

⁸⁰ *Никитина Ю.А.*, Международные отношения и мировая политика: Введение в специальность: Учеб. пособие для студентов вузов // Аспект Пресс, М., 2009, с. 95.

աստիճանական անցմանը, և այդ նպատակով զբաղվել է քաղաքական բարեփոխումների նախագծերի մշակմամբ և սոցիալիզմի առավել ությունների քարոզչություններով⁸¹: Մյուս կողմից, ամերիկացի մասնագետ Ջ. Սմիթը որպես ուղեղային կենտրոնների սկզբնավորման առաջին փորձնշում է 1865 թ. ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգում բարեփոխումների կողմնակիցների հավաք-համաժողովը, երբ հիմնվել է Սոցիալական գիտությունների ամերիկյան ընկերակցությունը (American Social Science Association)⁸²:

Ավելին, քաղաքագիտական գրականության մեջ առկա է այնպիսի տեսակետ, ըստ որի՝ Չինաստանում գործառնական առումով ներկայիս ուղեղային կենտրոնների նման կառույցներ և խորհրդատվական խմբեր եղել են շատավելի վաղ ժամանակներում, ըստ որոշ հեղինակների՝ նույնիսկ Կոնֆուցիոսի օրոք: Փորձագետների և խորհրդատվություններ արամադրողների այդ խմբերն իրենք իրենց անվանել են «թագավորի խորհրդատուներ» (counselors of the prince): Որոշ գիտնականներ ուղեղային կենտրոնների վաղ օրինակ են համարում «հետազոտական համայնքները» (study societies «学会 xuehui»), որոնք ծաղկել են XIX դարի սկզբին բարձրաստիճան պետական ծառայողների հովանավորությունով՝ նպաստելով «մտածողության մոդեռնիստական դպրոցի» ձևավորմանը և հանգեցնելով 1897 թ. Միջազգային ուսումնասիրությունների չինական ինստիտուտի (Chinese Institute of International Studies) ձևավորմանը, որը միջազգային ուսումնասիրությունների գծով Չինաստանի առաջին ինստիտուտն է⁸³:

⁸¹ *Медушевский Н.А.*, Экспертное сообщество в политической сфере в конце XX – начале XXI века // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук. по спец. 23.00.02 - «Политические институты, процессы технологии», М., 2011, с. 70-71.

⁸² *Smith J.*, The idea brokers: Think tanks and the rise of the new policy elite // Free Press, New York, 1996, p. 58.

⁸³ *Bondiguel Th., Kellner Th.*, The impact of China’s foreign policy think tanks // BICCS Asia Paper Vol. 5 (5), 2009, p. 5.

Յատկանշական է, որ բրիտանական առաջին վերլուծական կենտրոնների ծագումը հաճախ կապում են Ջեյմս Բենթամի (Jeremy Bentham) և Ջեյմս Միլլի (James Mill) անունների և XIX դարի կեսերին ուտիլիտարիզմի գաղափարների տարածման հետ⁸⁴։ Վերջիններիս «The Westminster Review» պարբերականում հրատարակվող գաղափարները լայնորեն քննարկվում էին մտավորական հանրության կողմից և որոշակիորեն ազդեցություն գործում քաղաքական որոշումների ընդունման վրա։ Չնայած քաղաքական գործիչների կողմից իրենց գաղափարների նկատմամբ ուշադրությանը՝ այդ ժամանակաշրջանի ուտիլիտարիստների կամ Պաշտպանական հետազոտությունների թագավորական միավորված ինստիտուտի գործունեությունը դժվար է համեմատել ներկայիս ուղեղային կենտրոնների գործունեության հետ։ Մեծ Բրիտանիայում արդի պատկերացումներին համապատասխան ուղեղային կենտրոնների գործունեության սկիզբ կարելի է համարել 1926 թվականը, երբ ստեղծվել է Լոնդոնի Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտը, որն առավել հայտնի է որպես «Chatham House»։ Նման կենտրոնների ձևավորման նախադրյալներից էր Փարիզի խաղաղության համաժողովը (1919-1920 թթ.), որտեղ տեղի էին ունենում Առաջին աշխարհամարտի արդյունքների հիման վրա խաղաղության պայմանագրերի մշակումն ու կնքումը։ Ավելորդ է նկատել, որ, ի տարբերություն արտաքին քաղաքական ոլորտում մասնագիտացված «Chatham House»-ի, ներքին քաղաքականության մշակման նպատակով 1930 թ. ստեղծվել է Տնտեսական և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը (NIER)։

⁸⁴ Denham A., Gamett M., The nature and impact of think tanks in contemporary Britain // “Contemporary British History”, Vol. 10, Iss. 1, 1996, p. 47.

Հարկ է նշել, որ պատմականորեն ուղեղային կենտրոնները ձևավորվել են ավանդական ակադեմիական, համալսարանական կազմակերպությունների հիմքի վրա, երբ XX դարի սկզբին Արևմուտքում պետական ինստիտուտների մոտ պահանջարկ առաջացավ մշակվող քաղաքական որոշումների կիրառական վերլուծության նկատմամբ: Նմանատիպ պահանջարկը մեծապես կապված էր պետական կառավարման ոլորտի հաստատությունների առաջ ծանցած քաղաքական-կառավարչական խնդիրների բարդացման հետ⁸⁵: Այս համատեքստում հատկանշական է Լ. Պալի կարծիքը, ըստ որի՝ մինչև Առաջին աշխարհամարտը քաղաքական փորձագիտությունը փոխարինել է այսպես կոչված «statecraft»-ը, որը կարելի է թարգմանել որպես պետության կառավարման հմտություն⁸⁶: Վերջինս հիմնված էր կառավարողի անձնական իմաստություն և փորձառության վրա, ինչը փոխարինում էր ինստիտուցիոնալ կարգով իրականացվող քաղաքական փորձագիտությունը: Հավելենք, որ քաղաքական գործընթացում ներգրավված անձանց մտայնությունն առայն, որ նրանք ի վիճակի են ինքնուրույն իրականացնելու քաղաքական փորձագիտության գործառնությունները՝ չներգրավելով հատուկ գիտելիքների տիրապետող մասնագետների, այս կամ այն չափով պահպանվել է ընդհանուր պահանջ նախորդ դարի կեսերը:

Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել ուղեղային կենտրոնների ծագման երեք հիմնական նախապայման: Ուղեղային կենտրոնների ի հայտ գալու անհրաժեշտ առաջին պայմանը դրանց «արտադրանքի» նկատմամբ պահանջարկն է, այսինքն՝

⁸⁵ *Зайцев Д.Г.*, Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук., 23.00.02 – Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии. М., 2009, с. 38.

⁸⁶ *Pal L.*, Public Policy Analysis: An Introduction // Scarborough, 1992, p. 67.

հենց «քաղաքական շուկայի» առաջացումը, որը
 ներառում է իշխանության ավելի քան մեկ աղբյուրի
 առկայություն: Յակառակ պարագայում, երբ
 իշխանությունը կենտրոնացված է մեկ տեղում, մեկ
 «ուղղահայացում» հանրային խնդիրներն լուծման
 ուղղությունում իշխանության գործունեության
 այլընտրանքային տարբերակների նկատմամբ
 պահանջարկ չի առաջանում: Ավելին, նման
 առաջարկությունները դիտարկվում են որպես
 հակակառավարական և պատժվում են: Յենց այդ
 պատճառով նման կենտրոններն առաջին անգամ ի հայտ
 են եկել և զարգացում ապրել կայուն ժողովրդավա-
 րական վարչակարգ ունեցող երկրում՝ ԱՄՆ-ում:
 Երկրորդ պայմանը մասնագետների՝
 քաղաքագետների հանրության առկայությունն է,
 այդ ուղղությունում կրթության զարգացումը և
 քաղաքական գիտության առանձնացումը հարակից
 գիտություններից, ինչպիսիք են՝ պետության և
 իրավունքի տեսությունը, փիլիսոփայությունը,
 սոցիոլոգիան և տնտեսագիտությունը: Յենց նման
 իրավիճակ էր նկատվում ԱՄՆ-ում XIX և XX դարերի
 սահմանագծին, որտեղ քաղաքական գիտությունն
 ինստիտուցիոնալացվել էր: Արդեն XIX դարի երկրորդ
 կեսին (1880 թ.) Ջ. Բըրջեսը (John William Burgess) Կոլումբիայի
 քոլեջում (հետագայում՝ Կոլումբիայի
 համալսարան) հիմնել է քաղաքական գիտության
 դպրոցը: Որպես ուղեղային կենտրոնների ստեղծման
 երրորդ նախապայման՝ կարելի է առանձնացնել նման
 ինտելեկտուալ կենտրոնների ստեղծման և
 գործունեության համար անհրաժեշտ
 (պետություններից) անկախ \$ինանսավորման
 աղբյուրների առկայությունը, որոնք հատկացվում
 են տարբեր հիմնադրամների կողմից: Այդ հարցում XX
 դարի սկզբին ԱՄՆ-ը տարբերվում էր աշխարհի
 բազմաթիվ այլ երկրներից: Յենց այստեղ է իր

գարգացումը գտել տարբեր ձեռնարկատերերի կողմից տարաբնույթ հիմնադրամների ստեղծումը, որոնք ֆինանսավորում էին սոցիալական և հանրային քաղաքականության ոլորտի այս կամ այն նախագիծը: Ուշագրավ է, որ նույն ժամանակահատվածում եվրոպական երկրներում նման ավանդույթ գոյություն չուներ⁸⁷:

Համաձայնելով Լ. Պալի կարծիքին՝ նշենք, որ ընդհանրապես տարածված մի տեսակետ կա, թե ուղեղային կենտրոնները ծագել են ԱՄՆ-ում: Սակայն, ինչպես նշում է ուղեղային կենտրոնների ոլորտի ճանաչված փորձագետ Ջեյմս Մաք-Գանը, սահեռու է ճշմարտությանը. այդ կազմակերպությունները գոյություն են ունեցել ամբողջ աշխարհում, իսկ ԱՄՆ-ի ուղեղային կենտրոնների առանձնահատկությունն աշխարհի մյուս երկրների համամասն հաստատությանը հարանց համեմատական անկախությունն է⁸⁸:

Վերոնշյալի համատեքստում չափազանց հետաքրքրական է նաև Դ.Աբելսոնի դիտարկումը, ըստ որի՝ 1900-ական թվականների սկզբին խոշոր արդյունաբերողների կողմից բարեգործական հիմնադրամների հիմնման նախնական նպատակը սեփական միջոցները հարկումից պաշտպանելը և հաջորդ սերունդներին փոխանցելն էր: Սակայն հետագայում այդ մեծահարուստ ձեռնարկատերերը քաղաքականության վերաբերյալ քննարկումներին մասնակցելու նպատակով սկսել են օգտագործել իրենց հիմնադրամները՝ ֆինանսավորելով տարբեր հետազոտական ինստիտուտներին գործունեությունը⁸⁹:

⁸⁷ *Сунгуров А.Ю.*, Как возникают политические инновации: «фабрики мысли» и другие институты-медиаторы // Политическая энциклопедия, М.2015, с. 111-112.

⁸⁸ Think Tanks in China: Growing influence and political limitations // The Brookings Institution. Washington DC, 2008, p. 22. URL: http://www.brookings.edu/~media/events/2008/10/23-think-tanks/20091023_china.pdf

⁸⁹ *Abelson D.*, American Think Tanks and their Role in the U.S. Foreign Policy // St. Martins Press, New York, 1996, pp. 50-51.

Ի հարկե, ուղեղային կենտրոնների ծագման և ուղեղային կենտրոնների ուղորտիկայացման համար անհրաժեշտ նախադրյալները չեն սահմանափակվում վերևում հիշատակվածներով: XX դարի սկզբում այս ուղորտի բուռն զարգացումը (հատկապես ԱՄՆ-ում) ունեցրեց նաև այլ պատճառներ, որոնք կփորձենք հաջորդիվ ևս ներկայացնել և քննարկել: Այսպես, նախորդ դարում ամերիկյան առաջին ուղեղային կենտրոնների ձևավորմանը նպաստել են ԱՄՆ-ի նախագահներ Թեոդոր Ռուզվելտի և Վուդրո Վիլսոնի կողմից իրականացվող պետական իշխանության արհեստավարժեցման քաղաքականությանը: Ինչպես նշում է Ռ. Յասսը, առաջին կենտրոններն ի հայտ են եկել «առաջադիմական դարաշրջանում», այսինքն՝ ռեֆորմիզմի քաղաքականության (1900-1917 թթ.) շրջանում, որոնք իշխանության արհեստավարժացման համատեքստում իրականացրել են նախագահներ Թ. Ռուզվելտը և Վ. Վիլսոնը: Այդ ուղեղային կենտրոններն նպատակներն առավել ապես ապաքաղաքական էին՝ հանրային շահերի պաշտպանության և պետական պաշտոնատար անձանց քաղաքականության հետ կապված հարցերի վերաբերյալ անաչառ խորհրդատվության մատուցում⁹⁰:

Արդյունաբերական հեղափոխությանը և Առաջին աշխարհամարտից հետո ԱՄՆ-ի սոցիալ-տնտեսական ուղորտում տեղի ունեցող փոփոխությանը և իբրև հետևանք երկրի տնտեսական, քաղաքական միջավայրերի հետագա զարգացման գործընթացի բարդացումը մեծապես նպաստում էին երկրի արտաքին և ներքին քաղաքակ-

⁹⁰ *Richard N. Haass*, Think Tanks and U.S. Foreign Policy: A Policy-Maker's Perspective // "The Role of Think Tanks in U.S. Foreign Policy". U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of the U.S. Department of State), Vol. 7, N 3, 2002, p. 5. URL: http://www.usembassy-mexico.gov/bbf/ej/1102_RoleThinkTanks.pdf

ն ու թյան բնագավառներում որոշումներ ընդունման մեխանիզմների փոփոխությունը⁹¹:

Ամերիկյան քաղաքագիտական գրականություն մեջ առաջին ուղեղային կենտրոններին կամ դրանց նախատիպերին են վերագրում այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են՝ 1894 թ. հիմնադրված Չիկագոյի Քաղաքացիական դաշնությունը (հետագայում՝ Ազգային քաղաքացիական դաշնություն), 1904 թ. հիմնադրված Ինդուստրիալ հետազոտություններ թյունը, ինչպես նաև 1907 թ. հիմնադրված Ռասել Սեյջի հիմնադրամը⁹²: Նշենք, որ վերջինիս հիմնման նպատակն էր հետազոտություններ, հրապարակումներ, կրթություն, բարեգործություն և այլ միջոցներով ԱՄՆ-ում կյանքի և սոցիալական պայմանների բարելավումը: Հաստատության հիմնադիրներ երկաթուղային մագնատ և Ֆինանսիստ Ռասել Սեյջի այրին՝ Մարգարետ Օլիվիա Սեյջը, ով այդ նպատակով նվիրաբերել էր 10 մլն ԱՄՆ դոլլար⁹³: Ռասել Սեյջի հիմնադրամը կարևորագույն դեր է խաղացել անապահով խավի սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված համազգային շարժման գործում, որի խնդիրն էր սոցիալական օգնությունը տեղափոխել արհեստավարժ մակարդակ, ուսումնասիրել սոցիալական հիմնախնդիրները, մշակել համապատասխան օրենսդրություն և այս կամ այն որոշակի պահանջի բավարարման համար ստեղծել մասնավոր կազմակերպություններ⁹⁴:

Ավելի ուշ՝ 1910 թ., պիտսբուրգյան հայտնի գործարար Էնդրյուն Քարնեգիի կողմից հիմնադրվել է Հանուն միջազգային խաղաղության Քարնեգի

⁹¹ *Копонич Т.К.*, Роль «мозгового треста» Ф.Д. Рузвельта в становлении административно-политического консалтинга в США // Дис. на соиск. уч. ст. канд. ист. наук., 07.00.03 – всеобщая история, Волгоград, 2000, с. 39.

⁹² *Abelson D.E.*, A Capitol Idea: Think Tanks and US Foreign Policy // McGill-Queen's University Press, Montreal, 2006, pp. 52-54.

⁹³ Russel Sage Foundation // URL: <https://www.russellsage.org/about/history>

⁹⁴ *Hammack D.C., Wheeler S.*, Social Science in the Making // N.T., Russel Sage Foundation, 1994, p. 12.

հիմնադրամը, որի գործունեության առաջնային
նուղղություններին ԱՄՆ-ի արտաքին քաղաքական-
ությունը և միջազգային հարաբերություններին
ոլորտի հետազոտությունները: Հավելենք, որ
Քարնեգի հիմնադրամի նախագահ Էլիոտ Ռոլթը
ներառված էր պատերազմի ավարտի պայմանները
քննարկող Վերսալյան բանակցություններին
մասնակցող ամերիկյան պատվիրակության կազմում,
և նրա նախաձեռնությամբ ամերիկյան կողմն
առաջարկում էր Ազգերի Լիգային գուգահեռ հիմնել
մշտական հիմունքներով գործող միջազգային
դատարան, որը հիմք հանդիսացավ Հաագայի
Միջազգային դատարանի ստեղծման համար: Ավելի
ուշ՝ 1945 թ., Քարնեգի հիմնադրամի Տնտեսության և
պատմության բաժնի պետ Ջեյմս Շոթվելլը Սան
Ֆրանցիսկոյի Համաժողովում ղեկավարել է ոչ
կառավարական խորհրդականների պատվիրակու-
թյունը, որտեղ մշակվում էր ՄԱԿ
կանոնադրությունը: Նրա նախաձեռնությամբ մի
շարք փոփոխություններ են մտցվել ՄԱԿ
կանոնադրության նախագծում, մասնավորապես
Մարդու իրավունքների մշտական հանձնաժողովի
ստեղծման վերաբերյալ:

XX դարի սկզբին ԱՄՆ-ի պատմության մեջ մյուս
նշանակալի ուղեղային կենտրոնը՝ Կառավարական
հետազոտություններին ինստիտուտը (Institute for Government
Research), հիմնադրվել է 1916 թ. հայտնի գործարար և
բարեգործ Ռոբերտ Բրուքսինգսի կողմից: Վերջինիս
նախաձեռնությամբ հետագայում ձևավորվել են նաև
Տնտեսագիտության ինստիտուտը և Ռ. Բրուքսինգսի
բարձրագույն դպրոցը: Նշված երեք
կազմակերպությունների միավորմամբ 1927 թ.
հիմնադրվել է այսօր բարձր վարկանիշ ունեցող և
ոլորտում լավագույններից մեկը համարվող
Բրուքսինգսի ինստիտուտը:

Երկրորդ աշխարհամարտից հետո Բրուքինգսի
ինստիտուտին հաջողվել է ստանձնել Եվրոպայի
վերականգնման «Մարշալի պլանի» հիմնական
մշակողներին մեկի գործառույթը, ինչն այդ
կազմակերպության նշանակալի դերակատարության
կարևոր ցուցիչներն է:

Յարկ Ենշել, որ XX դարի առաջին տասնամյակներն
ԱՄՆ-ում ուղեկցվում էին բուռն տնտեսական
զարգացմամբ: Բնականաբար դրան զուգահեռ
վերափոխվում էր երկրի սոցիալ-տնտեսական
կյանքը: Այդ ժամանակաշրջանում է արձանագրվել
ԱՄՆ-ի գլոբալ դերակատարության և ազդեցության
մեծացումը համաշխարհային քաղաքականության
մեջ: Այս հանգամանքը ևս նպաստել է ԱՄՆ-ում
քաղաքական փորձագիտության
ինստիտուցիոնալացման գործընթացին և հատկապես
արտաքին քաղաքականության ու միջազգային
հարաբերությունների հարցերում մասնագիտաց-
ված ուղեղային կենտրոնների ստեղծմանն ու
զարգացմանը: Այսպես, 1917 թ. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո
Վիլսոնի խորհրդական գեներալ Էդվարդ Յոուսը
ամերիկյան առաջատար գիտնականների,
ակադեմիկան ու ռոտի հայտնի
ներկայացուցիչների հետ իրականացնում էր
պարբերական խորհրդակցություններ, որի նպատակն
էր Առաջին աշխարհամարտից հետո աշխարհի հետագա
կազմակերպման վերաբերյալ ամերիկյան նոր
մոտեցումների մշակումը: Գիտնականների այդ
խումբը, որը ստացավ «Յետագոտություն» անվանումը,
ամերիկյան պատվիրակության կազմում խորհրդա-
կանի կարգավիճակով մասնակցում էր Փարիզի
խաղաղության համաժողովին: Ավելին, խմբի կողմից
մշակվել էր նաև Ազգերի լիգայի խարտիայի
նախագիծը: Ավելի ուշ՝ 1921 թ., անկումբային
ձևաչափում գործող այս խմբի հիմքի վրա ձևավորվեց

միջազգային գործընթացների
ուսումնասիրությունը գաղափարներ կայուն
ամենահայտնի ուղեղային կենտրոններից մեկը՝
Միջազգային հարաբերությունների խորհուրդը
(Council on Foreign Relations): 1922 թվականից այս հաստատությունը
սկսել է թողարկել «Foreign Affairs» պարբերականը:

Այսպիսով, բրիտանական Միջազգային
հարաբերությունների թագավորական ինստիտուտի
(Chatham House) և ամերիկյան Միջազգային
հարաբերությունների խորհրդի ստեղծման
նախադրյալները ձևավորվեցին Փարիզի
խաղաղության համաժողովում: Հատկանշական է, որ
համաժողովի ընթացքում բրիտանական և ամերիկյան
պատվիրակության և ներկայացուցիչները
նախաձեռնել են մի շարք ոչ պաշտոնական
հանդիպումներ, որոնց նպատակը միջազգային
հարաբերությունների ուսումնասիրությունը
գաղափար հաստատության համատեղ հիմնումն էր:
Նախատեսվել էր, որ հաստատությունը բաղկացած
պետք է լիներ երկու մասնաճյուղից, որոնցից
մեկը՝ Մեծ Բրիտանիայում, մյուսը՝ ԱՄՆ-ում:
Ինստիտուտն իր բնույթով պետք է գիտական լիներ,
ձգտեր քարձրացնել երկու երկրների պաշտոնական
արտաքին քաղաքականության փորձագիտական
մակարդակն ու նպաստեր իրականացվող
քաղաքականությանն աջակցող հանրային
կոնստենսուսի ձևավորմանը: Կազմակերպության
հիմնական նպատակը պետք է լիներ ոչ թե ուղղակի
որեն քաղաքականության իրականացումը, այլ
քաղաքականության մշակողներին համապատասխան
փորձագիտական աջակցության տրամադրումը և
քաղաքականության իրականացման գործընթացում
հասարակական աջակցության ապահովումը: Սակայն
պատվիրակությունների վերադարձից հետո պարզ է
դարձել, որ չնայած նախնական պայմանավոր-

ված ու թյան՝ նման անգլո-ամերիկյան համատեղ կենտրոնի ստեղծման համար երկու երկրներում էլ ձևավորվել է ոչ այնքան բարենպաստ միջավայր. զգալի էին ԱՄՆ-ում հակաբրիտանական, իսկ Մեծ Բրիտանիայում հակաամերիկյան տրամադրությունները: Այդ պատճառով յուրաքանչյուր պատվիրակություն իր երկրում նախաձեռնել է առանձին կազմակերպության հիմնում, որի արդյունքում էլ ի հայտ են եկել ամերիկյան Միջազգային հարաբերություններ խորհուրդը և բրիտանական «Chatham House»-ը: Երկու հաստատությունում էլ ներգրավվել էին փորձագետներ, այդ թվում՝ միջազգային հարաբերություններում գործնական փորձառություններ ունեցող անհատներ, լրագրողներ, միջազգային իրավունքի մասնագետներ, համալսարանական շրջանակների և բանկային ոլորտի ներկայացուցիչներ: Երկու կազմակերպություններն էլ կապված են եղել իրենց երկրների արտաքին քաղաքականության համար պատասխանատու վերնախավի ներկայացուցիչների հետ⁹⁵:

Այնուամենայնիվ, հարկ է ավելացնել, որ հյուսիսամերիկյան մեկ այլ երկրում՝ Կանադայում, 1928 թ. հիմնված Միջազգային հարաբերությունների կանադական ինստիտուտը սկզբնապես ստեղծվել է որպես «Chatham House»-ին ասոցացված կազմակերպություն⁹⁶: Ավելացնենք նաև, որ այս հաստատության հիմնադիրներից էր նաև Կանադայի վարչապետ Ռ.Բորդենը⁹⁷:

Բացի քարնեգի հիմնադրամից, Միջազգային հարաբերությունների խորհրդից և Բրուքսիսի

⁹⁵ *Pamar I.*, Institutes of international affairs: their roles in foreign policy-making, opinion mobilization and unofficial diplomacy // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by *Stone D.* and *Denham A.*, Manchester University Press, Manchester and New York, 2004, pp. 21-22.
⁹⁶ *Greathed E.D.*, Antecedents and Origins of the Canadian Institute of International Affairs // Dyck H.L. and Crosby H.P. (eds), Empire and Nations, University of Toronto Press, Toronto, 1969, p. 106.
⁹⁷ *Журбей Е.В.*, «Мозговые центры» и внешняя политика Канады: история вопроса // «Вестник ЗабГУ», Т. 23, N 1, 2017, с. 86.

ի ն ս տի տո լ տի ց՝ XX դարի առաջին կեսին ամերիկյան քաղաքականության ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել նաև 1919 թ. Յեթերթ Յոլվերի (1929-1933 թթ. ԱՄՆ-ի նախագահ) կողմից ստեղծված Պատերազմի, հեղափոխությունների և խաղաղության ուսումնասիրությունների Յոլվերի ինստիտուտը (Hoover Institution):

Յարկ Էնշել, որ 1920-ականների վերջերի և 1930-ականների սկզբների ԱՄՆ-ի տնտեսական ճգնաժամը կամ «Մեծ դեպրեսիան», որը համընկել է Յեթերթ Յոլվերի և Ֆ. Ռոզվելտի պաշտոնավարման ժամանակաշրջաններին, նույնպես մեծ խթան է հանդիսացել ուղեղային կենտրոնների ոլորտի կայացման գործընթացի արագացման համար: ԱՄՆ-ի նախագահի պաշտոնում Յոլվերին հաջորդած Ֆրանկլին Ռոզվելտը «Նոր կուրսի» շրջանակներում մշակվող ծրագրերի համար ստեղծեց ուղեղային կենտրոններ, որտեղ միավորվել էին հասարակագիտության ոլորտի հայտնի մասնագետներ, ովքեր կատարում էին ընթացող բարեփոխումների, այսպես կոչված գաղափարական «քարշակի» և ինտելեկտուալ «գեներատորի» գործառույթը:

Պետք է նշել, որ Ֆ. Ռոզվելտի փորձագիտական թիմը, որը նախապես բաղկացած էր Կոլոմբիայի համալսարանի պրոֆեսորներ, իրավաբան Ռեյմոն Մոլից, տնտեսագետներ Ռեքս Ֆորդ Գայ Թագվելլից և Էյդոլ Ֆ Օգաստես Բյորլից, կարևոր դեր է խաղացել ԱՄՆ-ի քաղաքական փորձագիտության և խորհրդատվության համակարգի կայացման գործում: «Ուղեղային տրեստ» (Brain Trust) անունով առավել հայտնի արհեստավարժների այս խմբի տեսական մշակումները ոչ միայն ընկած են «Նոր կուրսի» գաղափարախոսության բարեփոխական միջուկի հիմքում, այլ նաև վարչական-քաղաքական

խորհրդատվություն և հակաճգնաժամային կառավարման ավանդույթների հիմքն են դրել: «Նոր կուրսի» ժամանակաշրջանն աչքի է ընկել կառավարական հակաճգնաժամային հաստատությունների մթադաքական վերլուծաբանների, կառավարման փորձագետների և ինտելեկտուալների լայնամասշտաբ ներգրավմամբ: «Նոր կուրսի» ավարտից հետո խորհրդատվության պրակտիկան իր կիրառությունը պահպանեց նաև ԱՄՆ-ի հետագա նախագահների փորձագիտական խմբերի գործունեության մեջ: Այս փաստը վկայում է ԱՄՆ-ի հանրային կյանքում ինտելեկտուալ վերնախավի անընդհատ աճող նշանակությունը⁹⁸: Սակայն XX դարում ԱՄՆ-ում մտավոր-համակարգող կենտրոնների հայտ գալը, ինչպիսին վերոնշյալ «ուղեղային տրեստն» էր, չի կարելի վերագրել բացառապես նախագահ Ֆ.Դ. Ռոզվելտի գործադրած ջանքերին, քանզի նրանից շատ առաջ ինտելեկտուալ-խորհրդականների ծառայություններն արդեն իսկ պահանջարկված էին ամերիկյան այլ քաղաքական գործիչների շրջանում: Այսպես, ըստ որոշ գնահատականների, ԱՄՆ-ում վարչական-քաղաքական խորհրդատվության ոլորտում փորձագիտական խմբերի կիրառման պրակտիկայի հիմքը դրել է սենատոր, իսկ ավելի ուշ Վիսկոնսինի նահանգապետ Ռոբերտ Մերիոն Լաֆոլլետ-ավագը: Վերջինս նահանգապետ լինելու տարիներին (1906-1910) դիմել է ինտելեկտուալների օգնությունը և նրանց միջոցով առաջարկել առաջադիմական-ժողովրդավարական բարեփոխումների իրականացման գաղափարը, որը ստացել էր «Վիսկոնսինյան պլան» («Wisconsin Idea») անվանումը⁹⁹: Սակայն հանուն արդարության պետք է նշել, որ այդ ժամանակ նման խորհրդատվական

⁹⁸ *Коплиц Т.К.*, ук. соч., с. 4.

⁹⁹ Նույն տեղում, с. 6.

գործունեությունն ուներ մակերեսային և ժամանակավոր բնույթ: Եվ միայն Ֆ.Դ. Ռուզվելտի նախագահության շրջանից պետական-քաղաքական կառավարման ոլորտում գիտական խորհրդատուներին երգրավման պրակտիկան սկսեց ձեռք բերել հետևողական և պարբերական բնույթ, ինչն էլ նպաստեց նրան, որ աշխարհում առաջին անգամ հենց ԱՄՆ-ի քաղաքական կյանքում ի հայտ եկավ և քաղաքական տեսությունների մեջ ամրագրվեց «ուղեղային տրեստ» հասկացությունը¹⁰⁰:

Հատկանշական է, որ հետագայում ևս նմանատիպ հաստատությունները հետևողականորեն կարողացել են մեծացնել իրենց ազդեցությունը ԱՄՆ-ի արտաքին և ներքին քաղաքականության մշակման և ձևավորման վրա: Դրանց աճին նպաստում էր և այն, որ գործարար շրջանակները և քաղաքական վերնախավի ներկայացուցիչները, արդյունաբերական աճի շրջանում խորացած խնդիրները լուծելու նպատակով, աստիճանաբար առավել հաճախ էին \$ինանսավորում և օգտվում ուղեղային կենտրոնների ծառայություններից: Մոտավորապես այդ ժամանակահատվածում հասարակական գիտություններին այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տնտեսագիտությունը, սոցիոլոգիան և քաղաքագիտությունը, սկսեցին իրականացվել ինտենսիվ ուսումնասիրություններ, որոնք ամրապնդում էին հավատն առ այն, որ հատուկ գիտելիքների միջոցով հնարավոր է լուծել սոցիալական հիմնախնդիրներ: Ուղեղային կենտրոնները ստեղծվում էին հենց նման գիտելիքների մշակման համար, որոնք անհրաժեշտ

¹⁰⁰Նույն տեղում, c. 39.

Ե ի ն ՝ Լ ու ծ ե Լ ու աղքատության և անհավասարության խորացող հիմնախնդիրները ¹⁰¹:

XX դարի առաջին տասնամյակներին Քարնեգի հիմնադրամը, Բրուքլինգսի ինստիտուտը, Յոկոնոմիկոսի ինստիտուտը, Միջազգային հարաբերությունների խորհուրդը և մի փոքր ավելի ուշ՝ 1943 թ., ստեղծված Յանրային քաղաքականության հետազոտությունների ամերիկյան ձեռնարկատիրության ինստիտուտը, որոնք \$իսանսավորում էին մասնավոր աղբյուրներից և չէին գործում որպես կառավարությանն առընթեր հաստատություններ, սկսեցին ազդեցություն ունենալ քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սառը պատերազմի առաջին տարիներին նրանք ոչ միայն ազդում էին քաղաքականության շուրջը ընթացող քննարկումների վրա, այլ նաև աշխատում էին կառավարության համար՝ ընդունելով վերջինիս կողմից իջեցված պատվերները: Այդ ուղեղային կենտրոնները մշակում էին փաստաթղթեր, որոնք հետագայում վերափոխվում էին օրենքների ¹⁰²:

Այսպիսով, ԱՄՆ-ում առաջին ուղեղային կենտրոնների ի հայտ գալու գլխավոր գործոնը սոցիալ-տնտեսական վիճակի բարդացմամբ պայմանավորված խնդիրների մասշտաբայնությունն էր, որոնց բախվում էր ժամանակակից պետությունը (աննախադեպ կործանարար պատերազմներ և հեղափոխություններ, արհեստավարժ բյուրոկրատիայի կառավարման խնդիրներ և այլն), ինչպես նաև այն ժամանակվա պետական ինստիտուտների կողմից տվյալ խնդիրները սեփական ուժերով հաղթահարելու ունակության նկատմամբ թերահավատությունը: Բացի դրանից, մասնավոր նվիրատվության,

¹⁰¹ *Рич Э., Уивер К.*, Пропагандисты и аналитики: «мозговые центры» и политизация экспертов // “Pro et Contra”, том 8, N 2, Весна, 2003, с. 66-67.
¹⁰² *Prasad V.*, The Think Tank War Machine // “Frontline”, (May 8-21, 2004), p. 64.

մեկ Ենասու թյան և բարեգործական ավանդույթի առկայությունն ԱՄՆ-ում նպաստում էր ուղեղային կենտրոնների ստեղծմանը, քանի որ նման կառույցները, հատկապես սկզբնական շրջանում, ստեղծվում և գործում էին գործարարների հանգանակությամբ միջոցներով:

1940-ական թվականների երկրորդ կեսից սկսած՝ վերլուծական կառույցների ոլորտում սկսեցին ի հայտ գալ պայմանագրային հիմունքներով հետազոտություններ իրականացնող առաջին ուղեղային կենտրոնները, որոնց ստեղծմանը նպաստեցին Երկրորդ աշխարհամարտը և դրան հաջորդած Սառը պատերազմը, նոր տեսակի սպառազինությունների ի հայտ գալը, գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները, ի հայտ եկած սոցիալ-տնտեսական խնդիրները, կիրառական գիտություն, մասնավորապես սոցիալական գիտությունում կիրառական ուղղությունների ակտիվ զարգացումը, բնապահպանական խնդիրները և այլն: Յարկ Էնշել, որ Երկրորդ աշխարհամարտի տարիներին ԱՄՆ-ի հիմնական վերլուծական կառույցներն էին Ռազմածովային վերլուծությունների կենտրոնը (Center for Naval Analysis) և Պաշտպանական վերլուծությունների ինստիտուտը (Institute for Defense Analysis), որոնք կառավարության համար ռազմական թեմատիկայով երաշխավորություններ (recommendations) էին մշակում, ինչը և սկսված էր ժամանակաշրջանի առաջնահերթությունների հետ:

Կարևոր է ընդգծել, որ ԱՄՆ-ի առաջին պայմանագրային ուղեղային կենտրոնների ստեղծման գործում առաջատար դերը պատկանում էր ռազմաարդյունաբերական համալիրին: Բացի դրանից, դաշնային կառավարությունն աստիճանաբար առավել ակտիվ դեր էր սկսում խաղալ երկրի ներքաղաքական կյանքում, իսկ Երկրորդ աշխարհա-

մարտից հետո միջազգային հարցերում և սաճում էր
նույն ժամանակ կենտրոնների կողմից իրականացվող
կիրառական քաղաքական մշակումների և
վերլուծական հետազոտությունների նկատմամբ
պահանջարկը¹⁰³:

Ժամանակը ցույց տվեց նույն ժամանակ
կենտրոնների մասնագետների, գիտատեխնիկական
կադրերի առանցքային դերը և վերջիններիս
մշակումների կարևորությունը՝ ռազմական ու
քաղաքական գերիշխանության հասնելու համար:
Երկրորդ աշխարհամարտից հետո բազմաթիվ
ինստիտուտներ նույնիսկ օժանդակություն էին
ստանում ԱՄՆ-ի կառավարությունից, ինչը
պաշտպանական ոլորտի գիտականներին և
հետազոտողներին տրամադրում էր հսկայական
ռեսուրսներ: Բացի դրանից, միջոցները, որոնք ստաց-
վում էին պետության հետ պայմանագրի շրջանակ-
ներում, շարունակում էին համալրվել նաև
բարեգործական հիմնադրամների ներդրումների
հաշվին¹⁰⁴: Պետք է նշել, որ այդ տարիներին է ԱՄՆ-ում
ձևավորվել այն մտայնությունը, որ համալսարան-
ական և մասնավոր վերլուծական կենտրոնների
փորձագետներն առավելություններ ունեն
պետական կառույցների ռազմական վերլուծաբան-
ների նկատմամբ: Սահետևանք էր նրա, որ վերջինները,
որպես կանոն, պակաս ստեղծագործ (կրեատիվ) էին և
հիմնականում կաշկանդված՝ պետական վարչական
աստիճանադասական համակարգում համարձակ
առաջարկություններ կայացնելու գործում:

Գաղտնիք չէ, որ պատերազմի ավարտից հետո
աստիճանաբար թափ էին հավաքում ԽՍՀՄ-ի հետ
դիմակայությունը և համընդհանուր (տոտալ)
մրցավազքը, որը տարածվում էր նաև գիտական և

¹⁰³ *Рич Э., Уивер К.*, укр. соч., с. 67.

¹⁰⁴ *Зайцев Д.Г.*, укр. соч., с. 116:

ընդհանրապես ինտելեկտուալ գործունեության բոլոր ոլորտների վրա: Յենցայս համապատկերի վրա է 1948 թ. ԱՄՆ-ի ռազմաօդային ու ժերի հովանու ներքո հիմնադրվել ՌԷՆԴ (Research and Development) կորպորացիան, որի ինտելեկտուալ արտադրանքի հիմնական պատվիրատուն և սպառողը ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունն էր: 1950-ական թթ. սկսած՝ ՌԷՆԴ-ը աշխատել է ամերիկյան կառավարական գործակալության ու ներքին պատվերներով՝ իրականացնելով ազգային անվտանգության տարբեր բնագավառներին առնչվող հետազոտություններ:

Յարկ Էնշել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ը որոշակիորեն նվազեցրեց ռազմական ու ժերը, քանի որ նոր տեսակի զենքերը, ինչպիսիք էր, օրինակ, միջուկային զենքը, թվում էին առավել էժան և արդյունավետ, քան մեծ բանակի պահպանումը արտերկրում: Ռազմական արդյունաբերության հիմնական ոլորտները ազգային անվտանգության փոխարեն, ինչպես արեցին Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ի կառավարությունը պայմանագրեր կնքեց մասնավոր կոնցեռնների հետ, որոնք զբաղվում էին գիտական մշակումներով: Կառավարությունում կարծում էին, որ նման մասնավոր ընկերությունները, ուղղակիորեն կապված չլինելով Պենտագոնի հետ, առավել արագ և էժան կկարողանան մշակել նոր տեսակի զենքեր: Այսպես ՌԷՆԴ-ը դարձավ կամուրջ ռազմական պլանավորման և քաղաքացիական զարգացման «աշխարհների» միջև¹⁰⁵:

Անդրադառնալով ՌԷՆԴ կորպորացիայի ստեղծման պատմությանը՝ հարկ Էնշել, որ «ՌԷՆԴ նախագիծը» սկզբնապես սկսել է իր գործունեությունը 1946 թ. ԱՄՆ-ի ռազմաօդային ու ժերի և «Դուգլաս» (Douglas Aircraft) օդանավաշինական կոնցեռնի միջև պայմանավորվածության

¹⁰⁵ *Абема А.*, Солдаты разума // пер. с англ. О. Клигиной, АСТ, М., 2009, с. 23.

համաձայն՝ որպես վերջինիս ստորաբաժանում: Արդեն առաջին տարում ՌԷՆԴ-ը սկսեց համալրել իր աշխատակազմը քաղաքականությամբ, տնտեսությամբ, հոգեբանությամբ ոլորտի մասնագետներով՝ նպատակ ունենալով չսահմանափակել տեսական ուսումնասիրությունները բացառապես ճշգրիտ գիտություններով: Արդեն 1948 թ. Ֆորդի հիմնադրամի օժանդակությամբ այդ ստորաբաժանման հիման վրա ստեղծվում է ՌԷՆԴ անկախ ոչ առևտրային կազմակերպությունը: Ինչպես նշված է վերջինիս գրանցման վկայականում, ՌԷՆԴ-ը ստեղծվել է՝ ԱՄՆ-ի քարոզչության և անվտանգության շահերից բխող գիտություն, կրթության և բարեգործության ոլորտում նպատակների իրականացմանն աջակցելու համար¹⁰⁶: Կազմակերպությունն ԱՄՆ-ի ինտելեկտուալ արտադրանքի շուկայում արագորեն վերածվել է ազգային անվտանգության և ռազմաքաղաքական հարցերի ուսումնասիրությամբ զբաղվող առանցքային վերլուծական կազմակերպության: Լինելով պաշտոնապես անկախ՝ ՌԷՆԴ-ը սերտ համագործակցում և կատարում էր ԱՄՆ-ի տարբեր գերատեսչությունների, այդ թվում՝ Պաշտպանության նախարարության և Կոնգրեսի պատվերները: Այս կազմակերպության պատերի ներքո է հետազայում մշակվել ԽՍՀՄ «զսպման դոկտրինը»:

1940-ական և 1950-ական թվականներին ԱՄՆ-ում շարունակում էին ստեղծել նոր ուղեղային կենտրոններ: Մյուս կողմից՝ աճում էր փորձագետների ազդեցությունը երկրի ներքին և արտաքին քաղաքականության ձևավորման վրա: Երկրորդ աշխարհամարտից հետո ԱՄՆ-ի ուղեղային կենտրոնների ազդեցությունն աստիճանաբար սկսեց տարածվել նաև երկրի սահմաններից դուրս՝ ներգործելով հատկապես դաշնակիցների (Արևմտյան

¹⁰⁶ *Диксон П.,* Фабрики мысли / ООО «Издательство АСТ», М., 2004, с. 37-39.

Եվրոպայի երկրներ, Կանադա, Ճապոնիա) քաղաքական
նության իրականացման փորձի վրա: Ամերիկյան
փորձագետների ու վերլուծաբանների
հրապարակումները որոշակիորեն ձևավորում էին
այդ երկրների քաղաքական կողմնորոշումը և
միջազգային գործընթացների վերաբերյալ
պատկերացումները: Այստեղ կարելի է որոշ
առումով բացառություն անել Մեծ Բրիտանիայի և
Ֆրանսիայի առումով միայն: Եթե Մեծ
Բրիտանիայում ևս առկա էին (ի հարկե ԱՄՆ-ից նվազ
չափով) ուղեղային կենտրոնների կայացած
համակարգ և պետական քաղաքականության անկախ
փորձագիտական աջակցության ավանդույթներ, ապա
Ֆրանսիայի պարագայում գործում էր իրեն բնորոշ
առանձնահատկությունը: Այստեղ խորհրդատուներն
ու փորձագիտական աշխատանք կատարողներն
ուղղակիորեն ներառված էին պետական
համակարգում՝ որպես քաղաքացիական ծառայողներ:
Այսպիսով, կարելի է արձանագրել, որ
Ժամանակակից ուղեղային կենտրոնները,
սկզբնավորվելով Եվրոպայում, այնուամենայնիվ
որպես ինտելեկտուալ յուրահատուկ համակարգ
ձևավորվել ու կայացել են առավելապես ԱՄՆ-ում,
որի քաղաքական միջավայրն ամենանպաստավորն էր
նման հաստատություններ հիմնելու համար: Բացի
դրանից, կատարված ուսումնասիրությունից պարզ է
դառնում, որ պետական քաղաքականության
իրականացման գործընթացում փորձագետների,
արհեստավարժ վերլուծաբանների և ուղեղային
կենտրոնների ինտելեկտուալ արտադրանքի
կիրառման կրիտիկական նշանակության
կարևորումը, հատկապես ամերիկյան քաղաքական
վերնախավում, առկա է եղել դեռևս մեկ դար առաջ,
ինչը մեծապես նպաստել է քաղաքականության
տարբեր ոլորտների վերաբերյալ ընդունվող

որոշուամեների փորձագիտական հենքով ապահովմանը և պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը: Ավելացնենք նաև, որ մինչև XX դարի կեսերը պետության քաղաքականությանը ձևավորող և քաղաքական որոշուամեներ կայացնող անձանց համար ուղեղային կենտրոնները համարվում էին առավել ապեսոբյեկտիվ և վստահելի ռազմավարական տեղեկատվության և արհեստավարժ վերլուծության ներքին աղբյուր:

Ուղեղային կենտրոնների ծագման, զարգացման և ինստիտուցիոնալացման նախնական ժամանակաշրջանի վերլուծության հիցակնհայտ է, որ դրանք առանց նպաստավոր միջավայրի առկայության չեն կարող նշանակալի ազդեցություն ունեննել հանրային քաղաքականության մեջ և հասարակության կյանքում ու բնականաբար չեն կարող վերածվել կայացած համակարգի: Ընդհանուր առմամբ դրանց ձևավորման առանցքային բաղադրիչներ կարելի է դիտարկել ինտելեկտուալ արտադրանքի պահանջարկը, որակյալ առաջարկը և գաղափար գեներացնողների բավարար Ֆինանսական կայունությանը: Ինտելեկտուալ արտադրանքի պահանջարկի ձևավորման հիմնական նախապայմաններն են «քաղաքական շուկայի» առաջացումն ու պետական կառավարման բնագավառում կայացվող որոշուամեների դաշտի ընդլայնումն ու բարդացումը: Որոշուամեների դաշտի բարդացման ու ընդլայնման առավել ազդեցիկ գործոններն են քաղաքական կոնֆլիկտները, պատերազմները, տնտեսական ճգնաժամերը, պետությանը միջև առկա մրցավազքը, ինչպես նաև գլոբալ հիմնախնդիրները, որոնց լուծմանը նթացքում կառավարման համակարգը խուսափում է միանձնյա որոշուամեների կայացման պրակտիկայից: Նման իրավիճակներում պետական ապարատը սովորա-

քար մասնագիտացված կազմակերպությունների
 կողմից տրամադրվող այլընտրանքային
 տեղեկատվություն (հետազոտություններ,
 վերլուծություններ, մշակումներ, քաղաքական
 խորհրդատվություն, երաշխավորություններ և
 այլն) կարիքն է զգում: Ուղեղային կենտրոնների
 ձևավորման հաջորդ կարևոր նախապայմանը
 հասարակական գիտությունների բնագավառում
 փորձառու և հետազոտական ունակություններով
 օժտված մասնագետների առկայությունն է, առանց
 որոնց պետություն՝ ինտելեկտուալ արտադրանքի
 նկատմամբ պահանջարկն անհնար է բավարարել: Իսկ
 վերջին նախապայմանն ուղեղային կենտրոնների
 \$ինանսավորման տարատեսակ աղբյուրների
 առկայությունն է, ինչը ենթադրում է, որ մասնավոր
 հատվածը (գործարար շրջանակները) և
 հասարակությունն ընդհանրապես վերցրած
 նույնպես էականորեն կարևորում են
 ինտելեկտուալ արտադրանքի նշանակությունը:
 Յատկանշական է, որ անկախ պետություն ձևից ու դրա
 կառավարման սկզբունքներից նշված երեք գործոն-
 ների առկայությունը պարտադիր է ուղեղային
 կենտրոնների ինստիտուտի ձևավորման ու
 զարգացման համար: Ճիշտ է, պետությունների ու
 հասարակությունների առանձնահատ-
 կությունները կամ պետությունների կառավարման
 մոդելները որոշակի տարբերություններ են
 ձևավորում ուղեղային կենտրոնների կամ
 ուղեղային կենտրոններ-հանրային
 քաղաքականություն ձևաչափերի միջև, սակայն
 ուղեղային կենտրոնների թողարկած արտադրանքի
 նկատմամբ պահանջարկի առկայությունն ու դրանց
 այլընտրանքային \$ինանսավորման աղբյուրների
 վերջո հանգեցնում են վերջինների ինստիտուցիո-
 նալացմանը: Թվարկված նախապայմանների

հարկավոր է ավելացնել նաև հենց քաղաքական առաջնորդների կողմից ինտելեկտուալ արտադրանքի կարևորումն ու պետական կառավարման որոշումների բնագավառում ուղեղային կենտրոնների մուտքն ապահովելու նրանց սեփական նախաձեռնությունը: Սա պարզապես արագացուցչի դեր է կատարում ուղեղային կենտրոնների ոլորտի ինստիտուցիոնալացման գործում, քանի որ նպաստում է քաղաքական որոշումների բնագավառում ուղեղային կենտրոնների մասնակցություն մշակույթի տարածմանը: Դրավկայություններն են ինչպես ԱՄՆ-ում ուղեղային կենտրոնների զարգացման գործում Թ. Ռուզվելտի անձնական ներդրումը, այնպես էլ, օրինակ, Չինաստանում ուղեղային կենտրոնների ձևավորման գործում Դեն Սյանպինի և ներկայիս բուն զարգացման գործում Սի Ծինփինի, Մեծ Բրիտանիայում Մարգարետ Թետչերի, Թուրքիայում Թուրգուտ Օզալի նշանակալի ներդրումը, որոնց դեռ մեր կողմից անդրադարձ կկատարվի հաջորդ ենթահարցերում:

2.2.ՈւղեղաՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ XXԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴԿԵՍԻՆ

XX դարի երկրորդ կեսն իրավամբ կարելի է անվանել ուղեղային կենտրոնների վերելքի և քաղաքական փորձագիտության ինստիտուցիոնալ կայացման ժամանակաշրջան: Այժմ գործող ուղեղային կենտրոնների ճնշող մեծամասնությունը հիմնադրվել է հենց այս ժամանակահատվածում: Միաժամանակ այդ տարիներին ոլորտում աստիճանաբար ի հայտ են եկել նոր միտումներ, որոնք հաջորդիվ կփորձենք ներկայացնել և վերլուծել:

Կանադացի գիտնական Լ. Պալը Երկրորդ աշխարհամարտից հետո ուղեղային կենտրոնների ոլորտի բուռն զարգացումը կապում է երեք հիմնական գործոնների հետ: Դրանցից առաջինը *կառավարման գիտություն դիրքերի ամրապնդումն է*: Խոսքը արևմտյան հասարակություններում մենեջմենթի կիրառման նպատակահարմարության և անհրաժեշտության ընկալման ամրապնդման մասին է, ինչը նպաստեց բոլոր կազմակերպություններում (առանձին ձեռնարկությունից մինչև պետություններում ամբողջությամբ վերցրած), առավել արդյունավետ կառավարման համակարգերի ներդրմանը, ինչպես նաև այդ ուղղությամբ հետազոտությունների աճին: Երկրորդ պատճառը *հումանիտար գիտությունների նկատմամբ ուշադրության մեծացումն է*, ինչի արդյունքում ձևավորվել էր այն տեսակետը, որ որակյալ քաղաքական վերլուծությունը ոչ թե փորձի և հարուստ քաղաքական պրակտիկայի արդյունքն է, այլ գիտական տեխնոլոգիաների: Որպես երրորդ գործոն Լ. Պալը նշում է *հետպատերազմյան շրջանում արևմտյան երկրների տնտեսության ու ներքին հաջող զարգացումը*¹⁰⁷:

Յարկ է նշել, սակայն, որ վերոնշյալ գործոնները բավարար չեն՝ բացատրելու ուղեղային կենտրոնների ոլորտի նման վերընթաց զարգացումը և դրանց ինտելեկտուալ արտադրանքի նկատմամբ պահանջարկի նման կտրուկ բարձրացումը: Մեր համոզմամբ, նշվածներին պետք է ավելացնել «բարդացող» աշխարհի կողմից առաջ քաշվող նորանոր մարտահրավերները, այդ թվում՝ Սառը պատերազմի իրողությունը, ինչը պետական այրերից շատ հաճախ պահանջում էր գտնել ոչ ստանդարտ, արագ և արդյունավետ լուծումներ: Բացի դրանից, անհրաժեշտ է նշել տեղեկատվական հեղափոխության

¹⁰⁷ *PalL*, Public Policy Analysis: An Introduction // Scarborough: Nelson Canada, 1992, pp. 67-68.

հետևանքով ստեղծված նոր իրականությունը, այդ թվում՝ բազմաթիվ երկրներում տեղեկատվության նկատմամբ պետական մենաշնորհի համեմատական թուլացումը, ինչպես նաև միջազգային հարաբերություններում քաղաքական գործընթացների աճող բարդությունը, պետական և ոչ պետական դերակատարների ավելացումը և, որպես արդյունք, քաղաքականության տարբեր ոլորտներում մրցակցության մեծացումը: Նշենք, որ եթե 1950-ական թվականներին աշխարհում գոյություն ուներ շուրջ 50 պետություն, ապա XX դարի վերջին դրանց թիվը հասնում էր շուրջ 200-ի: Մյուս կողմից՝ իհայտ էին գալիս նորանոր վերազգային կառույցներ և անդրազգային կորպորացիաներ: Այդամենը, ինչպես նաև ինտեգրացիոն և գլոբալացման գործընթացների արագացման պայմաններում պոտենցիալ գործընկերների արագ և առավել խորությամբ ճանաչելու անհրաժեշտությունը, տարբեր համակարգերի և շուկայական տնտեսության տարբեր մոդելների առկայություն պայմաններում տնտեսական, քաղաքական հարաբերությունների խորացման գործում որոշումների բարդացումը, միջազգային հարաբերությունների բարդացող խճանկարը, իհայտ եկող բազմաթիվ ներքին և արտաքին խնդիրները պահանջում էին քաղաքական արհեստավարժ խորհրդատվություն և ճիշտ ժամանակին մատուցվող վերլուծական տեղեկատվություն:

Չնայած ուղեղային կենտրոնների քանակական աճը տեղի էր ունենում բազմաթիվ երկրներում, սակայն XX դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ի ուղեղային կենտրոնների ոլորտը շարունակում էր մնալ ամենակայացածը թե՛ քաղաքական փորձագիտության ինստիտուցիոնալացման աստիճանով, թե՛ ուղեղային կենտրոնների քանակով և թե՛ երկրի հանրային քաղաքականության մեջ վերջիններիս

ունեցած դերակատարմամբ: Ինչպես ճշմարտացի նշում է Ս. Տոլրոնոկը, մարդկության մուտքը «միջուկային» և սառը պատերազմի դարաշրջան լայն ճանաչում և կիրառում ապահովեց ռազմական և արտաքին քաղաքականության որոշումների պլանավորման գործում գիտական վերլուծության համակարգային կիրառման պրակտիկայի համար: Նման տեսակի որոշումների ռիսկի գնի կտրուկ բարձրացումը, որը երբեմն չափվում է ոչ միայն միլիարդավոր դոլլարներով, այլ և միլիոնավոր մարդկային կյանքերով, որակապես բարձրացրեց ռազմական և արտաքին քաղաքականության ոլորտներում որոշում կայացնող անձանց պատասխանատվության աստիճանը: Այդպիսի իրավիճակում սեփական սխալների վրա սովորելն անթույլատրելի տարբերակ էր, և ընդունվող որոշումների հետևանքների կանխատեսումը տեղափոխվեց մաթեմատիկական մոդելավորման ոլորտ: 1950-ական թվականներին հենց գլոբալ ջերմամիջուկային հակամարտության սցենարների մշակումներով, որոնք ի դեպ կատարվում էին Պենտագոնի և Սպիտակ տան պատվերով, ԱՄՆ-ում հանրահայտ դարձավ քաղաքական վերլուծության առավել հայտնի և խոշոր կենտրոններից մեկը՝ ՌԵՆԴ կորպորացիան (RAND Corporation): Բացի դրանից, ՌԵՆԴ կորպորացիան վճռական դեր է խաղացել այնպիսի մեթոդների մշակման և պետական ու ակադեմիական միջավայրում տարածման գործում, ինչպիսիք են համակարգային վերլուծությանը, պլանավորման համակարգը, ծրագրավորումն ու բյուջե տավորումը, կանխատեսման «Մոնտե Կառլոյի» մեթոդը և այլն¹⁰⁸: Վերջինիս ազդեցության և հեղինակության մասին է խոսում այն, որ իր գործունեության առաջին 10

¹⁰⁸ *Туронок С.Г.*, Политический анализ и прогнозирование: учебник для бакалавриата и магистратуры // М.: Издательство Юрайт, 2016, с. 38.

տարիներին հաստատությունը 49 պաշտոնական երաշխավորություններ (recommendations) էր ներկայացրել ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի հրամանատարությունը, որոնցից 36-ն ընդունվել էր ¹⁰⁹:

ԱՄՆ-ում ուղեղային կենտրոնների ոլորտի բուռն զարգացմանը նպաստում էր նաև պետության կողմից գիտությունը և գիտատեխնիկական մշակումներին տրամադրվող գումարների կայուն ավելացումը: Այսպես, Փ. Դիքսոնն ուղեղային կենտրոնների ոլորտի էվոլյուցիայի վերաբերյալ իր հայտնի հիմնարար աշխատանքում նշում է, որ էթե 1940 թ. գիտատեխնիկական մշակումների վրա ԱՄՆ-ի դաշնային կառավարության ծախսերը կազմում էին 250 մլն ԱՄՆ դոլլար, ապա 1948 թ. տրամադրվող գումարն արդեն կազմում էր գրեթե 1 մլրդ ԱՄՆ դոլլար, 1957-ին՝ 3 մլրդ ԱՄՆ դոլլար, 1960-ին՝ 8 մլրդ ԱՄՆ դոլլար, իսկ 1967-1971 թթ. ընկած ժամանակահատվածում արդեն գերազանցում էին տարեկան 16 մլրդ ԱՄՆ դոլլարը ¹¹⁰: Մեկ այլ գնահատման համաձայն՝ միայն 1957-1964 թթ. ընկած ժամանակահատվածում ուղեղային կենտրոնների վրա ծախսվող գումարը 3 մլրդ ԱՄՆ դոլլարից ավելացել էր մինչև 15 մլրդ, իսկ ընդհանուր առմամբ 1960-1970 թթ. ուղեղային կենտրոնների վրա ծախսվել է ավելի քան 150 մլրդ ԱՄՆ դոլլար ¹¹¹: Եթե փորձենք պատկերը ներկայացնել մեկ կազմակերպության, դիցուք ՌԷՆԴ կորպորացիայի օրինակով, ապա պետք է նշել, որ հաստատության գոյության առաջին տարում վերջինիս բյուջեն կազմել էր ընդամենը 3 մլն 750 հազար ԱՄՆ դոլլար, իսկ արդեն 1970 թ. այն արդեն հասել էր 27 մլն ԱՄՆ դոլլարի, ինչն այդ ժամանակաշրջանի համար զգալի գումար էր

¹⁰⁹ *Smith B.*, The RAND Corporation: Case Study of a Nonprofit Advisory Corporation // Mass.: Harvard University Press, Cambridge, 1966, p. 202.

¹¹⁰ *Диксон П.*, Фабрики мысли // ООО «Издательство АСТ», М., 2004, с. 17.

¹¹¹ *Медушевский Н.А.*, Экспертное сообщество в политической сфере в конце XX – начале XXI века // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук. по спец. 23.00.02 - «Политические институты, процессы технологии», М., 2011, с. 50.

կազմում: Միաժամանակ բազմազան եղանակներով էին նաև վերջինիս ֆինանսավորման աղբյուրները ¹¹²: Այնուամենայնիվ նշենք, որ վիետնամական պատերազմի ունեցած հոգեբարոյական հետևանքները և 1970-ական թվականների սկզբի տնտեսական աճի որոշակի դանդաղումն ամերիկյան հասարակույթի մեջ որոշ ժամանակով էականորեն նվազեցրին առանցքային պետական և առաջին հերթին ռազմական ինստիտուտների հեղինակությունը: Այս իրավիճակը որոշակիորեն բացասաբար ազդեց նաև ուղեղային կենտրոնների կողմից պետական պատվերի շրջանակներում ֆինանսավորվող աշխատանքների ծավալների վրա:

Հարկ է նշել, որ 1940-ական թվականների երկրորդ կեսից մինչև 1960-ական թթ. ընկած ժամանակահատվածում ազգային անվտանգության և միջազգային հարաբերությունների ոլորտի ուսումնասիրությունները շարունակում էին գերակայել ուղեղային կենտրոնների հետազոտական նախապատվություններում, ինչը, բնականաբար, պայմանավորված էր, մի կողմից՝ ԱՄՆ-ի գլխավորությունը Արևմուտքի, իսկ մյուս կողմից՝ ԽՍՀՄ-ի գլխավորությունը խորհրդային ճամբարի երկրների միջև սկիզբ առած սառը պատերազմի իրողություններով և բոլոր ոլորտներում ընթացող համընդհանուր (տոտալ) մրցավազքով: Այս իրողությունները և ապագայի հնարավոր զարգացումներին պատրաստ լինելու անհրաժեշտությունը լավ նախադրյալներ էին ստեղծում գլոբալ կանխատեսումներում մասնագիտացված ուղեղային կենտրոնների ձևավորման և գործունեության ընդլայնման համար: Հենց այդ նպատակով 1961 թ. ՌԷՆԴ կորպորացիայից առանձնացած մի խումբ փորձագետներ՝ Հերման Կանը

¹¹² Шейдина И.Л., США: «Фабрики мысли» на службе стратегии // Изд. «Наука», М., 1973, с. 39.

(Herman Kahn), Մաքս Սինգերը (Max Singer) և Օսկար Ռյուբհաուսենը (Oscar Ruebhausen), ստեղծում են Յուդոկոնյան ինստիտուտը¹¹³, իսկ 1968 թվականին Տորոնթոյի հիմնադրամի աջակցությամբ ՌԵՆԴ-ի նախկին աշխատակիցները մեկ այլ ինստիտուտ է Ապագայի ինստիտուտը¹¹⁴:

Յետաքրքրական է նաև, որ 1940-ականներից մինչև 1960-ական թվականները պետությանը /կառավարությանը շարունակում էր մնալ ուղեղային կենտրոնների ինտելեկտուալ արտադրանքի հիմնական պատվիրատուն, ինչը նպաստում էր ՌԵՆԴ կորպորացիայի նմանությամբ պայմանականորեն անվանված՝ «պայմանագրային» ուղեղային կենտրոնների ստեղծմանը, որոնց ֆինանսական միջոցները հիմնականում գոյանում էին պատվերներից ստացվող եկամուտներից: Մյուս կողմից՝ նման ուղեղային կենտրոնները ֆինանսավորման աղբյուրների թերի բազմազանեցման հետևանքով որոշակիորեն կախվածություն մեջ էին պետական մարմիններից:

1960-ական թվականների երկրորդ կեսից ԱՄՆ-ի հանրային կյանքում ակտիվանում են քաղաքացիական շարժումները: Քաղաքացիական հասարակության ամրապնդումը, բազմակարծության մակարդակի բարձրացումը և բոլոր ոլորտներում մրցակցության մեծացումը համապատասխան հիմքեր ստեղծեցին որակապես նոր տեսակի՝ գաղափարայնացված և հասարակական, քաղաքական, սոցիալական տարբեր շերտերի շահերի պաշտպանությանը միտված ուղեղային կենտրոնների ի հայտ գալու համար, որոնց կարճ կարելի է անվանել շահապաշտպան ուղեղային կենտրոններ: Պատահական չէ, որ նման ուղեղային

¹¹³ Տե՛ս Hudson Institute // URL: <http://www.hudson.org/about/history>

¹¹⁴ Տե՛ս Institute for the Future // URL: <http://www.iftf.org/what-we-do/history-of-the-future/>

Կ Ե Ն տր ո ն ն Ե Ր Ն առ ա վ Ե Լ հ ր ա պ ա ր ա կ ա յ ի ն Է ի ն գ ո Ր Ծ ո ւ մ
և առ ա վ Ե Լ ա կ տ ի վ Է ի ն Չ Լ Մ - ն Ե Ր ի հ Ե տ ա շ խ ա տ ա ն ք -
ն Ե Ր ո ւ մ : Վ Ե Ր ջ ի ն ն Ե Ր ս ա չ ք ի Է ի ն ը ն կ ն ո ւ մ
ան կ ա խ ո ւ թ յ ա ն առ ա վ Ե Լ ք ա ր ձ Ր մ ա կ ա ր դ ա կ ո վ , դ Ր ա ն ց
Ֆ ի ն ա ն ս ա վ ո Ր մ ա ն ա դ ք յ ո ւ Ր ն Ե Ր ը առ ա վ Ե Լ ք ա զ մ ա զ ա ն
Է ի ն ` ի տ ա ր ք Ե Ր ո ւ թ յ ո ւ ն պ Ե տ ո ւ թ յ ո ւ ն ի ց և պ Ե տ ա կ ա ն
պ ա տ վ Ե Ր ն Ե Ր ի ց կ ա խ վ ա ծ ա յ Լ ո ւ ղ Ե ղ ա յ ի ն
Կ Ե Ն տր ո ն ն Ե Ր ի : Ծ ա հ ա պ ա շ տ պ ա ն ո ւ ղ Ե ղ ա յ ի ն
Կ Ե Ն տր ո ն ն Ե Ր ի գ ո Ր Ծ ո ւ ն Ե ո ւ թ յ ա ն հ ա մ ա ր ա ն հ Ր ա ժ Ե շ տ
Ֆ ի ն ա ն ս ա կ ա ն ա դ ք յ ո ւ Ր ն Ե Ր ը գ ո յ ա ն ո ւ մ Է ի ն
գ ո Ր Ծ ա ր ա ր շ Ր ջ ա ն ա կ ն Ե Ր ի ց , գ ա ղ ա փ ա ր ա կ ի ց ն Ե Ր ի ,
հ ա մ ա խ ո հ ն Ե Ր ի կ ո ղ մ ի ց կ ա տ ա ր վ ո ղ մ ա ս ն ա վ ո Ր
վ ճ ա ր ն Ե Ր ի ց , ն վ ի Ր ա տ վ ո ւ թ յ ո ւ ն ն Ե Ր ի ց և
դ Ր ա մ ա շ ն ո Ր հ ն Ե Ր ի ց ս տ ա ց վ ո ղ մ ի ջ ո ց ն Ե Ր ի ց :

Ա յ ս պ ի ս ո վ , մ ի ն չ և 1970-ա կ ա ն թ վ ա կ ա ն ն Ե Ր ը
ո ւ ղ Ե ղ ա յ ի ն կ Ե Ն տր ո ն ն Ե Ր ի կ ո ղ մ ի ց թ ո ղ ա ր կ վ ո ղ
ի ն տ Ե Լ Ե կ տ ո ւ ա Լ ա ր տ ա դ Ր ա ն ք ն առ ա վ Ե Լ ա պ Ե ս
ք ն ո ւ թ ա գ Ր վ ո ւ մ Է Ր ո Ր պ Ե ս ա ն ա չ առ և օ ք յ Ե կ տ ի վ :
Ս ա կ ա յ ն հ Ե տ ա գ ա յ ո ւ մ ա ս տ ի ճ ա ն ա ք ա ր ս կ ս Ե ց ի ն ի հ ա յ տ
գ ա Լ գ ո Ր Ծ առ ն ա կ ա ն ի մ ա ս տ ո վ ն ո Ր տ Ե ս ա կ ի
հ ա ս տ ա տ ո ւ թ յ ո ւ ն ն Ե Ր , ո Ր ո ն ք ք ա ց ա հ ա յ տ ո Ր Ե ն
հ ա յ տ ա ր ա ր ո ւ մ Է ի ն ի Ր Ե ն ց ք ա ղ ա ք ա կ ա ն և
գ ա ղ ա փ ա ր ա խ ո ս ա կ ա ն կ ո ղ մ ն ո Ր ո շ ո ւ մ ը և ա յ դ
ս կ գ ք ո ւ ն ք ն Ե Ր ո վ Է Լ գ ո Ր Ծ ո ւ մ Է ի ն հ ա ն Ր ա յ ի ն
ք ա ղ ա ք ա կ ա ն ո ւ թ յ ա ն դ ա շ տ ո ւ մ : Ն մ ա ն ո ւ ղ Ե ղ ա յ ի ն
Կ Ե Ն տր ո ն ն Ե Ր ի ն Ե Ր կ ա յ ա ց ո ւ ց ի չ ն Ե Ր ն ա կ տ ի վ ո Ր Ե ն
մ ա ս ն ա կ ց ո ւ մ Է ի ն հ ա ն Ր ա յ ի ն ք ա ղ ա ք ա կ ա ն ո ւ թ յ ա ն
տ ա ր ք Ե Ր ո Լ ո Ր տ ն Ե Ր ի ն առ ն չ վ ո ղ ք ն ն ա ր կ ո ւ մ ն Ե Ր ի ն ,
մ ի ա ժ ա մ ա ն ա կ հ ր ա պ ա ր ա կ ո ւ մ Է ի ն գ ա ղ ա փ ա ր ա յ ն ա ց վ ա ծ
ո ւ ս ո ւ մ ն ա ս ի Ր ո ւ թ յ ո ւ ն ն Ե Ր , ի ն չ ո վ փ ո Ր ձ ո ւ մ Է ի ն
ա գ դ Ե ց ո ւ թ յ ո ւ ն ո ւ ն Ե ն ա Լ և ո ւ ղ ղ ո Ր դ Ե Լ ո Ր ո շ ա կ ի
ո Լ ո Ր տ ո ւ մ ի Ր ա կ ա ն ա ց վ ո ղ ք ա ղ ա ք ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն ը :
Ն մ ա ն մ ո տ Ե ց ո ւ մ ը չ Է Ր կ ա ր ո ղ ի Ր ա գ դ Ե ց ո ւ թ յ ո ւ ն ը
չ ո ւ ն Ե ն ա Լ ն ա ն ո ւ ղ Ե ղ ա յ ի ն կ Ե Ն տր ո ն ն Ե Ր ի
ա ն ա չ առ ո ւ թ յ ա ն վ Ե Ր ա ք Ե Ր յ ա Լ մ ի ն չ ա յ դ ձ և ա վ ո Ր վ ա ծ

պատկերացումներին վրա: Ինչևէ, 1960-ական թվականներին վերջից ԱՄՆ-ում ուղեղային կենտրոններին որոշ փորձագետների հրապարակումներում սկսեց զգացվել հատկապես պահպանողական գաղափարախոսության ազդեցությունը, իսկ արդեն 1973 թ. հիմնվեց առաջին գաղափարայնացված ուղեղային կենտրոնը՝ «Ժառանգություն» հիմնադրամը (The Heritage Foundation): Վերջինս բացահայտ հայտարարում էր իր գաղափարախոսական կողմնորոշման մասին և իր գործունեության մեջ ու հրապարակումներում հենվում էր պահպանողական գաղափարների վրա: Ինչպես նշված է այդ հաստատության պաշտոնական կայքում, «Ժառանգություն» հիմնադրամը հետազոտական և կրթական հաստատություն է, ուղեղային կենտրոն, որի առաքելությունն է առաջ մղել պահպանողական հանրային քաղաքականությունը՝ հիմնված ազատ ձեռնարկատիրության սկզբունքների, անհատական ազատությունների, ավանդական ամերիկյան արժեքների և ուժեղ ազգային պաշտպանության վրա¹¹⁵: Հարկ է նշել, որ այս հաստատության հիմնման համար սկզբնական կապիտալը նույնպես ներդրվել է գործարար ու ռոտի շրջանակների ներկայացուցիչ կողմից: Առավել որոշակի, հաստատության հիմնման համար սկզբնական կապիտալը տրամադրել էր Կոլորադո նահանգի գարեջրագործական ընկերության ղեկավար Ջոզեֆ Կոլրզը¹¹⁶: «Ժառանգություն» հիմնադրամի ի հայտ գալը շրջադարձային էր և նոր էջ բացեց ԱՄՆ-ի ուղեղային կենտրոններին պատմության մեջ, քանի որ վերջինս դարձավ առաջին ուղեղային կենտրոնը, որը բացահայտորեն հետևողական էր որոշակի

¹¹⁵ The Heritage Foundation // URL: <http://www.heritage.org/about/our-history/history>

¹¹⁶ *Рич Э., Уивер К.*, Пропагандисты и аналитики: «мозговые центры» и политизация экспертов // “Pro et Contra”, том 8, N 2, Весна, 2003, с. 69.

քաղաքականությունը, կուսակցությունը և գաղափարախոսությունը՝ ընթացիկ քաղաքականության հարցերի քննարկման վրա ազդեցություն ունենալու ձգտումով և ազրեսիվ քարոզչությունը ¹¹⁷:

Յարկ Էնշել, որ «Ժառանգություն» հիմնադրամի ազդեցությունը հատկապես զգալի էր ԱՄՆ-ի 40-րդ նախագահ Ռ. Ռեյգանի պաշտոնավարման տարիներին (1981-1989 թթ.)¹¹⁸: Այս հաստատության կողմից մշակվել էր «Առաջնորդության մանդատ. Պահպանողականների վարչակարգում քաղաքական կառավարումը» գործողությունների պլանը, որը քաղաքական ուղենիշ հանդիսացավ Ռեյգանի վարչակարգի համար՝ սկսած հարկային քաղաքականությունից մինչև ազգային անվտանգության ոլորտ: Բավական է նշել, որ փաստաթղթում առկա շուրջ 2000 երաշխավորություններից մոտ 2/3-ը հավանության արժանացան Ռեյգանի վարչակարգի կողմից:

Ինչպես ճշմարտացիորեն նկատում է Դ. Սթոունը, մինչև 1970-ականները ուղեղային կենտրոնների մեծամասնությունը ձգտում էին չքաղաքականացված լինել: Իրենց երաշխավորությունների պատրաստման ընթացքում նրանք մերժում էին որևէ գաղափարախոսական ճնշում: Ուղեղային կենտրոններն իրենց հեռու էին պահում քաղաքական գաղափարայնացվածությունից և հենվում էին սոցիալական ու տնտեսական հիմնախնդիրների գիտական վերլուծության վրա: Վերջիններս փորձում էին լինել անաչառ, օբյեկտիվ և գիտական ներդրում ունենալ հանրային քաղաքականության ու հանրային կառավարման ուսումնասիրության ոլորտում: Անաչառությունը և գիտական մոտեցումը շատ կարևոր նշանակություն ունեին իրատեսական քաղաքական քննարկումների և ուղեղային

¹¹⁷ Weaver R.K., The Changing World of Think Tanks // PS: "Political Science and Politics", N 22, 1989, p. 567.

¹¹⁸ Տե՛ս **Աթոյան Վ.**, Ազգային անվտանգության հիմնախնդիրներ. դասախոսություններ // Եր., «Տնտեսագետ» հրատ., 2014, էջ 58:

կենտրոններին նկատմամբ հանրային վստահության համար: Դ. Սթոունի դիտարկմամբ 1970-ական թվականներին ցածր ստեղծված ուղեղային կենտրոններում առավել ակնհայտ արտահայտվող միտումը դրանց ուղղվածության և մասնագիտացման բազմազանությունն է: ԱՄՆ-ի ուղեղային կենտրոններին հագեցած շուկայում արտադրանքի բազմազանությունը դառնում է կարևոր¹¹⁹: Եթե Երկրորդ աշխարհամարտից հետո ուղեղային կենտրոններում գերակայում էին մաթեմատիկոսներն ու ֆիզիկոսները, ապա մեկ տասնամյակ անց՝ տնտեսագետները, իսկ ավելի ուշ՝ հետազոտության ներկայում քաղաքական հիմնախնդիրների մասնաբաժնի աճին գուցահեռ դրական տեղաշարժ նկատվեց հոգևոր հասարակական գիտություններին ներկայացուցիչների¹²⁰:

Այսպիսով, այդ տարիներին ուղեղային կենտրոններին ուղորտում հայտեկած մյուս կարևոր միտումներից էր քարոզչական, լոբբիստական հաստատությունների հայտ գալը (*advocacy think tanks*): Չամատեղելով հանրային քաղաքականության ուսումնասիրությունները և ակտիվ մարքեթինգային տեխնոլոգիաները՝ վերջիններս հիմնովին փոխեցին ԱՄՆ-ի քաղաքական համակարգում ուղեղային կենտրոններին ուղորտի էությունը ու դերակատարությունը: Փորձագիտական հաստատություններին միջև մրցակցություն աճին գուցահեռ բազմաթիվ ուղեղային կենտրոններ սկսեցին աստիճանաբար առավել կարևորել հանրության և պետության ուշադրությունը, ինչի ներգրավմանն էլ հիմնականում միտված էր նրանց գործունեությունը:

¹¹⁹ *Stone D.*, *Capturing the Political Imagination // Think Tanks and the Policy Process*, Portland, Oregon: Frank Class, 1996, pp. 20-21.

¹²⁰ *Шейдина И.А.*, *ук. соч.*, с. 15.

1970-1980-ական թվականներին աստիճանաբար մեծանում էր «Ժամանագուլթյուն» հիմնադրամի օրինակով ստեղծվող ուղեղային կենտրոններ թվաքանակը, որոնք ունեին հստակ գաղափարախոսական կողմնորոշում, բացահայտորեն հռչակում էին իրենց քաղաքական դիրքորոշումը և միտված էին սեփական գաղափարները քարոզելուն: Դրանք հիմնականում պահպանողական ուղղվածության կազմակերպություններ էին, սակայն ի հայտ էին գալիս նաև ազատական (լիբերալ) և կենտրոնամետ ուղեղային կենտրոններ: Այս կազմակերպությունների աշխատակիցները, որպես կանոն, ունեին համանման գաղափարախոսական հայացքներ, իսկ այդ ուղեղային կենտրոնների ղեկավարները հետազոտությունների արդյունքներն օգտագործում էին համապատասխան գաղափարախոսության քարոզչության նպատակով¹²¹: Այդ շրջանում ստեղծվեցին նաև մի շարք այլ այսօրվա՛վ հայտնի ուղեղային կենտրոններ: Մասնավորապես 1971 թ. մի խումբ պաշտոնաթող զինվորականների կողմից ստեղծվում է Պաշտպանական տեղեկատվության կենտրոնը, որի նպատակներն էին ռազմական, պաշտպանական խնդիրների վերաբերյալ վերլուծության ունեների իրականացումը, իրենց ինտելեկտուալ արտադրանքը հանրության և որոշում կայացնողների շրջանում տարածումն ու քաղաքականության վրա ազդեցության ունը¹²²: 1977 թ. հիմնվում է Կատոնի ինստիտուտը, որը քաղաքական փորձագիտության շուկայում դիրքավորված է որպես լիբերտարիստական հայացքներ կրող և քարոզող ուղեղային կենտրոն, որի սկզբունքներն էին անհատական ազատության ունեները, ազատ շուկաները, խաղաղությանը և

¹²¹ Рич Э., Уивер К., укр. соч., с. 70.

¹²² Տե՛ս Center for Defense Information at POGO // URL: <http://pogo.org/straus/?referrer=http://www.cdi.org/>

այլն ¹²³: Ավելի ուշ՝ 1981 թ., դաշնային բյուջեի առաջնահերթությունների, մասնավորապես ցածր եկամուտ ունեցող ամերիկացիների վրա բյուջեի ազդեցության ուսումնասիրության նպատակով ստեղծվում է Բյուջետային և քաղաքականության առաջնահերթությունների կենտրոնը ¹²⁴: Բնականաբար նշված ուղեղային կենտրոններով այս շրջանում հիմնված հաստատությունների ցանկը չի սահմանափակվում: Միաժամանակ ակնհայտ էր դառնում, որ 1970-ական թվականներից սկիզբ է առնում ուղեղային կենտրոնների հիմնման և ոլորտի զարգացման ամենաբուռն ժամանակաշրջանը: Ինչպես նշում է Ջ. Մաք-Գանը, ներկայումս գոյություն ունեցող ուղեղային կենտրոնների 2/3-ը ստեղծվել են 1970թ. սկսած, իսկ ավելի քան կեսը՝ 1980թ. սկսած ¹²⁵:

XX դարի երկրորդ կեսին ոլորտի զարգացման մեկ այլ կարևոր միտումն անդրազգային բնույթի ուղեղային կենտրոնների ի հայտ գալն է: Ինչպես նշում է Դ. Սթոունը, իրականում միջազգային ուղեղային կենտրոնները երբեմն այդքան էլ ակնհայտ չեն: Եռակողմ հանձնաժողովն ուղեղային կենտրոններին որոշակի գծերով նմանություն ունեցող կազմակերպություն է, որն իր կազմակերպական ձևով վերազգային է: Այս շարքում հեղինակը դասում է նաև Յունի ակումբը և շվեյցարական Դավոսի Միջազգային տնտեսական ֆորումը ¹²⁶:

Որպես օրինակ՝ համառոտ անդրադառնանք նշվածներից Յունի ակումբի և Եռակողմ հանձնաժողովի գործունեության

¹²³ Տե՛ս The Cato Institute // URL: <https://www.cato.org/about>

¹²⁴ Տե՛ս The Center on Budget and Policy Priorities // URL: <http://www.cbpp.org/about/mission-history>

¹²⁵ **James G. McGann**, Think Tanks and the Transnationalization of Foreign Policy // "The Role of Think Tanks in U.S. Foreign Policy". U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of the U.S. Department of State), Vol. 7, N 3, 2002, p. 14. URL: http://www.usembassy-mexico.gov/bbf/ej/1102_RoleThinkTanks.pdf

¹²⁶ **Stone D.**, Think Tanks beyond nation-states // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by **Stone D.** and **Denham A.**, Manchester University Press, Manchester and New York, 2004, p. 36.

ուղղութիւնները: Այսպէս, 1968 թ. Յունիստ 30
 Եւրոպայի գիտնականներ և գործարարներ
 հավաքվում են՝ քննարկելու գլոբալ հիմնա-
 խնդիրները, որի արդյունքում հիմնում են Յունի-
 ստ 127: Այս հարթակը միավորեց Արևմուտքի՝
 ԱՄՆ-ի և Արևմտյան Եւրոպայի փորձագետներին և
 ամփոփում էր միջազգային բնույթի ուղեղային
 կենտրոնների բնորոշիչները: Ըստ Եւրոպայի, Յունի-
 ստ 127-ը դարձավ իր տեսակի մեջ առաջին նման
 կենտրոնը, որի գործունեության նպատակը գլոբալ
 քաղաքական-տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական
 կանխատեսման ուղղութիւնում մշակումների
 իրականացումն էր: Չնայած այնուամենայնիւ
 Յունիստ 127-ը մշտապէս ուղեկցվել է ազատական-
 բարեփոխական մոտեցումներով, դրա կազմակերպիչ-
 ներսնանքնդհատ ձգտել են ընդգծված
 գաղափարախոսական անկախութիւնը:

1973 թ. հիմնվեց Եռակողմ հանձնաժողովը 128, որը,
 ինչպէս նշվեց, նույնպէս հնարավոր է դասել
 վերազգային ուղեղային կենտրոնների շարքում:
 Ավելորդ չէ նշել, որ վերջինս հիմնվել է հայտնի
 միլիարդատեր Դ. Ռոքֆելլերի և ոչ պակաս հայտնի
 քաղաքագետ Չ. Բժեգի նստուկ նախաձեռնութիւնում:
 Այս վերազգային հաստատութիւնը, որը միավորել էր
 Յունիստի և Արևմտյան Եւրոպայի և
 Ճապոնիայի հայտնի փորձագետներին, քաղաքական և
 գործարար շրջանակների ներկայացուցիչներին,
 իրականացնում էր քաղաքական ընկերակցութիւն,
 ուղեղային կենտրոնի և քննարկումների ակումբի
 գործառնութիւնը: Եռակողմ հանձնաժողովը մշակել է
 «Եռակողմութիւն» (տրիլատերալիզմ) հայտնի
 դոկտրինը, որը հիմնված էր երեք աշխարհագրական
 կենտրոնների տնտեսապէս զարգացած

127 Տե՛ս Club of Rome // URL: <https://www.clubofrome.org/about-us/history/>
 128 Տե՛ս The Trilateral Commission // URL: <http://trilateral.org/page/3/about-trilateral>

Ժողովրդավար ությունների վերնախավերի գործունեության միավորման գաղափարի վրա և միտված էր գլոբալ քաղաքական ու տնտեսական զարգացման կառավարմանը: Այս հաստատության գաղափարախոսների նպատակն էր միասնություն և պահպանել ընդհանուր հետաքրքրություններ կայացնող քաղաքական խնդիրների պլանավորման հարցերում: Ավելացնենք, որ, ի տարբերություն ազգային փորձագիտական կառույցների, որոնց ֆինանսավորումը, որպես կանոն, իրականացվում է իրենց ծագման երկրի ազգային կապիտալով. վերազգային ուղեղային կենտրոնների ֆինանսավորման հիմնական աղբյուրները վերազգային կորպորացիաներն էին:

Ուղեղային կենտրոնների ոլորտում այդ տարիների զարգացումներից պետք է առանձնացնել նաև ցանցային միավորումների ստեղծումը¹²⁹: Ինչպես նշում է Յ. Ուլրիխը, Տրանսեվրոպական քաղաքականության ուսումնասիրությունների ընկերակցությունը (The Trans European Policy Studies Association - TEPSA) օրինակ է, թե ինչպես է իսկզբանե ոչ ֆորմալ ցանցը վերածվում ֆորմալ կազմակերպության: «TEPSA»-ն հիմնվել է 1974 թ. ֆելգիական «The Belgian Groupe d'Etudes Politique Europe'ennes», իտալական «The Instituto Affari Internazionali» (IAI) և բրիտանական «Federal Trust» հաստատությունների կողմից: Յաշվի առնելով ընկերակցության անդամների ավելացումը՝ 1990-ական թթ. կեսերին որոշում կայացվեց ստեղծել առավել ֆորմալ կառույց: Ներկայումս «TEPSA»-ի մաս են կազմում ԵՄ-ի բազմաթիվ անդամ-երկրների ուղեղային կենտրոններ և հետազոտական հաստատություններ: «TEPSA»-ի նպատակն է նպաստել

¹²⁹ Տե՛ս **Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքջյան Ա.**, Ուղեղային կենտրոնները քաղաքական գործընթացում. «Հինգերորդ իշխանություն»//«Բանբեր ՀՊՏՀ», N1(41), 2016, էջ 147-157:

Եվրոպական տարբեր երկրների միջև երկխոսության հաստատմանը ¹³⁰:

ՉարկեաՎելացներ, որ այս ժամանակաշրջանում ուղեղային կենտրոնների ոլորտի բուռն զարգացումը բնորոշ էր ոչ միայն ԱՄՆ-ին: Այսպես, սառը պատերազմի իրողությունները, այդ թվում՝ աշխարհաքաղաքական երկու հսկաների միջև սկիզբ առած տոտալ մրցավազքը, ԽՍՀՄ-ում ևս խթանում էին համապատասխան վերլուծական կառույցների ստեղծումը: Իհարկե, ԽՍՀՄ տարիներին գործող վերլուծական կառույցները կազմակերպա-իրավական և գործառնական իմաստով էականորեն տարբերվում էին արևմտյան ուղեղային կենտրոնների համար ընդունված չափանիշներից և որպես պետական կամ կուսակցական կառույցներ՝ իշխանական աստիճանակարգային (հիերարխիկ) համակարգում ունեին կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակ: Ինչևէ, ԽՍՀՄ-ում ուղեղային կենտրոնների բնորոշ գործառույթներ, որպես կանոն, իրականացնում էին Գիտությունների ակադեմիայի գիտական, փորձագիտական և վերլուծական կառույցները, գերատեսչական պատկանելության գիտահետազոտական ինստիտուտները, Պաշտպանության նախարարության և Պետական անվտանգության կոմիտեի մասնագիտացված ստորաբաժանումները: Չավելենք նաև, որ 1960-ական թվականներին Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության (ԽՄԿԿ) Կենտրոնական կոմիտեի (ԿԿ) Միջազգային բաժնում և Սոցիալիստական երկրների կոմունիստական և աշխատավորական կուսակցությունների հետ կապերի բաժնում ակադեմիական շրջանակների

¹³⁰ *Ullrich H.*, European Union think tanks: generating ideas, analysis and debate // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by *Stone D.* and *Denham A.*, Manchester University Press, Manchester and New York, 2004, pp. 61-62.

ն երկայաց ու ց ի չ ն եր ի ց ձևավորվել է ին խորհրդա-
կան ն եր ի խմբեր, որոնք իրականացնում է ին
հետազոտական, վերլուծական գործառնել թ ն եր :
Միջազգային գործընթացների
ուսումնասիրության ոլորտում գործում է ին Գի-
տությունների ակադեմիային առընթեր Լատինական
Ամերիկայի ինստիտուտը, Աֆրիկայի ինստիտուտը,
Յեռավոր Արևելքի ինստիտուտը, ԱՄՆ-ի և Կանադայի
ինստիտուտը և այլն :

Դ. Չայցևի կարծիքով ԽՍՀՄ-ում նման
կառույցների հիմնման նպատակը ոչ թե քաղաքական
համակարգի ապակենտրոնացումն էր, այլ
կուսակցական ղեկավարության առջև ծառայած
խնդիրների ծավալն ու բարդությունը, զարգացած
երկրներին հասնելու, համապատասխանելու
անհրաժեշտությունը և աշխարհում տեղի ունեցող
փոփոխությունների արագությունը, առաջին հերթին
գիտատեխնիկական ոլորտում համընթաց շարժվելու
մղումը: Արևմուտքի հետ տնտեսական
մրցակցությունը պահանջում էր հիմնավորապես
ուսումնասիրել վերջիններիս տնտեսությունն ու
քաղաքականությունը¹³¹:

Անդրադառնալով XX դարի երկրորդ կեսին այլ
երկրներում ուղեղային կենտրոնների ոլորտի
զարգացմանը՝ պետք է նշել, որ դրական միտումներ
առկա էին նաև բազմաթիվ այլ երկրներում: Որպես
հետաքրքրական օրինակ՝ դրանցից կարող ենք
առանձնացնել ներկայումս աշխարհում ուղեղային
կենտրոնների քանակով երկրորդ պետություն
համարվող Չինաստանի ուղեղային կենտրոնների
ոլորտի ձևավորման և զարգացման գործընթացը,
որտեղ այդ ոլորտը էական առանձնահատկություն
ներով տարբերվում է արևմտյան մոդելներից:

¹³¹ *Зайцев Д.Г.*, Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук., 23.00.02 – Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии. М., 2009, с. 125.

Այսպես, Չինաստանի՝ Արևմուտքից տարբերվող (տնտեսական, քաղաքական) պայմանները¹³² և չինական քաղաքական մշակույթն ինքնին ենթադրում են, որ այստեղ ուղեղային կենտրոնները զարգացման այլ ուղի պետք է անցնեին: Ինչպես նշում է Մաք-Գանը, Չինաստանի ուղեղային կենտրոնների պատմությունը կարելի է բաժանել երեք շրջանի՝ Մաոյի շրջան, մինչտյանյանմենյան¹³³ շրջան և հետտյանյանմենյան շրջան, համապատասխանաբար՝ առաջին, երկրորդ և երրորդ սերնդի ուղեղային կենտրոններ¹³⁴:

Այսպես, Մաո Ցզե-դունի (*Mao Zedong*) իշխանության տարիներին, այսպես կոչված *առաջին սերնդի* ուղեղային կենտրոնների ազդեցությունը ներքին և արտաքին քաղաքականության վրա շատ սահմանափակ էր: Քաղաքական համակարգը չափազանց անձնակենտրոն էր, քանի որ քաղաքական իշխանությունը կենտրոնացած էր Չինաստանի Կոմունիստական կուսակցության (ՉԿԿ) փոքրաթիվ առաջնորդների ձեռքում՝ Մաոյի գլխավորությամբ: Սա հատկապես ճիշտ է «Մշակութային հեղափոխության»¹³⁵ շրջանի

¹³² Օրինակ, միակուսակցական քաղաքական համակարգի պայմաններում ՉԺՅ-ում, բնականաբար, տարբեր կուսակցությունների ստեղծած կամ դրանց գաղափարներով առաջնորդվող ուղեղային կենտրոններ չեն կարող:

¹³³ «Տյանյանմեն հրապարակի իրադարձությունները», որոնք հայտնի են նաև որպես «հունիսի 4-ի իրադարձություններ»: 1989թ. ապրիլին Պեկինի Տյանյանմեն հրապարակում սկիզբ առանձանգվածային ցույցեր, որոնց մասնակիցների հիմնական մասը ուսանողներ էին: Յունիսի 4-ին իշխանության կողմից ռազմական ստորաբաժանումների օգնությամբ ցույցը ցրելու գործողությանը ենթացքում եղան հարյուրավոր զոհեր:

¹³⁴ *McGann J.*, Chinese Think Tanks, Policy Advice and Global Governance // RCCPB Working Paper #21, Indiana University, March 2012, p. 11. URL: <https://www.indiana.edu/~rccpb/wordpress/wp-content/uploads/2015/11/McGann-RCCPB-21-Think-Tanks-March-2012.pdf>

¹³⁵ «Չինաստանի մշակութային հեղափոխություն» - 1966–1976 թթ. սոցիալ-քաղաքական շարժում՝ ձեռնարկված Մաո Ցզե-դունի կողմից, ով Չինաստանում «կապիտալիզմի հնարավոր վերակայման» պատճառաբանությամբ նպատակ էր դրել վերացնելու քաղաքական ընդդիմությունը: «Մշակութային հեղափոխությունը» հանգեցրեց հին մշակույթի, ավանդույթների մերժմանը, մտավորականների, կառավարության քաղաքականությունը քննադատողների համատարած հալածանքների:

համար, երբ քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում գերակայում էին առաջնորդներին գաղափարախոսական նկատառումները, ինչն իր հետքն էր թողնում թույլ ինստիտուցիոնալացված քաղաքական գործընթացների վրա: Վերջինս արտահայտվել է մասնավորապես Միջազգային ուսումնասիրությունների չինական ինստիտուտի պարագայում, որն անգործության էր մատնվել 1967 թվականից և կրկին ակտիվացել միայն 1979 թ.¹³⁶:

Ժամանակակից բնորոշմամբ ուղեղային կենտրոնների ձևավորումը Չինաստանում սկսվել է 1950-ական թվականներին: Այդ ժամանակահատվածում ուղեղային կենտրոնները ստեղծվել են պետության կողմից և կցված են եղել համապատասխան գերատեսչությանը: Դեռ 1949 թ. ստեղծվեց Չինաստանի Ժողովրդի արտաքին գործերի ինստիտուտը՝ որպես Արտաքին գործերի նախարարության առանձին բաժանմունք: 1956 թ. Արտաքին գործերի նախարարության ենթակայությանը հիմնվել է Միջազգային հարաբերությունների ինստիտուտը, որը հետագայում դարձել է Չինաստանի միջազգային հարաբերությունների ինստիտուտ (China Institute of International Studies - CIIS): Այս հաստատությունը երկրի արտաքին քաղաքականության ձևավորման մեջ պատմականորեն ոչ այնքան նշանակալի դեր է ունեցել՝ պայմանավորված այս ոլորտում «CIIS»-ից հետո ստեղծված Չինաստանի ժամանակակից միջազգային հարաբերությունների ինստիտուտի (China Institute of Contemporary International Relations - CICIR) ազդեցությամբ: Ընդ որում՝ «CICIR»-ը միակ ինստիտուտն էր, որն իր գործունեությունը

¹³⁶ Cheung T.M., The Impact of Research Institutes in the Post-Mao Period of Peking's Foreign Policy-Making // "Issues and Studies", 23 (7), 1987, p. 96.

մասամբ շարունակեց «Մշակութային հեղափոխություն» տարիներին¹³⁷:

Չին-խորհրդային հարաբերություններին սառեցման և զարգացող երկրների նկատմամբ ազդեցություն ձեռքբերման համար ընթացող մրցակցություն համատեքստում 1961թ. հիմնադրվեց Աֆրիկա-Ասիա հետազոտական ինստիտուտը, որը 1964թ. բաժանվեց երկու մասի՝ Արևմտյան Ասիայի և Աֆրիկայի հետազոտական ինստիտուտ և Յարավարևելյան Ասիայի հետազոտական ինստիտուտ, երկուսն էլ կցված ՉԿԿ Միջազգային կապերի և Չինաստանի գիտությունների ակադեմիայի (China Academy of Sciences - CAS) փիլիսոփայություն և հասարակական գիտությունների բաժիններին: Մշակութային հեղափոխությունից հետո Արևմտյան Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտը վերսկսեց իր աշխատանքները նոր Չինաստանի սոցիալական գիտությունների ակադեմիայի (China Academy of Social Sciences - CASS) կազմում¹³⁸:

Պետք է ավելացնել նաև, որ մինչև 1970-ականների վերջերը Չինաստանի ուղեղային կենտրոններում միջազգային հարաբերությունների ուսումնասիրությունը սահմանափակվում էր միջազգային համայնավարական (կոմունիստական) և ազգային-ազատագրական շարժումների հետազոտություններով¹³⁹:

Յարկեյնշել, որ «Մշակութային հեղափոխություն» բացասական հետևանքներից էր գիտական մտքի թուլացումը՝ պայմանավորված փորձագիտական հանրության կրթական գործընթացից օտարումով, միջազգային ակադեմիական շփումներից և

¹³⁷ Տե՛ս *Bondiguel Th., Kellner Th.*, The impact of China's foreign policy think tanks // BICCS Asia Paper Vol. 5 (5), 2009, p. 8.

¹³⁸ *Աթոյան Վ., Մովսիսյան Շ.*, Չինաստանի ուղեղային կենտրոնները // Եր., «Տնտեսագետ» հրատ. («Ամբերդ» մատենաշար N29), 2016, էջ 11:

¹³⁹ *Ahmad M.*, The Role of Chinese Think Tanks in Foreign Policy Making: Growing Influence and Political Limitations // The Dialogue. Volume III, Number 3, p. 392. URL: http://qurtuba.edu.pk/thedialogue/The%20Dialogue/3_3/05_mahmood_ahmad.pdf

նորարարությունը մեկուսացմամբ: Իրավիճակն աստիճանաբար փոխվեց 1970-ական թվականներին վերջերին: Մաո Ցզե-դունի մահվանից և «Մշակութային հեղափոխություն» ավարտից հետո 1978 թ. իշխանություն եկավ Դեն Սյաոպինը (*Deng Xiaoping*): Նա որդեգրեց «բաց դռների» քաղաքականությունը, ինչն ուղեղային կենտրոնների ստեղծման նոր ալիք առաջացրեց և ազդարարեց այսպես կոչված՝ Չինաստանի *երկրորդ սերնդի* ուղեղային կենտրոնների ժամանակաշրջանը: Նրանց հիմնական դերն էր օգնել կառավարությանը քաղաքականություն հետազոտության ոլորտում: Ինչևիցե, ինչպես նշում է Մաք-Գանը, կառավարությունն ամբողջովին չէր վստահում ուղեղային կենտրոնների, ուստի և ուղեղային կենտրոնները \$ինանսավորվում էին մեկ աղբյուրից՝ կառավարությունից, և հաշվետու էին վերջինիս ղեկավարությանը: Ուղեղային կենտրոնները հիմնում և հովանավորում էր կենտրոնական կառավարությունը, որպեսզի ի վիճակի լիներ ամբողջովին վերահսկել ու դրանց հետազոտությունները և հրապարակումները¹⁴⁰:

Ինչևիցե, Չինաստանի առաջնորդները նախնական փուլում սկսեցին վերագնահատել արհեստավար ժամանագետների անհրաժեշտությունն ու հնարավորությունները, իսկ հետագայում որդեգրած «չորս արդիականացման»¹⁴¹ քաղաքական կիրարկմանը նպաստել ու նպատակով շեշտադրեցին նաև ուղեղային կենտրոնների հիմնումը: Այս առումով Դեն Սյաոպինը տարբերվում էր նախորդներից և

¹⁴⁰ *McGann J.*, Chinese Think Tanks, Policy Advice and Global Governance // RCCPB Working Paper #21, Indiana University, March 2012, p. 11. URL: <https://www.indiana.edu/~rccpb/wordpress/wp-content/uploads/2015/11/McGann-RCCPB-21-Think-Tanks-March-2012.pdf>

¹⁴¹ Գյուղատնտեսություն, արդյունաբերություն, գիտություն և տեխնոլոգիա, ազգային ոլորտ:

խրախուսում էր ներկուսակցական քննարկումները՝ թույլ տալով փորձագետներին և մասնագետներին ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը հակասական հարցերի մասին: Սեփական իշխանություն չէր տրամադրում լեզուի մոլորության ամրապնդման նպատակով նա փորձում էր ձևավորել քաղաքականություն մշակման արհեստավարժ և համակարգված գործընթաց ¹⁴²:

Պետական խորհրդի ներքո հիմնելով բազմաթիվ հետազոտական հաստատություններ՝ Չինաստանի ղեկավարները գիտակցում էին, որ տեխնոկրատական համակարգի կառուցումը կարևոր դեր կխաղատնտեսական և քաղաքական խնդիրներ լուծման մեջ, ինչն առավել ինստիտուցիոնալացված առաջ կմղի երկրի քաղաքական համակարգը: Սեկնաբանելով այս երևույթը՝ որոշ փորձագետներ նշում են այն պատճառները, որոնք խթանեցին բարձրացնելու ինտելեկտուալներին և, առավել լայն իմաստով, ուղեղային կենտրոնների դերակատարությունը և ստեղծելու այսպես կոչված՝ երկրորդ սերնդի ուղեղային կենտրոններ: Առաջին՝ պետք է բավարարվեր բարեփոխումների և տեղեկատվության նկատմամբ պահանջարկը: Պետք էր ճանաչել արտաքին աշխարհը, գլոբալ գործընթացները՝ միաժամանակ իրականացնելով ներքին խնդիրներին նվիրված հետազոտություններ: Երկրորդ՝ էական դեր խաղաց Դեն Սյանպինի այն միտքը, որ ինտելեկտուալներն աշխատավոր դասակարգի մի մասն են, ինչը երկրում լայն ժողովրդականություն էր վայելում: Երրորդ՝ կենտրոնական կառավարությունը կարիք ուներ որոշ ումներին կայացման գործընթացի որոշակի ժողովրդավարացման, ինչը և առաջ մղեց

¹⁴² *Nelson D.N.*, Charisma, Control, and Coercion: the Dilemma of Communist Leadership // "Comparative Politics", 17 (1), 1984, p. 6.

ակադեմիական հետազոտական գործունեության
զարգացումը¹⁴³:

Վերոնշյալ «չորս արդիականացման»
քաղաքականության իրականացման ընթացքում Չինաստանի առաջնորդները զգացին նաև գաղափարախոսության և դասակարգային պայքարի վրա շեշտադրման նվազեցման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կընձեռներ բարձրացնելու կառավարության գործունեության արհեստավարժությունը մակարդակը: Այդ ամենն իրարտացումը գտավ 1986 թ. վերջին ի դեմս ժառ Չիյանգի (*Zhao Ziyang*)՝ կուսակցությունը կառավարությունից տարանջատելու առաջարկության: Վերջինս փորձում էր կառուցել արհեստավարժ և տեխնոկրատիկ համակարգ, որը տնտեսական բարեփոխումներին հետո ի վիճակի կլիներ լուծելու ներքին և արտաքին խնդիրները: Թեև նա ի վերջո պարտվեց ՉԿԿ պահպանողական խմբակցությանը, որը մերժեց այդ առաջարկը՝ պնդելով կառավարության վրա կուսակցական հսկողության անհրաժեշտության տեսակետը, սակայն քաղաքականության որակի բարձրացման նպատակով հետազոտական ինստիտուտներում փորձագետների հավաքագրման միտումը՝ որպես «չորս արդիականացման» քաղաքականության հիմնարար քաղաքական, պահպանվեց: Դրա շնորհիվ վերաբացվեցին նաև Մաոյի ժամանակաշրջանում լուծարված բազմաթիվ հետազոտական հաստատություններ, և հիմնադրվեցին նորերը:

Գիտակցելով անձնակազմում պատրաստված մասնագետների պակասը՝ ՉԿԿ-ն սկսեց ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական կառավարության մակարդակներում ինտելեկտուալներին ներգրավել կուսակցություն և պետական համակարգ:

¹⁴³ Տե՛ս *Luo Z*, *The Globalization Challenge and the Role of Think Tanks in China* // *J.W. Langford* and *K.L. Brownsey* (eds), *Think Tanks and Governance in Asia-Pacific region*, Halifax, Nova Scotia, Institute for Research on Public Policy, 1991, p. 75:

Մի շարք հետազոտական կենտրոններ, ինչպիսիք են Չարգացման հետազոտական կենտրոնը (Development Research Center of the State Council - DRC) կամ Չինաստանի միջազգային հետազոտություններ կենտրոնը (China Center for International Studies - CCIS) հիմնվեցին ժամ Չինանգի վարչապետության տարիներին¹⁴⁴:

Ամփոփելով ՉԺՅ ՈԼԿ ոլորտի զարգացման պատմական փուլերը՝ դրանք կարող ենք բաժանել հինգ պայմանական փուլերի.

1-ին փուլ՝ 1956-1966 թթ.՝ ուղեղային կենտրոնների սաղմնավորման փուլ,

2-րդ փուլ՝ 1966-1976 թթ.՝ ուղեղային կենտրոնների ժամանակավոր հետընթացի փուլ,

3-րդ փուլ՝ 1976-1989 թթ.՝ հիմնականում տնտեսագիտական հետազոտական կենտրոնների տարածման և ուղեղային կենտրոնների ինստիտուցիոնալացման փուլ,

4-րդ փուլ՝ 1989-2009 թթ.՝ ուղեղային կենտրոնների վերընթաց զարգացման փուլ,

5-րդ փուլ՝ 2013 թ.- մինչև այժմ՝ Չինաստանի աճող գլոբալ հավակնությունների սպասարկմանը միտված ուղեղային կենտրոնների ձևավորման փուլ:

Այսպես, 1-ին փուլում ուղեղային կենտրոնները ստեղծվում էին՝ արդարացնելու և հիմնավորելու կառավարության քաղաքականությունը, այլ ոչ թե իրականացնելու անկախ և անաչառ հետազոտություններ: Ուղեղային կենտրոնները գործում էին նախարարություններին կից, իսկ դրանց արտադրանքը խիստ գաղափարայնացված էր: 2-րդ փուլում «Մշակութային հեղափոխության» ազդեցությամբ սկիզբ առած մտավորականության զսպման պայմաններում տեղի ունեցավ ուղեղային

¹⁴⁴ *Shai Ming-Chen, Stone Diane*, The Chinese tradition of policy research institutes // Think tank traditions: Policy research and the politics of ideas. Edited by *Stone D.* and *Denham A.*, Manchester and New York, Manchester University Press, 2004, p. 147.

կենտրոններին որոշակի հետընթաց: 3-րդ փուլի առանձնահատկությունն այն էր, որ «բաց դռներին» քաղաքականության մեկնարկով Չինաստանի իշխանությունները հետևողականորեն որոնում էին տնտեսական աճի ապահովման և համաշխարհային տնտեսությանը Չինաստանի ինտեգրման հնարավոր ելքեր, և ուղեղային կենտրոններին ուղորտում հիմնական շեշտը դրվում էր տնտեսական հետազոտությունների վրա: Միաժամանակ դրանք թեև շարունակում էին գործել կուսակցության կամ կառավարության համակարգման ուղորտում, սակայն առանձնանում էին առավել մեծ ազդեցությամբ և ինքնավարությամբ, քան նախորդ փուլերում գործող հաստատությունները: Այսինքն՝ կարող ենք ասել, որ տեղի էր ունենում ուղեղային կենտրոնների ուղորտի ինստիտուցիոնալացում: 4-րդ փուլին¹⁴⁵ բնորոշ է ուղեղային կենտրոններին ուղորտի բուռն զարգացումը, ինչը հիմնականում պայմանավորված է Չինաստանի տնտեսության մեջ ուսոցիալական ուղորտում ընթացող կառուցվածքային վերափոխումներով, արտահանող տնտեսության մոդելի առաջադրած խնդիրների լուծման, ինչպես նաև մեկ պետության շրջանակներում երկու համակարգերի կոնվերգենցիան ապահովելու անհրաժեշտությունով: Ենթադրյալ է, չնայած այս փուլում Չինաստանում նկատվում է պետական, քաղաքացիական և համալսարաններին կից գործող ուղեղային կենտրոններին բուռն զարգացում, այնուամենայնիվ պետք է նշել, որ ուղեղային կենտրոններին գերակշիռ մասի գործունեությունը շարունակել է վերահսկվել կառավարության կողմից, և

¹⁴⁵ Թեև ՉԺԴ-ի ուղեղային կենտրոններին ուղորտի զարգացման չորրորդ և հինգերորդ փուլերը ժամանակագրորեն չեն համընկնում այս ենթահարցի պատմական ժամանակաշրջանին, այնուամենայնիվ դրանք համատեքստին համահունչ լինելու նպատակով ներկայացվում են այս ենթահարցի շրջանակներում:

անկախություն մակարդակով դրանք զիջում են Արևմուտքում գործող հանրային քաղաքականության հետազոտական հաստատություններին: Չարգացման ներկայիս՝ 5-րդ փուլը կապված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո Չինաստանի տնտեսության շարունակվող պատկառելի աճի և աշխարհի երկրորդ տնտեսությանը վերածվելուց հետո դրա աճող աշխարհաքաղաքական հետաքրքրություններին և պասարկման անհրաժեշտության հետ, որով պայմանավորվել է նաև նոր տիպի ուղեղային կենտրոնների ձևավորումը: Եթե նախորդող երկու փուլերում չինական ուղեղային կենտրոնները հիմնականում ձևավորվել են սոցիալ-տնտեսական բնագավառի խնդիրների ուսումնասիրության նպատակով, ապա ներկայումս դրանց նպատակն է մեծացնել գլոբալ ազդեցությունը և իրականացնել տարբեր տարածաշրջանների երկրների քաղաքական համակարգերի հետազոտություններ: Վերջինիս վկայությունն է նաև 2017 թ. հունվարի 9-ին Պեկինում կազմակերպված «Չինական ուղեղային կենտրոնների գլոբալ ազդեցությունը - 2017» (Chinese Think Tanks Global Influence - 2017) գիտաժողովը¹⁴⁶, որը միտված էր հենց այս նպատակների իրականացման հարցերի քննարկմանը: Այս ձևաչափով գործող ուղեղային կենտրոնները ներգրավված են աշխարհի տարբեր երկրների և տարածաշրջանների հետ Չինաստանի հարաբերությունների հետագա ընթացքի վերաբերյալ երաշխավորությունների մշակման աշխատանքներում, ինչպես նաև տարբեր ազգայնական, ծավալապաշտական գաղափարների ազդեցության ուսումնասիրության բնագավառում, որտեղ կարողությունների կուտակման նպատակով չինական կենտրոնները համագործակցության

¹⁴⁶ “Are China's think tanks ready to go global?”, by *Li Shouen*, (January 11, 2017) // URL: <http://english.cctv.com/2017/01/11/ARTIqD5PaXj81IMxCKrb2PSs170111.shtml>

ձևաչափեր են ներդնում այդ խնդիրներով զբաղվող արտերկրի տարբեր գիտական հաստատությունների հետ¹⁴⁷: Չինաստանի 5-րդ սերնդի ուղեղային կենտրոններ կարելի է համարել Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի շրջանակներում ձևավորված Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների ինստիտուտը, Մեկ ուղի-մեկ ճանապարհի ինստիտուտը և այլն:

Անդրադառնալով այս ոլորտում այլ երկրների փորձին՝ հարկ է մեջ բերել Ս. Տոլրոնոկի դիտարկումը, ըստ որի՝ Եվրոպայի և Ճապոնիայի կառավարությունները, բացառությամբ տնտեսության վերաբերյալ հարցերի, առանձնապես հետաքրքրություն չէին ցուցաբերում փորձագիտական երաշխավորությունների նկատմամբ, ինչը մասամբ պատճառաբանվում է հետպատերազմյան բուռն տնտեսական զարգացմամբ¹⁴⁸: Ճապոնիայի վերաբերյալ անհրաժեշտ է հավելել, որ միայն 1960-ական թվականներից այդ երկրում սկսեցին ձևավորվել պետությունից անկախ ուղեղային կենտրոններ: Այսպես, 1965 թ. հիմնվեց Նոմոլրայի հետազոտական ինստիտուտը¹⁴⁹, 1970 թ.՝ Միցուլբիսի հետազոտական ինստիտուտը¹⁵⁰, իսկ 1974 թ. գործարար շրջանակների և ակադեմիական հանրության առաջատար մասնագետների նախաձեռնությամբ, որպես քաղաքականության հետազոտությունների զբաղվող անկախ ուղեղային կենտրոն, հիմնադրվել է Առաջատար

¹⁴⁷ Օրինակ՝ պանթյունը քիմիա և արևելագիտության բնագավառում փորձի ինստիտուցիոնալացման նպատակով Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջև ձևավորված համագործակցության շրջանակներում չինական տարբեր ուղեղային կենտրոնների փորձագետ-հետազոտողներ փորձի փոխանակման շրջանակներում հենց Հայաստանում ծանոթանում են նշված խնդիրների գիտական դրվածքին:

¹⁴⁸ *Туронок С.Г.*, ук. соч., с. 39-40.

¹⁴⁹ Nomura Research Institute. URL: <https://www.nri.com/global/company/history.html>

¹⁵⁰ Mitsubishi Research Institute. URL: <http://www.mri.co.jp/english/profile/activities/index.html>

հետազոտող թյուրևերի ազգային ինստիտուտը¹⁵¹:
Նշված երեք հաստատող թյուրևերը լիովին կարելի է
անվանել ժամանակակից հասկացող թյամբ
ուղեղային կենտրոն: Այստեղ հարկ է նշել, որ
առաջին երկու հաստատող թյուրևերը հիմնվել էին
որպես գործարար վերլուծող թյան և խորհրդատվող թյ-
յան գործակալ թյուրևեր:

1970-ական թվականների ընթացքում կորպորատիվ և
բանկային ոլորտում ևս սկսեցին ի հայտ գալ
բազմաթիվ ուղեղային կենտրոններ: 1980-ականների
վերջին և 1990-ականների սկզբին հետևեց ուղեղային
կենտրոնների ստեղծման նոր ալիքը, որի
նախածեռնողներն էին տեղական ինքնակառավարման
մարմինները, որոնց առավել ապես հետաքրքրում էին
կառավարչական խնդիրների լուծման հարցերը¹⁵²:
Այսպիսով, մինչև 1980-ական թվականներն ճապոնիայի
ուղեղային կենտրոններն առավել ապես
կենտրոնացած էին գործարար միջավայրի
ուսումնասիրող թյան, նորարարող թյուրևերի և
տնտեսական բնույթի ազգավարող թյուրևերի
մշակման ոլորտում, ի տարբերող թյուրևերի կյան
ուղեղային կենտրոնների ոլորտի, որտեղ, ի թիվս
վերոնշյալների, մեծ տեղ էր տրվում նաև
քաղաքական վերլուծող թյանը: Միայն 1990-ական
թվականներից սկսած՝ ճապոնիայի ուղեղային
կենտրոններին ուշադրող թյան կենտրոնում
հայտնվեցին միջազգային հարաբերող թյուրևերի,
արտաքին և ներքին քաղաքական թյան վերլուծող թյ-
յան հետկապված հարցերը:

Վերոնշյալ հանգամանքը մեր կարծիքով ուներ
իր մի քանի հիմնավոր պատճառները: Այսպես,
արտաքին քաղաքական թյան նկատմամբ
ուշադրող թյան աճը կարելի է պայմանավորել այդ

¹⁵¹ Nippon Institute for Research Advancement. URL: <http://www.nira.or.jp/english/index.html>

¹⁵² Медушевский Н.А., ук. соч., с. 75.

տարիներին Կորեական թերակղզում առկա
լարվածությունը, մասնավորապես Կորեայի
Ժողովրդագրությունը Զանրապետության
միջուկային ծրագրի շուրջ ստեղծված իրավիճակով
և հզորացող Չինաստանի տնտեսական ազդեցության
մեծացմամբ: Այնուամենայնիվ, հետագայում ևս
ճապոնական ուղեղային կենտրոններում
տնտեսական ոլորտի ուսումնասիրությունները
գերակշռում էին քաղաքականի նկատմամբ:
Ընդհանուր առմամբ, ճապոնիայում այս ոլորտն
առավելապես ուղղված է կորպորացիաների
պատվերով տնտեսական բնույթի ուսումնասիրու-
թյունների իրականացմանը և խորհրդատվական
ծառայությունների մատուցմանը: Ճապոնական
ուղեղային կենտրոնների ռազմավարական
առաջնահերթություններում քաղաքականության
ոլորտի երկրորդային նշանակությունը կարելի է
բացատրել արտաքին քաղաքականության
բնագավառում պետության որդեգրած
սկզբունքներով և միջազգային
հարաբերությունների ոլորտում ունեցած
սահմանափակ հավակնություններով: Հայտնի է, որ
երկրորդ համաշխարհային պատերազմից հետո
ճապոնիայում գործում են ռազմական ուժերն
արտերկրում կիրառելու սահմանադրական սահմանա-
փակումը և արտաքին քաղաքականության մեջ
ռազմական ուժը չկիրառելու սկզբունքը: Այդ պատ-
ճառով ճապոնական ուղեղային կենտրոնների
կողմից քաղաքականության ոլորտի ուսումնասի-
րությունները հիմնականում սահմանափակվում են
տարածաշրջանային և ներպետական գործընթացների
վերլուծությամբ:

Անդրադառնալով եվրոպական երկրներում
ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման
առանձնահատկություններին՝ անհրաժեշտ է նշել,

որ այս տեղ առավել հետաքրքիր և զարգացած համակարգ էր ձևավորվել Մեծ Բրիտանիայում: Եթե Գերմանիայում ուղեղային կենտրոններն առավել ապես ստեղծվում և զարգանում էին կուսակցական կազմակերպություններին կից, իսկ Ֆրանսիայում փորձագետներն անհատական մակարդակով ներառված էին պետական կառավարման համակարգում¹⁵³, ապա Մեծ Բրիտանիայի ուղեղային կենտրոններն աչքի էին ընկնում գործառույթների, մասնագիտացումների և տիպաբանության բազմազանությամբ, ինչով բրիտանական ուղեղային կենտրոնների ոլորտը շատ առումներով նմանվում էր ամերիկյանին: Բրիտանական ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացումը հատկապես մեծ թափ հավաքեց 1970-ական թվականների վերջերից և շարունակվեց 1980-ական թվականներին, երբ Մեծ Բրիտանիայի վարչապետ դարձավ Մարգարե տԹե տչերը: Այդ տարիներին ստեղծված կենտրոններից պետք է առանձնացնել Ադամ Սմիթի ինստիտուտը, որն այսօր էլ համարվում է ներքին տնտեսական քաղաքականության ուսումնասիրության ոլորտում առաջատար ուղեղային կենտրոններից մեկը¹⁵⁴: Այս հաստատության փորձագետներին կողմից մշակված բազմաթիվ նախագծեր, ինչպես, օրինակ՝ փոստային ծառայության մասնավորեցումը, ներառվեց Մ. Թե տչերի կառավարության նախաձեռնած բարեփոխումների փաթեթում: 1974 թ. ստեղծված քաղաքականության ուսումնասիրության կենտրոնը, որի համահիմնադիրը Մ. Թե տչերն է (մյուս համահիմնադիրը Քեյթ Ջոզեֆն է)¹⁵⁵, երկար տարիներ երկրի Պահպանողական կուսակցության քաղաքական

¹⁵³ Տե՛ս **Աթոյան Վ.**, Պետություն-փորձագիտական հանրություն և փոխգործակցությունը ազգային անվտանգության համատեքստում // «21-րդ դար», N 4 (68), 2016, էջ 25-39:

¹⁵⁴ Տե՛ս Adam Smith Institute // URL: <https://www.adamsmith.org/about-the-asi/>

¹⁵⁵ Տե՛ս Center for Policy Studies // URL: <http://www.cps.org.uk/about/history/>

և ծրագրային հարթակներ: Այս հաստատությունները և սմեծապես ներգրավված էր Թեոչերի կառավարության սոցիալ-տնտեսական ոլորտին առնչվող փաստաթղթերի մշակման գործում: Քաղաքականության ուսումնասիրության կենտրոնում է մշակվել «Stepping Stones» հայտնի գեկոլյոցը, որում մասնավորապես ամփոփվում էր արհմիությունների հետ փոխգործակցության ռազմավարությունը¹⁵⁶: Յարկե ավելացնել, որ, բացի քաղաքականության ուսումնասիրության կենտրոնից, բրիտանական Պահպանողական կուսակցության համար համապատասխան փաստաթղթերի մշակման գործում նշանակալիորեն ներգրավված էր նաև 1955 թ. ստեղծված Տնտեսական հարաբերությունների ինստիտուտը¹⁵⁷:

Ինչ վերաբերում է այլ քաղաքական հոսանքներին հարող բրիտանական ուղեղային կենտրոններին, ապա պետք է նշել, որ ձախքաղաքական հայացքներով աչքի էր ընկնում 1988 թ. հիմնված Յանրային քաղաքականության հետազոտությունների ինստիտուտը, որի ուսումնասիրության շրջանակն ընդգրկում էր եվրախնտեգրման, կրթության, շրջակա միջավայրի պաշտպանության, գնագոյացման և բազմաթիվ այլ ոլորտներ¹⁵⁸: Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն իր հերթին օգտվում էր Սոցիալական շուկայի հիմնադրամի (Social Market Foundation) թողարկած ինտելեկտուալ արտադրանքից: 1980-1990-ական թվականների զանգվածային սոցիալական վերափոխումների շրջանում ուղեղային կենտրոնները միայն ավելացնում էին իրենց ազդեցությունը: Յետագայում Թ. Բլեթի ղեկավարությամբ իշխանության եկած

¹⁵⁶ Տե՛ս Stepping Stones Report // URL: <http://www.cps.org.uk/files/reports/original/111026104730-5B6518B5823043FE9D7C54846CC7FE31.pdf>
¹⁵⁷ Տե՛ս Institute of Economic Affairs // URL: <https://iea.org.uk/about-us>
¹⁵⁸ Տե՛ս Institute of Public Policy Research // URL: <http://www.ippr.org/about/history>

լ էյբորիստները կրկնեցին նոր գաղափարախոսական ծրագրահենքի մշակման նախորդների փորձը: Նման վերաիմաստավորման արդյունքը դարձավ Նոր Լեյբորիստների հայեցակարգը, որի մշակման գործում ուղեղային կենտրոնները նույնպես մասնակցում էին ¹⁵⁹:

XX դարի երկրորդ կեսին ուղեղային կենտրոնների ուղորտի զարգացման մյուս կարևոր միտումը, որը կարելի է առանձնացնել, 1980-1990-ական թվականներին ի հայտ եկած նոր տեսակի ուղեղային կենտրոններն էին, որոնք հիմնված էին քաղաքական ժառանգության վրա (Legacy-based Think Tanks): Նման հաստատությունները, որպես կանոն, ստեղծվում են պետությունների պաշտոնաթող առաջին դեմքերի կամ նախկին քարձրաստիճան պաշտոնյաների կողմից, որոնց նպատակն էր շարունակել ազդեցություն ունենալ երկրի արտաքին և ներքին քաղաքականության վրա: Ռ. Թրոեստրը նման կազմակերպությունների շարքում է դասում Էմորիի համալսարանին կից գործող Ջ. Քարտերի կենտրոնը (Jimmy Carter Center at Emory University) և Յանոն խաղաղության և ազատության Ռ. Նիքսոնի կենտրոնը ¹⁶⁰: Յետխորհրդային տարածքում ամենահայտնի օրինակներից կարելի է նշել 1991 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ-ի վերջին ղեկավարի կողմից ստեղծված Սոցիալ-տնտեսական և քաղաքագիտական հետազոտությունների միջազգային հիմնադրամը (Գորբաչևի հիմնադրամ): Յատկանշական է, որ այս հաստատությունը համարվում է հետխորհրդային տարածքի՝ ժամանակակից ընկալմամբ առաջին ուղեղային կենտրոններից մեկը ¹⁶¹:

¹⁵⁹ *Бордовских А.*, Региональный обзор: Европа // «Атлас аналитических центров: русистка за рубежом». Rethinking Russia, М., 2016, с. 57.

¹⁶⁰ *Troester R.*, Jimmy Carter as Peacemaker: A Post-Presidential Biography // R. Troester. New York: Praeger Publishers, 1996, p. 33.

¹⁶¹ Տե՛ս *Международный Фонд социально-экономических и политологических исследований (Горбачев-Фонд)*. URL: http://www.gorby.ru/gorbi_fund/about/

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակից (աղյուսակ 2-ում ներկայացված են ուղեղային կենտրոնների ստեղծման քանակական ցուցանիշները՝ ըստտարիների)ընդհանուրառմամբ XX դարում ձևավորվել են շուրջ 3.862 ուղեղային կենտրոններ, որոնց ավելի քան 90%-ը ձևավորվել են XX դարի երկրորդ կեսից հետո: Ակնհայտ է, որ XX դարի երկրորդ կեսն ամբողջ աշխարհում ուղեկցվել է ուղեղային կենտրոնների ոլորտի աննախադեպ զարգացմամբ: Ի հայտ էին գալիս որակապես, ինստիտուցիոնալ և գործառնական առումով նոր տեսակի ուղեղային կենտրոններ:

Միաժամանակ արևմտյան քաղաքական մշակույթի երկրներում նկատելի էր դառնում ուղեղային կենտրոնների ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցման միտումը, ինչով էականորեն նվազում էր վերջիններիս կախվածությունը մեկ աղբյուրից ստացվող պատվերներից:

**Աղյուսակ 2. Ուղեղային կենտրոնների հիմնման
շարժընթացը ¹⁶²**

| Ժամանակաշրջան | Ուղեղային կենտրոն |
|---------------------------------|--------------------------|
| 1900-1910 | 18 |
| 1911-1920 | 25 |
| 1921-1930 | 42 |
| 1931-1940 | 42 |
| 1941-1950 | 120 |
| 1951-1960 | 213 |
| 1961-1970 | 367 |
| 1971-1980 | 612 |
| 1981-1990 | 1001 |
| 1991-2000 | 1422 |
| Ընդամենը (1900-2000 թթ.) | 3862 |

¹⁶² *James G. McGann*, 2012 Global Go To Think Tank Index Report // University of Pennsylvania, The Lauder Institute, Think Tanks and Civil Societies Program, 2013, p. 17. URL: http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1006&context=think_tanks

Շարունակում էր զարգանալ բարեգործության /նվիրատվության ավանդույթը, ի հայտ էին գալիս նոր տեսակի ուղեղային կենտրոններ, մասնավորապես նկատելի էր դառնում աստիճանական, սահուն անցումը նախորդ դարասկզբի ապագադափարայնացված հաստատության ներքին դեպի գաղափարայնացված ուղեղային կենտրոններ: Կարևոր երևույթ էր նաև քաղաքական փորձագիտության շուկայում վերագային և ցանցային ուղեղային կենտրոնների հայտնվելը, որոնք իրենց հետագա զարգացումն ունեցան նաև XXI դարում: Եթե դարասկզբին ուղեղային կենտրոններն առավելապես կենտրոնացած էին միջազգային հարաբերության ներքին, ավելի ուշ՝ ազգային անվտանգության ոլորտի ուսումնասիրության բնագավառներում, ապա հետագայում վերջիններիս միջգիտակարգային ուսումնասիրության շրջանակն էականորեն ընդլայնվեց՝ ընդգրկելով բնապահպանական, հասարակական, քաղաքական տարբեր շերտերի շահերի պաշտպանության և հանրային քաղաքականությանն առնչվող բազմաթիվ այլ ոլորտների ուսումնասիրության ներքին: XX դարի երկրորդ կեսի ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման շարժընթացի ուսումնասիրության նից ակնհայտ է դառնում, որ ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացումը յուրաքանչյուր որոշակի երկրում կախված է եղել հանրային քաղաքականության և քաղաքական որոշումների ընդունման գործընթացում ձևավորված ավանդույթներից, քաղաքական փորձագիտության և ուղեղային կենտրոնների ոլորտի նկատմամբ պետության որդեգրած քաղաքականության հիջպես նաև քաղաքական վերնախավի կողմից սահմանված ռազմավարական առաջնահերթության ներքին: Սակայն ակնհայտ է նաև, որ անկախ քաղաքական

մշակույթից և պետության -ն ղեղային կենտրոն հարաբերության ներքին ձևաչափերից դրանց ձևավորման հիմնական նպատակը որակյալ ու փաստարկված այլընտրանքային փորձագիտական տեղեկատվության ամբողջական ապահովվածության մակարդակի բարձրացումը և հանրային քաղաքականության բնագավառում կայացվող որոշումների լեգիտիմացումն են: Մյուս կողմից, հատկապես տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների վերելքի ժամանակաշրջանների պատճառահետևանքային կապերի ուսումնասիրությանը փաստում է, որ դրանց վերելքը յուրաքանչյուր երկրում կապված է քաղաքական դեկավարների կողմից ուղեղային կենտրոնների դերի ընկալման ու արժևորման, ինչպես նաև հանրային քաղաքականության բնագավառում վերջինների ներգրավման ընդլայնման նախաձեռնության ներքին հետ:

2.3.ՈւղեղաՅին Կենտրոնների ՈւՈրՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ XXIԱՐՈՒՄ

XXI դարն իր առանձնահատուկ խնդիրներն է առաջադրում պետության ներքին և հանրային քաղաքականության սուբյեկտներին, որոնցից են նաև ուղեղային կենտրոնները: Հատկանշական է, որ նոր ժամանակաշրջանի սրընթաց վերափոխումներն էական ազդեցություն են ունենում ինչպես ուղեղային կենտրոնների հետազոտական մասնագիտացումների, այնպես էլ տարբեր երկրներում դրանց դերակատարման ընկալման վրա: Ինտեգրացման և գլոբալացման գործընթացների արագացումը և դրա արդյունքում մշակութային միջավայրերի փոխսերտաճման առաջադրած մարտահրավերները, գլոբալ բնապահպանական հիմնախնդիրները,

աշխարհի անհամաչափ զարգացման առաջադրած խնդիրները, համացանցում սկիզբ առած սոցիալականացման գործընթացները, թվային-վիրտուալ տնտեսության ծավալների մեծացումը, միգրացիայի ահագնացող տեմպերը, նոր տիպի քաղաքական ճգնաժամերը, արմատականության աճող դրսևորումներն ահաբեկչությանը, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության բարձրացման հրամայականը ժամանակակից մարտահրավերներ են, որոնց լուծմանն ակտիվորեն ներգրավված են նաև ուղեղային կենտրոնները:

XXI դարում ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման շարժընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս նախորդ դարի երկրորդ կեսից այս ոլորտում սկիզբ առած բուռն զարգացումն ու դրանց քանակական աճի միտումը շարունակվում են նաև վերջին տասնամյակներին: Այնուամենայնիվ, աշխարհի տարբեր երկրներում և տարածաշրջաններում այս գործընթացը տարբեր արագություններով է ընթանում: Յարկ Էնշել, որ եթե վերջին տարիներին Արևմուտքում ուղեղային կենտրոնների քանակական աճը որոշակիորեն նվազել է, ապա, օրինակ, Արևելյան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում և մի շարք այլ տարածաշրջաններում, ընդհակառակը, 1990-ական թվականներից սկիզբ առած ուղեղային կենտրոնների քանակական բուռն աճ է նկատվում: Արևմուտքում վերջին տասնամյակներին արձանագրվող ուղեղային կենտրոնների քանակական աճի որոշակի դանդաղացման միտումները կարելի է բացատրել քաղաքական փորձագիտության շուկայի ինստիտուցիոնալ կայացածությունով ու մրցակցության բարձր մակարդակով, ինչը բավականաչափ դժվարացնում է նոր խաղացողների մուտքն այս ոլորտ և դիրքավորումը հետազոտական տարբեր մաս-

նագիտացումներում: Այս երկույթը պայմանավորված է հարյուրավոր կայացած, ֆինանսական և կադրային հզոր ներուժ ու տասնամյակների պատմություն ունեցող, հեղինակավոր և բարձր մակարդակի ինտելեկտուալ արտադրանք թողարկող ուղեղային կենտրոնների առկայությամբ: Մյուս կողմից, Արևելյան Եվրոպայում և հետխորհրդային տարածքի երկրներում ուղեղային կենտրոնների շարունակական ավելացումը պայմանավորված է խորհրդային Միության փլուզումով առաջ եկած քաղաքական համակարգի և հանրային քաղաքականության արմատական վերափոխումներով, նոր պետությունների առաջացմամբ, ինչը պայմաններ և պահանջ ստեղծեց՝ անկախ փորձագիտական-վերլուծական կառույցներ հիմնելու համար:

Չարկել նշել, որ ընդհանուր առմամբ 2011-2016 թթ. ընթացքում ամբողջ աշխարհում ուղեղային կենտրոնների ընդհանուր թվաքանակն ավելացել է ավելի քան 300-ով (տե՛ս աղյուսակ 3):

Ակնհայտ է, որ 2001-2016 թթ. ժամանակահատվածում, ըստ Ձ. Մաք-Գանի վիճակագրության, ուղեղային կենտրոնների թիվն ավելացել է շուրջ 2984-ով՝ 2000 թ. 3862-ից 2016 թ. հասնելով 6846-ի: Փաստացի, եթե XX դարի վերջին երկու տասնամյակներում աշխարհում ուղեղային կենտրոնների աճը տատանվել է շուրջ 400-ի միջակայքում (1990-ին 1980-ի համեմատական աճը կազմել է 389, 2000-ին 1990-ի համեմատ՝ 421), և միտումը պահպանվել է նաև 2011-2016 թթ. ժամանակահատվածում (քանակական աճը՝ շուրջ 300), ապա 2000-2010 թվականներին ուղեղային կենտրոնների բնագավառում արձանագրվել է նախորդող 2 տասնամյակի և հաջորդող 7 տարիների աճը շուրջ 6 անգամ գերազանցող աճ, քանի որ 2000-2010 թվականներին, ըստ նույն աղբյուրի վիճակագրության, ստացվում է, որ ուղեղային կենտրոնների թիվն ավելացել է 2683-ով:

Աղյուսակ 3. Ուղեղային կենտրոնների թվաքանակը ¹⁶³

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 |
|-------------------------|------|------|------|------|------|------|
| ԱՄՆ | 1815 | 1823 | 1828 | 1830 | 1835 | 1835 |
| Կանադա | 97 | 96 | 96 | 99 | 99 | 99 |
| Մեծ Բրիտանիա | 286 | 288 | 287 | 287 | 288 | 288 |
| Գերմանիա | 194 | 194 | 194 | 194 | 195 | 195 |
| Ֆրանսիա | 176 | 177 | 177 | 177 | 180 | 180 |
| Ամբողջ աշխարհում | 6545 | 6603 | 6826 | 6618 | 6846 | 6846 |

Սակայն նման աննախադեպ աճը, կարծում ենք, պայմանավորված է նրանով, որ 2000-2010 թվականներին տեղի է ունեցել ուղեղային կենտրոնի հասկացողության ընկալման փոփոխություն, որի արդյունքում արդեն հաջորդող ժամանակահատվածում իբրև ուղեղային կենտրոն սկսել են դիտարկել և հաշվառել կազմակերպությունների, որոնք մինչև 2000-ական թվականները միևնույն հետազոտողի ընկալմամբ չեն դիտարկվել որպես ուղեղային կենտրոններ: Հատկապես, որ դրանախադեպը կա, քանի որ, ինչպես երևաց ուղեղային կենտրոնների տիպաքանության խնդիրների ուսումնասիրությունից, նույն հեղինակն իբրև ուղեղային կենտրոն 2016-ից դիտարկել և սկսել է հաշվառել նաև շահույթ հետապնդող կազմակերպություններ:

Ակնհայտորեն ԱՄՆ-ի Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի կողմից ամենամյա պարբերականությամբ հրապարակվող ուղեղային կենտրոնների գլոբալ վարկանիշավոր-

¹⁶³ Աղյուսակ 3-ը և ուղեղային կենտրոնների թվաքանակի վերաբերյալ աշխատանքում ներկայացված տվյալները մշակվել են ԱՄՆ-ի Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի կողմից հրապարակվող 2012-2016 թթ. ուղեղային կենտրոնների գլոբալ վարկանիշավորման ամենամյա գեկոլյոցների ուսումնասիրության հիման վրա: Տե՛ս URL: http://repository.upenn.edu/think_tanks/

ման գեկույցը գերծ չէ մի շարք, որոշ դեպքերում էական, թերություններին ու բացթողումներին¹⁶⁴: Սակայն մենք տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների քանակական ցուցանիշներին առնչվող փաստական վերլուծությունը ստիպած ենք կատարել վերջինիս հրապարակած տվյալների հիման վրա, քանի որ վերոնշյալ գեկույցը միակ բացառիկ աղբյուրն է ուղեղային կենտրոնների գլոբալ վիճակագրության բնագավառում: Այսպես, ԱՄՆ-ի Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագիրը միակն է աշխարհում, որը, թեկուզ որոշակի թերություններով, պարբերաբար հաշվառում և վարկանիշավորում է բոլոր երկրներում գործող ուղեղային կենտրոնները, ինչը մեզ թույլ է տալիս պատկերացում կազմել և վերլուծություններ կատարել աշխարհի տարբեր երկրներում փորձագիտական-վերլուծական կազմակերպությունների քանակական աճի, շարժընթացի և լոորտի գարգացման միտումների վերաբերյալ:

Աղյուսակ 3-ի տվյալներից ակնհայտ է, որ առայսօր ուղեղային կենտրոնների լոորտում առաջնայնությունը պատկանում է ԱՄՆ-ին: Ներկայումս այդ երկիրն է տիրապետում ուղեղային կենտրոնների ամենագարգացած համակարգին, որը շուրջ 1835 փորձագիտական-վերլուծական հաստատություններով համարվում է աշխարհում առաջատարը: Ուղեղային կենտրոնների քանակով երկրորդ երկիրը Չինաստանն¹⁶⁵ է, երրորդը՝ Միացյալ Թագավորությունը, որտեղ գործում են

¹⁶⁴ Հատկապես մեթոդաբանական մեկնաբանումների առումով:
¹⁶⁵ Չինաստանի ուղեղային կենտրոնների մասին առավել մանրամասն տե՛ս **Աթոյան Վ., Մովսիսյան Շ.**, Չինաստանի ուղեղային կենտրոնները // Եր., «Տնտեսագետ» հրատ. (Ամբերդ՝ մատենաշար N29), 2016, 80 էջ:

համապատասխանաբար՝ 435 և 288 փորձագիտական-վերլուծական հաստատություններ: Առաջատար հնգյակը եզրափակում են Յնդկաստանն ու Գերմանիան, համապատասխանաբար՝ 280 և 195 ուղեղային կենտրոններով (աղյուսակ 4-ում ներկայացված ուղեղային կենտրոնների թվաքանակով առաջատար 25 երկրները):

Աղյուսակ 4. Ուղեղային կենտրոնների քանակով առաջատար 25 երկրները¹⁶⁶

| | Երկիր | Ուղեղային կենտրոնների քանակը |
|-----|-------------------------------------|------------------------------|
| 1. | ԱՄՆ | 1835 |
| 2. | Չինաստան | 435 |
| 3. | Միացյալ Թագավորություն | 288 |
| 4. | Յնդկաստան | 280 |
| 5. | Գերմանիա | 195 |
| 6. | Ֆրանսիա | 180 |
| 7. | Արգենտինա | 138 |
| 8. | Ռուսաստան | 122 |
| 9. | Ճապոնիա | 109 |
| 10. | Կանադա | 99 |
| 11. | Իտալիա | 97 |
| 12. | Բրազիլիա | 89 |
| 13. | Հարավաֆրիկյան Հանրապետություն (ՀԱՀ) | 86 |
| 14. | Շվեդիա | 77 |
| 15. | Շվեյցարիա | 73 |
| 16. | Ավստրալիա | 63 |
| 17. | Մեքսիկա | 61 |
| 18. | Իրան | 59 |
| 19. | Բոլիվիա | 59 |
| 20. | Իսրայել | 58 |
| 21. | Նիդեռլանդներ | 58 |
| 22. | Իսպանիա | 55 |
| 23. | Ռումինիա | 54 |
| 24. | Քենիա | 53 |
| 25. | Բելգիա | 53 |

Վերոնշյալի համատեքստում հարկ ենք համարում մի փոքր մանրամասնել ուղեղային

¹⁶⁶ James G. McGann, 2016 Global Go To Think Tank Index Report // University of Pennsylvania, The Lauder Institute, Think Tanks and Civil Societies Program, 2017, p. 27. // URL: http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1011&context=think_tanks

կենտրոններին թվաքանակով երկրորդ
հորիզոնականում գտնվող Չինաստանում
արձանագրվող գործընթացները, որոնցով
բացատրվում են վերջին տասնամյակներին այդ
երկրում փորձագիտական-վերլուծական
կառույցների ունեցող վերընթաց զարգացման
պատճառները:

Ինչպես նշում է Ջ. Մաք-Գանը, 1989 թ. Տյանյանմեն
հրապարակում տեղի ունեցած ողբերգական
իրադարձությունները կենտրոնական իշ-
խանությունների մեջ ուղեղային կենտրոններին
նկատմամբ խորանվաստահուն առաջացրին: Այդ
իրադարձություններից անմիջապես հետո որոշ
ուղեղային կենտրոններ դադարեցրին իրենց
գործունեությունը: Ավանդական խորհրդային
տիպի¹⁶⁷ ուղեղային կենտրոնները դրանում իրենց
գործունեության վերսկսման համար նոր
հնարավորություններ տեսան: Այնուամենայնիվ,
Չինաստանի տնտեսության փոփոխվող լանդշաֆտը
փոխեց այն համատեքստը, որում գործում էին
ուղեղային կենտրոնները: Վերջինս արտահայտվեց
2007 թ. Ազգային կոոպերատիվ օրենքի (National Cooperative Law)
ընդունմամբ, որը որոշակի ազատություն էր
ապահովում մարզային քաղաքացիական
հասարակության համար: Խաղաղ և էվոլյուցիոն
ճանապարհով ստեղծված նոր կոոպերատիվներն
ապահովում էին հարգանք մասնավոր
սեփականության նկատմամբ և կրում էին մոտիվաց-
նող և կամավոր բնույթ: Այս գործընթացը խթանեց
ժողովրդավարական սկզբունքների ընդլայնումը:
Այս իմաստով նոր կոոպերատիվ շարժումն օգնեց

¹⁶⁷ Չինաստանում նման տեսակի ուղեղային կենտրոնների
առանձնահատկությունն այն է, որ վերջիններս երբեք չեն
արտահայտում կարծիք, որը կարող է հակասել քաղաքական
ղեկավարության տեսակետին և, որպես կանոն, հանդես չեն
գալիս նորարարական խորհուրդներով:

Չինաստանի քաղաքացիական հասարակության վերափոխմանը, ինչը քաղաքացիական հասարակության հաստատությունները դարձնում է առավել քննադատական գործընկեր պետության հետերկխոսության մեջ: Երբ Չինաստանի շուկան դարձավ առավել ազատ, ուղեղային կենտրոնների համար նույնպես հնարավորություններ չեն եղել ու ֆինանսավորման մասնավոր աղբյուրներ: Նրանք սկսեցին օգտագործել ՉԼՄ-ները և օտարերկրյա աղբյուրները: Չինացի փորձագետները, զգալով դեպի ՉԼՄ-ներ իրենց մուտքից ստացվող ֆինանսական եկամուտները, սկսեցին առավել ապեսներկայացնել սեփական կարծիքը ոչ թե իրենց հաստատությունների, այլ լրատվամիջոցների օգնությամբ: Ի վերջո, նոր միջոցները և կառավարությունից անկախությունն ուղեղային կենտրոններին թույլ տվեցին դառնալ ու ֆինանսապես առավել ինքնավար և մտքի ազատության իմաստով առավել անկաշկանդ: Ներկայումս Չինաստանի ուղեղային կենտրոնները լրացնում են այն բացը, որ ստեղծվել էր «Մշակութային հեղափոխության» հետևանքով և անցյալի մեկուսացման քաղաքականության պատճառով¹⁶⁸: Այս շրջանը Մաք-Գանն անվանել է Չինաստանի *երրորդ սերնդի* ուղեղային կենտրոնների շրջան¹⁶⁹, որն առավել ապես համընկնում է նախորդ ենթահարցում մեր ներկայացրած չինական ուղեղային կենտրոնների զարգացման 4-րդ փուլի հետ:

Չինական ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման համար լուրջ խթան էր նաև ՉԺՅ-ի Պետխորհրդի հավանությանամբ և երկրի նախկին

¹⁶⁸ *McGann J.*, Chinese Think Tanks, Policy Advice and Global Governance. RCCPB Working Paper #21, Indiana University, March 2012, p. 11-12 // URL: <https://www.indiana.edu/~rccpb/wordpress/wp-content/uploads/2015/11/McGann-RCCPB-21-Think-Tanks-March-2012.pdf>

¹⁶⁹ Չինաստանի 1-ին և 2-րդ սերնդի ուղեղային կենտրոններին առավել մանրամասն անդրադարձել ենք նախորդ հարցի շրջանակներում:

վարչապետ Վեն Ջյաբաոյի (Wen Jiabao) ցուցումով 2009 թ. մարտին Միջազգային տնտեսական փոխանակումների չինական կենտրոնի հիմնումը: Այս կենտրոնի առանձնահատկությունն այն է, որ առաջին անգամ ուղեղային կենտրոնների ոլորտում սկսեց կիրառվել «պտտվող դռների համակարգը», որն առավել ապես բնորոշ է արևմտյան, հատկապես ԱՄՆ-ի քաղաքական մշակույթին: Վերջինիս էությունն այն է, որ ուղեղային կենտրոնների ղեկավար պաշտոններում նշանակվում են քաղաքականության և գործարար ոլորտի բարձրաստիճան անձինք, իսկ ուղեղային կենտրոնների ներկայացուցիչներին աշխատանքի են ընդունում պետական կառավարման և տնտեսական ոլորտում: Այսինքն՝ կիրառվում է այսպես կոչված պարբերական փոխատեղման սկզբունքը, որին առավել մանրամասն կանդիդատներն այս ատեն ախոսություն հաջորդ գլխում:

Նոր կենտրոնի խորհրդի նախագահ ընտրվեց ՉժՅ-ի պետխորհրդի նախկին փոխվարչապետ Չեն Պեյանը (Zeng Peiyan), իսկ տեղակալ՝ ՉԿԿ-ի կենտրոնական կոմիտեին առընթեր քաղաքականության ուսումնասիրության կենտրոնի նախկին փոխտնօրեն Չժեն Սինլին (Zheng Xinli): Վերջինիս խոսքով, ի տարբերություն Չասարական գիտությունների ակադեմիայի և Միջազգային հարաբերությունների ուսումնասիրության ինստիտուտի, որոնք հիմնականում զբաղվում են ներքին տնտեսության հետազոտությամբ, Միջազգային տնտեսական փոխանակումների չինական կենտրոնի գործունեությունն ուղղված է միջազգային տնտեսության հիմնախնդիրների ուսումնասիրությանը՝ հաշվի առնելով ներքին տնտեսության շարժընթացը: Պետական բազմաթիվ պաշտոնյաներ կարող են ստանալ հետազոտությունների արդյունքները և հասցնել դրանք երկրի

բարձրագույն ղեկավարությունը: Նորաստեղծ կենտրոնի գործունեության ֆինանսավորման աղբյուրը պետական, մասնավոր, միջազգային կազմակերպությունների և այլ հիմնադրամների վճարումներն են, ինչն ապահովում է միջոցների աղբյուրների բազմազանություն և հետագոտությունների արդյունքների անկախություն: Պետական միջոցներից կենտրոնի ստեղծման համար տրամադրվել է ընդհանուր առմամբ 5 մլն յուան¹⁷⁰, որից հետո կենտրոնի գործունեության համար պետական ֆինանսավորում չի նախատեսվել: Մնացած միջոցների հավաքագրման համար ստեղծվել է Կառավարման խորհրդի հիմնադրամ, որն ընդգրկվել է ավելի քան 20 ձեռնարկություն՝ հետագայում նախատեսվելով ներգրավել նաև մասնավոր այլ կազմակերպություններ և անդրազգային կորպորացիաներ: Մեծաթիվ հոգաբարձուների ներգրավման նպատակը ֆինանսավորման բազմազանության ապահովումն է: Նման մոտեցումը որդեգրվել է կենտրոնի գործունեությունն ու հետագոտությունները սահմանափակ թվով հովանավորների հնարավոր ազդեցությունից պաշտպանելու ու հետագոտությունների անկախությունն ապահովելու նկատառումներով: Ակնհայտ է, որ վերջինս սերնդի չինական ուղեղային կենտրոնների գործունեությունը և տիպաբանությունը հետզհետե նմանվում են արևմտյան կենտրոններին, ինչը հենց ՉԺՀ-ի գլոբալ հավակնությունների գիտական-փորձագիտական ապահովումն իրականացնող կենտրոններն իրավակազմակերպական առումով արտերկրի գործընկերներին ընկալելի դարձնելու հետ է կապված:

¹⁷⁰ Китай создает «супермозговой центр» для развития экономической дипломатии, (13.07.2009) // URL: http://russian.china.org.cn/business/txt/2009-07/13/content_18127250.htm

ՉԺԵՆ ՍԻՆԼԻԻ դիտարկմամբ ուղեղային կենտրոնները համարվում են փափուկ ուժի առանցքային գործոն, և գլոբալ միտումների տեսակետից նման հաստատությունների նշանակությունն աստիճանաբար առավել կարևոր է դառնում: Դա է պատճառը, որ ուղեղային կենտրոնների ներթափանցումն այս կամ այն երկրի քաղաքական, տնտեսական, դիվանագիտական և այլ որոշումների կայացման բնագավառում առավել խորանում է: Չնայած վերջին 30 տարում ՉՃՀ-ի տնտեսական և սոցիալական զարգացման մեջ նշանակալի նվաճումներ են եղել, սակայն ուղեղային կենտրոնների զարգացմանը բավարարող ադրոնություն չի դարձվել: Սակայն միջազգային ֆինանսական ճգնաժամը հուշել է նմանատիպ կենտրոնների ստեղծման անհրաժեշտությունը: Միջազգային հարաբերությունների ուսումնասիրության ինստիտուտը նոր սերնդի չինական կենտրոններից է, որի նպատակն է դառնալ ոչ կառավարական ինտելեկտուալ կենտրոն, որում հեռանկարային, ռազմավարական, բազմակողմանի հետազոտությունների իրականացման, հանրային քաղաքականությանը ինտելեկտուալ աջակցման և ձեռնարկությունների անդրազգային տնտեսական գործունեության ոլորտում խորհրդատվական ծառայությունների մատուցման համար հավաքվում են բարձրակարգ և հեղինակավոր ինտելեկտուալ ռեսուրսներ ¹⁷¹:

Յարկ է նշել, որ Չինաստանի ուղեղային կենտրոնների ֆինանսավորման գործընթացում վերջին տարիներին նկատելի է նաև մեկ այլ առանձնահատկություն. ոչ առևտրային քաղաքական հետազոտությունների ֆինանսավորման նպատակով

¹⁷¹ *Чжэн Синьли*, О Китайском центре международного экономического обмена: Верховном мозговом центре Китая, (22.06.2009). URL: <http://russian.people.com.cn/31521/6683598.html>

բազմաթիվ ուղեղային կենտրոններ նույն անվամբ գրանցում են ընկերություններ: Մեկը՝ ոչ առևտրային կազմակերպություն, համապատասխան նախարարության ենթակայությունամբ, մյուսը՝ առևտրային բնույթի, որպես կանոն, բաժնետիրական ընկերություն, որը համարվում է ուղեղային կենտրոնի դուստր ձեռնարկություն: Չինացի գիտնականները նման կազմակերպություններն անվանում են «մեկ կազմակերպություն, երկու էություն»: Բաժնետիրական ընկերության մեջ կարող են ներգրավվել տարբեր կազմակերպություններ՝ ՉԼՄ-ներ, խորհրդատվական, ներդրումային ընկերություններ և այլն¹⁷²:


Վերջին տարիներին հաճախակի են դարձել նաև ՉԺՀ-ի և արևմտյան ուղեղային կենտրոնների կողմից համատեղ կազմակերպվող համաժողովները: Դրանցից կարելի է առանձնացնել Չինաստանը և գլոբալացումը կենտրոնի (CCG) կողմից 2014 թ. ապրիլին հրավիրված «Ուղեղային կենտրոնները և Չինաստանի զարգացումը. վերափոխելով Չինաստանի ուղեղային կենտրոնները» գիտաժողովը, որին մասնակցել են ՉԺՀ-ի և աշխարհի ուղեղային կենտրոնների ճանաչված փորձագետներ: Գիտաժողովի հիմնական նպատակն ուղեղային կենտրոնների կառավարման ոլորտում փորձի փոխանակումն ու բազմաթիվ մասնակիցների միջև համագործակցության ամրապնդումն էր: Սավկայում է այն մասին, որ ՉԺՀ-ի կառավարությունը մտադիր է ստեղծել այնպիսի հետազոտական հաստատություններ, որոնք կարող են մրցակցել արևմտյան գործընկերների հետ¹⁷³:

Դատելով վերջին տարիներին Չինաստանի ուղեղային կենտրոնների ոլորտում տեղի ունեցող

¹⁷² *Комиссина И. Н.*, Научные и аналитические центры Китая // РИСИ, М., 2012, с. 40-41.

¹⁷³ *Building Think Tanks with Chinese Characteristics: Current Debates and Changing Trends* // *China Brief* Volume: 14, Issue: 24, (19/12/2014), pp. 15-16. URL: <https://jamestown.org/program/building-think-tanks-with-chinese-characteristics-current-debates-and-changing-trends/>

ակտիվ գործընթացներից և զարգացումներից՝ կարող ենք ենթադրել, որ այդ ակտիվացումը շարունակական բնույթ է կրելու, ինչն ակնհայտորեն խթանվում է երկրի բարձրագույն իշխանության մակարդակով: Նման մոտեցումն իր դրական արդյունքներին երկար սպասել չի տա, և առաջիկա տարիներին կարելի է ակնկալել չինական ուղեղային կենտրոնների գլոբալ դերակատարման մեծացման նշանակալի միտումներ:



Գծապատկեր 1. Ուղեղային կենտրոնների աշխարհագրությունը ¹⁷⁴

Ինչպես երևում է տարածաշրջանային կտրվածքով ուղեղային կենտրոնների բաշխվածությունից, աշխարհի ուղեղային կենտրոնների թվաքանակի ավելի քան 28%-ը բաժին է ընկնում Յոլոսիսային Ամերիկային (տե՛ս գծապատկեր 1): Թեև Չինաստանն ու Յնդկաստանն ուղեղային կենտրոնների թվով աշխարհի առաջատար երկրների քառյակում են, իսկ ճապոնիան՝ տասնյակում (տե՛ս աղյուսակ 4-ում), սակայն այս տարածաշրջանը տեսակարար կշռով ընդամենը երրորդն է ուղեղային կենտրոնների շարքում:

¹⁷⁴ Տե՛ս *James G. McGann*, opt. cit. p. 26.

Տարածաշրջանային կտրվածքով ուղեղային կենտրոնների թվաքանակով երկրորդը Եվրոպան է: Ինչպես նշում է Յ. Ուլրիխը, ԵՄ-ի ուղեղային կենտրոնների գործունեության ակտիվացումը կարող է դիտարկվել որպես պատասխան ԵՄ-ի ընդարձակման և ինտեգրման խորացմանը, ինչպես նաև՝ ԵՄ-ի և ազգային պետության ունենեթի մակարդակով քաղաքականության մշակման գործունեության ավելացմանն ու բարդացմանը: Քաղաքականության միջավայրի ընդարձակմանը գուգահեռ՝ ժամանակի և փորձառության իմաստով պետական քաղաքականության մշակողների նկատմամբ պահանջները և սմեծանում են: Ավելանում է հատուկ գիտելիքների, նոր գաղափարների և քաղաքական այլ ընտրանքների նկատմամբ պահանջարկը: ԵՄ-ի ուղեղային կենտրոնների թվաքանակի ավելացումը կարող է դիտարկվել առավել տարածված երևույթի՝ քաղաքական ոլորտում 1990-ականներից նկատվող ոչ պետական դերակատարների գործունեության ակտիվացման համատեքստում: ԵՄ-ում ոչ պետական դերակատարների գործունեության ակտիվացման միտումը մասամբ 1992 և 1993 թթ. միջև Մասստրիխտի համաձայնագրի վավերացման շուրջ առկա դժվարությունների և քաղաքականության մշակման առավել մեծ թափանցիկության անհրաժեշտության գիտակցման արդյունք է: Ճանաչելով ԵՄ-ի քաղաքական համակարգի շրջանակներում ժողովրդավարության պակասի մակարդակի նվազեցման վերաբերյալ քաղաքացիների կարծիքի հետ հաշվի նստելու անհրաժեշտությունը՝ ԵՄ-ի քաղաքական գործիչները և պաշտոնյաները խրախուսում են ոչ պետական դերակատարների ներգրավումը տվյալ գործընթաց ¹⁷⁵:

¹⁷⁵ *Ulrich H.*, European Union think tanksL generating ideas, analysis and debate // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by *Stone D.* and *Denham A.*, Manchester University Press, Manchester and New York, 2004, pp. 51-52.

Յարկ է նշել, որ տարբեր երկրներում
նւղեղային կենտրոնների ունեցող զարգացած
նւթյան գնահատման առումով միայն դրանցում
գործող նւղեղային կենտրոնների քանակակա-
նային շեղումների դիտարկումը բավարարչէ, քանի որ,
ինչպես երևաց առանձին երկրների փորձի-
նուսումնասիրություններից, յուրաքանչյուր
երկրում համապատասխան հաստատությունների
ստեղծման և դրանց արտադրանքի նկատմամբ պահան-
ջարկը պայմանավորված է, նախ և առաջ, տվյալ
պետության քաղաքական մշակույթով և արտաքին քա-
ղաքական հավակնություններով: Մյուս կողմից,
հաշվի առնելով դիտարկված երկրներում
բնակչության թվի չափազանց մեծ տարբերությու-
նները, կարծում ենք՝ սխալ կլինի դրանցում
նւղեղային կենտրոնների ունեցող զարգացման
մակարդակը կամ հանրային քաղաքականության մեջ
փորձագիտական վերլուծական կառույցների
իրական դերակատարությունը և քաղաքականության
տարբեր ունեցող վերջիններիս ազդեցության
աստիճանը գնահատել՝ հիմք ընդունելով միայն այդ
երկրներում նւղեղային կենտրոնների թվաքանակի
բացարձակ թվերը: Յետևաբար՝ առավել ճշգրիտ
պատկերացում կազմելու համար նպատակահարմար
ենք գտնում ներկայացնել մեր կողմից մշակված
աղյուսակը, որտեղ տեղ են գտել աղյուսակ 4-ի 25
առաջատար երկրները, սակայն հաշվի են առնվել
բնակչության և նւղեղային կենտրոնների հարաբե-
րակցության ցուցանիշները, ինչը թույլ է տալիս
գնահատել նւղեղային կենտրոնների
նշանակալիության մակարդակը (տե՛ս աղյուսակ 5):

**Աղյուսակ 5. Բնակչություն / ուղեղային կենտրոն
հարաբերակցությունը ամբաշխարհի առաջատար
երկրները**

| Երկիր | Բնակչություն լնը (հազ.) ¹⁷⁶ | Ուղեղային կենտրոն | Հազար բնակիչ / ուղեղային կենտրոն հարաբերակցություն լն |
|--------------------------------------|---|----------------------|---|
| Շվեյցարիա | 8,286.98 | 73 | ≈ 113 / 1 |
| Շվեդիա | 9,798.87 | 77 | ≈ 127 / 1 |
| Իսրայել | 8,380.40 | 58 | ≈ 144 / 1 |
| Բուլղարիա | 10,724.70 | 59 | ≈ 181 / 1 |
| ԱՄՆ | 321,418.82 | 1835 | ≈ 175 / 1 |
| Բելգիա | 11,285.72 | 53 | ≈ 212 / 1 |
| Միացյալ Թագավորություն լն | 65,138.23 | 288 | ≈ 226 / 1 |
| Նիդեռլանդներ | 16,936.52 | 58 | ≈ 292 / 1 |
| Արգենտինա | 43,416.75 | 138 | ≈ 314 / 1 |
| Կանադա | 35,851.77 | 99 | ≈ 362 / 1 |
| Ռուսիա | 19,832.39 | 54 | ≈ 367 / 1 |
| Ֆրանսիա | 66,808.38 | 180 | ≈ 371 / 1 |
| Ավստրալիա | 23,781.17 | 63 | ≈ 377 / 1 |
| Գերմանիա | 81,413.15 | 195 | ≈ 417 / 1 |
| Իտալիա | 60,802.08 | 97 | ≈ 626 / 1 |
| ՀԱՀ | 54,956.92 | 86 | ≈ 639 / 1 |
| Իսպանիա | 46,418.27 | 55 | ≈ 843 / 1 |
| Քենիա | 46,050.30 | 53 | ≈ 868 / 1 |
| Ճապոնիա | 126,958.47 | 109 | ≈ 1164 / 1 |
| Աղյուսակ 5-ի շարունակությունը | | | |
| Ռուսաստան | 144,096.81 | 122 | ≈ 1181 / 1 |
| Իրան | 79,109.27 | 59 | ≈ 1340 / 1 |
| Մեքսիկա | 127,017.22 | 61 | ≈ 2082 / 1 |
| Բրազիլիա | 207,847.53 | 89 | ≈ 2335 / 1 |
| Չինաստան | 1,371,220.00 | 435 | ≈ 3152 / 1 |
| Հնդկաստան | 1,311,050.53 | 280 | ≈ 4682 / 1 |

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում առաջատար 25 երկրների դասավորությունն էականորեն փոխվում է: Նման մոտեցման պարագայում ուղեղային կենտրոնների բացարձակ թվով առաջատարներից լավագույն հնգյակում մնում է միայն ԱՄՆ-ը՝ զբաղեցնելով հինգերորդ հորիզոնականը: Նոր մոտեցմամբ առաջատար են դառնում, ըստ հերթա-

¹⁷⁶ The World Bank, 2015 // URL: <http://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL>

կանոնաթյան, ծվեյցարիան, ծվեդիան, Իսրայելը, Բոլիվիան: Աղյուսակում դիրքային ամենամեծ թռիչքն են արձանագրում Բելգիան (+19), Իսրայելը (+17) և Բոլիվիան (+15): Դիրքային ամենամեծ անկումն է արձանագրվում Չինաստանի (-22), Յնդկաստանի (-21) և Ռուսաստանի ցուցանիշներում (-12): Դիրքային փոփոխությունն չի արձանագրում միայն Կանադան, որը երկու դեպքում էլ պահպանում է 10-րդ հորիզոնականը (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 6. Երկրների դիրքերի փոփոխությունը վարկանիշի նորմաթոքաբանություն դեպքում

| | Երկիր | Ուղեղային կենտրոնների քանակով զբաղեցրած դիրքը | Բնակչություն/ուղեղային կենտրոն հարաբերակցություն ամբողջությամբ զբաղեցրած դիրքը | Դիրքային փոփոխություն |
|--------------------------------------|------------------------|---|--|-----------------------|
| 1. | Բելգիա | 25 | 6 | +19 |
| 2. | Իսրայել | 20 | 3 | +17 |
| 3. | Բոլիվիա | 19 | 4 | +15 |
| 4. | Ծվեյցարիա | 15 | 1 | +14 |
| 5. | Նիդեռլանդներ | 21 | 8 | +13 |
| 6. | Ծվեդիա | 14 | 2 | +12 |
| 7. | Ռումինիա | 23 | 11 | +12 |
| 8. | Քենիա | 24 | 18 | +6 |
| 9. | Իսպանիա | 22 | 17 | +5 |
| 10. | Ավստրալիա | 16 | 13 | +3 |
| 11. | Կանադա | 10 | 10 | 0 |
| 12. | Արգենտինա | 7 | 9 | -2 |
| 13. | ՅԱՅ | 13 | 16 | -3 |
| 14. | Իրան | 18 | 21 | -3 |
| 15. | ԱՄՆ | 1 | 5 | -4 |
| Աղյուսակ 6-ի շարունակությունը | | | | |
| 16. | Միացյալ Թագավորություն | 3 | 7 | -4 |
| 17. | Իտալիա | 11 | 15 | -4 |
| 18. | Մեքսիկա | 17 | 22 | -5 |
| 19. | Ֆրանսիա | 6 | 12 | -6 |
| 20. | Գերմանիա | 5 | 14 | -9 |
| 21. | Ճապոնիա | 9 | 19 | -10 |
| 22. | Բրազիլիա | 12 | 23 | -11 |
| 23. | Ռուսաստան | 8 | 20 | -12 |
| 24. | Յնդկաստան | 4 | 25 | -21 |
| 25. | Չինաստան | 2 | 24 | -22 |

Ակնհայտ է, որ բացառապես ուղեղային կենտրոնների քանակական ցուցանիշների

դիտարկմամբ երկրների առանձնացումը սխալ մոտեցում է: Տվյալ դեպքում ուղեղային կենտրոնների քանակը որևէ տեղեկատվություն չի տալիս տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների գործունեության միջավայրի, դրանց արդյունավետության, զարգացածության կամ դրանց գործունեությանը նպաստող ու խոչընդոտող գործոնների վերաբերյալ, ինչով էլ սովորաբար պայմանավորվում են այս կամ այն երկրում ուղեղային կենտրոնների արձանագրած արդյունքներն ու համեմատական ակտիվությունը: Տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների գործունեության պայմանների համակողմանի վերլուծության առումով առանցքային նշանակություն ունի ուղեղային կենտրոնների զարգացածության մակարդակը բնութագրող ցուցանիշների լայն հավաքածուի հիման վրա երկրների խմբավորումը: Հատկանշական է, որ ուղեղային կենտրոնների զարգացածությունն ու արդյունավետությունն ավելի լայն հավաքածուով գնահատելու հնարավորություն ընձեռող այլ վարկանիշներ առկա են: Մասնավորապես նման հնարավորություն ընձեռում է Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից ամենամյա պարբերականությամբ հրապարակվող «Գլոբալ մրցունակության զեկուլյցը»¹⁷⁷, որում տարբեր ինդեքսների հաշվարկման նպատակով ներառված են նաև այս ոլորտին ուղղակիորեն առնչվող ցուցանիշներ, որոնց համակողմանի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում առավել հստակ գնահատելու ուղեղային կենտրոնների զարգացածությունը տարբեր երկրներում և առավել

¹⁷⁷ World Economic Forum The Global Competitiveness Report 2016-2017 www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2016-2017-1

հիմնավոր ներկայացնելու երկրների
հերթականությամբ՝ ըստ ուղեղային
կենտրոնների գործունեության բարենպաստ և
բարենպաստ կամ պակաս բարենպաստ միջավայրերի
առկայության: Այս խնդիրը փորձ է արվել լուծելու
կլաստերային վերլուծության գործիքակազմի
կիրառման միջոցով: Չերծ մնալով վերլուծության
բանաձևային մասի նկարագրության հիմնից՝ նշենք, որ
կլաստերային վերլուծության գլխավոր նպատակը
հայտանիշների համախմբության մեջ բնութագրվող,
հետազոտվող օբյեկտների բազմության բաժանումն
է որոշակի հիմաստով համասեռ խմբերի (կլաստեր-
ների):

Հետազոտության մեջ ներառվել են
Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի
ինստիտուտի կողմից ուղեղային կենտրոնների
թվով առաջատար համարված միևնույն 25 երկրները:
Երկրների կլաստերացման նպատակով
Համաշխարհային տնտեսական ֆորումի գեկոլոյցում
առանձնացվել և դիտարկվել են հետևյալ
ցուցանիշները.

1. հանրային ֆունդերի բազմազանությամբ
(տնտեսության տարբեր հատվածներում
տարաբնույթ նախաձեռնությունների
նպատակով ձևավորվող հիմնադրամները,
որոնց միջոցները գոյանում են տարբեր
խմբերի նվիրատվության ներքին,
հիմնադրամի թողարկած պարտատոմսերի
ձեռքբերումից, և որոնց միջոցների
տեղաբաշխման նկատմամբ առկա է
քաղաքացիական հասարակության
անմիջական վերահսկողություն):
2. Հասարակության վստահությունը
քաղաքական գործիչների նկատմամբ
(ներառվել է իբրև հանրային

- քաղաքակնոթյան բնագավառում կայացվող որոշումները և գիտիմունքային գոհիչ):
3. Պետական պաշտոնյաների նշանակման որոշումներում հովանավորչությունը (ներառվել է իբրև պտտվող դռներին քաղաքակնոթյան կիրառմանը նպաստող կամ կիրառումը խոչընդոտող հանգամանք):
 4. Կառավարություն քաղաքակնոթյան բացություն աստիճանը:
 5. Կառավարման դպրոցներին որակը:
 6. Հետազոտական և վերապատրաստման ծառայություններին հասանելիությունը (ներառվել է այն պատճառով, որ դրանք նաև ուղեղային կենտրոններին գործառնություններ են):
 7. Անձնակազմի վերապատրաստման մակարդակը (ներառվել է նույն նպատակով):
 8. Բարձրագույն կրթություն և վերապատրաստում (ներառվել է նույն նպատակով):
 9. Արհեստավարժ կառավարման վրահենվելու աստիճանը (ներառվել է այն պատճառով, որ ուղեղային կենտրոններին ծառայություններին ցօգտվում են հենց այս գործունի կարևորությունը նկատմամբ):
 10. Տաղանդներին պահպանելու պետության ունակությունը (ներառվել է՝ հաշվի առնելով սեփական ինտելեկտուալ ներուժը պետության ներում կիրառելու պատրաստակամություն և կարողություն կարևորությունը):
 11. Տաղանդներին գրավելու պետության ունակությունը (ներառվել է նույն նպատակով):


12. Տ աղ ա ն դ ն ե թ ի օ գ տ ա գ ո թ ժ մ ա ն
ա թ դ յ ու լ ն ա վ ե տ ու թ յ ու լ ն ը (ն եր առ վ ե լ է ն ու յ ն
ն պ ա տ ա կ ո վ):
13. Ի ն տ ե թ ն ե տ օ գ տ ա գ ո թ ո ղ ն ե թ ի ք ա ն ա կ ը
(ն եր առ վ ե լ է ` հ ա շ վ ի առ ն ե լ ո վ ու ղ ե ղ ա յ ի ն
կ ե ն տր ո ն ն ե թ ի կ ո ղ մ ի ց ի թ ե ն ց
ի ն տ ե լ ե կ տ ու ա լ ա թ տ ա դ թ ա ն ք ի հ ա ն թ ա յ -
ն ա ց մ ա ն ն եր ու ժ ը ` կ ա պ վ ա ծ հ ա մ ա ց ա ն ց ու մ
գ ա ղ ա փ ա թ ն ե թ ի տ ա թ ա ծ մ ա ն լ ա յ ն
հ ն ա թ ա վ ո թ ու թ յ ու լ ն ն ե թ ի հ ե տ):
14. Հ Ն Ա ` ը ս տ գ ն ո ղ ու լ ն ա կ ու թ յ ա ն պ ա թ ի տ ե տ ի
(ն եր առ վ ե լ է ` հ ա շ վ ի առ ն ե լ ո վ պ ե տ ու թ յ ա ն `
Ֆ ի ն ա ն ս ա վ ո թ ու մ կ ա տ ա թ ե լ ու ն եր ու ժ ը):
15. Ի շ խ ա ն ու թ յ ու լ ն պ ա տ վ ի թ ա կ ե լ ու
պ ա տր ա ս տ ա կ ա մ ու թ յ ու լ ն ը (ն եր առ վ ե լ է `
հ ա շ վ ի առ ն ե լ ո վ հ ա ն թ ա յ ի ն
ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ա ն ք ն ա գ ա վ առ ու մ ա յ լ
ս ու թ յ ե կ տ ն ե թ ի ն եր գ թ ա վ մ ա ն առ ու մ ո վ
ի շ խ ա ն ու թ յ ա ն պ ա տ վ ի թ ա կ մ ա ն պ ա տր ա ս տ ա կ ա -
մ ու թ յ ա ն է ա կ ա ն ա գ դ ե ց ու թ յ ու լ ն ը):
16. Գ ի տ ա կ ա ն հ ե տ ա գ ո տ ա կ ա ն
հ ա ս տ ա տ ու թ յ ու լ ն ն ե թ ի ո թ ա կ ը :
17. Հ ե տ ա գ ո տ ու թ յ ու լ ն ն ե թ ի ն մ շ ա կ ու մ ն ե թ ի վ թ ա
ը ն կ ե թ ու թ յ ու լ ն ն ե թ ի կ ա տ ա թ ա ծ ծ ա խ ս ե թ ը
(ն եր առ վ ե լ է ` հ ա շ վ ի առ ն ե լ ո վ ու ղ ե ղ ա յ ի ն
կ ե ն տր ո ն ն ե թ ի Ֆ ի ն ա ն ս ա վ ո թ մ ա ն
ա ղ թ յ ու լ թ ն ե թ ի ք ա գ մ ա գ ա ն ու թ յ ա ն ն եր ու ժ ը):
18. Հ ա մ ա լ ս ա թ ա ն ն ե թ ի ն եր գ թ ա վ վ ա ծ ու թ յ ու լ ն ը
հ ե տ ա գ ո տ ու թ յ ու լ ն ն ե թ ի ն ն մ շ ա կ ու մ ն ե թ ի ն
(ն եր առ վ ե լ է ` գ ն ա հ ա տ ե լ ու հ ա մ ա թ
ա կ ա դ ե մ ի ա կ ա ն հ ա ս տ ա տ ու թ յ ու լ ն ն ե թ ի ն կ ի ց
ու ղ ե ղ ա յ ի ն կ ե ն տր ո ն ն ե թ ի ` հ ա ն թ ա յ ի ն
ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ա ն ը մ ա ս ն ա կ ց ե լ ու
հ ն ա թ ա վ ո թ ու թ յ ու լ ն ը):
19. Ու ղ ե ղ ա յ ի ն կ ե ն տր ո ն ն ե թ ի ք ա ն ա կ ը :

20. 1000 բնակչի հաշվով ուղեղային կենտրոնների քանակը :

21. Բնակչու թյան թվաքանակը :

Վերոնշյալ ցուցանիշների հիման վրա վիճակագրական վերլուծության ծրագրային փաթեթի (Statistical analysis software package, SPSS) գործադրմամբ կատարվել է կլաստերացում : Կլաստերացման արդյունքում ձևավորվել են 2 համասեռ խմբեր, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկվել են գրեթե նույն քանակությամբ երկրներ. առաջին կլաստերում ներառվել է 12, երկրորդում՝ 13 երկիր :

Չարկել նշել, որ կլաստերների առանձնացման համար, ըստ իրենց կարևորության կշիռների, վերոնշյալ 21 գործոններից առավել կարևոր են համարվել հանրային ֆունդերի բազմազանություն, արհեստավարժ կառավարման վրահենվելու և ստիճան, գիտական հետազոտական հաստատությունների որակ ցուցանիշները (տե՛ս գծապատկեր 2) : Սանշանակում է, որ երկրների համասեռ խմբերի տարբերակումն է ապեսպայմանավորված է այդ ցուցանիշներով :



Գծապատկեր 2. Կլաստերների առանձնացման համար կարևոր գործոնները

Կլաստերների նկարագրման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի դրանցից

յ ու ր ա ք ա ն չ յ ու ր ու մ ը ս տ առ ա ն ձ ի ն ց ու ց ա ն ի շ ն եր ի ար ձ ա ն ա գ ր վ ա ծ մ ի ջ ի ն ար ժ ե ք ն եր ի վ եր լ ու ծ ու թ յ ու ն ը: Այ ն պ ա տ կ եր ա ց ու մ է տ ա լ ի ս կ լ ա ս տ եր ն եր ի ք ն ու յ թ ի մ ա ս ի ն: Այ ս պ ե ս , ա ղ յ ու ս ա կ 7- ու մ ն եր կ ա յ ա ց վ ա ծ ար դ յ ու ն ք ն եր ի ց կ ար ե լ ի է ն կ ա տ ե լ , ո ր գ ր ե թ ե ք ո լ ո ր ց ու ց ա ն ի շ ն եր ո վ առ ա ջ ի ն կ լ ա ս տ եր ը գ եր ա գ ա ն ց ու մ է եր կ ր ո ր դ ի ն: Այ դ պ ա տ ճ առ ո վ մ ե ն ք առ ա ջ ի ն կ լ ա ս տ եր ու մ ն եր առ վ ա ծ եր կ ր ն եր ը կ ար ո ղ ե ն ք ք ն ո ր ո շ ե լ ո ր պ ե ս «առ ա ջ ա տ ար », ի ս կ եր կ ր ո ր դ ու մ ն եր առ վ ա ծ ն եր ը` «հ ե տ ն ո ր դ »:

Ա ղ յ ու ս ա կ 7. Կ լ ա ս տ եր ն եր ի ն կ ար ա գ ի ր ը

| Ց ու ց ա ն ի շ ն եր | Կ լ ա ս տ եր ն եր | |
|---|-------------------|---------|
| | 1 | 2 |
| Յ ա ն ր ա յ ի ն \$ ո ն դ եր ի ք ա գ մ ա գ ա ն ու թ յ ու ն ը | 5,41 | 2,94 |
| Յ ա ս ար ա կ ու թ յ ա ն վ ս տ ա հ ու թ յ ու ն ը | 4,65 | 2,53 |
| ք ա ղ ա ք ա կ ա ն գ ո ր ծ ի չ ն եր ի ն կ ա տ մ ա մ ք | | |
| Պ ե տ ա կ ա ն պ ա շ տ ո ն յ ա ն եր ի ն շ ա ն ա կ մ ա ն | 4,51 | 2,71 |
| ո ր ո շ ու մ ն եր ու մ հ ո վ ա ն ա վ ո ր չ ու թ յ ու ն ը | | |
| Կ առ ա վ ար ու թ յ ա ն ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ա ն | 5,37 | 3,88 |
| ք ա ց ու թ յ ա ն ա ս տ ի ճ ա ն ը | | |
| Կ առ ա վ ար մ ա ն դ պ ր ո ց ն եր ի ո ր ա կ ը | 5,59 | 4,40 |
| Յ ե տ ա գ ո տ ա կ ա ն և վ եր ա պ ա տ ր ա ս տ մ ա ն | 5,81 | 4,37 |
| ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր ի հ ա ս ա ն ե լ ի ու թ յ ու ն ը | | |
| Ա ն ձ ն ա կ ա գ մ ի վ եր ա պ ա տ ր ա ս տ մ ա ն մ ա կ ար դ ա կ ը | 5,10 | 3,90 |
| Բ ար ձ ր ա գ ու յ ն կ ր թ ու թ յ ու ն և | 5,71 | 4,46 |
| վ եր ա պ ա տ ր ա ս տ ու մ | | |
| Ար հ ե ս տ ա վ ար ժ կ առ ա վ ար մ ա ն վ ր ա հ ե ն վ ե լ ու | 5,90 | 4,21 |
| ա ս տ ի ճ ա ն ը | | |
| Տ ա ղ ա ն դ ն եր ի ն պ ա հ պ ա ն ե լ ու պ ե տ ու թ յ ա ն | 4,83 | 3,36 |
| ու ն ա կ ու թ յ ու ն ը | | |
| Տ ա ղ ա ն դ ն եր ի ն գ ր ա վ ե լ ու պ ե տ ու թ յ ա ն | 4,72 | 3,16 |
| ու ն ա կ ու թ յ ու ն ը | | |
| Տ ա ղ ա ն դ ն եր ի ո գ տ ա գ ո ր ծ մ ա ն | 5,16 | 3,70 |
| ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ու ն ը | | |
| Ի ն տ եր ն ե տ ո գ տ ա գ ո ր ծ ո ղ ն եր ի ք ա ն ա կ ը | 86,73 | 55,57 |
| Յ Ն Ա` ը ս տ գ ն ո ղ ու ն ա կ ու թ յ ա ն պ ար ի տ ե տ ի | 3106,52 | 3382,87 |
| Ի շ խ ա ն ու թ յ ու ն պ ա տ վ ի ր ա կ ե լ ու | 4,96 | 3,70 |
| պ ա տ ր ա ս տ ա կ ա մ ու թ յ ու ն ը | | |
| Գ ի տ ա կ ա ն հ ե տ ա գ ո տ ա կ ա ն | 5,95 | 4,16 |
| հ ա ս տ ա տ ու թ յ ու ն ն եր ի ո ր ա կ ը | | |
| Յ ե տ ա գ ո տ ու թ յ ու ն ն եր ի և մ շ ա կ ու մ ն եր ի վ ր ա | 5,26 | 3,49 |

| Ցուցանիշներ | Կլաստերներ | |
|------------------------------------|------------|---------|
| | 1 | 2 |
| ընկերությունների կատարած ծախսերը | | |
| Համալսարանների ներգրավվածությունը | 5,13 | 3,67 |
| հետազոտությունների և մշակութային | | |
| Ուղեղային կենտրոնների (ՈւԿ) քանակը | 257,33 | 122,15 |
| 1000 բնակչի հաշվով ՈւԿ քանակը | 331,67 | 1431,54 |

Աղյուսակ 7-ից ակնհայտ է, որ «առաջատար» երկրների խումբն առաջանցիկ դիրք է զբաղեցնում ինչպես տաղանդների նպահպանելու (4.83), գրավելու (4.72) և օգտագործելու (5.16) պետության ունակությամբ, այնպես էլ ըստ գիտական հետազոտական հաստատությունների որակի (5.95), հետազոտությունների և մշակութային վրա ընկերությունների կատարած ծախսերի (5.26), բարձրագույն կրթության և վերապատրաստման (5.71), հանրային ֆունդերի բազմազանության (5.41), կառավարության քաղաքականության բացությունը և այլ գոլգանիշների:

Ուշադրություն է արժանի այն հանգամանքը, որ չնայած «առաջատար» երկրների խումբն ուղեղային կենտրոնների քանակով գերազանցում է «հետևորդ» կլաստերին, այնուհանդերձ 1000 բնակչի հաշվով ուղեղային կենտրոնների թվով «առաջատար» կլաստերը զիջում է «հետևորդ» երկրների խմբին:

Այժմ ներկայացնենք կլաստերներից յուրաքանչյուրի կազմը:

Աղյուսակ 8. Երկրների պատկանելությանը ստ կլաստերների

| Կլաստեր 1 «Առաջատար» | Կլաստեր 2 «Հետևորդ» |
|-------------------------|------------------------|
| Ավստրալիա | Արգենտինա |
| Բելգիա | Բոլիվիա |
| Կանադա | Բրազիլիա |
| Ֆրանսիա | Չինաստան |
| Գերմանիա | Հնդկաստան |

| Կ Լ աս տե ր 1 «Առ աջ ատար » | Կ Լ աս տե ր 2 «Յ ե տև ո թ դ » |
|--|--|
| Ի ս ր ա յ ե Լ | Ի թ ա ն |
| Ճ ա պ ո ն ի ա | Ի տ ա Լ ի ա |
| Ն ի դ ե ռ Լ ա ն դ ն ե թ | Ք ե ն ի ա |
| Շ վ ե դ ի ա | Մ ե ք ս ի կ ա |
| Շ վ ե յ ց ա թ ի ա | Ռ ո Լ մ ի ն ի ա |
| Մ ի ա ց յ ա Լ Թ ա գ ա վ ո թ ո Լ թ յ ո Լ ն | Ռ ո Լ ս ա ս տ ա ն |
| Ա Մ Ն | Յ վ .Ա \$ թ ի կ ա |
| | Ի ս պ ա ն ի ա |

Կ Լ աս տե ր ն ե թ ի կ ա գ մ ի վ ե թ Լ ո Լ ծ ո Լ թ յ ո Լ ն ի ց կ ա թ ե Լ ի Է ն կ ա տե Լ , ո թ «առ աջ ատար » կ Լ աս տե թ ո Լ մ հ ի մ ն ա կ ա ն ո Լ մ տե դ ե ն գ տե Լ գ ա թ գ ա ց ա ծ ո Լ թ յ ա ն հ ա մ ե մ ա տ ա թ ա թ ա թ ճ թ մ ա կ ա թ դ ա կ ո Լ ն ե ց ո դ ա յ ն պ ի ս ի ե թ կ թ ն ե թ , ի ն չ պ ի ս ի ք ե ն Ա Մ Ն -ը , Շ վ ե դ ի ա ն , Շ վ ե յ ց ա թ ի ա ն , Ճ ա պ ո ն ի ա ն , Գ ե թ մ ա ն ի ա ն , Ֆ թ ա ն ս ի ա ն և ա յ Լ ն : «Յ ե տև ո թ դ » ե թ կ թ ն ե թ ի կ Լ աս տե թ ո Լ մ տե դ ե ն գ տե Լ հ ի մ ն ա կ ա ն ո Լ մ գ ա թ գ ա ց ո դ տ ն տե ս ո Լ թ յ ա մ թ ե թ կ թ ն ե թ ը , ա յ դ թ վ ո Լ մ՝ Ռ ո Լ ս ա ս տ ա ն ը , Ա թ գ ե ն տ ի ն ա ն , Բ թ ա գ ի Լ ի ա ն , Չ ի ն ա ս տ ա ն ը , Յ ն դ կ ա ս տ ա ն ը և ա յ Լ ն (տե՛ ս ա դ յ ո Լ ս ա կ 8):

Կ ա թ ո թ Է ն ա ն դ ի տ ա թ կ ե Լ ո Լ դ ե դ ա յ ի ն կ ե ն տ թ ո ն ն ե թ ի թ վ ա ք ա ն ա կ ի և առ ա ն ձ ն ա ց վ ա ծ ց ո Լ ց ա ն ի շ ն ե թ ի ա թ ժ ե ք ն ե թ ի փ ո խ կ ա պ վ ա ծ ո Լ թ յ ա ն գ ն ա հ ա տ ա կ ա ն ը . ա յ դ ն պ ա տ ա կ ո վ հ ա շ վ ա թ կ վ ե Լ ե ն ս ա հ մ ա ն վ ա ծ ց ո Լ ց ա ն ի շ ն ե թ ի և ո Լ դ ե դ ա յ ի ն կ ե ն տ թ ո ն ն ե թ ի ք ա ն ա կ ի մ ի ջ և փ ո խ կ ա պ վ ա ծ ո Լ թ յ ա ն կ ո ռ ե Լ յ ա ց ի ո ն գ ո թ ծ ա կ ի ց ն ե թ ը (տե՛ ս ա դ յ ո Լ ս ա կ 9):

**Ա դ յ ո Լ ս ա կ 9. Ո Լ դ ե դ ա յ ի ն կ ե ն տ թ ո ն ն ե թ ի
թ վ ա ք ա ն ա կ ի և առ ա ն ձ ի ն ց ո Լ ց ա ն ի շ ն ե թ ի մ ի ջ և
փ ո խ կ ա պ վ ա ծ ո Լ թ յ ո Լ ն ը**

| Ց ո Լ ց ա ն ի շ ն ե թ | Կ ո ռ ե Լ յ ա ց ի ա յ ի գ ո թ ծ ա կ ի ց |
|---|--|
| Յ ա ն թ ա յ ի ն \$ ո ն դ ե թ ի թ ա գ մ ա գ ա ն ո Լ թ յ ո Լ ն ը | 0,16 |
| Յ ա ս ա թ ա կ ո Լ թ յ ա ն վ ս տ ա հ ո Լ թ յ ո Լ ն ը թ ա դ ա ք ա կ ա ն գ ո թ ծ ի ջ ն ե թ ի ն կ ա տ մ ա մ թ | 0,11 |

| Տոևցանիշներ | Կոռեկյացիայի գործակից |
|---|-----------------------|
| Պետական պաշտոնյաների նշանակման որոշումներում հովանավորչությունը | 0,11 |
| Կառավարության քաղաքականության բացուցիչ անստիճանը | 0,21 |
| Կառավարման դպրոցների որակը | 0,18 |
| Հետազոտական և վերապատրաստման ծառայությունները հասանելիությունը | 0,14 |
| Անձնակազմի վերապատրաստման մակարդակը | 0,21 |
| Բարձրագույն կրթություն և վերապատրաստում | 0,22 |
| Արհեստավարժ կառավարման վրահենվելու անստիճանը | 0,20 |
| Տաղանդներին պահպանելու պետության ունակությունը | 0,36 |
| Տաղանդներին գրավելու պետության ունակությունը | 0,41 |
| Տաղանդների օգտագործման արդյունավետությունը | 0,27 |
| Ինտերնետ օգտագործողների քանակը | 0,00 |
| ՀՆԱ՝ ըստ գնող ունակության պարիտետի | 0,77 |
| Իշխանություն պատվիրակելու պատրաստակամությունը | 0,22 |
| Գիտական հետազոտական հաստատությունների որակը | 0,21 |
| Հետազոտությունները և մշակումները վրա ընկերությունների կատարած ծախսերը | 0,30 |
| Համալսարանների ներգրավվածությունը հետազոտություններին և մշակումներին | 0,30 |
| Բնակչության թվաքանակը | 0,29 |

Կարելի է նկատել, որ կոռեկյացիոն կապը համեմատաբար ուժեղ (սակայն վիճակագրական ընկալմամբ ոչ որոշիչ) է ստացվել միայն ուղեղային կենտրոնների քանակի և ՀՆԱ-ի մեծությունների (կամ \$ինանսավորման ներուժի) միջև: Ուղեղային կենտրոնների գործունեության միջավայրը նկարագրող մյուս գործոնների և ուղեղային կենտրոնների քանակի միջև որևէ կապառկաչ է: Սա փաստում է, որ երկրները դասակարգելիս անհրաժեշտ է դրանց հերթականությունը որոշել՝ ելնելով ոչ թե ուղեղային կենտրոնների թվից, այլ դրանց գործունեությունը պայմանավորող միջավայրի արդյունավետությունից և այլ երկրների նկատմամբ համեմատական նպաստավորությունից (մրցունակությունից):

Յուրաքանչյուր որոշակի երկրի ուղեղային ոլորտի կայացածության, հանրային քաղաքականութ-

յան մեջ այդ հաստատությունների դերակատարությունը վերաբերյալ առավել խորքային և ամբողջական պատկեր ստանալու համար, բացի ուղեղային կենտրոնների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշների վերլուծությունից, պետք է հաշվի առնել նաև առաջատար հաստատությունների ֆինանսական և կադրային ռեսուրսները: Այստեղ անվերապահ առաջնայնությունը պատկանում է ԱՄՆ-ին, որի առաջատար ուղեղային կենտրոններն աշխարհում հավասարը չունեն թե՛ աշխատակազմի թվաքանակի, թե՛ տնօրինվող ֆինանսական միջոցների տեսանկյունից (տե՛ս աղյուսակ 10):

Աղյուսակ 10. ԱՄՆ-ի առաջատար ուղեղային կենտրոնների բյուջեն և աշխատակազմը ¹⁷⁸

| | Ուղեղային կենտրոն | Բյուջե /մլն ԱՄՆ դոլլար/ | Աշխատակազմ |
|-----|--|--------------------------------|-------------------|
| 1. | Բրուքլինգսի ինստիտուտ | ≈ 104 | 387 |
| 2. | Ռազմավարական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոն | ≈ 44.5 | 220 |
| 3. | Յանոն միջազգային խաղաղության քարտեզի հիմնադրամ | ≈ 32 | 100 |
| 4. | ՌԵՆԴ կորպորացիա | ≈ 293 | 1875 |
| 5. | Գիտնականների ազակցման վ. Ուիլսոնի միջազգային կենտրոն | ≈ 33 | 140 |
| 6. | Արտաքին հարաբերությունների խորհուրդ | ≈ 90 | 318 |
| 7. | Կատոնի ինստիտուտ | ≈ 30 | 156 |
| 8. | «Ժառանգություն» հիմնադրամ | ≈ 100 | 290 |
| 9. | Ամերիկյան առաջընթացի կենտրոն | ≈ 45 | 270 |
| 10. | Միջազգային տնտեսագիտության Պետերսոնի ինստիտուտ | ≈ 12.5 | 244 |
| | Ընդամենը | ≈ 784 | 4000 |

Ինչպես ցույց են տալիս ներկայացված ցուցանիշները, միայն առաջատար ամերիկյան 10 ուղեղային կենտրոնների տարեկան բյուջեն

¹⁷⁸ Աղյուսակը պատրաստվել է նշված ուղեղային կենտրոնների պաշտոնական բաց աղբյուրների՝ կայքերի, հաշվետվությունների ուսումնասիրության հիման վրա:

կազմում է շուրջ 784 մլն ԱՄՆ դոլլար, իսկ աշխատակազմերում ընդհանուր թիվը՝ շուրջ 4000 աշխատակից:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՄՆ-ում ուղեղային կենտրոնների ոլորտի նման զարգացմանը նպաստում են միջարք հանգամանքներ, որոնցից առանցքայիններն են.

- նպատակային հիմնադրամների առկայությունը (endowments), որոնք մշտական ֆինանսական կայունություն են ապահովում փորձագիտական-վերլուծական կառույցների համար,
- պետության կողմից ոլորտում իրականացվող քաղաքականությունը և առաջին հերթին՝ պետական ուղղակի պատվերները և ուղեղային կենտրոնների հարկերից ազատումը,
- քաղաքական մշակույթը, որում ավանդաբար մեծ տեղ է հատկացվում փորձագիտական-վերլուծական կառույցներին և դրանց ներգրավվածությունը որոշումների ընդունման գործընթացին,
- բարեգործության և հանգանակության ավանդույթը:

Ինչպես ցույց տվեց ուղեղային կենտրոնների ստեղծման ընթացքի դիտարկումը, դեռևս հարյուր տարի առաջ էլ ԱՄՆ-ում առաջին ուղեղային կենտրոնները ստեղծվում էին մեծահարուստ գործարարների, բարեգործների օգնությամբ կամ նվիրատվությունների շնորհիվ, հաճախ նաև ուղղակիորեն հենց նրանց կողմից: Ուշագրավ է, որ ուղեղային կենտրոնների հետագա գործունեության տարիներին էլ անհատներից, գործարար շրջանակներից, քաղաքական կազմակերպություններից ստացվող նվիրատվությունները շարունակում են մեծ դեր խաղալ այս ոլորտի զարգացման գործում: Դրանք թույլ են

տալիս ապահովել ուղեղային կենտրոնների ֆինանսական կայունությունը և բնականոն զարգացումը: Վերոնշյալի ապացույցն են ամենամյա Նվիրատվությունների համաշխարհային զեկուլյցում տեղ գտած ցուցանիշները, որոնց համաձայն՝ 2016 թ. տվյալներով ԱՄՆ-ը համարվում է Նվիրատվությունների ցուցիչով աշխարհում երկրորդ երկիրը¹⁷⁹:

Դ. Իվանովի կարծիքով միջավայրը, որում գործառնում է ԱՄՆ-ի ուղեղային կենտրոնների հանրությունը, էականորեն վերափոխման է ենթարկվել: Ի թիվս միջարք փոփոխությունների՝ հետազոտողը նշում է ուղեղային կենտրոնների տարածումն ու քանակական աճելացումը և նեղ մասնագիտացված ուղեղային կենտրոնների ի հայտ գալու հանգամանքը¹⁸⁰: Նշենք, որ այսատենախոսության շրջանակներում մեր ուսումնասիրությունները ևս փաստում են ԱՄՆ-ում նեղ մասնագիտացման ուղեղային կենտրոնների տարածման միտումը, չնայած նրան, որ 2011-2016 թթ. ընդհանուր առմամբ ԱՄՆ-ում ձևավորվել է ընդամենը 20 նոր ուղեղային կենտրոն: Աստիճանաբար առավել բազմաքանակ են դառնում այն կենտրոնները, որոնք ուսումնասիրում են որոշակի թեմա կամ կենտրոնացած են առավել նեղ, մարզային (կամ շրջանային, նահանգային) և տեղային (քաղաքային) նշանակության խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ: Այսպես, ԱՄՆ-ում ի հայտ են գալիս ուղեղային կենտրոններ, որոնց գործունեությունը սահմանափակվում է նահանգային խնդիրների ուսումնասիրությամբ:

¹⁷⁹ CAF World Giving Index 2016 // URL: https://www.cafonline.org/docs/default-source/about-us-publications/1950a_wgi_2016_report_web_v2_241016.pdf?sfvrsn=4

¹⁸⁰ *Иванов Д.Ю.*, Формирование политической аналитики негосударственных аналитических центров в современной России // Дис. на соиск. уч. ст. канд. пол. н., специальность 23.00.02 – Политические институты, процессы и технологии, Санкт-Петербург, 2013, с. 55.

Որպես օրինակ կարող ենք նշել մինչև 10 հոգի աշխատակազմ ունեցող Յանքային քաղաքականության Յակի ինստիտուտը¹⁸¹, որի գործունեությունն ուղղված է Կոնեկտիկուտ նահանգի խնդիրներին ուսումնասիրությունը:

Վերջին տասնամյակներին արձանագրվող մյուս կարևոր միտումն ուղեղային կենտրոններին և քաղաքական փորձագիտություն գաղափարայնացումն է, ինչը հաճախ ազդում է վերջիններին հանրային հեղինակություն վրա: Ինչպես նշում են Ե.Ռիչը և Բ.Ուիվերը, ուղեղային կենտրոնները և դրանց մեջ հատկապես առավել գաղափարայնացվածներն ակտիվորեն մասնակցում են ժամանակակից քաղաքականության գործնականորեն բոլոր խնդիրներին վերաբերյալ թե՛ սուբյեկտիվ և թե՛ օբյեկտիվ համակարգի սոցիալական ապահովության համակարգի բարեփոխման շուրջ համագային բանավեճից մինչև կրթական հաստատությունների որակի և \$ինանսավորման հարցերի վերաբերյալ տարածաշրջանային նշանակություն քննարկումներ: Այս քաղաքական մեկամարտերի մասնակիցները ոչ հազվադեպ հատուկ գիտելիքները գիտակցաբար կիրառում են որպես կուսակցական և գաղափարախոսական պայքարի գենք: Նրանք բացարձակ չեն ձգտում ներկայացնել հավասարակշռված և օբյեկտիվ տեղեկատվություն, որոնցից կարող են օգտվել պետական քաղաքականության ձևավորմամբ զբաղված լայն շրջանակները: Այս ամենը հանգեցնում է նրան, որ շնչվում են ավանդական տարբերություններն ուղեղային կենտրոններին և շահերի խմբերի միջև, ինչը վնասում է ուղեղային կենտրոններին՝ որպես փորձագիտական

¹⁸¹ Տե՛ս Yankee Institute for Public Policy // URL: <http://www.yankeeinstitute.org/>

գիտելիքների օբյեկտիվ աղբյուրի հեղինակությունը¹⁸²:

Այս հարցի կապակցությամբ փորձագիտական դաշտում առկա են նաև առավել քննադատական կարծիքներ: Այսպես, ՌԴ-ի Գիտահետազոտական համալսարանի Բարձրագույն տնտեսագիտական դպրոցի պրոֆեսոր Աննա Կաչկանայի կարծիքով այսօր հասարակական-քաղաքական թոք-շոուներում հանդես եկող փորձագետներն իրականում մեդիայի մարդիկ են, այլ ոչ թե գիտնականներ և հետազոտողներ: Նրանք ասում կամ նույնիսկ «արտանետում» են այն, ինչը պետական պաշտոններ ունեցող պաշտոնական անձինք երբեմն չեն կարող բացահայտ հնչեցնել: Արհեստավարժ փորձագետները կամ հեռու են պահում իրենց շոուներին մասնակցելուց, կամ միանում են «ստուպլիստերին», կամ իրենց հարմար չեն զգում կանոններով և «մեկ դարպասի ուղղությամբ» ընթացող հռետորական մարտերին մասնակցելուց: Նման թոք-շոուների գլխավոր խնդիրը տեղեկատվական աղմուկին «աջակցելն» է, որտեղ գլխավորը հոլզական լարվածությունն է, բառային ագրեսիան, այլ ոչ թե կասկածները, տրամաբանությունը և առողջ բանականությունը: Ոչոք չի խորանում որևէ երևույթի պատճառների, հիմնավորման մեջ»¹⁸³:

Ուղեղային կենտրոնների արդի ոլորտին բնորոշ մեկ այլ կարևոր առանձնահատկությունը ճանաչման, հանրային ազդեցության և ֆինանսական դոնորների ու հովանավորների համար մղվող պայքարն է, ինչն ուղեղային կենտրոններին ստիպում է առավել շատ ու շարունակաբար դարձնել սեփական ինտելեկտուալ արտադրանքի տարածման

¹⁸² *Рич Э., Уивер К.*, Пропагандисты и аналитики: «мозговые центры» и политизация экспертов // «Pro et Contra», том 8, N 2, Весна, 2003, с. 66.

¹⁸³ «Четыре портрета новых проповедников ненависти, завсегдаев российского ТВ» // «Новая Газета», N 132, от 30 ноября, 2015, с. 3.

ու հանրայնացմանը: Այդ նպատակով ուղեղային կենտրոններն ակտիվորեն կիրառում են նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները և ՉԼՄ-ները: Որոշ փորձագետները պնդում են այսօրմի շարք խոշոր կազմակերպություններ այդ գործունեությունը վրանույնիսկ ավելի շատ գումար են ծախսում, քան բուն հետազոտությունները վրա¹⁸⁴:

Ուղեղային կենտրոնների ոլորտում արձանագրվող այլ միտումներից կարելի է առանձնացնել դրանց գործունեության վերազգայնացման և ցանցայնացման գործընթացը: Դեռևս նախորդ դարի երկրորդ կեսին սկսեցին ստեղծվել նոր տիպի, վերազգային և ցանցային բնույթի ուղեղային կենտրոններ: Այս գործընթացն առավել մեծ թափ ստացավ XXI դարում: Վերջին առանցքային օրինակներից կարելի է առանձնացնել «Քաղաքակրթությունների երկխոսություն» համաշխարհային հասարակական համաժողովը, որը 2016 թվականից գործում է որպես «Քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային վերլուծական ինստիտուտ: Հաստատության գլխավոր գրասենյակը գտնվում է Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում, իսկ մասնաճյուղերը՝ Վիեննայում (Ավստրիա) և Մոսկվայում (ՌԴ): Հատկանշական է, որ այս հաստատության ղեկավար խորհրդում ներկայացված են նաև մեր հայրենակիցները՝ ՀՀ նախկին վարչապետ (1996-1997), Մեծ Բրիտանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Սարգսյանը և հայտնի ֆինանսիստ, IDEA հիմնադրամի հիմնադիր Ռուբեն Վարդանյանը¹⁸⁵:

Միաժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների, համացանցի զարգացմանը զուգահեռ ոլորտում ի հայտ են գալիս ցանցային, վիրտուալ ձևաչափով գործող հետազոտական հաստատություններ:

¹⁸⁴ *Wiarda H.J., Skelley E.M.*, The crisis of American foreign policy: the effects of a divided America // Lanham: Rowman & Littlefield Publishers, USA, 2006, pp. 95-99.

¹⁸⁵ Տե՛ս DOC Research Institute official website // URL: <https://doc-research.org/en/>

Վերջիններս համացանցային տիրույթում հիմնում են հատուկ հարթակներ, որտեղ ակտիվորեն կազմակերպում և վարում են քննարկումներ, կենտրոնական գրասենյակում փորձագետներից կազմված մեծ աշխատակազմի պահպանման փոխարեն իրականացնում են փորձագիտական, տվյալների հավաքագրման, վերլուծական աշխատանքի աութսորսինգ, ինչը ենթադրում է ապակենտրոնացված, պայմանագրային հիմունքներով, ըստ անհրաժեշտության ներգրավվող, այդ թվում՝ այլ երկրներում գտնվող փորձագետներին, հետազոտական նախագծերի պատվիրակում: Այս ամենը նպաստում է ուղեղային կենտրոնների հիմնական աշխատակազմի թվաքանակի և գրասենյակի պահպանման ծախսերի կրճատմանը, միաժամանակ տեղի է ունենում փորձագետների ցանցայնացում, ձևավորվում են միջազգային ցանցեր: Ավելին, այլ երկրներում հետազոտական նախագծեր ներգրավելով տեղացի փորձագետներին՝ առավել դյուրին է լինում ապահովել համապարփակ արդյունքներ և առավել խորությամբ ընկալել որոշակի երկրում տեղի ունեցող ներքին գործընթացները:

Ընդհանուր առմամբ գոյություն ունի վիրտուալ ուղեղային կենտրոնների երկու հիմնական տեսակ: Առաջին խումբը պայմանականորեն կարելի է անվանել «ուղեղային կենտրոններ առանց պատերի», որն աշխատում է հետևյալ սկզբունքներով.

- արտաքին սուբյեկտներին պայմանագրային ձևով փոխանցվում են հետազոտական ու կառավարչական գործառնություններ՝ պահպանելով գլխամասային ոչ մեծ գրասենյակը:

- Ցանցը ներառում է առանձին ֆինանսավորվող կենտրոններ, որոնք ղեկավարվում են հստակ մշակված ընթացակարգով:
- Հետազոտություններ կատարելու համար մասնավոր գրադվածությունների հիմունքներով ներգրավվում են գիտնականներ:
- Հետազոտական ծրագրերի համակարգման նպատակով որոշ դեպքերում հրավիրվում են արտաքին փորձագետներ:
- Օժանդակություն է ցուցաբերվում հետազոտող գիտնականների և փորձագետների միջազգային ցանցերին:

Վիրտուալ ուղեղային կենտրոնների երկրորդ խումբը հետազոտական ու հաղորդակցային գործիքների շարքում առաջնահերթություն է տալիս օգտագործմանը: Նրանք ստեղծում են սեփական կայքէջեր, կրճատում են թղթային կրիչների քանակն ու վարչական անձնակազմի թիվը: Նրանց աշխատանքում կենտրոնական տեղ են գրավում ինտերակտիվ (համագործակցային) բանավեճերը¹⁸⁶: Ավելացնենք նաև, որ գիտնականների, վերլուծաբանների ցանցային միավորումն ու փոխգործակցությունը թույլ են տալիս որոշում կայացնող անձանց հնարավորինս սեղմ ժամկետում գտնել ցանկացած երկրի ներքաղաքական կամ տնտեսական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն: Նման ցանցերում ընդգրկվում են ինչպես ակադեմիական աշխարհի ներկայացուցիչներ, վերլուծաբաններ, այնպես էլ նախկին բարձրաստիճան պետական պաշտոնյաներ և քաղաքական գործիչներ:

¹⁸⁶ **Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքոյան Ա.**, Ուղեղային կենտրոնները արդի քաղաքական գործընթացներում // Եր., «Տնտեսագետ» հրատ. («Ամբերդ» մատենաշար N33), 2016, էջ 19-20:

Ներկայումս ձևավորվել են նման ընդարձակ ցանցեր (Արևմուտքի բազմաթիվ ուղեղային կենտրոններ): Այսպես, անվտանգության ուսումնասիրության բնագավառում աշխարհի լավագույն ուղեղային կենտրոններից մեկը՝ ամերիկյան Ռազմավարական և միջազգային ուսումնասիրության կենտրոնը, բացի շուրջ 220 հիմնական աշխատակից, աշխարհի տարբեր երկրներում ունի ավելի քան 350 ասոցացված փորձագետներից, հետազոտողներից և խորհրդականներից բաղկացած ցանց¹⁸⁷, իսկ ԱՄՆ-ի ամենախոշոր ուղեղային կենտրոնը՝ 1875 աշխատակից ունեցող ՌԷՆԴ կորպորացիայի փորձագիտական միջազգային ցանցի ծածկույթն ընդգրկում է 53 երկիր¹⁸⁸: Գոյություն ունենալով ուղեղային կենտրոններ, որոնք գրեթե ամբողջությամբ գործում են վիրտուալ տարածության ունում: Վերջին տեսակի վիրտուալ ուղեղային կենտրոնի լավագույն օրինակներից է դեռևս 1983 թ. Լոնդոնում հիմնադրված Տնտեսական քաղաքականության հետազոտության կենտրոնի ինստիտուտը¹⁸⁹: Այս հաստատության ընդհանուր ցանցի մեջ է համախմբել տարբեր երկրների ավելի քան 1000 տնտեսագետների, որոնց հետաքրքրության կենտրոնում են գտնվում եվրոպայի տնտեսության հետ կապված հարցերը: Ցանցում ընդգրկված մասնագետները ներկայացնում են իրենց երկրների տարբեր հաստատության կենտրոններ, այդ թվում՝ համալսարաններ, հետազոտական ինստիտուտներ, կենտրոնական բանկի հետազոտական ստորաբաժանումներ և միջազգային կառույցներ:

¹⁸⁷ Տե՛ս Center for Strategic and International Studies // URL: <https://www.csis.org/affiliated-advisers-and-experts-non-resident>
¹⁸⁸ Տե՛ս RAND Corporation // URL: <http://www.rand.org/about.html>
¹⁸⁹ Տե՛ս The Centre for Economic Policy Research // URL: <http://cepr.org/about-cepr>

Ինչպես նշում է Դ. Սթոունը, ուղեղային կենտրոնները միավորվում են «հանրային քաղաքականության գլոբալ ցանցերում», ինչը կարելի է բնութագրել որպես «քաղաքականության անդրազգային համայնքներ»: Բազմաթիվ խնդրահարույց ոլորտներում կառավարությունները և միջազգային կազմակերպությունները հնարավորություն չունեն միասնական մշակելու և/կամ իրականացնելու արդյունավետ քաղաքականություն: «Հանրային քաղաքականության գլոբալ ցանցերը»՝ կազմված ոչ կառավարական կազմակերպություններից, կառավարական գործակալություններից, գործարար շրջանակներից և միջազգային կազմակերպություններից, օգտակար են նման խնդրահարույց հարցերի շուրջ համաձայնության գալու համար: Քաղաքականության խնդիրների անդրազգային բնույթը հիմքեր է ստեղծում հետազոտական փոխգործակցության, տեղեկատվության փոխանակման և այլ գործունեության մեջ համագործակցության համար, ինչը միջազգային մակարդակով խթանում է գաղափարների փոխանցումը: Դրա օրինակն է Միջազգային գյուղատնտեսական հետազոտությունների խորհրդատվական խումբը (Consultive Group on International Agricultural Research)¹⁹⁰:

Ուղեղային կենտրոնների ցանցային աշխատանքի մեկ այլ ժամանակակից ձևաչափ է ինչպես երկրի ներսում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, գործունեության անդրազգայնացումը: Այդ առումով ևս աշխարհում առաջատար դիրքը պատկանում է ամերիկյան ուղեղային

¹⁹⁰ *Stone D.*, Think Tanks beyond nation-states // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004, p. 38.

կենտրոններին: Դրանցից ամենահայտնի օրինակն ամերիկյան Քարնեգի հիմնադրամն է (Carnegie Endowment for International Peace), որը տարբեր երկրներում հիմնել է ինքնավար աշխատակարգով գործող 5 կենտրոն: 2017 թ. դրությամբ Քարնեգի հիմնադրամի մասնաճյուղեր են գործում Մոսկվայում (1994 թ.-ից), Պեկինում (2005 թ.-ից), Բեյրութում (2006 թ.-ից), Բրյուսելում (2007 թ.-ից), Նյու Դելիում (2016 թ.-ից)¹⁹¹: Յետխորհրդային երկրներին կենտրոններից այդ առումով առանձնանում է Ռազմավարական հետազոտությունների ռուսաստանյան ինստիտուտը, որը նույնպես տիրապետում է թե՛ արտերկրում (Ֆրանսիա, Լեհաստան, Սերբիա, Մեքսիկո), թե՛ հատկապես երկրի ներսում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ընդարձակ ցանցի¹⁹²:

Վերոնշյալ միտումներին զուգահեռ միջփորձագիտական համագործակցության և տարբեր ներպետական և միջազգային բնույթի խնդիրների շուրջ համատեղ լուծումներ գտնելու նպատակով վերջին տասնամյակներին արձանագրվում է ուղեղային կենտրոնների ընկերակցությունների, տարատեսակ ֆորմալ և ոչ ֆորմալ միավորումների ստեղծման միտումը: Այսպես, դեռևս 1974 թ. Բրյուսելում ստեղծվել էր ուղեղային կենտրոնների համաեվրոպական ցանցը՝ Քաղաքական հետազոտությունների համաեվրոպական ընկերակցությունը (Trans-European Policy Studies Association - TEPSA): 1996 թ. ստեղծվեց Եվրա-Միջերկրածովյան հետազոտությունների կոմիտեն (Euro-Mediterranean Study Commission - EuroMeSCO): Վերջինիս ստեղծման նպատակն էր օժանդակել կազմակերպության անդամների միջև հետազոտությունների, տեղեկատվության

¹⁹¹ Տե՛ս Carnegie Endowment for International Peace // URL: <http://carnegieendowment.org/about/>
¹⁹² Տե՛ս Российский институт стратегических исследований // URL: <https://riss.ru/structure/>

փոխանակման և սոցիալական կապերի ամրապնդմանը: Ներկայումս կազմակերպության անդամներ են 106 ինստիտուտ, որոնք ներկայացնում են 32 երկիր: Մեկ այլ հիշարժան օրինակ է Եվրոպական քաղաքականության ինստիտուտների ցանցը (European Policy Institutes Network - EPIN), ինչպես նաև վերջինիս նախածեռնությունամբ ստեղծված Տնտեսական քաղաքականության ինստիտուտների Եվրոպական ցանցը (European Network of Economics Policy Research Institutes - ENEPRI), որի անդամներ են 25 ուղեղային կենտրոններ: Այս կազմակերպության նպատակներն են հետազոտական նախագծերի համակարգումը, ազգային տնտեսական քաղաքականության խնդիրների Եվրոպական չափումների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացումը: Սկսած 2010 թվականից՝ Բրյուսելում տեղակայված ԵՄ ուղեղային կենտրոնները, ինչպես նաև ԵՄ անդամ-երկրների այլ փորձագիտական-վերլուծական կազմակերպություններ մասնակցում են ամենամյա «Ուղեղային կենտրոնների երկխոսություն» միջոցառմանը (Think Tank Dialogue - TTD), որի ընթացքում ուղեղային կենտրոնների ներկայացուցիչները ներկայացնում են քաղաքական ոլորտի իրենց վերլուծական հոդվածներն ու երաշխավորությունները (recommendations) ԵՄ բարձրաստիճան ներկայացուցիչներին:

Այլ տարածաշրջաններում նույնպես ձևավորվում են նման ցանցեր: Որպես օրինակ կարող ենք նշել Ասիական զարգացման բանկի կողմից 2013 թ. ստեղծված Ասիական ուղեղային կենտրոնների ցանցը (ADB-Asian Think Tanks Network), որն ասիական ուղեղային կենտրոնների ոչ \$որմալ հարթակ է: Նշված ցանցն ընդգրկում է 26 երկիր ներկայացնող 47 ուղեղային կենտրոն, որի նպատակն է.

- բարձրացնել համակարգային և հատկապես զարգացման փորձի ոլորտում գիտելիքների

փոխանակումը կազմակերպության անդամ
նախնային կենտրոններին միջև,

- հզորացնել նախնային կենտրոններին
կարողությունները՝ գիտելիքներ կուտա-
կելու և իրենց ունիվերսալ
քաղաքականության հարցերով
խորհրդատվություն տրամադրելու
նպատակով,
- միջազգային հարթակում բարձրաձայնել
տարբեր տարածաշրջաններին տեսնական աճի
և զարգացման վերաբերյալ խնդիրները¹⁹³:

Այսպիսով, իրականացված վերլուծության
արդյունքում փորձենք ամփոփել վերջին
տասնամյակներին նախնային կենտրոններին
ունիվերսալ հայտնի աճի մեկնական միտումները.

1. չնայած միջարքեր կրկնելու մեկնային
կենտրոններին աճի ուժակի
դանդաղեցմանը՝ փորձագիտական-
վերլուծական կառույցների քանակական
աճի միտումն ամբողջ աշխարհում
շարունակվում է,
2. վերջին տարիներին առավել հաճախ են ի հայտ
գալիս են, ունիվերսալ և առավել ապես-
տեղային խնդիրներով մասնագիտացված
նախնային կենտրոններ,
3. տարածում են գտնում տարբեր ձևաչափերի
ազգային և անդրազգային մակարդակում
գործող ցանցային նախնային
կենտրոնները, միաժամանակ տարբեր
խնդիրներին լուծման շուրջ համատեղ
ջանքերի համակարգման նպատակով
ձևավորվում են նախնային կենտրոններին
միավորումներ, ընկերակցություններ,

¹⁹³ Տե՛ս ADB-Asian Think Tank Network // URL: <http://www.adb-asiathinktanks.org/aboutus>

4. շարունակվում է նախորդ դարի վերջերից սկսված փորձագիտական-վերլուծական հաստատությունների քաղաքականացման և գաղափարայնացման գործընթացը, ինչը բացասաբար է անդրադառնում ուղեղային կենտրոնների՝ որպես օբյեկտիվ տեղեկատվության աղբյուրի, հանրային հեղինակության վրա,
5. հանրության նորոշում կայացնողների վրա ազդեցություն մեծացման նպատակով նկատվում է ուղեղային կենտրոնների ինտելեկտուալ արտադրանքի հանրայնացման վրա ծախսվող գումարների կայուն աճի միտումը, ինչը որոշ փորձագետների պնդմամբ երբեմն գերազանցում է բուն հետազոտության վրա կատարվող ծախսերը:

Աղյուսակ 11. Ուղեղային կենտրոնների զարգացման փուլերը և հետազոտական ուղղությունները

| ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ | ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|--|
| Ուղեղային կենտրոնների առաջին սերունդ XX դարի սկիզբ - 1920-30-ական թթ. | Արտաքին քաղաքականություն |
| | Միջազգային հարաբերություններ |
| | Կառավարման հիմնահարցեր |
| Ուղեղային կենտրոնների երկրորդ սերունդ 1940-ական թթ. - 1950-ական թթ. | Ազգային անվտանգություն |
| | Ռազմական-ռազմավարական հետազոտություններ |
| | Պատերազմի և խաղաղության գլոբալ հիմնախնդիրներ |
| Ուղեղային կենտրոնների երրորդ սերունդ 1960-ական թթ. - 1970-ական թթ. | Ապագայի հիմնախնդիրներ և գլոբալ կանխատեսում |
| | Հանրային քաղաքականություն |
| | Մարքեթինգային պլանավորում |
| Ուղեղային կենտրոնների | Ազատշուկայի զարգացման խնդիրներ |

| | |
|--|---|
| Ջ ո Ր Ր Ո Ր Պ ս Ե Ր Ո Լ Ն Պ 1980-ական թթ. - 1990-ական թթ. I կ Ե ս | Ո Լ Ր Բ ան ի ս տի կ ա |
| | Տ ար ա ծ ա շ ը ջ ան այ ի ն գ ար գ ա գ ո ւ մ ն ե ր |
| Ո Լ Պ Ե Պ այ ի ն կ Ե ն տր ո ն ն ե ր ի հ ի ն գ Ե Ր Ո Ր Պ ս Ե Ր Ո Լ Ն Պ 1990-ական թթ. II կ Ե ս - XXI դ ար (մ ի ն չ և մ ե ր օ Ր Ե Ր Ձ) | Վ ի Ր տ ո ւ ա լ հ աս ար ա կ ո ւ թ յ ան ց ան ց այ ի ն տ Ե խ ն ո լ ո գ ի ան ե ր ո ւ ս կ զ ք ո ւ ն ք ն ե ր |
| | Յ ա Պ ո Ր Պ ա կ ց այ ի ն ո ւ տ Ե Պ Ե կ ա տ վ ա կ ան տ Ե խ ն ո լ ո գ ի ան ե ր ի կ ի Ր ա ռ ո ւ մ ը գ ար գ ա գ մ ան (կ Ր թ ո ւ թ յ ո ւ ն , ա ռ ո Ղ ջ ա պ ա հ ո ւ թ յ ո ւ ն , գ յ ո ւ ղ ա տ ն տ Ե ս ո ւ թ յ ո ւ ն , շ ը ջ ա կ ա մ ի ջ ա վ այ Ր) հ ար ց Ե Ր ի լ ո ւ ծ մ ան հ ամ ար |

Ամփոփելով կարող ենք նշել, որ փորձագիտական-վերլուծական կառույցների պատմության և Էվոլյուցիայի ուսումնասիրության արդյունքում, ըստ հետազոտական և մասնագիտացման ուղղությունների, ուղեղային կենտրոնները կարելի է բաժանել հինգ պայմանական սերունդների (տե՛ս աղյուսակ 11): Վերջին տասնամյակներին Էականորեն մեծանում է ուղեղային կենտրոնների ինտելեկտուալ արտադրանքի, այդ թվում՝ համառոտ վերլուծականների, քաղաքականության երաշխավորությունների նկատմամբ պահանջարկը: Այս երևույթը բացատրվում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, անվտանգության, միջազգային հարաբերությունների և այլ ոլորտներում ի հայտ եկող խնդիրների աճող բարդությամբ, տեղեկատվական աննախադեպ մեծ հոսքերում անհրաժեշտ տեղեկատվության գտման, ոչ ստանդարտ լուծումների մշակման անհրաժեշտությամբ, պետական և ոչ պետական դերակատարների քանակական աճով և այլ գործընթացներով: Նման պայմանները քաղաքական վերնախավի համար մեծացնում են ժամանակին

մշակված, արհեստավարժորեն վերլուծված և համակողմանի տեղեկատվության նկատմամբ պահանջարկը:

Ավելին, վերջին տարիներին արձանագրվող միջազգային անվտանգության ճարտարապետության խորքային վերափոխումները, նոր բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորումը, աշխարհաքաղաքական գործընթացներում անորոշության և անկանխատեսելիության մակարդակի բարձրացումը և այդ համատեքստում ինտելեկտուալ հակամարտության, ժողովուրդների սրտերի և մտքերի համար մղվող պայքարի թեժացումը պահանջում են առավել համակարգային մոտեցումներ մշակել կրիտիկական ենթակառուցվածքների բնականոն գործառնության և զարգացման ապահովման համար: Այս համատեքստում բազմաթիվ երկրներում առաջատար ուղեղային կենտրոնների կողմից մշակվող ինտելեկտուալ արտադրանքը շարունակում է առանցքային դերակատարում ունենալ իրենց քաղաքական վերնախավի կողմից ներքին և արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում:

**Գ Լ ՈՒ ԽՊՈՒՆՈՒՆ ԴԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ**

**3.1. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ
ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂԵՂԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՆԵՐՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ**

XXI դարի հարափոփոխ գործընթացներում առավել լուծյուն են ստանում այն պետությունները, համակարգերն ու կառույցները, որոնք ընդունակ են ժամանակին արձագանքելու փոփոխություններին, արագ հարմարվելու նոր մարտահրավերներին և յուրացնելու միջազգային հարաբերություններին՝ նոր «խաղի կանոնները»՝ հստակեցնելով սեփական նպատակները, հաշվարկելով ու ճիշտ օգտագործելով իրենց տնտեսական, քաղաքական, ռազմական, մարդկային, տեղեկատվական և ինտելեկտուալ ռեսուրսները:

Նման պայմաններում պետության անվտանգության և բնականոն զարգացման ապահովումն առաջ է քաշում արտաքին և ներքին բազմաբևույթ գործընթացների մշտադիտարկման, հնարավոր սպառնալիքների բացահայտման, գնահատման և համապատասխան լուծումների որոնման խնդիրը, որը պահանջում է նորանոր գաղափարներ և առաջարկություններ, որոշումների նախապատրաստման և ընդունման արդյունավետ մեխանիզմների ներդրում: Այդ առումով արտերկրի առաջավոր փորձը ցույց է տալիս, որ նման մեխանիզմների արդյունավետությունը կախված է հանրային քաղաքականության տարբեր սուբյեկտների ներգրավվածության աստիճանից և հենվում է փորձագիտական մշակումների, այդ թվում՝ տեղեկատվության հավաքման, մշակման,

վերլուծության և կանխատեսման գործուն համակարգի ստեղծման վրա:

Պետք է նշել, որ քաղաքական վերնախավի հետ ինտելեկտուալների (գիտնականներ, փորձագետներ) փոխհարաբերությունների խնդիրները կարևորվել են բոլոր ժամանակներում և բազմակողմանիորեն ուսումնասիրվել Յիև Յունաստանի մտածողների աշխատանքներից սկսած մինչև մեր օրերը: Դեռևս Պլատոնն իր «Պետություն» երկխոսության մեջ փիլիսոփաներին էր առաջնային դեր հատկացնում «իդեալական պետության» կառավարման գործում:

Յայրենական պատմագիտությունից ևս հայտնի է հայոց իշխանական մարմինների հետ ինտելեկտուալների փոխգործակցության մասին: Այսպես, անտիկ հեղինակների վկայությամբ Տիգրան Մեծի արքունիքում ապրում և ստեղծագործում էին հոլյն երևելի փիլիսոփաներ և մտածողներ, որոնցից էր հայտնի հռետոր, փիլիսոփա և քաղաքական գործիչ Մետրոդորոս Սկեպսիացին, որը հայոց արքայի անմիջական խորհրդականներից մեկն էր¹⁹⁴:

Պետական կառավարման գոյության ամբողջ պատմության ընթացքում անհատական խորհրդատվության մեթոդը լայնորեն և ամենուր կիրառություն է ունեցել: Այս կապակցությամբ կարելի է հիշատակել հնագույն քաղաքակրթություններից և վերջացրած ժամանակակից շրջանով այս կամ այն պետության առաջին դեմքերի, պետական, քաղաքական գործիչների պալատներում տարբեր խորհրդատուների, խորհրդականների և օգնականների ծառայություններից օգտվելու բազմաթիվ դեպքեր: Սակայն, ինչպես ցույց տվեց ուղեղային կենտրոնների ծագման ու զարգացման

¹⁹⁴ Միրոնյան Կ., Արևշատյան Ս., Յայոց փիլիսոփայության պատմություն // Եր., «Լուսաբաց», 2007, էջ 53:

ընթացքի վերլուծությունը, ինտելեկտուալ սպասարկման համար կոչված անմիջական թիմի ստեղծման անհրաժեշտությունը գիտակցումը (team-building idea) տեղի ունեցավ միայն նորագույն պատմության շրջանում, երբ մարդկությունը թևակոխեց արդյունաբերական հեղափոխությունների և տեխնոլոգիական հեղաշրջումների դարաշրջան, ինչը հատկապես սուր դրսևորվեց Առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում, երբ մի շարք առաջատար տերությունների քաղաքական վերնախավի ներկայացուցիչները գիտակցեցին, որ իրենց շրջապատող իրականությունը, քաղաքական և սոցիալ-տնտեսական փոխգործակցության գործընթացը բարդանում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական մակարդակներում, և միայն սեփական բյուրոկրատական ապարատի ջանքերով մտածողության նեղության և գործելաոճում դրսևորվող պահպանողականության պատճառով հնարավոր չէ ընդունել ճիշտ որոշումներ: Արդեն նշվել է, որ խնդրի կարևորությունը գիտակցմանն առաջիններից մեկը եկան ԱՄՆ-ի պետական և քաղաքական գործիչները, ովքեր, անհատական խորհրդատուների կիրառման մեթոդների և պրակտիկայի ավանդական մեթոդներին գուգահեռ, սկսեցին ստեղծել թիմեր, որոնք բաղկացած էին արհեստավարժ փորձագետներից: Ուշագրավ է, որ հենց ԱՄՆ-ի նախագահներ Վ. Ուիլսոնի, Յ. Յոկերի, նահանգապետներ Ռ. Լաֆոլետ-Ավագի և Է. Սմիթի կողմից իրենց աշխատանքում տարբեր փորձագետ-ինտելեկտուալների ներգրավման փորձն է հետագայում հաշվի առնվել \$. Ռուզվելտի խորհրդականների և գործընկերների կողմից «ուղեղային տրեստի» ձևավորման ընթացքում¹⁹⁵:

¹⁹⁵ *Коноплич Т.К.*, Роль «мозгового треста» Ф.Д. Рузвельта в становлении административно-политического консалтинга в США

Հատուկ գիտելիքներով օժտված մարդկանց քաղաքականության և բարեփոխումների իրականացման գործում ներգրավելու փորձեր կատարվել են նաև բազմաթիվ այլ երկրներում: Մեզ վերաբերող, սակայն, ինչպես հետագա գործընթացները ցույց տվեցին, ոչ այդքան հաջողությամբ պսակված օրինակներից կարելի է հիշատակել ԽՍՀՄ-ի վերջին տարիներին Մ. Գորբաչովի վարչակարգի օրինակը, որը փորձում էր պետական վերափոխումների իրականացման գործում հենվել ալադեմիական շրջանակների՝ ինստիտուտների և գիտաշխատողների վրա: Վերջիններից շատերը ներգրավված էին նոր պետական քաղաքականության ձևավորման գործում: Նրանցից էին ԽՍՀՄ ալադեմիկոս Ս. Շատալինը, ինչպես նաև Տ. Չասլավսկայան, Ա. Ադանբեկյանը, Եվ. Պրիմակովը, Լ. Աբալկինը: Նրանք բարձր պաշտոններ զբաղեցրին նոր պետական կառույցներում: Ալադեմիական շրջանակների որոշ տնտեսագետներ փորձեցին մշակել այլընտրանքային ծրագրեր: Դրանցից էր, օրինակ, Ս. Շատալինի և Գ. Յավլինսկու «500 օրերի» ծրագիրը¹⁹⁶:

Ակնհայտ է, որ ներկայումս քաղաքական գործընթացի բարդացումը հանգեցնում է նրան, որ քաղաքական գործիչներն ու պետական պաշտոնյաներն իրենց գործունեության ընթացքում ստիպված են լինում հաշվի առնել երևույթների ու տարբեր գործընթացների վրա ներազդող նորանոր գործոններ, բխվել անսխառ պարագոյամբ աճող տեղեկատվական հոսքերին և ընդունել ավելի շատ որոշումներ, որոնք հաճախ հիմնված են լինում ոչ թե միայն փորձառության,

// Дис. на соиск. уч. ст. канд. ист. наук., 07.00.03 – всеобщая история, Волгоград, 2000, с. 39.

¹⁹⁶ Зайцев Д.Г., Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук., 23.00.02 – Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии. М., 2009, с. 130.

այլև քարդ տնտեսամաթեմատիկական մոդելների արդյունքների վրա: Ներկա քաղաքական գործընթացն անչափ դինամիկ է, կրկնվող իրավիճակները՝ առավել հազվադեպ, իսկ կրկնվելու պարագայում երաշխիք չկա, որ ապահովվելու են միևնույն արդյունքները, քանի որ հանրային քաղաքականության միջավայրն անընդհատ փոփոխվում է: Նման գործընթացները հանգեցնում են նրան, որ քաղաքական գործիչներն ու պետական պաշտոնյաները չեն կարողանում հենվել բացառապես սեփական փորձի վրա և ստիպված են գտնել համապատասխան լուծումներ, որոնք կբարձրացնեն իրենց աշխատանքի և ընդունվող որոշումների արդյունավետությանը: Այդ գործում նրանք առավել հաճախ են դիմում քաղաքական գործընթացի վերաբերյալ հատուկ գիտելիքներ ունեցող անձանց, որոնք գիտական մեթոդների կիրառմամբ հնարավորություն ունեն իրականացնելու իրավիճակի վերլուծության, անհրաժեշտության դեպքում քաղաքական կանխատեսում և նպաստելու քաղաքական որոշումների կայացմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Ինչպես ճշմարտացի նշում է ռուսաստանցի հետազոտող Ս. Տոլրոնոկը, պետական կառավարման կատարելագործման համաշխարհային փորձը հաստատում է, որ պետության տեղեկատվական վերլուծական ապահովումն անհրաժեշտ է դիտարկել որպես բոլոր մակարդակներում գործունեության արդյունավետության բարձրացման ռազմավարական ուղղություններից մեկը՝ պետական, ճյուղային, տարածաշրջանային, միջազգային և այլն: Հաշվի առնելով ասվածը՝ արհեստավարժ վերլուծաբանի անձը վեր է ածվում քաղաքական որոշումների մշակման և ընդունման գործընթացի անքակտելի և առանցքային տարրերից մեկի: Աշխարհի զարգացած

Երկրներին մեծ մասում պետական իշխանության քարձրագույն մակարդակում պետության ղեկավարի վարչակարգում կարելի է հայտնաբերել վերլուծաբանների և խորհրդատուների ոչ մեծ, բայց ազդեցիկ խումբ, որոնց երաշխավորությունները վերաբերում են ընդունվող հանրային որոշումների քաղաքական, տնտեսական և սոցիալական հետևանքներին: Նրանք, որպես կանոն, գործադիր իշխանության շրջանակներում համակարգում են իրենց գործընկերների աշխատանքը, որտեղ նրանց համար հատկացված են հաստիքներ ինչպես տարբեր ղեկավարների անմիջական աշխատակազմում, այնպես էլ մասնագիտացված վերլուծական բաժիններում¹⁹⁷:

Վերոնշյալի լավագույն օրինակներից է Ֆրանսիայի «նախարարական կաբինետներին» համակարգը, որը խորհրդականների ինստիտուտ է, երբ ինտելեկտուալները և վերլուծաբաններն անմիջականորեն աշխատում են պետական իշխանության մարմիններում, այդ թվում՝ քարձր մակարդակի պետական պաշտոնյաների հետ սերտ շփումներում: Ավելին, ընդդիմադիր կուսակցությունների կողմից գույքահեռաբար ստեղծվում են «սովերային կաբինետներ», որտեղ ներառվում են վերլուծաբաններ և ինտելեկտուալներ: Վերջիններս բավականին ազդեցիկ են ինչպես քաղաքական օրակարգի սահմանման, այնպես էլ քաղաքականության իրականացման գործընթացում¹⁹⁸:

Եթե անհատական մակարդակով գիտելիք կրողներին իշխանական համակարգ ներգրավելու մեթոդները համեմատաբար պարզ են և բավականաչափ

¹⁹⁷ *Туронок С.Г.*, Политический анализ и прогнозирование: учебник для бакалавриата и магистратуры // Изд-во Юрайт, М., 2016, с. 70-71.

¹⁹⁸ *Freschi Catherine, Gaffney John.*, French think tanks in comparative perspective // *Stone D., Denham A.* (eds.). Think Tank Traditions: Policy Research and Politics of Ideas, Manchester and NY, Manchester Press, 2004, pp. 110-111.

ուսումնասիրված, ապա վերջին տասնամյակներում հատկապես արևմտյան քաղաքագիտական դիսկուրսում առավել արդիական է դարձել պետություն-փորձագիտական հանրություն ինստիտուցիոնալ մակարդակով փոխգործակցության խնդիրը: Այդ առումով բազմաթիվ երկրներում քաղաքական վերնախավը և մասնավորապես ազգային անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմինները հաջողություններ ունենում են ինտելեկտուալ արտադրանք թողարկող փորձագիտական-վերլուծական հաստատություններին կամ այլ խոսքով ասած՝ ուղեղային կենտրոններին: Յատկանշական է, որ տարբեր երկրներում ուղեղային կենտրոններին հայտ գալը և զարգացումը պայմանավորված են եղել, առաջին հերթին, պետության նպատակաուղղված քաղաքականությունով, այսինքն՝ երկրի ինտելեկտուալ ներուժի համախմբման, հասարակական, քաղաքական, տնտեսական և անվտանգության հիմնախնդիրներին լուծման գործում ու որոշումներին կայացման գործընթացում այդ ներուժի կիրառման անհրաժեշտության գիտակցմամբ:

Նշենք, որ ուղեղային կենտրոններին ինտելեկտուալ ներուժը կարող է օգտագործվել տարբեր ձևաչափերով: Պետական կառավարման ոլորտում ուղեղային կենտրոններին ինտելեկտուալ ներուժի ներգրավման հետաքրքիր և հաջողված փորձ ունի ԱՄՆ-ը: Այսպես, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Արտաքին հարաբերություններին խորհուրդը նախաձեռնեց մասշտաբային նախագիծ, որը կոչվում էր «Պատերազմի և խաղաղության խնդիրներին ուսումնասիրություններ»: Այս նախագծի շրջանակներում հաստատությունը ԱՄՆ-ի

պէ տքարտուղարութեան համար պատրաստեց լայն
թեմատիկայի ընդգրկուն մով 682 հոլշագիր՝
Գերմանիայի օկուպացիայից մինչև Միավորված
ազգերի կազմակերպութեան ստեղծումը¹⁹⁹: Իր հերթին
Բրուքինգսի ինստիտուտը տարբեր տարիներին մեծ
ներդրում է ունեցել ԱՄՆ-ի կառավարութեան
բյուջե տային գործընթացի, պետական
քաղաքացիական ծառայութեան և սոցիալական
ապահովման համակարգերի ստեղծման, հայտնի
«Մարշալի պլանի» մշակման, Երկրորդ
համաշխարհային պատերազմի ժամանակ գների
հսկողութեան սահմանման, «վտարյալ»
պետութեան ներքին պատժելու կամ դրանց վրա
ներագրելու նպատակով պատժամիջոցների
կիրառման գաղափարների, Ազգային անվտանգութեան
խորհրդի և այլ արտաքին քաղաքական և պաշտպանական
կառույցների կազմակերպման, աղքատ երկրների
սոցիալ-տնտեսական զարգացման, հետխորհրդային
Ռուսաստանի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականութեան և
այլ նազմավարութեան ներքին մշակման մեջ²⁰⁰: ԱՄՆ-ի
ամենախոշոր ուղեղային կենտրոնը՝ ՌԷՆԴ
կորպորացիան, հիմք դրեց խորհրդային Միութեան
վերաբերյալ առաջատար վերլուծական, գիտական
հետազոտութեան ներքին: ՌԷՆԴ-ի շրջանակներում
հետազոտութեան ներքին իրականացվում է ՄՅՄ-ի
նազմական նազմավարութեան զարգացման ոլորտի,
վերջինիս դոկտրինների և պաշտպանական
համակարգերի վերաբերյալ: ԱՄՆ-ի նազմաօդային
ուժերի պատվերով, վերլուծութեան ներքին
իրականացվում են տնտեսութեան, արտաքին քաղաքակ-
նութեան և գիտատեխնիկական զարգացման ՄՅՄ-ի

¹⁹⁹ **Richard N. Haass**, Think Tanks and U.S. Foreign Policy: A Policy-Maker's Perspective // "The Role of Think Tanks in U.S. Foreign Policy". U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of the U.S. Department of State), Vol. 7, N 3, 2002, p. 6. URL: http://www.usembassy-mexico.gov/bbf/ej/1102_RoleThinkTanks.pdf

²⁰⁰ **Strobe Talbott**, The Brookings Institution: How a Think Tank works // "The Role of Think Tanks in U.S. Foreign Policy". U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of the U.S. Department of State), Vol. 7, N 3, 2002, p. 19. URL: http://www.usembassy-mexico.gov/bbf/ej/1102_RoleThinkTanks.pdf

ծրագրերի, ինչպես նաև ԽՍՀՄ-ին վերաբերող այլ խնդիրների շուրջ ²⁰¹: Ավելին, ՆԱՏՕ-ի ընդարձակման այլ ընտրանքային ուղիների մշակումները ևս կատարվում էին ՌԷՆԴ կորպորացիայում և այլ ուղեղային կենտրոններում ²⁰²:

Վերոնշյալի համատեքստում պետք է նշել, որ ժամանակակից ուղեղային կենտրոններն իրականացնում են հետազոտական աշխատանք հանրայնորեն նշանակալի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, պատրաստում են վերլուծականներ, երաշխավորություններ (recommendations), անցկացնում են կառավարական մարմինների որոշումների նախագծերի, ծրագրերի փորձաքննություն և մատուցում են խորհրդատվական ծառայություններ: Որպես հանրային քաղաքականության լիորտի հանգուցային կետեր՝ ուղեղային կենտրոններն ապահովում են ակադեմիական հանրություն-պետական իշխանության փոխգործակցությունը՝ իրականացնելով ոչ միայն և գուցե ոչ այնքան նոր գաղափարների ստեղծման, որքան ակադեմիական հաստատություններում ստեղծված գաղափարների գեներացման և գործնական հարթությունն ստեղծափոխման գործառնությունը: Ինչպես նշում է հետազոտող Ա. Լիվշինը, ԱՄՆ-ում ուղեղային կենտրոնները կողմնորոշված են աջակցելու որոշում կայացնողներին: Ուղեղային կենտրոնների առաջնահերթ խնդիրը ոչ թե նոր գիտելիքի ստեղծումն է, այլ տարբեր լիորտներից արդեն առկա գիտելիքների առավելագույնս համակարգային կիրառումը: Ոչ հազվադեպ ուղեղային կենտրոնները հասարակությանն են ներկայացնում

²⁰¹ **Michael D. Rich**, RAND: How Think Tanks Interact with the Military // “The Role of Think Tanks in U.S. Foreign Policy”. U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of the U.S. Department of State), Vol. 7, N 3, 2002, p. 22. URL: http://www.usembassy-mexico.gov/bbf/ej/1102_RoleThinkTanks.pdf
²⁰² **Michael D. Rich**, opt. cit., p. 24.

որոշակի խնդիրներն ընդգրկելու համար պետք է հարցնել իրենց գեկոլոյցները և անվճար տարածում բազմաթիվ շահագրգիռ անձանց ու կազմակերպչներին: Այսպիսով, ուղեղային կենտրոնները կարծիքներին և գնահատականներին ձևավորման կենտրոններ են ինչպես վերնախավի, այնպես էլ հանրության տարբեր խմբերի համար ²⁰³:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ում տարածված է այն կարծիքը, որ նման կենտրոններն իրականացնում են մի շարք առանցքային գործառնություններ, որոնք նույն արդյունավետությամբ չեն կարող իրականացնել պետության բյուրոկրատական ապարատի փորձագիտական-վերլուծական մասը: Մասնավորապես նրանք առավել անկաշկանդ են և համարձակ իրենց գնահատականներում և դեպի ապագա հայացք նետելու փորձերի մեջ՝ տեսնելու նոր հեռանկարներ և առաջարկելու ոչ ստանդարտ ու նորարարական լուծումներ: Վերջիններս փորձագիտական հանրության ներսում առավել արդյունավետ են հիմնում ցանցային փոխգործակցությունը, կազմակերպում և գործառնական հիմաստով բոլոր օղակներին աջակցում քաղաքականության հարցերի վերաբերյալ խորհրդատվություններ՝ տեղեկատվության հավաքում-գաղափարների գեներացում-առաջարկներին մշակում ²⁰⁴:

Միևնույն ժամանակ պետական մարմինները երբեմն պատվիրում են հետազոտություններ, որի դեպքում ուղեղային կենտրոնները մշտադիտարկման աշխատակարգով ուսումնասիրում են, թե որքանով է ընդունված քաղաքական որոշումը հասել իր նպատակին, ինչպես է այն ընկալվում քաղաքացիների կողմից, որ սխալներն է անհրաժեշտ

²⁰³ *Лившин А.*, Региональный обзор: США // «Атлас аналитических центров: русистика за рубежом», Rethinking Russia, М., 2016, с 43.
²⁰⁴ *Лившин А.*, ук. соч., с. 42.

ուղղել: Ուղեղային կենտրոնները քաղաքական գործընթացի այլ մասնակիցների հետ հավասարապես գնահատում են պետական որոշումների արդյունքները, սակայն, ի տարբերություն այլ քաղաքական դերակատարների, հենվում են փորձագիտական ռեսուրսի և անկախ ինստիտուտների կարգավիճակի վրա²⁰⁵:

Պակաս կարևոր հանգամանք է նաև այն, որ երկխոսության մեջ ներգրավելով պետական իշխանության ներկայացուցիչներին և առանձին իշխանական կառույցներին՝ ուղեղային կենտրոնները կարող են աջակցել իշխանական մարմինների հանրայնացման աստիճանի բարձրացմանը: Բազմաթիվ քաղաքական գործիչներ սկսում են գիտակցել, որ ուղեղային կենտրոնների հետ համագործակցությանը նդունված որոշումներն օժտված են առավել մեծ լեգիտիմությամբ: Յենց ուղեղային կենտրոններն են ի վիճակի կամուրջ և հաղորդակցություն ստեղծելու պետության և հասարակության միջև, ոչ ժողովրդահաճո իշխանական որոշման դեպքում իրենց վրավերցնել դրամշակման և առաջմղման պատասխանատվությունը: Միևնույն ժամանակ փորձագիտական կառույցները, արտաքին և ներքին միջավայրի դինամիկ և որակական փոփոխություններին համապատասխան, կարող են իշխանական վերնախավին հասցնել և ներկայացնել քաղաքացիների համարժեք պահանջներն ու սպասումները²⁰⁶: Լեգիտիմացման հարցը ոչ միայն ուղեղային կենտրոնի կողմից իշխանական որոշման պարզ աջակցությունն է, այլ նաև ուղեղային կենտրոնի հնարավորությամբ ոչ ժողովրդահաճո

²⁰⁵ *Зайцев Д.Г.*, ук. соч., с. 31.

²⁰⁶ *Иванов Д.Ю.*, Формирование политической аналитики негосударственных аналитических центров в современной России // Дис. на соиск. уч. ст. канд. пол. н., специальность 23.00.02 – Политические институты, процессы и технологии, Санкт-Петербург, 2013, с. 25.

որոշման պատասխանատվությունն իր վրա վերցնելը և քաղաքական ու պետական գործիչների համար «անվտանգություն քարձիկի» դերում հանդես գալը: Այս ամենն էլ ավելի մեծ կարևորություն է ստանում մասնավորապես ԱՄՆ-ում, որտեղ ուղեղային կենտրոններն իրավասու են հանդես գալ նաև օրենսդրական նախաձեռնություններ, ներկայացնել օրենքի նախագիծ կամ հանդես գալ գործող օրենքում փոփոխություն իրականացնելու առաջարկություններ:

Ինչպես նշում է ԱՄՆ-ի պետդեպարտամենտի քաղաքական պլանավորման բաժնի ղեկավար Ռիչարդ Չասսը, ուղեղային կենտրոնները լրացնում են մի կողմից՝ ակադեմիական աշխարհի, մյուս կողմից՝ իշխանության ոլորտի միջև կրիտիկական վակուումը: Չամալսարաններում գիտահետազոտական աշխատանքը հաճախ ընթանում է տեսական և մեթոդական քննարկումներում, որոնք միայն հեռավոր կապ ունեն իրական քաղաքական խնդիրների հետ: Կառավարությունում էլ պաշտոնատար անձինք, խորասուզված լինելով առօրյա քաղաքականության որոշակի պահանջների մեջ, բավականին զբաղված են, որպեսզի մեկ քայլ նահանջեն և վերանայեն ամերիկյան քաղաքականության ընդհանուր հետագիծը: Այդ պատճառով ուղեղային կենտրոնների առանցքային գործառույթն է օգնել լրացնելու այդ բացը գաղափարների և գործողությունների աշխարհների միջև²⁰⁷: Ավելին, ամերիկացի փորձագետ է. Ջոնսոնի կարծիքով ուղեղային կենտրոնների արտադրանքի հիմնական սպառողը հենց իշխանական կառույցներն են: Նրա խոսքով ուղեղային կենտրոնները.

²⁰⁷ *Richard N. Haass*, opt. cit., p. 5.

- քաղաքական որոշումների ընդունման ընթացքում ընդլայնում են քաղաքական այլ ընտրանքների շրջանակը,
- սովորաբար բավականին նորարարական են հիմնախնդիրների վերլուծության և լուծման մոտեցումներում, ինչը որոշում կայացնող անձանց թույլ է տալիս նոր դիրքերից մտածել առկա հիմնախնդիրների մասին,
- ոչ ժողովրդահաճո որոշումների ընդունման պարագայում թույլ է տալիս տեղափոխել պատասխանատվությունը քաղաքական առաջնորդներից երաշխավորությունների միջոցով նման որոշումներ առաջարկած ուղեղային կենտրոնների վրա,
- հնարավորություն են ընձեռում իշխանության ներկայացուցիչներին բարձրացնելու իրենց որակավորումը (սեմինարներ, հատուկ դասընթացներ, խորհրդաժողովներ և այլն),
- մշակում են օրենքների նախագծեր, ինչն առավել կարևոր է այն ժամանակ, երբ բյուջե տային պակասուրդը թույլ չի տալիս ուղղակիորեն ներգրավել բարձրակարգ իրավաբաններին,
- յուրահատուկ հնարավորություն են տալիս պետական կառավարման ոլորտ ներգրավելու համապատասխան հմտություններ ունեցող պատրաստի մասնագետներ,
- հիանալի հնարավորություն են տալիս իշխանական համակարգի պաշտոնաթող քաղաքական գործիչներին իրենց գործունեությունը շարունակելու հանրային քաղաքականության ձևավորման գործընթացի վրա ազդեցություն ունենալով²⁰⁸:

²⁰⁸ *Erik C. Johnson*, How Think Tanks Improve Public Policy // “Economic Reform Today”, N 3, 1996, p. 36.

Վերոնշյալին կարելի է ավելացնել, որ
նուղեղային կենտրոնների ներկայացուցիչները և
ընդհանրապես փորձագիտական հանրությունը,
պարբերաբար շփվելով և համագործակցելով
արտերկրի գործընկերների հետ, այդ թվում՝
մասնակցելով միջազգային գիտաժողովների,
խորհրդաժողովների և աշխատաժողովների,
նուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող է
նպաստել սեփական երկրի դիվանագիտությանը, ազ-
գային շահերի պաշտպանությանն և առաջմղմանը՝
հաճախաբար ճրագներով այնպիսի միջպետական կամ
միջազգային նշանակության խնդիրներ, որոնք
տվյալ երկրի պաշտոնական դիվանագիտությանը
տարբեր պատճառներով չի կարող կամ չի ցանկանում
պաշտոնապես հնչեցնել: Այս երևույթն արևմտյան
քաղաքագիտական գրականության մեջ ընդունված է
անվանել «Track II Diplomacy»: Յետևաբար՝ ժամանակակից
աշխարհում ոչ պետական դերակատարների
ընդգրկումն արտաքին քաղաքական գործու-
նեցության մեջ կարող է եականորեն բարձրացնել
երկրի արտաքին քաղաքականության
արդյունավետությունը: Այսպես, ամերիկացի որոշ
հետազոտողների կարծիքով Չինաստանի և ԱՄՆ-ի
միջև դիվանագիտական աշխատանքի մեծ մասն
իրականացվում է հենց երկու երկրների նուղեղային
կենտրոնների գիտնականների ակադեմիական
փոխանակման գործընթացում²⁰⁹:

Որպես միջազգային դերակատարման
օրինակներ՝ կարելի է որոշ մանրամասներ
հիշատակել ամերիկյան նուղեղային կենտրոնների
գործունեության պատմությունից: Այսպես, 1980-
ական թվականների կեսերից սկսած՝ քարտեզի
հիմնադրամը Վաշինգտոնում կազմակերպել է մի

²⁰⁹ *Dumbaugh K., Martin M.F.*, Understanding China's Political System // Congressional Research Service. CRS Report for Congress R41007, 2009. URL: <http://www.crs.gov>

շարք հանդիպումներ Յարավաճի կյանքի համարային
 տոնածառի (ՅԱՅ) գործադիր և օրենսդիր իշխանության
 ներկայացուցիչների, քաղաքական գործիչների,
 հոգևոր դասի, գործարար, գիտական շրջանակների,
 արհմիությունների և ազատագրական շարժման
 արտաքսված առաջատար ներկայացուցիչների միջև:
 Ավելի քան ութ տարի կազմակերպվող այս
 հանդիպումներն ու ժողովներն օգնեցին կողմերին
 երկխոսություն սկսել և ապահովել պայմանավոր-
 վածություն ՅԱՅ ապագայի վերաբերյալ, որն
 անցնում էր քաղաքական ցավոտ բարեփոխումների
 միջոց: Ռազմավարական և միջազգային
 ուսումնասիրությունների կենտրոնը ժամանակին
 նույնպես կազմակերպել էր նախագծեր, որոնք
 միտված էին նախկին Յարավաճի համար
 միջէթնիկական հարաբերությունների
 բարելավմանը, հստակելու կրոնական և աշխարհիկ
 շրջանակների միջև պառակտման հաղթահարմանը,
 ինչպես նաև հոլանդական երկխոսության
 աջակցությանը²¹⁰: Իսկ 1994 թ. ԱՄՆ-ի և ՅՆԱՀ-ի
 Կորեայի միջև դիմակայության սրացման շրջանում
 Քարնեգի հիմնադրամը կարողացավ կազմակերպել
 նախամերիկյան կառավարական պատվիրակության,
 իսկ հետագայում նաև ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջ.
 Քարտերի այցը Փենսյան, ինչը հիմք ծառայեց
 Շրջանակային համաձայնագրի կնքման համար՝
 որպես առաջին լուրջ քայլ երկկողմանի
 հարաբերությունների և հյուսիսկորեական
 միջուկային հիմնախնդրի կարգավորման
 ուղղությամբ:

Ակնհայտ է, որ ներկայումս ԱՄՆ-ը ուղեղային
 կենտրոնների ամենազարգացած համակարգն
 ունեցող երկիրն է, իսկ այդ ոլորտի վերելքային
 զարգացումը մեծապես փոխկապակցված է երկրորդ

²¹⁰ *Richard N. Haass*, opt. cit., p. 8.

աշխարհամարտից հետո ի հայտ եկած իրողություններին, երբ սառը պատերազմի տարիներին խորհրդային Միությունը հետ տոտալ մրցավազքում հաջողության հասնելու նպատակով պետությունը նշանակալիորեն խրախուսում և պայմաններ էր ստեղծում նման հաստատությունների հիմնադրման համար: Ինչպես նշում է վերլուծաբան Գ. Չարությունյանը, Միացյալ Նահանգների առաջնությունն այս բնագավառում հուշում է, որ ուղեղային կենտրոնների արդյունավետ գործառնությունը հնարավոր է միայն այն երկրներում և հասարակություններում, որտեղ առկա են հետևյալ նախապայմանները.

- իշխանությունները, կապիտալը և ընդհանրապես հասարակությունը ոչ միայն կարևորում են մտավոր ռեսուրսների գործունը երկրի պետական, ռազմաքաղաքական և տնտեսական համակարգում, այլ և ապահովում են անհրաժեշտ պայմաններն այդ ոլորտի զարգացման համար,
- գոյություն ունի համապատասխանակադեմիական և բուհական գիտական միջավայր, որը սնում է ուղեղային կենտրոններն անհրաժեշտ կարգերով և հայեցակարգային մոտեցումներով. իզուր չէ, որ ուղեղային կենտրոններն անվանում են ինտերֆեյս (հաղորդակցություն) ակադեմիական գիտության և կառավարության միջև,
- պետական համակարգն ունակ է ուղեղային կենտրոններից ստացված արդյունքները ներդնելու որոշումներ ընդունելու մեխանիզմում և գործնական հարթությունում,
- արդյունավետ մեխանիզմների առկայություն, որոնք ապահովում են դրական հետադարձ կապն

ն Լ ղ Ե ղ ա յ ի ն կ Ե ն տր ո ն ն Ե թ ի և ք ի զ ն Ե ս -
կ առ ո Լ յ ց ն Ե թ ի մ ի ջ և ²¹¹:

Մ Ե թ հ ա մ ո զ մ ա մ ք ո Լ ղ Ե ղ ա յ ի ն կ Ե ն տր ո ն ն Ե թ ի
զ ա ր զ ա ց ա ծ հ ա մ ա կ ա ր զ ի առ կ ա յ ո Լ թ յ ո Լ ն ն Է Լ Է ա պ Ե ս
ն ա պ ս տ ո Լ մ Է Ա Մ Ն -ի ո թ ո շ ա կ ի գ Ե թ ա կ ա յ ո Լ թ յ ա ն ը
Ժ ա մ ա ն ա կ ա կ ի ց մ ի ջ ա զ զ ա յ ի ն
հ ա ր ա ք Ե թ ո Լ թ յ ո Լ ն ն Ե թ ո Լ մ , ա յ դ թ վ ո Լ մ ` հ Ե ն ց « փ ա փ ո Լ կ
ո Լ Ժ ի » տ ի թ ա պ Ե տ մ ա ն տ Ե ս ա կ Ե տ ի ց , ք ա ն ի ո թ XXI դ ա թ ո Լ մ
առ ա ն ց ա թ ա ք ի ն ք ա ղ ա ք ա կ ա ն ո Լ թ յ ա ն մ Ե ջ « փ ա փ ո Լ կ
ո Լ Ժ ի » ք ա ղ ա դ թ ի չ ի ա ն հ ն ա թ Է Լ ի թ ա ժ Ե ք ո թ Ե ն
հ ա վ ա կ ն Ե Լ գ Ե թ տ Ե թ ո Լ թ յ ա ն կ ա ր զ ա վ ի ճ ա կ ի ն :

Պ Ե տ ո Լ թ յ ո Լ ն -փ ո թ ձ ա գ ի տ ա կ ա ն հ ա ն թ ո Լ թ յ ո Լ ն
առ ն չ ո Լ թ յ ո Լ ն ն Ե թ ը ք ն ն ա թ կ Ե Լ ի ս ա ն հ թ ա ժ Ե շ տ Է
ա ն դ թ ա դ առ ն ա Լ ն ա ն Չ Ժ Գ - ո Լ մ վ Ե թ ջ ի ն տ ա թ ի ն Ե թ ի ն ա յ ս
ո Լ ո թ տ ո Լ մ ա թ ձ ա ն ա գ թ վ ո ղ գ ո թ ծ ը ն թ ա ց ն Ե թ ի ն , ո թ տ Ե ղ
ո Լ ղ Ե ղ ա յ ի ն կ Ե ն տր ո ն ն Ե թ ի կ ա թ ն ո թ ո Լ թ յ ո Լ ն ը
գ ի տ ա կ ց վ ո Լ մ և խ թ ա խ ո Լ ս վ ո Լ մ Է ա մ Ե ն ա ք ա թ թ
ք ա ղ ա ք ա կ ա ն մ ա կ ա թ դ ա կ ո վ : Մ ա ս ն ա վ ո թ ա պ Ե ս վ Ե թ ջ ի ն
տ ա թ ի ն Ե թ ի ն Չ ի ն ա ս տ ա ն ո Լ մ ը ն դ ո Լ ն վ Ե Լ Ե ն ք ա զ մ ա թ ի վ
կ ա ն ո ն ա կ ա ր զ Ե թ ` կ ո չ վ ա ծ ա թ ա գ ա ց ն Ե Լ ո Լ
փ ո թ ձ ա գ Ե տ ն Ե թ ի մ ո Լ տ ք ը ք ա ղ ա ք ա կ ա ն պ ա շ տ ո ն ն Ե թ :
Ա յ ս պ Ե ս , Ա զ զ ա յ ի ն կ ո Լ ս ա կ ց ո Լ թ յ ա ն և
կ առ ա վ ա թ ո Լ թ յ ա ն առ ա ջ ն ո թ դ ո Լ թ յ ա ն ա մ թ ա պ ն դ մ ա ն
գ ո թ ծ ո ղ ո Լ թ յ ո Լ ն ն Ե թ ի ծ թ ա գ ի թ 2014–2018 (Action Plan Outline on Building
National Party and Government Leadership 2014–2018) պ ա շ տ ո ն ա կ ա ն
փ ա ս տ ա թ ո Լ ղ թ ն ը ն դ գ ծ ո Լ մ Է պ Ե տ ա կ ա ն ձ Ե ո ն ա թ կ ո Լ թ -
յ ո Լ ն ն Ե թ ի ց , հ ա մ ա Լ ս ա թ ա ն ն Ե թ ի ց , հ Ե տ ա զ ո տ ա կ ա ն
ի ն ս տ ի տ ո Լ տ ն Ե թ ի ց և հ ա մ ա ն մ ա ն ա յ Լ
հ ա ս տ ա տ ո Լ թ յ ո Լ ն ն Ե թ ի ց մ ա ս ն ա գ Ե տ ն Ե թ ի ` պ Ե տ ա կ ա ն
կ առ ա վ ա թ մ ա ն ո Լ ո թ տ ա շ խ ա տ ա ն ք ի ը ն դ ո Լ ն մ ա ն
ա ն հ թ ա ժ Ե շ տ ո Լ թ յ ո Լ ն ը : 2015 թ . փ Ե տ թ վ ա թ ի ն հ ա տ ո Լ կ
շ թ ջ ա ք Ե թ ա կ ա ն ո վ Չ Ժ Գ -ի ն ա խ ա գ ա հ Ս ի Ծ ի ն փ ի ն ը (Xi Jinping)
կ ո չ Է ա թ Ե Լ զ ա ր զ ա ց ն Ե Լ ո Լ գ Լ ո ք ա Լ ա զ դ Ե ց ո Լ թ յ ա ն

²¹¹ **Յ ա թ ո Լ թ յ ո Լ ն յ ա ն Գ.**, «Ո Լ ղ Ե ղ ա յ ի ն կ Ե ն տր ո ն ն Ե թ ը » և ա զ զ ա յ ի ն
ա ն վ տ ա ն գ ո Լ թ յ ո Լ ն ը // «21-ր դ Դ Ա Ր », թ ի վ 1(35), 2011, Է ջ 7:

«նոր տեսակի» չինական ուղեղային կենտրոնները և խթանելու ինտելեկտուալ հանրության ներուժը քաղաքականության խորհրդատվության բնագավառում²¹²: Նրա խոսքով ուղեղային կենտրոններն ազգային «փափուկ ուժի» կարևոր բաղադրիչն են: Մինչ այդ՝ 2014 թ. հոկտեմբերին, Ընդհանուր բարեփոխումների առաջատար խմբի 6-րդ հանդիպմանը ՉԺՅ-ի նախագահը նշել էր, որ երկրի ուղեղային կենտրոնները պետք է օժտված լինեն «չինական առանձնահատկություններով», առաջ մղեն Չինաստանի արդիականացումը և կառավարման համակարգը և ամրապնդեն Չինաստանի «փափուկ ուժը»²¹³: 2014 թ. փետրվարին ՉԺՅ-ի Կրթության նախարարությունը շրջանառության մեջ է դրել «Չինական առանձնահատկություններով օժտված նոր ուղեղային կենտրոնների ստեղծման առաջմղման ծրագիր» (The New Think Tanks Construction with Chinese Characteristics Promotion Plan) անվանումով փաստաթուղթը, որն ուղարկվել էր բոլոր ենթակա հաստատություններին: Ըստ այս փաստաթղթի՝ ապագայում ուղեղային կենտրոնների հիմնական խնդիրն է լինելու աջակցել կառավարությանը: Մասնավորապես.

- հետազոտական հաստատությունները հիմնադրվելու են երկրի զարգացմանը ծառայելու նպատակով,
- պետք է կենտրոնանան առաջնահերթ պահանջների վրա (տնտեսական, քաղաքական և մշակույթի զարգացում, բնապահպանություն, կուսակցական աշխույժություն, արտաքին հարաբերություններ և այլն),
- ներգրավել են բարձրակարգ ուսուցիչներ,

²¹² *Zhibo Qio*, From Academia to Politics: When scholars rule China // China Brief Volume: 15, Issue: 23, (07.12.2015), URL: <https://jamestown.org/program/from-academia-to-politics-when-scholars-rule-china/>

²¹³ Building Think Tanks with Chinese Characteristics: Current Debates and Changing Trends // China Brief Volume: 14, Issue: 24, (19/12/2014), pp. 14-16. URL: <https://jamestown.org/program/building-think-tanks-with-chinese-characteristics-current-debates-and-changing-trends/>

- կրթեն և վերապատրաստեն տաղանդավոր մարդկանց,
- տարբեր ուղիներով տարածեն հետազոտության արդյունքները (տպագիր և էլեկտրոնային մամուլ),
- բարեփոխեն իրենց վարչակազմը և թարմացնեն կազմակերպական կառուցվածքը ²¹⁴:

Ակնհայտ է, որ չինական ղեկավարության քաղաքական ազդավորության և ուրջ հաջողությունները փաստում են ուղեղային կենտրոններին կողմից իրականացվող նշանակալից նախապատրաստական ինտելեկտուալ աշխատանքի մասին ²¹⁵: Վերջինիս մասին է վկայում նաև Չինաստանի առաջնորդների վերջին տարիների էլոնջների ուսումնասիրությունը: Այսպես, Չինաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի 18-րդ գումարման 3-րդ պլենումի 2-րդ պլենար նստաշրջանում ՉԺՀ-ի նախագահ Սի Ծինփինը հայտարարել էր, որ պետական կառավարման համակարգի և կառավարչական հնարավորությունների արդիականացումը հանգում է նրան, որ հարմարվելով մեր ժամանակների փոփոխություններին՝ անհրաժեշտ է ոչ միայն բարեփոխել պրակտիկայի զարգացման պահանջներին չհամապատասխանող ինստիտուտները, մեխանիզմները, օրենքները և այլ նորմատիվ-իրավական ակտերը, այլ նաև անդադար մտցնել նոր ինստիտուտներ և մեխանիզմներ, նոր օրենքներ և նորմատիվ-իրավական ակտեր՝ դարձնելով բոլոր ինստիտուտներն առավել գիտական ու կատարյալ և տեղափոխելով կուսակցական, պետական ու

²¹⁴ **Աթոյան Վ., Մովսիսյան Շ.**, Չինաստանի ուղեղային կենտրոնները // Եր., «Տնտեսագետ» հրատ. («Ամբերդ» մատենաշար N29), 2016, էջ 18:

²¹⁵ **Комиссина И.Н.**, Научные и аналитические центры Китая // Справ., М., РИСИ, 2012, с. 42.

հասարակական գործերը ինստիտուցիոնալացման, կանոնակարգման և ընթացակարգայնացման հոլես²¹⁶:

Վերոնշյալ ի համատեքստում ավելացնենք, որ 2009 թ. դեկտեմբերին Կոպենհագենում կլիմայական փոփոխություններին նվիրված ՄԱԿ համաժողովում չինական պաշտոնական պատվիրակության նշանակալի մասը կազմում էին ուղեղային կենտրոններին ներկայացուցիչները: Այլ ազգային պատվիրակություններում ոչ պետական հատվածը ներկայացնող փորձագետներ ևս կային, սակայն չինական պատվիրակության կազմում նրանք ամենաշատն էին²¹⁷:

Տարբեր ոլորտներում պետություններին փորձագիտական հանրություն փոխգործակցության ակտիվացում նկատվում է նաև հարևան Թուրքիայում: Ինչպես նշում է հետազոտող Ա. Սիմավորյանը, 1990-ական թթ. սկզբին թուրքական քաղաքական ընտրանին հետաքրքրություն ցուցաբերեց Արևմուտքում իրենց գոյությունն արդարացրած վերլուծական կենտրոններին նկատմամբ, ինչպիսիք էին ՌԷՆԴ կորպորացիան ու Բրուքինգսի ինստիտուտը: Ամերիկյան փորձի ներբերման նպատակով թուրքական մի քանի պատվիրակություններ համատեղ քննարկումներ անցկացրին վերը հիշատակված հաստատություններին ղեկավարների հետ, ծանոթացան նրանց աշխատանքային գործունեությանը: Օգալը, որն արդեն Թուրքիայի նախագահն էր և մեծ լիազորություններ և լիբերացումն ու քաղաքացիական հասարակության ձևավորումը համարում էր անհրաժեշտություն, աջակցություն ցուցաբերեց պետական ռազմավարական հետազոտություններին կենտրոններին (ՌՅԿ)

²¹⁶ *Си Цзиньпин*, О Государственном управлении // Изд-во литературы на иностранных языках, Пекин, 2014, с. 129-130.

²¹⁷ *Комиссина И.Н.*, ук. соч., с. 37.

ստեղծման գործում²¹⁸: Եթե մինչև ԽՍՀՄ-ի փլուզումն արտաքին քաղաքականության «գաղափարներին շուկայում» կային հատուկ եկտ ՌՅԿ-ներ, որոնք զբաղվում էին այս ոլորտի խնդիրների հայեցակարգային և ռազմավարական տեսլականների վերամշակմամբ և որոշում կայացնողների վրան ենեին թույլ ազդեցություն, ապա այսօր, գործնական քաղաքականության իրականացման նպատակով, պետական մարմիններն ու այլ քաղաքական դերակատարներ սկսել են օգտվել նրանց մշակումներից և վերլուծություններից հատկապես արտաքին քաղաքականության և անվտանգության ոլորտում: Մյուս կողմից՝ ՌՅԿ-ները մասամբ իրենց ներդրումն են ունենում Թուրքիայի դիվանագիտական ջանքերի զարգացման և ամրապնդման գործում²¹⁹:

Ամփոփելով վերոնշյալ երկրներում ինստիտուցիոնալ մակարդակով պետություն-փորձագիտական հանրության փոխգործակցության ոլորտում գործընթացների համառոտ ներկայացումը՝ տեղին է ավելացնել, որ XXI դարում ուղեղային կենտրոնների ինստիտուտի կայացումը և ազգային անվտանգության համար պատասխանատու մարմինների հետ ուղեղային կենտրոնների փոխադարձ գործունե կապը, բազմաթիվ հարցերում համատեղ փոխգործակցության մակարդակը պետք է դիտարկել որպես ցանկացած պետության ազգային անվտանգության ապահովման արդյունավետության կարևոր ցուցիչ²²⁰:

²¹⁸ **Մելիքյան Ջ., Բարսեղյան Ա., Սիմավորյան Ա.**, Տարածաշրջանի հետազոտական կենտրոնները (Վրաստան, Ադրբեյջան, Թուրքիա) // Եր., «Նորավանք» ԳԿՅ, 2015, էջ 157:

²¹⁹ Նույն տեղում, էջ 148:

²²⁰ **Աթոյան Վ.**, Ազգային անվտանգության հիմնախնդիրներ (դասախոսություններ) // Եր., «Տեսնեսագետ», 2014, էջ 59, ինչպես նաև՝ **Атоян В.**, «Мозговые центры» в системе национальной безопасности // «Вестник АГЭУ», N 4 (40), 2015, с. 135.

Նման հատուկ մասնագիտացված հետազոտական հաստատությունների գործունեությունն իրար դյուևնավետությունն ապացուցել է բազմաթիվ երկրների պետական կառավարման համակարգի գործունեության և վավարկման առումով: Մասնավորապես ուղեղային կենտրոնների կողմից իրականացվող հետազոտությունների արդյունքները և տարբեր ձևաչափերով թողարկվող ինտելեկտուալ արտադրանքը, այդ թվում՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումները, իրադարձությունների զարգացման սցենարների մշակումները, երաշխավորությունները, քաղաքական վերնախավի որոշումների ինտելեկտուալ սպասարկումը մեծապես նպաստում են քաղաքական վերնախավի կողմից կայացվող որոշումների արդյունավետության բարձրացմանը և հնարավոր ռիսկերի նվազեցմանը:

Գաղտնիք չէ, որ սցենարների կազմումը բավականին հայտնի մեթոդ է: Վերջինս մշակվել է ՌԷՆԴ կորպորացիայի կողմից՝ որպես ռազմավարական հիմնախնդիրների ոլորտում ուսումնասիրությունների օժանդակ միջոց: Այս մեթոդի կիրառման պարագայում փորձ է կատարվում կազմել ու ապագա իրադարձությունների արհեստական սցենար, որը հիմք է ծառայում դեռևս չծագած քաղաքական խնդիրների դիտարկման համար: Սցենարների մշակման կողմնակիցները պնդում են, որ իրենց մեթոդն օգնում է երևակայությանը, որ դա հնարք է, որը ստիպում է վերացականի փոխարեն հաշվի առնել իրատեսական հայեցակարգեր, ստեղծել հնարավորություններ, որոնք սովորական վերլուծություն պարագայում կարող էին չծագել, միաժամանակ թույլ է տալիս մշակել և դիտարկել ապագա այլընտրանքները, ինչպես նաև

կենտրոնացնել նաև շահարձակումները և շահարձակումների փոխկապվածության վրա: Պարտադիր չէ, որ սցենարները ճշգրիտ լինեն կամ գուշակ են ապագան ²²¹:

Ինչ վերաբերում է կանխատեսումներին, ապա այստեղ չափազանց հետաքրքրական փորձի օրինակ կարող է ծառայել Սինգապուրը, որն ազգային անվտանգության ոլորտում իրականացվող կանխատեսումներին առավել բարձր հավանակա- նություն և ճշգրտություն ստանալու նպատակով ներդաշնակել է փորձագիտական աշխատանքը և ժամանակակից տեխնոլոգիաները: Այսպես, 2004 թ. Սինգապուրի կառավարությունը երկրի ազգային անվտանգության համակարգի ամրապնդման նպատակով հիմնել է «Risk Assessment and Horizon Scanning» (*RAHS*) ռիսկերի գնահատման և կանխատեսման ծրագիրը, որը թույլ է տալիս փորձագետներին առավել արդյունավետ իրականացնել իրենց աշխատանքը: Նշենք, որ «RAHS»-ը ժամանակակից տեխնոլոգիա է, որը հիմնված է «կոգնիտիվ մոդելի» վրա և նախատեսված է մարդու մտածելու գործընթացի նմանակման համար: Վերջինս թույլ է տալիս ամբարել տվյալների հսկայական ծավալներ և նախատեսված է գործնականորեն բոլոր ոլորտներինց ստացվող տեղեկատվության (մեծ տվյալների -big data) ռազմավարական վերլուծության համար: Այդ տեխնոլոգիայի միջոցով ստեղծվում են մոդելներ, որոնք կարող են կիրառվել հնարավոր իրադարձությունների և երկրի վրա բազմաթիվ ազդեցությունների կանխատեսման համար: Օգտագործելով տեղեկատվական այդ բազան, որը կոչվում է գաղափարների տվյալների բազա, *RAHS*-ը նձեռած հնարավորությունների օգտագործմամբ վերլուծաբանները պատրաստում են տեղեկանքներ, թե ինչպես կարող են զարգանալ որոշակի


²²¹ *Диксон П.*, Фабрики мысли // М.: ООО «Издательство АСТ», 2004, с. 95.

ի ր ա դ ա ր ձ ու թ յ ու ն ն ե ր ը , և ի ն չ պ հ ս ի ն կ ա ր ո ղ Ե ն
 Լ ի ն Ե Լ վ տ ա ն գ ն ե ր ն ու ս պ առ ն ա Լ ի ք ն ե ր ը : Պ Ե տ ք Ե ն շ Ե Լ ,
 ո ր ա յ ս տ Ե ղ խ ո ս ք ը ո չ ա յ ն ք ա ն ու ղ ղ ա կ ի ո ր Ե ն ա պ ա գ ա յ ի
 կ ա ն խ ա տ Ե ս մ ա ն , ո ր ք ա ն ա պ ա գ ա յ ի գ ա ր գ ա գ մ ա ն մ ի ք ա ն ի
 հ ա վ ա ն ա կ ա ն տ ա ր ք Ե ր ա կ ն ե ր ի (ս ց Ե ն ա ր ն ե ր ի)
 ն կ ա ր ա գ ր ու թ յ ա ն մ ա ս ի ն Ե , ի ն չ ը ց ու յ ց Ե տ ա Լ ի ս
 կ առ ա վ ա ր ու թ յ ա ն ը , թ Ե հ ա տ կ ա պ Ե ս ո ր
 ու ղ ղ ու թ յ ու ն ն ե ր ո վ պ Ե տ ք Ե առ ա վ Ե Լ ա պ Ե ս ու ղ ղ Ե Լ
 ջ ա ն ք Ե ր ը ²²²: Մ Ե ր կ ա ր ծ ի ք ո վ ա յ ս դ Ե պ ք ու մ
 Ս ի ն գ ա պ ու ր ի կ առ ա վ ա ր ու թ յ ա ն մ ո տ Ե ց ու մ ն
 ա ս ո ց ա ց վ ու մ Ե Ջ . Ս ք ո թ Ա ր մ ս թ ր ո ն գ ի (*J. Scott Armstrong*)
 ա պ ա գ ա յ ի պ Լ ա ն ա վ ո ր մ ա ն և ց ա ն կ ա Լ ի ա պ ա գ ա յ ի
 կ Ե ր տ մ ա ն դ ր ու յ թ ի ն , ը ս տ ո ր ի՝ կ ա ն խ ա տ Ե ս ու մ ն
 առ ա վ Ե Լ ա պ Ե ս վ Ե ր ա ք Ե ր ու մ Ե ա յ ն հ ա ր ց ի ն , թ Ե
 ի ն չ պ հ ս ի ն կ ա ր ո՛ ղ Ե Լ ի ն Ե Լ ա պ ա գ ա ն , ա յ ն ժ ա մ ա ն ա կ ,
 Ե ր ք պ Լ ա ն ա վ ո ր ու մ ը ձ և ա կ Ե ր պ ու մ Ե , թ Ե ի ն չ պ հ ս ի ն
 պ Ե՛ տ ք Ե Լ ի ն ի ա պ ա գ ա ն ²²³: Ա յ ս հ ա մ ա տ Ե ք ս տ ու մ
 հ ա տ կ ա ն շ ա կ ա ն Ե ն ա ն Կ ու ն ց ի և Օ՛ Դ ո ն Ե Լ ի (*Kuntz&O'Donnell*)
 կ ա ր ծ ի ք ը , ը ս տ ո ր ո ն ց՝ պ Լ ա ն ա վ ո ր ու մ ը ն ա խ ո ր ո ք
 ը ն դ ու ն վ ա ծ ո ր ո շ ու մ ն Ե ա յ ն մ ա ս ի ն , թ Ե ի ն չ Ե պ Ե տ ք
 ա ն Ե Լ , Ե ր ք ա ն Ե Լ , և ո վ Ե կ ա տ ա ր Ե Լ ու : Պ Լ ա ն ա վ ո ր ու մ ը
 կ ա մ ու ր ջ Ե ա ն ց կ ա ց ն ու մ մ Ե ր ն Ե ր կ ա և ց ա ն կ ա Լ ի
 վ ի ճ ա կ ն ե ր ի մ ի ջ և ²²⁴:

Պ Ե տ ու թ յ ու ն -փ ո ր ձ ա գ ի տ ա կ ա ն հ ա ն ր ու թ յ ու ն
 փ ո խ գ ո ր ծ ա կ ց ու թ յ ա ն հ ա ր ց Ե ր ը ք ն ն ա ր կ Ե Լ ի ս
 ա ն հ ր ա ժ Ե շ տ Ե ն ք գ ա ն ու մ ն շ Ե Լ , ո ր ու ղ Ե ղ ա յ ի ն
 կ Ե ն տ ր ո ն ն ե ր ն ա կ տ ի վ ո ր Ե ն մ ա ս ն ա կ ց ու մ Ե ն
 ք ա ղ ա ք ա կ ա ն գ ո ր ծ ը ն թ ա ց ի ն , հ ա տ կ ա պ Ե ս ք ա ղ ա ք ա կ ա ն
 ո ր ա կ ա ր գ ի ձ և ա վ ո ր մ ա ն և ք ա ղ ա ք ա կ ա ն
 ա յ Լ ը ն տ ր ա ն ք ն ե ր ի ձ և ա կ Ե ր պ մ ա ն փ ու Լ ու մ : Յ ա ն ր ա յ ի ն
 Ե ր կ խ ո ս ու թ յ ա ն շ ր ջ ա ն ա կ ն ե ր ու մ ու ղ Ե ղ ա յ ի ն
 կ Ե ն տ ր ո ն ը հ ն ա ր ա վ ո ր ու թ յ ու ն ու ն ի ո չ մ ի ա յ ն

²²² RAHS Programme office // URL: <http://www.rahs.gov.sg/public/www/home.aspx>
²²³ *Armstrong J.S.*, Long-Range Forecasting: From Crystal Ball to Computer // Wiley-Interscience, N.J., 1985, p. 6.
²²⁴ *Кунц Г., О'Доннел С.*, Управление: Системный и ситуационный анализ управленческих функций // т. 1, М., Прогресс, 1981, с. 147.

Ներկայացնելու արդիական հանրային հիմնախնդիր, որը չի եղել օրակարգում, այլ նաև ներկայացնելու այդ նոր հիմնախնդրի և արդեն օրակարգում առկա հիմնախնդրների լուծման այլընտրանքային տարբերակներ ²²⁵: Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք գտնում ներկայացնել, թե քաղաքական որոշումների ընդունման շղթայի հատկապես որ փուլում է առավել արդյունավետ փորձագիտական հանրության (իրեմսուղեղային կենտրոնների) ներգրավումը: Այսպես, գծապատկեր N 3-ում ներկայացված է քաղաքական որոշումների ընդունման դասական պարբերաշրջանը: Համաձայնելով ռուսաստանցի հայտնի փորձագետ Ա. Սուևգուրովի կարծիքի հետ՝ պետք է նշել, որ փորձագիտական հանրությունն առավելապես պետք է ներգրավված լինի 2-րդ՝ լուծման որոնման փուլում, չնայած և՛ 1-ին՝ խնդրի վերհանում, և՛ 6-րդ՝ հսկողություն և մշտադիտարկում փուլերում նույնպես փորձագիտական հանրության դերակատարությունը պետք է բարձր լինի ²²⁶:



²²⁵ **Зайцев Д.Г.**, Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук., 23.00.02 – Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии. М., 2009, с. 31.

²²⁶ **Сунгуров А.**, Как возникают политические инновации: «фабрики мысли» и другие институты-медиаторы // Политическая энциклопедия, М., 2015, с. 78.

Գ ծ ապատկ եր 3.Քաղաքական որոշումներին ընդունման պարբերաչափը

Պետական կառավարման համակարգի կողմից փորձագիտական ներուժի օգտագործման մեկ այլ կարևոր ձևաչափ է «պտտվող դռներ» (revolving doors) քաղաքականությանը: Այս համակարգն առավել ապես բնորոշ է ԱՄՆ-ին, որտեղ ևլայնորեն կիրառվում է: «Պտտվող դռներ» քաղաքականության էությունն այն է, որ պետական կառավարման ոլորտի բարձրաստիճաններ կայացուցիչները պաշտոնը թողնելուց հետո աշխատանքի են անցնում ճանաչված ուղեղային կենտրոններում, իսկ վերջիններս փորձագետները տեղափոխվում են պետական կառավարման ոլորտ: Մասնավորապես ԱՄՆ-ում բարձրաստիճան պետական պաշտոնյաներն աշխատանքի են անցնում ուղեղային կենտրոններ փոխափակված պայմաններով. ուղեղային կենտրոնը համալրում է իր ռեսուրսները նոր կապերով, բարձրացնում է ճանաչումն ու հեղինակությունը քաղաքական վերնախավում, իսկ ուղեղային կենտրոնում աշխատանքի անցած քաղաքական գործիչը ստանում է կարգավիճակ և շարունակում է աշխատանքը փորձագիտական դաշտում՝ պահպանելով քաղաքական գործընթացների վրա որոշակիորեն ներազդելու հնարավորությունը:

Վերոնշյալ օրինակներն ԱՄՆ-ի հանրային քաղաքականության մեջ բազմաթիվ են: Այսպես, Ս. Թեյլբոտը (Strobe Talbott), ով ԱՄՆ-ի նախագահ Բ. Քլինթոնի վարչակարգում պետքարտուղարի տեղակալն էր, 2002 թ.-ից զբաղեցնում է Բրուքինգսի ինստիտուտի նախագահի պաշտոնը: Ռազմավարական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոնը 2000 թ.-ից ղեկավարում է Ջոն Հեմրին (John Hamre), ով մինչ այդ զբաղեցնում էր ԱՄՆ-ի պաշտպանության նախարարի

տեղակալի պաշտոնը: Այս հաստատության աշխատանքներում խորհրդականի կարգավիճակով ներգրավված են նաև այնպիսի հայտնի անհատներ, ինչպիսիք են Յ. Քիսինջերը, ով 1973-1977 թթ. ԱՄՆ-ի պետքարտուղարն էր: Չ. Բժեգիսկին, ով 1977-1981 թթ. ազգային անվտանգության հարցերով ԱՄՆ-ի նախագահի խորհրդականն էր, նույնպես երկար տարիներ ներգրավված է եղել այս հաստատության աշխատանքներում: Ակադեմիական շրջանակներից պետական կառավարման ոլորտում բարձր պաշտոնի անցնելու լավագույն օրինակներից են նաև քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր, Սթենֆորդի համալսարանի ռեկտորի նախկին տեղակալ Կոնդոլիզա Ռայսը: Վերջինս եղել է ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշ Կրտսերի ազգային անվտանգության հարցերով խորհրդականը (2001-2005 թթ.), ապա ստանձնել ԱՄՆ-ի պետքարտուղարի պաշտոնը (2005-2009 թթ.):

Վերջին նշանակալի օրինակներից կարող ենք հիշատակել ԱՄՆ-ի Ազգային հետախուզության նախկին տնօրեն (2010-2017 թթ.) Ջեյմս Էյտերին (James Clapper)²²⁷ և Ազգային անվտանգության քարտուղար (Homeland Security Secretary) (2013-2017 թթ.) Ջեյ Ջոնսոնին (Jeh Johnson)²²⁸, ովքեր 2017 թ. որպես ոչ ռեզիդենտ ավագ գիտաշխատողներ համալրեցին Յարվարդի համալսարանի Քենեդի դպրոցի Գիտության և միջազգային հարաբերությունների Բել Ֆերիկենտրոնի (Harvard Kennedy School' s Belfer Center for Science and International Affairs) աշխատակազմը, ինչպես նաև ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար (2013-2017 թթ.) Ջոն Էրիին (John Kerry), ով հրավիրված պատվավոր փորձագետի կարգավիճակով աշխատանքի անցավ Քարնեգի հիմնադրամում: Վերջինիս գործունեության ոլորտներն են լինելու հակամարտությունների

²²⁷ Տե՛ս The Hill // URL: <http://thehill.com/policy/cybersecurity/321860-former-dni-clapper-joins-harvard>
²²⁸ Տե՛ս The Belfer Center for Science and International Affairs official website: “Former Homeland Security Secretary Jeh Johnson Named 2017 Senior Fellow with the Homeland Security Project at Harvard Kennedy School’s Belfer Center” // URL: <https://goo.gl/Nt52oG>

կարգավորումը և բնապահպանական մարտահրավերները²²⁹: Յատկանշական օրինակներից են նաև Քարնեգի հիմնադրամում 2013-2017 թթ. Սպիտակ տան աշխատակազմի ղեկավար Դենիս ՄաքԴոնոյի (Denis McDonough) և ԱՄՆ-ի փոխնախագահի ազգային անվտանգություն հարցերով նախկին խորհրդական Ջ. Սալիվանի (Jake Sullivan)՝ որպես ավագ գիտաշխատողներ նշանակումները²³⁰:

Վերջին տարիներին «պտտվող դռներին» սկզբունքն աստիճանաբար տարածում է գտնում նաև այլ երկրներում: Դրանց թվում առավել աչքի է ընկնում Չինաստանը: Այսպես, առաջին անգամ այս համակարգը նպատակային կիրառվեց 2009 թ. մարտին ստեղծված Միջազգային տնտեսական փոխանակումների չինական կենտրոնի աշխատակազմի համալրման ժամանակ: Երկրորդ կենտրոնի խորհրդի նախագահ ընտրվեց ՉԺՅ-ի պետխորհրդի նախկին փոխվարչապետ Չեն Պեյանը (Zeng Peiyan), իսկ տեղակալ՝ ՉԿԿ-ի կենտրոնական կոմիտեի նախագահ քաղաքականության և սոցիալական կենտրոնի նախկին փոխտնօրեն Չժեն Սինլին (Zheng Xinli): Փորձագիտական, ակադեմիական շրջանակներին ներկայացուցիչներին պետական պաշտոններին նշանակման ակտիվ գործընթացը ևս առկա է: Այսպես, 2014 թ. ղեկտեմբերին դոկտոր Քու Սինգը (Qu Xings) նշանակվել է Բեյզինգի Թագավորությունում ՉԺՅ-ի արտակարգ և լիազոր դեսպան, 2015 թ. հունվարին Գիտություն և տեխնոլոգիայի համալսարանի (University of Science and Technology) նախագահ Յու Ջիանգու (Hou Jianguo) նշանակվել է Գիտություն և տեխնոլոգիայի նախարարի տեղակալ, Օդակնացություն և տիեզերագնացություն Բեյհանգի համալսարանի (Beihang University) նախագահ Յու Ջինփենգը (Huai Jinpeng)՝ Արդյունաբերության և տեղեկատվական

²²⁹ Տե՛ս The Washington Times // URL: <http://www.washingtontimes.com/news/2017/mar/1/john-kerry-joins-carnegie-think-tank/>
²³⁰ Տե՛ս Carnegie Endowment Welcomes New Scholars, (March 27, 2017) // URL: <http://carnegieendowment.org>

տեխնոլոգիաների նախարարի տեղակալ, իսկ Սինխուա համալսարանի (Tsinghua University) նախկին նախագահ, պրոֆեսոր Չեն Ճինինգը (Chen Jining) նշանակվել է Բնապահպանության նախարար ²³¹:

«Պտտվող դռներ» քաղաքականությանը թույլ է տալիս փորձագետներին, բացի տեսական գիտելիքներից և հետազոտական փորձից, ձեռք բերել պրակտիկ աշխատանքի փորձառության պետական կառավարման համակարգում, առավել խորությամբ ընկալել պետական համակարգի աշխատանքի սկզբունքները, ինչը մեծապես օգտակար է ինքնուրույն աշխատանքի և ժամանակային պահանջներին համահունչ երաշխավորության ներքին պատրաստման համար: Բացի դրանից, նրանք ձեռք են բերում լայն կապեր կառավարական շրջանակներում, որը հետագայում՝ փորձագետի աշխատանքի նվերադարձից հետո, նրանց հնարավորություն է տալիս առավել հեշտությամբ հասցնել ու գաղափարները համապատասխան գերատեսչության ներքին և որոշում կայացնողներին: Այնուամենայնիվ փորձագետները պետական ծառայողների փոխատեղման նման համակարգն առավել տարածված է հատկապես ԱՄՆ-ում: Այսպիսի մոտեցումը թույլ է տալիս առաջատար ուղեղային կենտրոնները վերածել մասնագիտական դարբնոցների, որտեղ շատ հաճախ ձևավորվում են ապագա բարձրաստիճան պետական ու քաղաքական գործիչներ: Քաղաքական գործիչներն էլ իրենց հերթին պաշտոնը թողնելուց հետո շարունակում են իրենց գործունեությունը փորձագիտական դաշտում և ուղեղային կենտրոնների հարթակներից փորձում են շարունակել ազդել քաղաքական կուրսի ձևավորման վրա՝ միաժամանակ թարմացնելով իրենց գիտելիքները և ուղեղային կենտրոնի իրենց

²³¹ Աթոյան Վ., Մովսիսյան Շ., նշվ. աշխ., էջ 14-17:

գործընկերներին հետևել գործնական աշխատանքի
սեփական փորձը²³²:

Պետք է ասել, որ «պտտվող դռներին» համակարգը
և որ երևույթ է ԱՄՆ-ում: Այսպես, ՌԵՆԴ
կորպորացիայի՝ 1966թ. պաշտոնական հաշվետվության
տվյալներով այդ հաստատության 90 աշխատակից 269
դեպքում խորհրդատուի կարգավիճակով հրավիրվել
է Սպիտակ տուն, Պաշտպանության նախարարության
և այլ պետական գերատեսչություններ: ԱՄՆ-ի
պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցնելու
ընթացքում Ռոբերտ Մաքնամարը (1961-1968)
նախարարության աշխատակազմ է ընդգրկել ՌԵՆԴ
կորպորացիայի փորձագետներին մեծաթիվ խմբի: Զենց
ՌԵՆԴ կորպորացիայի և նրա կողմից մշակված
«պլանավորում-ծրագրավորում-բյուջետային
ֆինանսավորում» մեթոդաբանության հետևնկապված
այսպես կոչված «Մաքնամարի բարեփոխումները»²³³: 1976
թ. նախագահական ընտրություններում հաղթանակ
տանելուց հետո Ջիմի Քարտերն իր վարչակարգը
կազմավորեց Բրուքինգսի ինստիտուտի և
Միջազգային հարաբերությունների խորհրդի
ներկայացուցիչներից: Չորս տարի անց Ռոնալդ
Ռեյգանը դիմեց այլ ուղեղային կենտրոնների:
Նախագահության երկու ժամկետների ընթացքում
վերջինս «Ժամանակություն» հիմնադրամից, Յուզեթի
ինստիտուտից և Ձեռնարկատիրության ամերիկյան
ինստիտուտից ներգրավեց 150 մասնագետ: Ավելին, 1980
թ. ընտրություններից հետո Ռեյգանի վարչակարգը
որպես իրականացվող քաղաքականության հիմք
վերցրեց «Ժամանակություն» հիմնադրամի «Փոփոխույթ-
յունների մանդատ» գեկոլյոգը: Մեկ այլ օրինակ է
ԱՄՆ-ի առաջին կին պետքարտուղար դարձած Մադլեն

²³² *Schulzinger R.*, “Public-Private Dialogue: An Open U.S. Foreign Policy System”, *The Making of U.S. Foreign Policy // “The Making of US Foreign Policy”, U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of The U.S. Department of State), Vol. 5, N 1, March, 2000, p. 48.*

²³³ *Шейдина И.А.*, США: «Фабрики мысли» на службе стратегии // изд-во «Наука», М., 1973, с. 41.

Օլբրայթը, ով ևս մինչև պետական ծառայության անցնելը զբաղեցնում էր Ազգային քաղաքականության կենտրոնի ղեկավարի պաշտոնը ²³⁴:

Հետխորհրդային տարածքի երկրներում պետության և փորձագիտական հանրության միջև փոխգործակցության ոլորտում նույնպես կան որոշակի հետաքրքիր գործընթացներ: Դրանց մեջ առավել ուշադրության է արժանի ուղեղային կենտրոնների քանակական ցուցանիշով, կայացածության և հանրային քաղաքականության մեջ դերակատարության մակարդակով հետխորհրդային բոլոր երկրներին գերազանցող Ռուսաստանի Դաշնության փորձից մեկ կարևոր օրինակ: Այսպես, Ռուսաստանի ռազմավարական մշակումների կենտրոնն իր հիմնադրումից (1999 թ.) սկսած՝ ՌԴ-ի կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների ղեկավարության մբ (Գ. ԳրեՖ, Դ. Կոզակ) սկսել էր երկրի զարգացման հայեցակարգի մշակումը, որը դարձավ ՌԴ-ի ապագա նախագահ Վ. Պուտինի ծրագրային փաստաթուղթը: Այս հայեցակարգի հիման վրա, որը կոչվում էր «Մինչև 2010 թ. ժամանակաշրջանի ՌԴ զարգացման սոցիալ-տնտեսական ռազմավարություն», մշակվել և կառավարության նիստում հաստատվել էին ՌԴ-ի կառավարության երկարաժամկետ (մինչև 2010 թ.) սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղղությունները: Այդ հիմնական ուղղությունները դարձան կառավարության հետագա հայեցակարգային փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի և միջնաժամկետ ծրագրերի գաղափարական հենքը ²³⁵: 2011 թ. ՌԴ-ի Անվտանգության խորհրդի, վերջինիս աշխատանքային մարմինների և աշխատակազմի գործունեության

²³⁴ *Richard N. Haass*, opt. cit., p. 7.

²³⁵ *Зайцев А.*, ук. соч., с. 77.

գիտամեթոդական և փորձագիտական-վերլուծական ապահովման նպատակով ստեղծվել է Անվտանգության խորհրդի կից Գիտական խորհուրդ, որն իրականացնում է հետևյալ գործառնությունները .

- Անվտանգության խորհրդի, նրա աշխատանքային մարմինների և աշխատակազմի գիտամեթոդական և փորձագիտական-վերլուծական գործունեության ապահովում ,
- Անվտանգության խորհրդին ազգային անվտանգության ոլորտում համակարգային գիտական հետազոտությունների իրականացման վերաբերյալ առաջարկությունների և երաշխավորությունների նախապատրաստում ,
- ՌԴ-ի ազգային անվտանգության ռազմավարության գիտական հիմնավորման մեթոդաբանության կատարելագործում ,
- ՌԴ-ի սոցիալ-տնտեսական զարգացման և ազգային անվտանգության ապահովման վրա ազդող ներքին և արտաքին սպառնալիքների գիտամեթոդական գնահատում և կանխատեսում ,
- Անվտանգության խորհրդի, վերջինիս աշխատանքային մարմինների և աշխատակազմի ՌԴ-ի ազգային անվտանգության ռազմավարության մշակման և ճշգրտման գործունեության գիտամեթոդական ուղեկցում , այդ թվում՝ ազգային անվտանգության ապահովման ազգային ռազմավարական առաջնահերթությունների, չափորոշիչների և ցուցիչների, ինչպես նաև ՌԴ-ի նախագահի հաստատմանը ենթակա ռազմավարական պլանավորման փաստաթղթերի վերաբերյալ առաջարկությունների և երաշխավորությունների նախապատրաստում , ազգային անվտանգության վիճակի և սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի գնահատում , մասնակցություն ազգային անվտանգության

առնչվող պետական նպատակային ծրագրերի, ինչպես նաև ՌԴ-ում իրավիճակային կենտրոններին համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններին նախապատրաստում,

- նորմատիվ իրավական ակտերի, հայեցակարգային, դոկտրինալ, վերլուծական և այլ փաստաթղթերի նախագծերի, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ առաջարկություններին գիտական փորձագիտություն իրականացում,
- ազգային անվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության իրականացման հարցերում Անվտանգության խորհրդի և վերջինիս աշխատանքային մարմիններին որոշումներին նախագծերի գիտական հիմնավորում,
- արտերկրում և ՌԴ-ում ազգային անվտանգության ապահովման տեսության և պրակտիկայի համեմատական վերլուծության իրականացում²³⁶:

Միաժամանակ ՌԴ-ի քաղաքական վերնախավն աստիճանաբար առավել մեծ տեղ և դերակատարություն է հատկացնում պետական կառավարման ոլորտին կից գործող ուղեղային կենտրոններին: Վերջինիս օրինակներից է ՌԴ նախագահին առընթեր գործող Ռազմավարական հետազոտություններին ռուսաստանյան ինստիտուտում իրականացվող լայնածավալ բարեփոխումները և առավել ակտիվ և երևացող դերակատարությունը հատկապես արտաքին քաղաքականության ոլորտում: Չարկ է նշել, որ 2017 թ. ՌԴ նախագահի հրամանագրով վերոնշյալ հաստատության տնօրեն է նշանակվել

²³⁶ Совет Безопасности Российской Федерации // URL: <http://www.scrf.gov.ru/documents/19/53.html>

2004-2007 թթ. ՌԴ վարչապետ, 2007-2016 թթ. ՌԴ Արտաքին հետախուզության ծառայության տնօրեն Միխայիլ Ֆրադկովը, ինչը Ռուսաստանում «պտտվոդ դռների» համակարգի կիրառմանը վավագույն օրինակներն են:

Այսպիսով, աշխարհի տարբեր երկրներում պետական կառավարման մարմինների և փորձագիտական հանրության փոխգործակցությունն արդյունավետորեն իրականացվում է թե՛ անհատական, թե՛ ինստիտուցիոնալ ձևաչափով և ունի բազմաթիվ դրսևորումներ: Դրանց շարքում առավել տարածվածներն են.

- տարբեր շահառուների որոշումների տեղեկատվական ապահովման նպատակով տարաբնույթ վերլուծությունների, կանխատեսումների իրականացումն ու զեկուլյցների և այլ համանման փաստաթղթերի պատրաստումը, որի նպատակով ուղեղային կենտրոնները կարողանում են գործընթացում ինտեգրել հիմնախնդրով զբաղվող ակադեմիական ու անկախ փորձագիտական շրջանակներին երկուսը,
- «պտտվոդ դռների» քաղաքականության կիրառման շրջանակներում ակադեմիական փորձագիտական շրջանակների գիտագործնական հմտությունների զարգացումն ու պետական ապարատին կադրերով ապահովումը՝ փոխարենը պետական ապարատի ցընդունելով փորձառումսնագետներին,
- ինստիտուցիոնալ փոխգործակցության շրջանակներում պետական ապարատի ներկայացուցիչների վերապատրաստումը (հատուկ դասընթացների, վարպետաց դասերի և սեմինարների միջոցով),

- պետական գերատեսչություններին կից ձևավորվող տարբեր խորհուրդներում ուղեղային կենտրոնների փորձագետների ներգրավումը,
- ուղեղային կենտրոններին կողմից պետության ոչ ժողովրդահաճո որոշումների մշակման պատասխանատվության ստանձնումը և քաղաքական որոշումների լեգիտիմացման նպատակով տարաբնույթ մեկնաբանություններին մշակումն ու հանրայնացումը,
- ոչ ֆորմալ դիվանագիտության բնագավառում ուղեղային կենտրոնների փորձագետների ներգրավումն ու տարբեր միջազգային հիմնախնդիրների լուծման նպատակով երկխոսությունների նախաձեռնումը, ինչը հաճախ պաշտոնական դիվանագիտական խորհրդակցություն անհնարին կամ ոչ նպատակահարմար է իրականացնել:

Ամփոփելով նշենք նաև, որ արդյունավետ պետական կառավարումը և ազգային անվտանգության ապահովումը՝ որպես սզարգացման առավել օպտիմալ միջոցների, մեթոդների, ուղիների որոնման, հիմնավորման ու իրականացման, անվտանգության համակարգի կատարելագործման, իրական և հնարավոր սպառնալիքների ու վտանգների բացահայտման գործընթաց, կարող է իրականացվել միայն հասարակության կազմակերպական և մտավոր ներուժի համակարգված կիրառման պարագայում: Ինչպես նշում է Չ. Բժեգիսսկին, գլոբալացման դարաշրջանում անվտանգության բացակայությամբ կոհաբնույթի կոնցեպտիվները, իսկ ազգային անվտանգության ամրապնդման ուղիների

որոնումը՝ մշտական մտահոգության առարկա²³⁷: Յեւցայս համատեքստում խնդիրները դիտարկելիս անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ ուղիների որոնման գործում անգնահատելի դեր կարող են խաղալ պետության-փորձագիտական հանրություն փոխգործակցությունից ստացվող սիներգետիկ էֆեկտը և համապատասխան գիտելիք կրող անձանց ներգրավումը պետական կառավարման, այդ թվում՝ ազգային անվտանգության ապահովման գործընթաց: Յատկանշական է, որ փորձագիտական հանրության ինտելեկտուալ կարողությունների հետևողական անտեսումն իր հերթին մեծագույն խնդիրներ կարող է առաջադրել պետության նինչ պես անվտանգության (հատկապես տեղեկատվական), այնպես էլ սոցիալական բնագավառներում: Եթե վերախմբագրելու լինենք Ֆրանսիայի կայսր Նապոլեոնի վերագրվող՝ «եթե ժողովուրդը չի ցանկանում կերակրել սեփական բանակը, ապա կկերակրի օտար բանակը» հանրահայտ միտքը, ապա կարող ենք ասել, որ երբ պետությունը չի կարողանում հանրային քաղաքականության որոշումների գործընթացներում ինտեգրել ու սեփական նախաձեռնություններում «զբաղեցնել» իր ինտելեկտուալ կարողություններով օժտված գիտական-վերլուծաբանական հանրության երուժը՝ ապահովելով դրա գործունեության ֆինանսավորման կառուցակարգեր, այդ ներուժը սկսում է ծառայել հաճախ պետությանը ոչ ձեռնտու խմբերի շահերի: Խնդիրն այն է, որ փորձագիտական հանրության, առանց ինտելեկտուալ ներուժի օգտագործման և դրա դիմաց վճարվելու, ինքնադրսևորման և գոյության ապահովման այլ եղանակ պարզապես չունի: Իսկ նրանց կարողությունների հետևողական մերժման և ֆինանսավորման բացակայության պայմաններում

²³⁷ *Бжезинский Зб.*, Выбор. Глобальное господство или глобальное лидерство // Международные отношения, М., 2010, с. 19.

կամ դրանց ծառայություններին ցուցում են օգտվել արտերկրի շահագրգիռ տարբեր շրջանակներ, որոնք ընձեռում են դրամաշնորհների ստացման լայն հնարավորություններ, կամ այդ ինտելեկտուալներում արտահոսում է արտերկրի` ինքնադրսևորման համար առավել բարենպաստ միջավայր: Ակնհայտորեն թե՛ ուղեղների արտահոսքը, թե՛ չվերահսկվող տիրույթում չվերահսկվող ֆինանսավորողներին տարաբնույթ տեղեկատվության տրամադրումը պետությանն առաջադրում են լրջագույն մարտահրավերներ, որոնց լուծման, այսինքն` ֆինանսավորման հոսքերի կոշտարգելափակման գործիքները պետությանը երբեմն դնում են ոչ նպաստավոր իրավիճակների մեջ (Ժողովրդավարության տարբեր վարկանիշերում հետընթացից ընդհուպ մինչև պատժամիջոցներ): Այս է պատճառը նաև, որ շատ երկրներում հանրային քաղաքականության բնագավառում որոշումներ կայացնողները ձգտում են հետևողականորեն զարգացնել և ծանրաբեռնել սեփական ինտելեկտուալներում` այլոց համար սահմանափակելով դրանից օգտվելու հնարավորությունները:

3.2.ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՎՐԱ

Ուղեղային կենտրոնների ոլորտի և հանրային քաղաքականության մեջ այդ հաստատության ուսումնասիրության գործում առանցքային նշանակություն ունի վերջիններիս ազդեցության մեխանիզմների բացահայտման և վերլուծության հարցը: Ակնհայտ է, որ վերջին տասնամյակներին քաղաքականության ինտելեկտուալ ապահովման

գործընթացում աստիճանաբար մեծանում է հետազոտական հատուկ կառույցների՝ ուղեղային կենտրոնների դերակատարությունը: Հաշվի առնելով բազմաթիվ երկրներում դրանց նշանակալի ազդեցությունը հանրային քաղաքականության, այդ թվում՝ հասարակական-քաղաքական, տնտեսական և այլ գործընթացների վրա՝ ուղեղային կենտրոնները կարելի է դասել «հինգերորդ իշխանության» շարքում՝ օրենսդիր, գործադիր, դատական իշխանություններից և ՉԼՄ-ներից հետո ²³⁸:

Հարկ է նշել, որ քաղաքական գործընթացն իշխանության ոլորտում ինստիտուցիոնալացված և ոչ ինստիտուցիոնալացված սուբյեկտների առանձնահատուկ գործառույթների իրականացման գործողությունների հանրագումար է ²³⁹: Այդ առումով ներկայումս ուղեղային կենտրոնները դարձել են այն վայրերը, որտեղ, անկախ հատուկ շահերից, ստեղծագործական մտահղացումները մարմնավորվում են իրական նախագծերում՝ մուտք գործելով հասարակության սոցիալ-քաղաքական կյանք: Ապահովելով հանրային քաղաքականության հարցերի լուծմանն անհրաժեշտ ինտելեկտուալ հենք և դրանց խոր դիտարկում՝ ուղեղային կենտրոնները կարող են միմյանց շաղկապել մասնավոր հատվածի, պետական պաշտոնյաների և քաղաքական գործիչների հմտությունները, գիտելիքներն ու փորձը: Հասարակական ու մասնավոր հատվածների միջև այդպիսի համագործակցությունը կարող է հանգեցնել հանրային քաղաքականության խնդիրների արդյունավետ լուծմանը և ժողովրդավարական

²³⁸ **Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքոյան Ա.**, Ուղեղային կենտրոնները քաղաքական գործընթացում. «Հինգերորդ իշխանություն» // «Բանբեր ՀՊՏՀ», N1(41), 2016, էջ 148-149:

²³⁹ **Пугачев В.П., Соловьев А.И.**, Введение в политологию // М., Аспект Пресс, 2004, с. 368.

գործընթացի հիմքերի ամրապնդմանը ²⁴⁰:

Հանրային քաղաքականության մեջ ուղեղային կենտրոնների օգտակար դերակատարությունը դրսևորվում է նաև մի քանի այլ ուղղություններով: Այսպես, ամերիկացի հետազոտող Ռ. Հասսի դիտարկմամբ դրանցից է «նորմատիվություն» մշակումը, որը փոխում է ամերիկացի քաղաքական գործիչների աշխարհայացքը: Նրա խոսքով յուրահատուկ գաղափարները կարող են փոխել ԱՄՆ-ի ազգային շահերի մասին պատկերացումները, ազդել առաջնահերթությունների որոշման վրա, հուշել գործողությունների պլանները, գործի դնել քաղաքական և բյուրոկրատական կոալիցիաներն ու ձևավորել ամուրի նստիտուտներ: Հետևյալն, գրավել զբաղված քաղաքական գործիչների ու շահեր ու թյուրումները, որոնք առանց այդ էլ ծանրաբեռնված են տեղեկատվության մեջ: Դրա համար ուղեղային կենտրոնների անհրաժեշտ է կիրառել բազմաթիվ միջոցներ և մարքեթինգային ռազմավարություններ՝ հրապարակել հոդվածներ, գրքեր, տեղեկանքներ և հատուկ զեկոլոյցներ, պարբերաբար հայտնվել հեռուստատեսությունում, թերթերի մեկնաբանություններում և հարցազրույցներում, պատրաստել էջեր համացանցում: Ազդեցության մեկ այլ հնարավորություն է նաև ընձեռում լսումներն ԱՄՆ-ի Կոնգրեսում: Ուղեղային կենտրոնների վերլուծաբանները, որոնք կաշկանդված չեն պաշտոնական պարտավորություններով, կարող են իրենց թույլ տալ բացահայտորեն ներկայացնել սուր գլոբալ հիմնախնդիրների և կառավարության կողմից այդ ուղղությունում իրականացվող գործո-

²⁴⁰ **Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքոյան Ա.**, Ուղեղային կենտրոնները արդի քաղաքական գործընթացներում // Եր., «Տնտեսագետ» հրատ. («Ամբերդ» մատենաշար N33), 2016, էջ 47:

դոլարյոլոնների արդյոլոնավետոլթյան վերաբերյալ գնահատականներ ²⁴¹: Ավելին, ԱՄՆ-ում Կոնգրեսի վրա ազդեցոլթյան մեկ այլ ձևաչափ է ոլղեղային կենտրոնների պալատների անդամների հետ մասնավոր համագործակցոլթյոլոնը: Այսպես, 2009 թ. կոնգրեսականները 125 անգամ խնդրել են «Ժառանգոլթյոլոն» հիմնադրամին անցկացնել իրենց օրինագծերի մասնավոր վերլուծոլթյոլոն: Միաժամանակ նախընտրական քարոզարշավների ժամանակ թեկնածոլները շատ հաճախ ճեպագրոլյց անցկացնել ոլ խնդրանք ով դիմ ոլմ են փորձագիտական-վերլուծական կառոլյցների ²⁴²:

Ակնհայտ է, որ XXI դար ոլմ բազմաթիվ երկրների ոլղեղային կենտրոններ տեղ են գրավել հանրային քաղաքականոլթյան ամենաակտիվ դերակատարների շարք ոլմ: Տարբեր հարթակներ ոլմ իրենց գործ ոլնե ոլթյան ակտիվ ոլթյամբ և կիրառել ով բազմաթիվ մեթոդներ ոլ գործիքներ՝ ոլղեղային կենտրոնները հնարավոր ոլթյոլոն են ստան ոլմ հասցնել ոլ սոցիալական, տնտեսական, քաղաքական խնդիրների լ ոլծման իրենց տեսակետն ոլ տեսլականը որոշ ոլմ կայացնողների՝ միաժամանակ մեծացնել ով իրենց ազդեցոլթյոլոնը: Մասնավոր ապես .

- հրավիր ով ոլմ և ակտիվ որեն մասնակց ոլմ են խորհրդարանական լ ոլմների, տարբեր հանձնաժողովների, կառավար ոլթյան գերատեսչ ոլթյոլոնների կից գործ ոլղ հասարակական խորհ ոլրդների աշխատանքների,

²⁴¹ **Richard N. Haass**, Think Tanks and U.S. Foreign Policy: A Policy-Maker's Perspective // "The Role of Think Tanks in U.S. Foreign Policy". U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of the U.S. Department of State), Vol. 7, N 3, 2002, p. 6. URL: http://www.usembassy-mexico.gov/bbf/ej/1102_RoleThinkTanks.pdf

²⁴² **Мирзаян Г.В.**, «Мозговые центры» и процесс принятия решений в США // Журнал «Россия и Америка в XXI веке», № 3, 2011. Эл. публикация: Центр гуманитарных технологий, (27/08/2011). URL: <http://gtmarket.ru/laboratory/expertize/4567>

- նախաձեռնում են տարաբնույթ տեղական ու գլոբալ համաժողովներ կամ մասնակցությամբ ներդրում դրանց՝ իրենց տեսակետները հանրայնացնելով և Լսելի դարձնելով մասնագիտական ու ոչ մասնագիտական ավելի մեծ շրջանակների,
- հանդես են գալիս օրենսդրության կատարելագործմանն ուղղված նախաձեռնությամբ, մշակում են օրենքներ կամ օրենքների փոփոխության առաջարկությամբ ներդրում կազմակերպելով համապատասխան Լսումներ,
- հրապարակում են տարբեր թեմատիկ ուղղվածությամբ տարաբնույթ վարկանիշներ, որոնք ընդգրկում են ամբողջ աշխարհը և շատ հաճախ ոչ միայն գլոբալ պատկերի նախնական գնահատման միջոց են, այլև դառնում են ուղենիշ երկրների կառավարությանն ու ներքին խոշոր ներդրողների որոշումների կայացման բնագավառում,
- պետական կառավարման մարմինների, կուսակցությամբ ներդրողների, գործարար ոլորտի կազմակերպությունների պատվերով իրականացնում են հետազոտություններ, քաղաքական որոշում կայացնող անձանց շրջանում տարածում են արագ ընթերցման համար հարմար ավետ համառոտ վերլուծականներ,
- անհատական խորհրդատվական ծառայություններ են մատուցում քաղաքական գործիչներին, պետական պաշտոնյաներին և գործարար ոլորտի ներկայացուցիչներին,
- հրապարակում են հոդվածներ, գրքեր,

- իրենց տեսակետի, ինտելեկտուալ արտադրանքի առաջմղման նպատակով ուղեղային կենտրոնները մասնակցում կազմակերպում են կլոր սեղան-քննարկումներ, գիտաժողովներ, սեմինարներ, մամուլի ասուլիսներ, որոնց հրավիրվում են ակադեմիական, պետական կառավարման ոլորտի և քաղաքական շրջանակների ներկայացուցիչներ, որոնք պատասխանատու են պետական քաղաքական ոլորտի մշակման և իրականացման համար: Միաժամանակ աշխատանքներ են տանում ՉԼՄ-ների հետևյալն:

Ավելորդ չէ նկատել, որ բազմաթիվ կայացած, մեծ ֆինանսական, կարային, կազմակերպական և ինտելեկտուալ ռեսուրսներին տիրապետող ուղեղային կենտրոնների ազդեցությունը վաղուց դուրս է եկել ազգային պետության սահմաններից, ինչին մեծապես նպաստում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներն ու համացանցի ընձեռած հնարավորությունները: Ինչպես դիպուկ նկատում է Ն. Մեդուշևսկին, ԱՄՆ-ում համացանցը դարձել է վերլուծական ուղեղային կենտրոնների գլոբալ ռազմավարության կարևոր քաղաքական շահացանցի միջոցով ամերիկյան ուղեղային կենտրոնները տարածում են գաղափարներ և ազդեցություն են գործում աշխարհի վրա²⁴³:

Ակնհայտ է, որ տեղեկատվական հեղափոխությունն ու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներն էականորեն ընդլայնել են ինչպես արդի մարտահրավերների, այնպես էլ հնարավորությունների սահմանները: Այս համատեքստում անհրաժեշտ է հիշատակել կանադացի

²⁴³ *Медушевский Н.А.*, Технологии современности: переосмысление сути термина «Фабрика мысли» // «Вестник РГГУ», N 1 (81), Серия «Политология. Социально-коммуникативные науки», М., 2012, с. 119.

հայտնի գիտնական Մ. Մաքլուհանի (Marshall McLuhan)՝ իր «գլոբալ գյուղի» տեսության մեջ: Յետագոտողը գտնում էր, որ «գլոբալ գյուղի» առաջացման սոցիո-հաղորդակցային պայմանն է տեղեկատվության և հաղորդակցության արտադրության գործընթացների կենտրոնացումը²⁴⁴: Մաքլուհանը նկարագրում է, թե ինչպես է երկրագունդն էլեկտրոնային կապի միջոցների արդյունքում «սեղմվում» մինչև գյուղի չափերը²⁴⁵, ինչպես հնարավոր դարձավ աշխարհի ցանկացած կետից ցանկացած մայրցամաք տեղեկատվության ակնթարթային փոխանցումը²⁴⁶: Ինչպես նշում է ԱՄՆ-ի նախագահի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Յենրի Բիսինջերը. «Սովորական են դարձել տեղեկատվական դարաշրջանի՝ որպես պատմության մեծ, նույնիսկ մեծագույն մտավոր հեղափոխության մասին խոսակցության նենտերը և նրա սոցիալական, տնտեսական ու քաղաքական կողմերի վրա սկզբվելը: Բայց հազվադեպ է քննարկվում նրա ազդեցությունը միջազգային հարաբերությունների վրա, բացառությամբ թերևս ժամանակակից հաղորդակցության ուղիների գլոբալ հնարավորությունների մասին փաստարկումների. ընդ որում, նշվում են լոկալ մաքուր թվեր և տեղեկատվության փոխանցման արագությունը: Բայց միջազգային հարաբերությունները, հետևաբար՝ նաև պատմության ընթացքը, կախված են ոչ միայն տեղեկատվություն ունեցող մարդկանց քանակից. առավել կարևոր են դրայ ու րացման եղանակները: Եվ քանի որ մատչելի տեղեկատվության ծավալը

²⁴⁴ Всемирная энциклопедия. Философия // главн. науч. ред. и сост. А.А. Грицанов, М.: АСТ, Мн.: Харвест, Современный литератор, 2001, с. 42.

²⁴⁵ **McLuhan Marshall**, Understanding Media: The Extensions of Man // Gingko Press, Berkeley, CA, 2003, p 6.

²⁴⁶ **McLuhan Marshall, Molinaro Matie, McLuhan Corinne, Toye William**, Letters of Marshall McLuhan // Toronto: Oxford University Press, 1987, p. 254.

սովորաբար գերազանցում է նրա մշակման հնարավորությունները, բնականաբար խորանում է տեղեկատվության ու գիտելիքի, առավել ևս՝ գիտելիքի և իմաստությունների խզումը»²⁴⁷: Այս համատեքստում ուշագրավ է նաև ամերիկացի հայտնի գիտնական Ջ. Նայի (Joseph Nye) դիտարկումը, ով, վերլուծելով տեղեկատվական դարաշրջանի իրողությունները, մեր ժամանակներին բնորոշ տեղեկատվական հոսքերի աննախադեպ ծավալները, որոնց բախվում են հասարակությունն ու քաղաքական վերնախավը, մատնանշում է համապատասխան փորձագետների աշխատանքի աճող կարևորությունը: Նրա խոսքով ներկայումս տեղեկատվության գերհագեցածությունը հանգեցնում է ուշադրության պակասի: Երբ ժողովուրդն ապակողմնորոշված է առկա տեղեկատվության հոսքերի ծավալից, որին բախվում է, ի հայտ են գալիս դժվարություններ՝ գիտակցելու համար, թե ինչի վրա է պետք կենտրոնացնել ուշադրությունը: Այս դեպքում ավելի շուտ ուշադրությունը, քան ինքնին տեղեկատվությունը, վեր են ածվում դեֆիցիտ ռեսուրսի, և ազդեցություն կունենան նրանք, ովքեր կարողանան տարբերակել արժեքավոր տեղեկատվությունն արտաքին խոչընդոտներից: Այս պարագայում մեծ նշանակություն են սկսում ստանալ տեղեկատվության բացատրողները, մեկնիչները: Նրանց հզորությունն աղբյուրն այն է, որ կարողանում են ասել մեզ, թե ինչի վրա է պետք ուշադրություն դարձնել ²⁴⁸: Բնականաբար այս հանգամանքը ևս ընդգծում է փորձագիտական հանրության թե՛ անհատական և թե՛ ինստիտուցիոնալ մակարդակներում իրականացվող

²⁴⁷ *Киссинджер Г.*, Нужна ли Америке внешняя политика? // (Пер. с англ. под ред. В.Л. Иноземцева), М.: Ладомир, 2002, с. 321.

²⁴⁸ *Джозеф С. Най (младший)*, Будущее власти // АСТ, М., 2014, с. 182-183.

աշխատանքի աճող կարևորությունն ու ազդեցությունը: Պետք է նշել, որ հատկապես տեղեկատվության հավաքման, մշակման ու արդյունավետ մեկնաբանման խնդրի գիտակցմամբ է, որ տարաբնույթ ուղեղային կենտրոններն ու հետազոտական այլ կառույցներ նմանատիպ խնդիրներ են առաջադրել նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին, որտեղ ներկայումս մեծ ծավալների է հասնում մեծ տվյալների (Big Data) մշակման համակարգերի ու ծրագրային ապահովման միջոցների թողարկումը: Մասնավորապես, եթե XXI դարի սկզբին տվյալների բազաների համակարգերի մշակումն այնքան փոքր ծավալներ ունեն, որ դրավերաբերյալ անգամ վիճակագրություն չէր վարվում, ապա 2016 թվականին դրան արդեն բաժին են ընկել տեղեկատվական ու հեռահաղորդակցական ոլորտի հասունյթի 5%-ը և տեղեկատվական տեխնոլոգիաների համախառն ծավալի 8.5%-ը (շուրջ 170 միլիարդ դոլլար)²⁴⁹: Այս առումով նշենք, որ որոշ փորձագետների մեկնաբանությամբ մոտապայայում ուղեղային կենտրոններն իրենց գործունեության մեջ պարտադիր կներդնեն մեծ տվյալների և արհեստական ինտելեկտի համակարգեր, քանի որ դրանք ունակ են արագացուցչի դեր կատարելու որոշումների կայացման գործընթացում և բարելավելու ուղեղային կենտրոնների ներուժը գլոբալ համայնքի պահանջների բավարարման գործընթացում²⁵⁰: Փաստացի այսօր էլ տարբեր խնդիրների լուծման նպատակով ուղեղային կենտրոններն ու հետազոտական կազմակերպությունների կողմից տեղեկատվության հավաքման, մշակման ու հաշվետվությունների հրապարակման գործունեությունը վերածվել է

²⁴⁹ Gartner, Inc. official website // URL: www.gartner.com/newsroom/id/3568917
²⁵⁰ *Filippov A.*, Think Tanks with Chinese Characteristics, (May 29, 2017) // URL: <https://doc-research.org/en/think-tanks-chinese-characteristics/>

համաշխարհային տնտեսություն մեծածավալ ոլորտի, որտեղ տվյալները արագ մշակման անընդհատ մեծացող պահանջարկը մեկայլ՝ ճյուղի համար ապահովում է շուրջ 170 միլիարդ դոլլարի շրջանառություն:

Հատկանշական է, որ ներկայումս նկատվում է միտում, որ անգամ նահանգային նշանակություն հարցերի վրա մասնագիտացված և մեծ ֆինանսական միջոցների չտիրապետող ուղեղային կենտրոնները և սահմափափակակալին ազդեցություն են ունենում նահանգային իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության վրա: Այսպես, ԱՄՆ-ում նահանգային մակարդակով գործող ուղեղային կենտրոնները համեմատաբար մեծ չեն: Դրանցից միայն քչերի տարեկան բյուջեն է հասնում 1 մլն ԱՄՆ դոլլարի և գործնականորեն երբեք չի գերազանցում 5 մլն ԱՄՆ դոլլարը: Այնուամենայնիվ, այդ կազմակերպություններն ի վիճակի են եական ազդեցություն ունենալու նահանգի քաղաքականության մշակման վրա, քանի որ այդ մակարդակում ուղեղային կենտրոնների և քարոզչական կազմակերպությունների միջև մրցակցությունը շատավելի թույլ է, և հետևաբար՝ նման հաստատություններին առավել դյուրին է գրավել նահանգային մակարդակի քաղաքական գործիչների ու շարժումներին նայնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են, օրինակ, որակյալ կրթության մատչելիությունը և խտրականության դեմ պայքարը²⁵¹:

Ուղեղային կենտրոնների ազդեցության մեթոդների խնդրի քննարկման համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաև այս հաստատությունների ազդեցության ռեսուրսներին: Քաղաքագիտական գրականության

²⁵¹ *Рич Э., Уивер К.*, Пропагандисты и аналитики: «мозговые центры» и политизация экспертов // “Pro et Contra”, том 8, N 2, Весна, 2003, с. 81.

մեջ հանդիպող մոտեցումներին ցմեկի համաձայն՝
 ուղեղային կենտրոնները հանրային
 քաղաքականության վրա ազդեցությունն պատակով
 կիրառում են իրենց տիրապետած կադրային և կազմա-
 կերպական, ինտելեկտուալ, նյութական,
 սոցիալական, հանրային և խորհրդանշական
 ռեսուրսները ²⁵²(աղյուսակ 12):

Կադրային և կազմակերպական ռեսուրսն
 ուղեղային կենտրոնի տիրապետած հետազոտողների,
 փորձագետների, մեներջերների (աշխատակազմ) և
 կենտրոնի ընթացիկ գործունեության
 կազմակերպման ներքին կառուցակարգերի
 (արժեքներ, գործունեության ռազմավարական
 նպատակներ, կազմակերպական կառուցվածք, զարգաց-
 ման հայեցակարգեր, թիմեր, թիմային աշխատանքը և
 միջթիմային համագործակցությունը կարգավորող
 կառուցակարգեր, տիրապետած տեխնոլոգիաներ և
 այլն) ամբողջությունն է: Սակայն ազդեցության
 տեսանկյունից առավել առաջնայինը հենց ուղեղա-
 յին կենտրոնի աշխատակազմն է, ավելի շուտ՝
 հանրության շրջանում ունեցած հեղինակության
 աստիճանը: Փորձագիտական-վերլուծական
 կառույցների շարքում երբեմն կարելի է հանդիպել
 այսպես կոչված «մեկ մարդու կենտրոնների» կամ
 «մարդ-կենտրոնների»:

**Աղյուսակ 12. Ուղեղային կենտրոնների
 ազդեցության ռեսուրսները**

| N | Ռեսուրսներ | Յնարավոր ցուցանիշներ |
|----------|-------------------|---|
| 1. | Կադրային | 1. Ճանաչված և հեղինակավոր փորձագետների առկայություն: 2. Վարվող կադրային քաղաքականություն: |
| 2. | Կազմակերպական | 1. Աշխատակազմի մեծություն: 2. Երկրորդավոր կառուցվածքի առկայություն: |
| 3. | Ինտելեկտուալ | 1. Թողարկվող ինտելեկտուալ |

²⁵² Տե՛ս *Зайцев Д.Г.*, Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук., 23.00.02 – Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии. М., 2009, с. 79-81.

| | | |
|----|---------------|---|
| | | արտադրանքի որակ : 2. Ընտրված հետազոտական նախագիտացում /բազմ- ազանությամբ/: |
| 4. | Նյութական | 1.Ֆինանսավորման ծավալներ : 2. Ֆինանսավորման աղբյուրներ ընտրության բազմազանացում : |
| 5. | Սոցիալական | 1. Իշխանության և գործարար շրջանակներում նախապես կենտրոններին ներկայացուցիչների կապեր : 2. Ուղեղային կենտրոններին ներկայացուցիչների մոտ պետական կառավարման ոլորտում, մասնավոր հատվածում և ՉԼՄ-ներում աշխատանքային փորձի առկայություն : |
| 6. | Հանրային | 1. Հաստատության վերաբերյալ տեղեկատվության բացության մակարդակ : 2. Ֆինանսական գործունեության թափանցիկության մակարդակ : |
| 7. | Խորհրդանշական | 1. Փորձագետներին, քաղաքական գործիչներին, լրագրողներին և այլ շահագրգիռ խմբերում ուղեղային կենտրոններին համբավը : 2. Հաստատության համբավը՝ որպես բաց անկախ կազմակերպություն : |

Նման հաստատություններում հիմնադիրը
լինում է միաժամանակ տվյալ ուղեղային կենտրոնի
ղեկավարը և միակ վերլուծաբանը, որին երբեմն
տեսնելիական, կազմակերպական հարցերում կարող են
օգնել որոշակի քանակի աշխատակիցներ : Սակայն
այս պարագայում պետք է խոսել ոչ թե այդ
հաստատության, այլ որոշակի անձի ազդեցությու-
նով : Այդ պատճառով ուղեղային կենտրոնի
քաղաքական կարգավիճակը որոշվում է երկու
քաղաքիչի հիման վրա.

- կազմակերպական զարգացման մակարդակով
ներքին ճյուղավորված կառուցվածքի
առկայություն,
- կադրային ռեսուրսի առկայություն :
Ենթադրվում է, որ ուղեղային կենտրոնի
վերլուծաբանները, փորձագետները պետք է
թողարկեն որակյալ ինտելեկտուալ
արտադրանք և փորձագիտական

հանրու թյ ու ն ու մ , ՉԼՄ-ն երի մոտ վայել են
ճանաչ ու մ և հեղինակ ու թյ ու ն :

Մի աժամանակ պետք է հաշվի առնել ինչպես
ուղեղային կենտրոնի աշխատակազմի մեծ ու թյ ու ն ը ,
այնպես էլ ՉԼՄ-ն երի կողմից առավել շատ
հիշատակվող , ընթացիկ քաղաքական , տնտեսական
գործընթացներն ու իրադարձ ու թյ ու ն ներք
մեկնաբանող աշխատակիցների քանակը :

*Ուղեղային կենտրոնի ինտելեկտուալ
ռեսուրսն* իր մասնագիտացման ուղղ ու թյ ու ն ներք
և իր կողմից թողարկվող վերլուծական արտադրանքն
է :

Նյութական ռեսուրսների տակ հասկացվում են
ուղեղային կենտրոնների \$ինանսավորման
աղբյուրները : Նյութական ռեսուրսների
վերլուծ ու թյ ա ն ժամանակ կարևոր է ուղեղային
կենտրոնի կողմից կիրառվող \$ինանսական
միջոցների ներգրավման (fundraising)
ռազմավար ու թյ ու ն ը : Մասնավորապես
\$ինանսավորման աղբյուրների բազմազան ու թյ ա ն
ապահովումը նպաստում է ուղեղային կենտրոնի
առավել մեծ ինքնավար ու թյ ա ն ն ու անկախ ու թյ ա ն ը
դոնորներին ցկամ պատվիրատուներին ց :

Սոցիալական կապիտալը . ուղեղային կենտրոնի
քաղաքական , տնտեսական և այլ ոլորտներում
ու ն ե ց ա ծ կապերի ամբողջ ու թյ ու ն ն է : Ուղեղային
կենտրոնի կարգավիճակի համար կարևոր են
քաղաքական և բիզնես հանր ու թյ ա ն , ՉԼՄ-ն երի և
ակադեմիական շրջանակների ներկայացուցիչների
հետ ու ն ե ց ա ծ կապերը , դրանց կառուցվածքը : Յարկ է
նշել , որ հաստատ ու թյ ա ն կապերը , որպես կանոն ,
հիմնված են լինում ուղեղային կենտրոնի
ղեկավարի , աշխատակիցների անձնական կապերի վրա :
Ավելացնենք , որ սոցիալական կապերը և դրանց
կիրառման արդյունավետ ու թյ ու ն ը հաճախ

պայ մանավորված են ուղեղային կենտրոնի ղեկավարի և ղեկավար անձնակազմի օրենսդիր, գործադիր իշխանություն և ակադեմիական ոլորտում աշխատանքի փորձառություններ: Վերոնշյալի կապակցությունները բերենք մեկ հետաքրքրական օրինակ. 2017 թ. հունիսի 1-4-ը ԱՄՆ-ի Շանտիլյի (Chantilly) քաղաքում անցկացված հայտնի Բիլդերբերգյան ակումբի ամենամյա նիստին մասնակցել են 21 երկրներից 131 ներկայացուցիչներ, որոնց շուրջ երկու տասնյակն աշխարհի առաջատար ուղեղային կենտրոնների ներկայացուցիչներ էին²⁵³: Այս օրինակը ցայտուն արտահայտում է, թե ինչպիսի գլոբալ հարցերի քննարկման են մասնակցում և դրանց լուծման ընթացքի վրա ինչպիսի ազդեցություն են ունենում որոշ ուղեղային կենտրոնների փորձագետներ:

Ուղեղային կենտրոնի հանրային կապիտալը ձևավորվում է աշխատանքի բացություն մակարդակից, մասնավորապես բաց աղբյուրներում ուղեղային կենտրոնի մասնագիտական գործունեության վերաբերյալ տեղեկատվության առկայությունից և գործառնության համար ստացվող ֆինանսական հոսքերի թափանցիկությունից:

Խորհրդանշական կապիտալն ուղեղային կենտրոնի համբավն է: Խորհրդանշական կապիտալը որոշվում է հաստատության՝ որպես անկախ, ինքնավար, բաց և հանրային կազմակերպություն հանդես գալու ունակությամբ, միաժամանակ ուղեղային կենտրոնի փորձագիտական անձնակազմի պատրաստվածություն և արհեստավարժությամբ:

Վերոնշյալի համատեքստում պետք է ավելացնել, որ ուղեղային կենտրոնի ազդեցությունն ուղիղ համեմատական է հաստատության խորհրդանշական

²⁵³ Տե՛ս *Durden Tyler*, The Bilderberg 2017 Agenda: “The Trump Administration – A Progress Report” // URL: <http://www.zerohedge.com/news/2017-06-01/bilderberg-2017-agenda-trump-administration-progress-report>

կապիտալին: Որքան բարձր է ուղեղային կենտրոնի խորհրդանշական կապիտալը, այնքան բարձր է նաև դրա ազդեցությունը: Բարձր հեղինակություն ունեցող ուղեղային կենտրոնի ինտելեկտուալ արտադրանքը մեծ հավանականությամբ կիրառություն է գտնում նաև տարբեր ոլորտների պատասխանատուների և որոշում կայացնողների կողմից: Սովորաբար ուղեղային կենտրոնների խորհրդանշական կապիտալը հնարավոր է լինում գնահատել քաղաքական, ակադեմիական շրջանակների, պետական կառավարման և ՉԼՄ ներկայացուցիչների հարցումների միջոցով:

Ակնհայտ է, որ ուղեղային կենտրոնների ազդեցության գնահատումն այնքան էլ հեշտ գործ չէ: Չնայած բազմաթիվ դժվարություններին՝ ուղեղային կենտրոններն իրենց ազդեցության չափման նպատակով կարող են օգտագործել տարբեր ցուցիչներ, այդ թվում՝ իրականացվող հետազոտությունների և վերլուծությունների ծավալների ավելացումը, ինչպես նաև նրանց ներդրումը քաղաքականության մշակման գործընթացում և քաղաքացիական հասարակության գործունեության մեջ: Հատկանշական է, որ այս ցուցիչները կարևոր են ոչ միայն ուղեղային կենտրոնների համար՝ իրենց ազդեցության չափը գնահատելու նպատակով, այլ և դրանց ինտելեկտուալ արտադրանքը գնողների և սպառողների համար: Տվյալ դեպքում գնորդին հետաքրքրում է ուղեղային կենտրոնի վարկանիշը՝ տարբեր մշակումներ պատվիրելու կամ քաղաքականության մշակման ու հանրայնացման որոշ փուլեր պատվիրակելու տեսանկյունից: Իսկ ուղեղային կենտրոնների նախկինում կատարված կանխատեսումների և երաշխավորությունների իրատեսականության ու որակն այն հիմնական

ց ու ց ի չ ն եր ն ե ն , ո Ր ո ն ց ի ց կ ախ վ ած է ա յ դ կ ա ն խ ա-
տ ե ս ու ւ մ ն եր ի ց օ գ տ վ ե լ ու կ ա մ ա յ դ
ե Ր ա շ խ ա վ ո Ր ու թ յ ու ն ն եր ը գ ո Ր ծ ն ա կ ա ն ու մ կ ի Ր ա-
ռ ե լ ու ո Ր ո շ ու մ ը :

Մ ե կ ա յ լ մ ո տ ե ց մ ա ն հ ա մ ա ձ ա յ ն ` ո Ր պ ե ս
ա գ դ ե ց ու թ յ ա ն չ ա փ մ ա ն ց ու ց ի չ ն եր ե ն հ ա շ վ ա Ր կ ու մ .

- *ռ ե ս ու ւ Ր ս ն եր ի ց ու ց ի չ ը .* ա) առաջատար գիտնականների գրավելու և պահելու ու ն ա կ ու թ յ ու ն ը , բ) ֆինանսական աջակցություն մակարդակը , որակը և կայունությունը , քաղաքական վերնախավի և որոշում կայացնողների մոտ մուտքի հնարավորություն ու ն ե ն ա լ ը , գ) ժամանակի և մանրակրկիտ հետազոտությունների ակնացնող աշխատակազմի առկայությունը , դ) ցանցերի վստահություն ու ն ու ո Ր ա կ ը , ե) ՉԼՄ-ների շրջանում , ա կ ա դ ե մի ա կ ա ն հ ա ն Ր ու թ յ ու ն ու մ ն շ ա ն ա կ ա լ ի կ ա պ ե Ր ի առկայությունը և այլն :

- *Կիրառական ց ու ց ի չ ն եր ը .* ա) ՉԼՄ-ների և քաղաքական վերնախավի մոտ ու ն ե ց ա ծ հ ե ղ ի ն ա կ ու թ յ ու ն ը , բ) ՉԼՄ-ներում հայտնվելու և վերջիններիս կողմից հղումների քանակը և որակը , գ) համացանցային հրապարակումները , դ) օրենսդիր և գործադիր իշխանությունների հետ փոխգործակցությունը , ե) ճեպագրույցները , պաշտոնական ընդունելությունները , պաշտոնյաներին և պետական կառավարման մարմիններին խորհրդատվություն մատուցելը , գ) վաճառված գրքերը , ե) գեկոլյցների տարածումը , ը) գիտական և հանրամատչելի հրապարակումներում առկա հղումները , մաս -

նակցությունը գիտաժողովներին և սեմինարներին:

- Արդյունքի գնահատությունը. քաղաքականության վերաբերյալ առաջարկություններին և գեներացված գաղափարներին, գրքերին, ամսագրային հոդվածներին, քաղաքական համառոտ վերլուծականներին, ՉԼՄ-ներին տրված հարցազրույցներին, կազմակերպված ճեպագրույցներին, գիտաժողովներին և սեմինարներին, պետական կառավարման ոլորտում ուղեղային կենտրոնի աշխատակազմի ներկայացուցիչների նշանակումներին քանակը և որակը:
- Ազդեցությունը գնահատելու և) քաղաքականության մշակողներին/իրականացնողներին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին կողմից ուղեղային կենտրոնի պատրաստած երաշխավորություններին դիտարկումը և ընդունումը, բ) կուսակցություններին, թեկնածուներին, նախընտրական թիմերին խորհրդատվություններին տրամադրումը, գ) պարգևատրումները, դ) որոշման կայացման և քաղաքական քննարկումների վրա ազդող գիտական ամսագրերում և ՉԼՄ-ներում հրապարակումները, ե) համացանցային կայքի ակտիվությունը, զ) հաջողությունը պետական կառավարման ոլորտի և ընտրովի պաշտոնյաների ստանդարտ գործառնական գործընթացներին վիճարկման գործում²⁵⁴:

²⁵⁴ James G. McGann, 2016 Global Go To Think Tank Index Report // University of Pennsylvania, The Lauder Institute, Think Tanks and Civil Societies Program, 2017, pp. 23-25. // URL: http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1011&context=think_tanks

Ինչպես արդեն նշեցինք, ազդեցության գնահատման հարցն ուղեղային կենտրոնների ոլորտի ուսումնասիրության ամենաբարդ խնդիրներից է: Ինչպես ճշմարտացիորեն նշում է Դ. Սթոունը, ուղեղային կենտրոնների ուսումնասիրության ամենատարածված հարցը վերջիններիս ազդեցության գնահատումն է: Սակայն ազդեցության չափման գործընթացը բարդանում է մեթոդաբանական խնդիրներով: Որպես հետևանք մեծ տատանումներ են լինում ուղեղային կենտրոնների ներուժի և կարողությունների գնահատման հարցում: Դրանց ազդեցությունը քաղաքական մտածողության վրա հաճախ չափազանցվում է, իսկ որոշ մեկնաբաններ անգամ հրաժարվում են ընդունել, որ ուղեղային կենտրոններն ընդհանրապես կարող են որևիցե իրական ազդեցություն ունենալ²⁵⁵:

Այնուամենայնիվ, ուղեղային կենտրոնների ազդեցության չափման նպատակով հաճախ կիրառվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշներ: Հաշվի առնելով տեխնոլոգիական հասանելիությունը՝ ուղեղային կենտրոնների քաղաքական ակտիվության չափման մեթոդ է համարվում այս կամ այն ուղեղային կենտրոնի ՉԼՄ-ներում հիշատակման քանակական վերլուծությունը: ՉԼՄ-ներում ուղեղային կենտրոնների հիշատակման քանակական վերլուծության պարագայում կիրառվում են հղման տարբերիչներ.

- հղման ընդհանուր ինդեքս՝ որոշակի ժամանակահատվածում տպագիր և էլեկտրոնային ՉԼՄ-ների մեծամասնությունում ուղեղային կենտրոնի հիշատակման քանակ,

²⁵⁵ *Stone D.*, Introduction: think tanks, policy advice and governance // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by *Stone D.* and *Denham A.*, Manchester University Press, Manchester and New York, 2004, p. 10.

- «տեսանելիություն» և «նկատվելիություն» ինդեքս (visibility index), որը հենվում է համապետական նշանակություն առավել ազդեցիկ թերթերի կողմից տվյալ ուղեղային կենտրոնի վրա հղմամբ (հիշատակմամբ): Առավել ազդեցիկ թերթերը որոշվում են՝ հաշվի առնելով վերջիններիս տպաքանակը (circulation-waited visibility index) կամ տարեկան բյուջեի մեծությունը²⁵⁶:

Ուղեղային կենտրոնի ազդեցություն գնահատման համար որպես լրացուցիչ գործոններ անհրաժեշտ կլինի օգտվել նաև այլ գործիքներից: Օրինակ, որոշակի ուղեղային կենտրոնի մասնակցությունը խորհրդարանական և ումնեների կամ գործադիր իշխանության կողմից կազմակերպվող հանրային քննարկումներին: Այս հարցի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը դյուրացնում է նման քննարկումներին ուղեղային կենտրոնների ներկայացուցիչների մասնակցության վերաբերյալ բացառությունների առկայությունը: Ուղեղային կենտրոնների ազդեցության չափման քանակական մեթոդ է նաև հրապարակված գրքերի, վերլուծականների, կազմակերպված գիտաժողովների, մամուլի ասուլիսների քանակը և այլն:

Պակաս կարևոր է նաև տարբեր մակարդակներում տեղի ունեցող քաղաքական ընտրություններում որևիցե թեկնածուի թիմի կազմում ուղեղային կենտրոնների ներկայացուցիչների ներգրավվածությունը: Խորհրդականների կարգավիճակով ուղեղային կենտրոնների փորձագետներին նախընտրական թիմերում ընդգրկման մշակույթը լայնորեն տարածված է ԱՄՆ-ում: Վերջին տարիների օրինակներից կարող ենք

²⁵⁶ *Боркин А.*, «Фабрики мысли» и научное сообщество: опыт США // «Фабрики мысли» и центры публичной политики: международный и первый российский опыт. (Сборник статей. Под редакцией *Сунгурова А.Ю.*), Спб: Норма, 2002, с. 99.

հիշատակել ԱՄՆ-ի 45-րդ նախագահ դարձած Դոնալդ Թրամփի նախընտրական ընտրարշավը սպասարկող թիմը, որտեղ որպես էներգետիկ հարցերով խորհրդակցականներ էներգրավված էին «ժառանգություն» հիմնադրամի փորձագետներ Ս. Մուրը (Stephen Moore), Դ. Կրուտցերը (David Kreutzer), Ջ. Սփենսերը (Jack Spencer), Մրցակցային ձեռնարկությունների ինստիտուտի (Competitive Enterprise Institute) փորձագետներ Մ. Էբելը (Myron Ebell), Բ. Հորները (Chris Horner), էներգետիկ հետազոտությունների ինստիտուտի (Institute of Energy Research) փորձագետներ Թ. Փալը (Tom Pyle), Թ. Ֆիշերը (Travis Fisher), Դ. Սիմոնսը (Daniel Simmons), Տեխասի հանրային քաղաքականությունների հիմնադրամից (Texas Public Policy Foundation) Դ. Դոմենեչը (Doug Domenech) և այլն: Դ. Թրամփի կողմից ԱՄՆ-ի նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո նրանցից շատերը նորվարչակարգի հետաշխատանքը շարունակեցին նաև Սպիտակ տանը: Մասնավորապես, ըստ *Atlas* տնտեսական հետազոտությունների հիմնադրամի (Economic Research Foundation) նախագահ Ա. Չաֆուենի (Alejandro Chafuen) ներկայացման, Դ. Թրամփի կաբինետի նշանակումների գրեթե 80%-ը կազմում են ուղեղային կենտրոնների ներկայացուցիչները (բացառությամբ տնտեսական բլոկի նշանակումների, որոնք ֆինանսական ոլորտի ներկայացուցիչներ են)²⁵⁷: Այլ փորձագիտական կարծիքների համաձայն՝ Դ. Թրամփի օրոք ուղեղային կենտրոնները Սպիտակ տան վրանոլյնիսկ ավելի մեծ ազդեցություն ունեն, քան նախորդ հանրապետական վարչակարգերի, օրինակ՝ Ռ. Ռեյգանի կամ Ջ. Բուշ Կրտսերի օրոք²⁵⁸: Ավելացնենք, որ ներկայումս ԱՄՆ-ում գրեթե չկան ներքին կյանքին կամ արտաքին քաղաքականությանը վերաբերող որևէ հարց, որը չձևակերպվի ու չմշակվի

²⁵⁷ “Interview with Alejandro Chafuen, President of the Atlas Network”, by Leandro Echt, (May 26, 2017) // URL: <https://onthinktanks.org/articles/interview-with-alejandro-chafuen-president-of-the-atlas-network/>
²⁵⁸ *Robin Bravender*, 4 think tanks influencing Trump's energy agenda // E&E News reporter, (Feb. 17, 2017). URL: <http://www.eenews.net/stories/1060050262>

ուղեղային կենտրոնների հանրությունում կամ առանց վերջիններիս որոշակի մասնակցության: Ուղեղային կենտրոններն ազդում են ԱՄՆ-ի հասարակական կյանքի բոլոր կողմերի վրա՝ մշակելով ԱՄՆ-ի քաղաքականության հիմնարար գաղափարները:

Ակնհայտ է, որ տեղեկատվական հասարակության ներում առաջնորդներին անհրաժեշտ են նաև ոչ միայն մասնագիտական մրցունակ գիտելիքներ, այլև վերլուծել քաղաքականությանը և կանխատեսել փոփոխությունները՝ պատրաստ լինելով նորարարության ներքին²⁵⁹: Այդ առումով քաղաքական գործիչներն ուղեղային կենտրոններից ամենից առաջ ակնկալում են իրենց հետաքրքրող հիմնահարցերի խիստ որոշակի լուծումներ: Ընդ որում, լիովին բնականոն է համարվում առաջարկվող լուծումների այլընտրանքայնությանը՝ քաղաքական գործիչներին հնարավորություն ընձեռելով ընտրելու իրենց հարմար տարբերակ: Կարևորն այն է, որ ուղեղային կենտրոնն առաջարկի ոչ թե «մի կողմից» կամ «մյուս կողմից» երկընտրանքային ոճի վերլուծական ձևակերպում, այլ միանշանակ պատասխանի «ի՞նչ անել» հարցին²⁶⁰:

Վերոնշյալ երևույթից բխում է նաև ուղեղային կենտրոնների ազդեցության հարցը: Այս համատեքստում հատկանշական է Ռ. Յասանի դիտարկումը, ըստ որի՝ ԱՄՆ-ի ուղեղային կենտրոններն այլ երկրների համանման կազմակերպություններից տարբերվում են ոչ թե նրանով, թե ինչքան լավ են դրանք ֆինանսավորվում,

²⁵⁹ *Адаир Дж.*, Эффективное лидерство // изд-во «ЭКСМО», М., 2003, с. 24.

²⁶⁰ *Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքոյան Ա.*, Ուղեղային կենտրոնները արդի քաղաքական գործընթացներում // Եր., «Տնտեսագետ» հրատ. («Ամբերդ» մատենաշար N33), 2016, էջ 47-48:

այլ ամերիկյան ուղեղային կենտրոնների հնարավորությամբ՝ ուղղակի կամ անուղղակի մասնակցելու քաղաքականության իրականացմանը և քաղաքական գործիչների պատրաստակամությամբ՝ քաղաքական խորհրդատվության համար շրջվել դեպի ուղեղային կենտրոնները, ինչը որոշ գիտնականների թույլ է տալիս ենթադրել, որ ամերիկյան ուղեղային կենտրոններն ամենամեծ ազդեցությունն ունեն հանրային քաղաքականության ձևավորման գործընթացում²⁶¹: Ամերիկյան առաջատար ուղեղային կենտրոնների կողմից արդեն մի քանի տասնամյակ լայնորեն և մեծ արդյունավետությամբ կիրառվում է «just-in-time» սկզբունքը: Այդ սկզբունքն առաջիններից մեկը կիրառել է «Ժառանգություն» հիմնադրամը: Այսպես, երբ 1980 թ. նոյեմբերին Ռոնալդ Ռեյգանն ընտրվեց ԱՄՆ-ի 40-րդ նախագահ, վերջինս անմիջապես սկսեց կազմավորել սեփական կառավարության կազմը և որոշել իր նոր վարչակարգի քաղաքականության հիմնական ուղղությունները: Ընտրությունից հետո հաշված շաբաթների ընթացքում «Ժառանգություն» հիմնադրամը նոր կառավարությանը ներկայացրեց մի քանի հարյուր էջանոց, համապարփակ, լավ հիմնավորված քաղաքականության ծրագրի նախագիծ, որտեղ նշված էին այն գործողությունները, որոնք այդ հաստատության փորձագետների կարծիքով նոր կառավարությանը պետք է իրականացներ: Իհարկե, դրան նախորդել էին մի քանի ամիս տևողությամբ զեկոլոյցի մշակման աշխատանքները: Այս զեկոլոյցը բավականին ազդեցություն գործեց Ռ. Ռեյգանի վարչակազմի հետագա քաղաքականության վրա²⁶²:

²⁶¹ *Md. Rahat Hasan*, Foreign Policy and Strategic Issues: Think Tanks in US and South Asia // New Century Publications, New Delhi, 2012, p. 42.

²⁶² *Raymond J. Struyk*, Managing Think Tanks: Practical Guidance for Maturing Organizations // Expanded Second Edition, OSI/LGI and Urban Institute, Budapest, 2006, p. 65.

Անշուշտ, բացի վերևում նկարագրված ազդեցությունն ուղղակի եղանակներին (երբ ուղեղային կենտրոններն իրենց ինտելեկտուալ արտադրանքը կամ ինտելեկտուալ ծառայություններն են առաջարկում որոշում կայացնողներին), ուղեղային կենտրոնների ազդեցությունը քաղաքականության ձևավորման վրա կարող է լինել նաև անուղղակի ճանապարհով: Ինչպես նշում է Գ.Միրզայանը, թե ԱՄՆ-ի Կոնգրեսը կամ նախագահը համաձայն չեն ուղեղային կենտրոնի դիրքորոշման հետ, դա դեռ չի նշանակում, որ վերջինս պարտվել է: Ամերիկյան քաղաքականության բաց բնույթի շնորհիվ ուղեղային կենտրոնները կարող են ազդել նրավրա, օրինակ՝ հասարակական կարծիքի միջոցով: Ուղեղային կենտրոնները հասարակական կարծիքի փոփոխմամբ փոխում են նաև քաղաքականությանը: Չնայած որոշում կայացնողների վրա ուղղակի ազդեցության հզոր լծակներին, մասամբ նաև վերոնշյալ պատճառով, նրանց վրա անուղղակի ազդեցությունն այնուամենայնիվ ուղեղային կենտրոնների կողմից սեփական գաղափարների «վաճառքի» հիմնական գործիքն է: Ազդեցության մյուս գործիքն ուղեղային կենտրոնների գիտակրթական (իրազեկման, փորձագիտական տեղեկատվության փոխանցման) գործառնությունն է: Ուղեղային կենտրոնները թողարկում են ամերիկյան առաջատար համարվող «Foreign Policy» (Զարնեգի հիմնադրամ), «Foreign Affairs» (Արտաքին հարաբերությունների խորհուրդ), «Washington Quarterly» (Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոն), «Cato Journal» (Կատոնի ինստիտուտ) ամսագրերը: Այնուամենայնիվ տեղեկատվության փոխանցման հիմնական խողովակը համացանցն է²⁶³:

²⁶³ *Мирзаян Г.В.*, ук. соч.

Ինչպես նշում է ամերիկացի հետազոտող Դ. Աբելսոնը, ուղեղային կենտրոնները զբաղվում են գաղափարների մշակմամբ և առաջնորդմամբ և մասնավոր հատվածի կորպորացիաների նման նշանակալից ռեսուրսներ են ուղղում իրենց արտադրանքի մարքեթինգի վրա: Սակայն, ի տարբերություն կորպորացիաների, ուղեղային կենտրոններն իրենց հաջողությունը չափում են ոչ թե ստացած եկամտով, քան ի որի վերջո դրանք գրանցվում են որպես ոչ առևտրային կազմակերպություններ, այլ նրանով, թե որքան ուժեղ են ազդում հասարակական կարծիքի ձևավորման և քաղաքականության վրա: Այդիմաստով ուղեղային կենտրոնները սկսում են հիշեցնել լոբբիստական խմբերի, որոնք հանուն քաղաքական իշխանության և վարկի մրցակցում են այլ ոչ կառավարական կազմակերպությունների հետ²⁶⁴: Այդ նպատակով ուղեղային կենտրոնները հետզհետե ավելի հաճախ են օգտագործում լոբբիստական կազմակերպությունների կողմից կիրառվող ռազմավարությունները: Մասնավորապես դրանք քաղաքական վերնախավի ներկայացուցիչների հետ իրենց հանդիպումներն ու շփումներն օգտագործում են ոչ միայն իրականացված սոցիոլոգիական վիճակագրական կամ փորձագիտական հետազոտությունների արդյունքում բացահայտված հասարակական կամ տարբեր շահագրգիռ խմբերի պահանջներն ու ակնկալիքները վերջիններիս փոխանցելու, այլ և վերջիններից «անհրաժեշտ» լուծումների հասնելու համար: Վերջիններն աստիճանաբար ավելի մեծ տեղ են հատկացնում ոչ թե հասարակական կարծիքի ուսումնասիրությանը, այլ PR տեխնոլոգիաների կիրառմամբ այդ կարծիքի ձևավորման վրա

²⁶⁴ *Donald E. Abelson*, Think Tanks and U.S. Foreign Policy: An Historical Perspective // “The Role of Think Tanks in U.S. Foreign Policy”. U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of the U.S. Department of State), Vol. 7, N 3, 2002, p. 11. URL: http://www.usembassy-mexico.gov/bbf/ej/1102_RoleThinkTanks.pdf

ազդեցիկ է: Այդ պատճառով էլ ուղեղային կենտրոնների հաճախ քողարկված լոբբիստական գործունեությունը շատ երկրներում սկսել է անհանգստություն առաջացնել, հատկապես, երբ խնդիրը կապված է արտերկրից ստացվող \$ի նանսների հիման վրա օտար շահերի առաջմղմանը: Նշվածից ցուն օրինակներից է մի քանի տարի առաջ ԱՄՆ-ում բարձրացված աղմուկը, որը տեղի ունեցավ «The New York Times» պարբերականի աշխատակիցների կողմից լրագրողական հետաքննություն արդյունքների հրապարակումից հետո: Այսպես, լրագրողների հետաքննություն արդյունքում պարզ երդարձել, որ ամերիկյան մի շարք հայտնի ուղեղային կենտրոններ, ինչպիսիք են Բրուքլինգսի ինստիտուտը, Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնը, Ատլանտյան խորհուրդը միլիոնավոր դոլլարներ էին ստացել օտարերկրյա կառավարություններից, որոնք այդ ճանապարհով անուղղակիորեն առաջ էին մղում իրենց շահերը ԱՄՆ-ի քաղաքական վերնախավում: Այդ երկրները հիմնականում նավթարդյունահանող երկրներն էին, այդ թվում՝ Քաթարը, ԱՄԷ-ն, Նորվեգիան: Լրագրողները մտահոգություն էին հայտնում, քանի որ իրենց կարծիքով վերոնշյալ ուղեղային կենտրոնները, օգտվելով ամերիկյան քաղաքական վերնախավում անաչառ կազմակերպությունների ունեցած համբավից, իրենց դոնորների շահերից բխող համապատասխան քաղաքականություն իրականացնելու նպատակով, ազդեցություն էին գործում ԱՄՆ-ի քաղաքական գործիչների վրա: Ավելին, քաղաքի վիորձագետներ խոստովանել են, որ իրենց կազմակերպություններին \$ի նանսապես աջակցող կառավարությունների նկատմամբ քննադատությունը բացառելու, ինչպես նաև այդ

կառավարություններին գոհացնող
հետազոտություններին արդյունքներ ապահովելու
նպատակով իրենց վրա ճշում է գործադրվել ²⁶⁵:

Transparify կազմակերպությունն իր
ուսումնասիրության արդյունքում պարզել էր, որ
մի շարք բրիտանական ուղեղային կենտրոնների
ֆինանսական եկամուտների վերաբերյալ
տեղեկատվությունը թափանցիկ չէ, և վերջիններիս
եկամտային հոսքերը ևս իրականացվում են ոչ
թափանցիկ ճանապարհներով: Կազմակերպության
գնահատմամբ այդ ոչ թափանցիկ շրջանառությունը
կազմում է ավելի քան 22 միլիոն \$ ունտաթեռլինգ:
Այդ ուղեղային կենտրոնների շարքում էին
բրիտանական այնպիսի հայտնի հաստատություններ,
ինչպիսիք են Ռազմավարական
ուսումնասիրությունների միջազգային ինստի-
տուտը (International Institute for Strategic Studies), Ադամ Սմիթի ինստի-
տուտը (Adam Smith Institute), Տնտեսական
հարաբերությունների ինստիտուտը (Institute of Economic Affairs),
Քաղաքականության ուսումնասիրությունների
ինստիտուտը (Centre for Policy Studies) և այլն:
Ուսումնասիրությունն անցկացնող
կազմակերպության կարծիքով մասնավորապես
Ադամի Սմիթի ինստիտուտի ֆինանսավորման
աղբյուրները կարող են լինել օտար երկրներից,
ինչը մտահոգություն է առաջացնում, որ որոշ
երկրներ, իրենց շահերից ելնելով, քողարկված
կարող են ազդել բրիտանացի ընտրողների և
քաղաքական գործիչների վրա ²⁶⁶:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ
բազմաթիվ երկրներում հասարակական, լրատվական և

²⁶⁵ *Lipton E., Williams B., Confessore N.*, Foreign Powers Buy Influence at Think Tanks // “The New York Times”, Sept. 6, 2014. URL: https://www.nytimes.com/2014/09/07/us/politics/foreign-powers-buy-influence-at-think-tanks.html?_r=0

²⁶⁶ Think Tanks in the UK 2017: Transparency, Lobbying and Fake News in Brexit Britain // *Transparify*, Bristol, UK and Tbilisi, Georgia, pp. 7-8. URL: <https://static1.squarespace.com/static/52e1f399e4b06a94c0cdaa41/t/58996330b8a79b6ede1c9891/1486447414103/Transparify+-+Think+Tank+Transparency+in+the+UK+2017.pdf>

այլ կազմակերպությունների՝ արտերկրից
ֆինանսավորման մասին օրենսդրական
սահմանափակումներ կամ արգելքներ են գործում:
Նման մոտեցման կողմնակիցները պնդում են, որ
արտերկրից ստացվող ֆինանսավորումը հաճախ
քողարկված պետական կառավարման գործընթացի և
քաղաքականության վրա միջնորդավորված
վերահսկողություն սահմանելու նպատակ ունի:
Տարբեր ձևաչափերով և որոշակի
տարբերություններով նման իրավական ակտեր
գործում են Մեծ Բրիտանիայում (Charitable Trusts Act), ԱՄՆ-ում
(Foreign Agents Registration Act), Ռուսաստանի Դաշնությունում,
Ֆրանսիայում, Իսրայելում, Չինաստանում և այլն²⁶⁷:

Միաժամանակ ավելորդ չէ նկատել, որ
վստահությունն առայն, որ բաց հանրային
քննարկումները նպաստում են քաղաքական
որոշումների որակին՝ ուղեղային կենտրոնները
դարձնում են հզոր գործիք քաղաքական գործընթացի
ժողովրդավարացման և ռացիոնալացման համար²⁶⁸:
Ինչպես դիպուկ նկատում է Ա. Սունգուրովը, պակաս
կարևոր չէ ուղեղային կենտրոնների ներդրումը
ժողովրդավարական հասարակության զարգացման
գործում: Դրանք նպաստում են հանրային
քննարկումներին և հասարակ մարդկանց ձայնին
ավելացնում են հետազոտությունների և
վերլուծությունների բարձրակարգ
արդյունքներ՝ ուժեղացնելով նրանց
ազդեցությունը որոշումների կայացման
գործընթացի վրա: Դրա հետ մեկտեղ ուղեղային
կենտրոնների գործունեությունը քիչ է հայտնի

²⁶⁷ Տե՛ս **Գալ սոյան Դ., Խալ աթյան Մ.**, «Օտարերկրյա գործակալների
մասին» օրենքի վերաբերյալ. տարբեր երկրների փորձը //
«ԳԼՈԲՈՒՄ», թիվ 4 (73), 2016, էջ 51-57, ինչպես նաև՝ **Աթոյան Վ.,
Թադևոսյան Ռ.**, Իսրայելի ուղեղային կենտրոնները հանրային
քաղաքականությունում // «21-րդ ԴԱՐ», թիվ 6(70), 2016, էջ 70-84:

²⁶⁸ **Krastev Ivan**, The Liberal Estate: Reflections on the Politics of Think Tanks in Central and Eastern Europe // URL:
file:///C:/Users/User/Downloads/The%20Liberal%20Estate%20(1).pdf

լ այն հասարակությանը, քանի որ դա ուղղված է խորհրդարանականներին, գործադիր իշխանության բարձրաստիճաններ կայացուցիչներին, ինչպես նաև ՉԼՄ-ներին, որոնք ձևավորում են հասարակական կարծիքը: Այնուամենայնիվ, ժողովրդավարական հասարակության մեջ քաղաքացիները նույնպես օգուտ են ստանում ուղեղային կենտրոնների գործունեությունից, քանի որ դրանք քաղաքականության ձևավորման գործընթացը դարձնում են նվազ քաղաքականացված: Որոշում կայացնող անձանց մատակարարելով լեզվի տիմ, հետազոտություններով ստացված տեղեկատվության ամբողջ ուղեղային կենտրոնները հնարավորություն են տալիս նրանց ընդունելու տրամաբանորեն հիմնավորված որոշումներ: Օգտագործելով էմպիրիկ հետազոտություններ, ուսումնասիրելով հասարակական կարծիքը, վերլուծելով առաջարկն ու պահանջարկը, ինչպես նաև կանխատեսումների տարբեր մեթոդներ՝ դրանք մշակում են օբյեկտիվ առաջարկություններ հանրային քաղաքականության բարելավման համար: Առանձնացնելով ուղեղային կենտրոնների գործունեության՝ հասարակության վրա կողմնորոշված ասպեկտները՝ նշենք հետևյալը.

- ուղեղային կենտրոններն իշխանությանն են հասցնում հասարակության պահանջները,
- հասարակությանը տեղեկացնում են կառավարության գործունեության մասին (այդ իմաստով դրանք քաղաքացիական հասարակության անկյունաքարերն են),
- մեծ ներդրում են ունենում տեղեկացված ընտրագանգվածի ստեղծման գործում, որն ի գործ է քաղաքական որոշում կայացնելու ընտրություններին, ինչպես նաև արդյունավետորեն առաջ մղելու սեփական շահերը,

- կարող են նաև ուղղակիորեն օգնել այլ ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությանը, մասնավորապես դրանց առաջնորդների ուսուցման, ինչպես նաև քաղաքացիական կազմակերպությունների ոլորտի նորմատիվ բազայի բարելավման և ռեֆորմի միջոցով ²⁶⁹:

Վերջին հանգամանքի հետ կապված քաղաքագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել նաև ծայրահեղ կարծիքներ, ըստ որոնց՝ ուղեղային կենտրոնները քաղաքական գործիչներին ներկայացնում են հատուկ տեսական և գործնական մեթոդներ, տալիս են անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, ապահովում հատուկ տեղեկատվություն և այլն, որի նպատակն է քաղաքացիների մանիպուլյացիան ²⁷⁰: Ակնհայտ է, որ ուղեղային կենտրոններն ի վիճակի են ոչ միայն մատակարարել և քաղաքական իրադարձությունների վերլուծություններ, այլ նաև տալ ու դրանց գաղափարախոսական և զգացմունքային երանգ: Այդ երևույթը կարող է հանդիսանալ քաղաքական համոզմունքների և կարգավորումների հզոր գործիք ²⁷¹:

Միաժամանակ վերջին տասնամյակների տեղեկատվական անսախադեպ հոսքերի հորձանուտում սեփական ձայնն առավել լսելի դարձնելու, տեսանելի դառնալու և քաղաքական որոշումների վրա ազդեցություն մեծացման նպատակով ուղեղային կենտրոնները մշտապես փորձում են մշակել գործունեության, ինտելեկտ-

²⁶⁹ *Сунгуров А.Ю.*, Как возникают политические инновации: «фабрики мысли» и другие институты-медиаторы // М.: Политическая энциклопедия, 2015, с. 108-109.

²⁷⁰ *Зайцев Д.Г.*, Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук., 23.00.02 – Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии. М., 2009, с. 35.

²⁷¹ *Иванов Д.Ю.*, Формирования политической аналитики негосударственных аналитических центров в современной России // Дис. на соиск. уч. ст. канд. пол. н., специальность 23.00.02 – Политические институты, процессы и технологии, Санкт-Петербург, 2013, с. 22.

տու՛ւ ալ արտադրանքի թողարկման և տարածման առավել արդյունավետ ձևաչափեր: Ինչպես նշում են ուղեղային կենտրոնների ուղորտի ամերիկացի ճանաչված մասնագետներ Է. Ռիչը և Ք. Ուիլերը, գոյություն առաջին օրերից՝ անցյալ դարի 70-ական թվականներից, «Ժառանգություն» հիմնադրամի հպարտության առարկան օպերատիվությունն ու հակիրճությունն էր. վերջինս կարողանում էր ցանկացած հարցի շուրջ արագ և սեղմ ներկայացնել տեղեկատվական նյութեր, որը կարող էր հայտնվել Կոնգրեսի օրակարգում: Վերջին տարիներին ավագ սերնդի բազմաթիվ ուղեղային կենտրոններ սկսեցին նմանակել այս հիմնադրամի գործելանձը: Այսպես, 1996 թ. հունլիսին Բրուքլինգսի ինստիտուտը նախաձեռնեց 5-10 էջ ծավալով քաղաքական հարցերի վերաբերյալ տեղեկագրերի նոր մատենաշարի թողարկումը, ինչը թույլ էր տալիս այդ հաստատության գիտնականներին հակիրճ և մատչելի օպերատիվորեն արտահայտվել արդիական հարցերի մասին: Արձագանքելով քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին՝ Ձեռնարկատիրություն ամերիկյան ինստիտուտը (*American Enterprise Institute*) 1980-ականների վերջից փոխեց իր *American Enterprise* ամսագրի ձևաչափը: Ներկայումս հաստատությունն առավել քիչ է գիրք հրապարակում, իսկ հրապարակվող գրքերը գիշում են նախորդներին իրենց ծավալով: Ձեռնարկատիրության ամերիկյան ինստիտուտը հիմնական ուշադրությունը հատկացնում է առավել փոքր ծավալի մենագրություններին և այլ հրապարակումներին, որոնց նախապատրաստման և թողարկման համար ոչ այնքան շատ ժամանակ է պահանջվում: Հաստատության աշխատակից և *American Enterprise* ամսագրի նախկին խմբագիր Կարլին Բոումանը (*Karlyn Bowman*) նշում է. «Մենք վստահ ենք, որ մեր օրերում մարդիկ արդեն չեն կարողում գրքեր այնպես, ինչպես

անուամբ էին նախորդ տարիներին: Ինչքան համառոտ է գիրքը, այնքան արագ է այն հնարավոր հրապարակել»²⁷²:

Խնդրի ուսումնասիրության համատեքստում հետաքրքրական է նաև Եվրամիության (ԵՄ) ուղեղային կենտրոնների ոլորտում ազդեցության գնահատման հարցը: Այսպես, հետազոտող Յ. Ուլրիխը նշում է, որ թեև ընդհանուր առմամբ ԵՄ քաղաքական գործընթացում ԵՄ ուղեղային կենտրոնների ազդեցությունը սահմանափակ է, այնուամենայնիվ, այդ հաստատության ներքին ազդեցությունը տեղի է ունենում երեք փոխկապակցված աղբյուրներից.

- *փորձի վրա հիմնված լիազորություններ*. ազդեցությունն ձեռք բերելու համար ուղեղային կենտրոնները պետք է լավ տիրապետեն տեղեկատվությանը, ունենան որակյալ վիճակագրություն և հետազոտություններ,
- *անկախ և հավասարակշռված տեսակետի առաջ մղում*. ԵՄ քաղաքական գործիչների կարծիքների նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես Բրյուսելում տեղակայված ուղեղային կենտրոնների անկախության բարձր մակարդակի պատճառով վերջիններս դիտարկվում են որպես քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության և երաշխավորությունների վստահելի աղբյուր և վայելում են «բարոյական հեղինակություն»,
- *լեզվաբանական*. Լեզվաբանական հարցերը մեծապես կախված են հեղինակության ճանաչումից: Հետազոտողների փորձառության գործունը նույնպես

²⁷² *Рич Э., Уивер К.*, укр. соч., с. 80.

պայ մանավորում է ուղեղային կենտրոնների հեղինակությունը: Քաղաքական գործիչները կենտրոնացրել են իրենց ուշադրությունը որոշ ուղեղային կենտրոնների առանձնահատկությունների վրա՝ մատնանշելով նրանց՝ քաղաքական սուբյեկտների լայն շրջանակ միավորելու կարողությունը, ինչպես նաև դրանց՝ ԵՄ քաղաքականության հարցերի լուծման ունեցած փորձը:

Յետագոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ ԵՄ ուղեղային կենտրոնները ԵՄ քաղաքականության մշակման գործընթացի վրա ունեն երեք տեսակի ազդեցություն.

- *հանդես են գալիս որպես քննարկումների հարթակ.* ԵՄ քաղաքականություն մշակողների համախմբումը միության քաղաքականության վրա ունենում է առանցքային ազդեցություն: ԵՄ ուղեղային կենտրոնները հնարավորություն են ընձեռում և հարթակ տրամադրում քաղաքականության տարբեր դերակատարներին, այդ թվում՝ պետական ծառայողներին, քաղաքական գործիչներին, լոբբիստներին, հասարակության շահագրգիռ անդամներին՝ քննարկումների, գաղափարների և տեղեկատվության փոխանակման հնարավորությունների ընդարձակման համար,
- *հանդես են գալիս որպես քննարկումների խթանիչ.* հաշվի առնելով քննարկումների խթանիչի իրենց հնարավորությունը՝ ուղեղային կենտրոնները կարող են նաև ազդեցություն ունենալ: Այն կապված է ուղեղային կենտրոնների կողմից

քաղաքականությունը վերլուծության, այլընտրանքային գաղափարների մշակման և համապատասխան տեղեկատվության ներկայացման հետ: Առաջին հերթին ԵՄ քաղաքականությունը օրակարգի ձևավորման փուլում քաղաքական գաղափարների և հայեցակարգերի ներկայացման միջոցով ուղեղային կենտրոնները խթանում են քննարկումներ,

- *մշակում են միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարություններ*. ի տարբերություն քաղաքական գործիչների, հատկապես պետական ծառայության մեջ գտնվողների՝ ուղեղային կենտրոններն ի վիճակի են լուծելու երկարաժամկետ խնդիրներ, ինչպես նաև այնպիսի հարցեր, որոնք այլ քարոզ են մերժել որպես ոչ իրատեսական ²⁷³:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ հանրային քաղաքականություն և որոշում կայացնողների վրա ուղեղային կենտրոնների ազդեցության խնդիրը տվյալ ոլորտի ուսումնասիրության ամենաբարդ հարցերից է: Այնուամենայնիվ գոյություն ունեն ուղեղային կենտրոնների ազդեցության չափման քանակական և որակական ցուցանիշներ, սակայն հաշվի առնելով տեխնոլոգիական հասանելիությունը՝ ուղեղային կենտրոնների ակտիվության և ազդեցության չափման առավել տարածված մեթոդ է համարվում քանակական վերլուծությունը: Ազդեցության օբյեկտիվ պատկերը ստանալու համար անհրաժեշտ է համապարփակ ուսումնասիրություն կատարել և հստակեցնել յուրաքանչյուր ուղեղային կենտրոնի ռեսուրսային բազան՝ ճշգրիտ

²⁷³ *Ullrich H.*, European Union think tanksL generating ideas, analysis and debate // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by *Stone D.* and *Denham A.*, Manchester University Press, Manchester and New York, 2004, pp. 66-67.

գնահատելով որոշակի կազմակերպության կադրային, կազմակերպական, ինտելեկտուալ, նյութական, սոցիալական, հանրային և խորհրդանշական կապիտալը:

Ակնհայտ է նաև, որ XXI դարում ազդեցության ընդլայնման, իրենց ձայնը հանրությանը, բիզնես շրջանակներին և քաղաքական որոշումներին կայացման համար պատասխանատու անձանց առավել լսելի դարձնելու, միաժամանակ հանրային կարծիքի ձևավորման վրա ազդելու և որոշումներին կայացման գործընթացում իրենց դերակատարության մեծացման նպատակով ուղեղային կենտրոնները կիրառում են բազմաթիվ գործիքներ և հնարքներ, իրականացնում են ազդեցիվ մարքեթինգային քաղաքականություն, օգտվում են բոլոր հնարավոր հարթակներից և օգտագործում են տեղեկատվական տեխնոլոգիաներն ու համացանցի ընձեռած ժամանակակից հնարավորությունները:

Ամփոփելով նշենք, որ չնայած ուղեղային կենտրոններին ազդեցությունը հանրային քաղաքականության վրա համարվում է նման հաստատություններին աշխատանքի արդյունավետության գնահատման առանցքային ցուցիչներից մեկը, սակայն գոյություն ունեն նաև այլ ցուցիչներ և ցուցանիշներ, որոնք հաջորդիվ նույնպես կփորձենք վերհանել և քննարկել:

**3.3. ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

XXI դարում հանրային քաղաքականության տարբեր ոլորտներում մշտապես մեծանում է «փափուկ ուժի» գործիքակազմի կիրառման անհրաժեշտությունը, և

այդ անհրաժեշտությամբ պայմանավորված կատարելագործվում են նաև հասարակության «սրտերի և մտքերի» համար մղվող պայքարի մեթոդները: Այս համատեքստում հարկ է նշել, որ մեր օրերում ուղեղային կենտրոնները դարձել են ոչ միայն ինքնատիպ ինտելեկտուալ հարթակներ՝ նման հարցերի ուսումնասիրության և այդ ոլորտում ռազմավարական մշակումներ իրականացնելու համար, այլ նաև շատ դեպքերում վեր են ածվել ներքին ու արտաքին քաղաքականության ակտիվ դերակատարների:

Փաստ է, որ վերջին տասնամյակները, ինչպես Յայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում, մշտապես ուղեկցվել են ուղեղային կենտրոնների քանակական աճով և հանրային քաղաքականության մեջ վերջիններիս դերակատարության մեծացմամբ: XXI դարում ուղեղային կենտրոնների գործունեության առանձնահատկությունների վերլուծությունը փաստում է, որ աշխարհի բազմաթիվ երկրներում դրանք ստանձնել են ազգային շահ սպասարկող հաստատությունների դերակատարություն և քաղաքական համակարգում սեփական ազդեցության մեծացմանը զուգահեռ իշխանության առանձին բևեռ են ձևավորել:

Յենց վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ տարեցտարի ամբողջ աշխարհում հասարակության, քաղաքական վերնախավի և ակադեմիական շրջանակներում ավելանում է ուղեղային կենտրոնների գործունեության նկատմամբ հետաքրքրությունը: Լոկյս են տեսնում ուղեղային կենտրոնների սկզբնավորման պատմությանը, զարգացման փուլերին, շարժընթացին նվիրված բազմաթիվ գիտական աշխատանքներ, որտեղ ներկայացվում են տարբեր երկրներում գործող ուղեղային կենտրոնների ծագումը, տի-

պաբանությունը, կառուցվածքը, զարգացման միտումները, հետազոտություններին ուղղվածությունը, գործառույթները, գաղափարախոսությունը, պետություն, հասարակություն և միմյանց միջև փոխգործակցության, համագործակցության առանձնահատկությունները, դերակատարությունը հանրային քաղաքականության մեջ, ազդեցությունը քաղաքական վերնախավին ու հասարակության վրա և այլն: Ուսումնասիրելով այս միտումները՝ կարելի է արձանագրել, որ ժամանակակից ուղեղային կենտրոնների գործունեությունը դարձել է քաղաքագիտական ուսումնասիրությունների կարևոր օբյեկտներից մեկը:

Չարկենանշել, որ ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականության հաստատուն միավորներ չեն և, ինչպես ցանկացած այլ քաղաքական ինստիտուտ, պատմության հոլովունյթում անընդմեջ զարգացում են ապրում: Այդ ոլորտի զարգացման շարժընթացին համակարգված հետևելու, գործունեությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով տարբեր երկրներում երբեմն կիրառվում են վարկանիշավորման համակարգեր, որոնց արդյունքներն արտացոլվում են համապատասխան կազմակերպությունների կողմից հրապարակվող զեկուլյցներում: Մյուս կողմից, ակնհայտ է, որ արտերկրի կամ տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակվող վարկանիշային զեկուլյցներն ազդեցության գործուն գործիք են և երբեմն կարող են միտված լինել ոչ միայն կամ ոչ այնքան առկա օբյեկտիվ պատկերը ներկայացնելուն, այլև կազմակերպական որոշակի մոդել կամ գործունեության ձևաչափ ձևավորելուն, վարքաձև, գործելանձ սահմանելուն, որոշ դեպքերում էլ կարող են ունենալ քողարկված

գաղափարախոսական կամ քաղաքական
ուղղորդումներ:

Ակնհայտ է, որ վերջին տասնամյակներում
համացանցի, ինչպես նաև տեղեկատվության
հավաքման, մշակման, վերլուծության ու
փոխանցման տեխնոլոգիաների ու մեթոդների
վերընթաց զարգացումը թույլ է տալիս
համաշխարհային մակարդակով հրականացնել
տնտեսական, քաղաքական, սոցիոլոգիական ու ռոտի
հետազոտություններ՝ միաժամանակ
օգտագործելով առկա բացառիկ տվյալների
բազաները և հայրենական ու արտերկրի
փորձագետների կարողությունները:

Վերոնշյալի համատեքստում նկատենք, որ
ուղեղային կենտրոնների վարկանիշավորման
գլոբալ շուկայում ամենահայտնի
հաստատությունը ԱՄՆ-ի Փենսիլվանիայի
համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային
կենտրոններ և քաղաքացիական հասարակություն»
ծրագիրն է, որը ղեկավարվում է ուղեղային
կենտրոնների ուսումնասիրության ու ռոտի
հայտնի փորձագետ Ջեյմս Մաք-Գանի կողմից:

Պետք է նշել, սակայն, որ վերոնշյալ
վարկանիշավորման գեկոլյցը գերծ չէ մի շարք
թերություններից, որոնք առանձին դեպքերում
հանգեցնում են ոչ օբյեկտիվ պատկերի ձևավորման:
Մասնավորապես վարկանիշավորման գեկոլյցի
առանցքային խնդիրներից է յուրաքանչյուր
երկրում ուղեղային կենտրոնների ճշգրիտ
թվաքանակի բացահայտման, ուղեղային
կենտրոնների գործունեության և թվաքանակի աճի
կամ նվազման շարժընթացի ամենամյա հաշվառումը:
Այսպես, 2017 թ. հունվարին հրապարակված գեկոլյցի
համաձայն՝ ՀՀ-ում գործում է 14 ուղեղային

կենտրոն²⁷⁴: Մյուս կողմից, մեր գնահատականներով
ՀՀ-ում գործում են մի քանի անգամ ավելի շատ
կազմակերպություններ, որոնք այս կամ այն չափով
կարելի է դասել ուղեղային կենտրոնների
շարքում: Ընդ որում, դրանցից շուրջ երկու
տասնյակը բավականին ակտիվ գործունեություն են
ծավալում: Նկատելի բացթողումներից են այն, որ
ընդհանրապես չեն հիշատակվել ՀՀ ուղեղային
կենտրոնների ոլորտում այնպիսի կայացած
կենտրոններ, ինչպիսիք են, օրինակ, ՀՀ պաշտ-
պանությունն ախարարության Դրաստամատ Կանայանի
անվան Ազգային ռազմավարական հետա-
զոտությունների ինստիտուտը (ներկայումս՝ ՀՀ ՊՆ
Պաշտպանական ազգային հետազոտական
համալսարանի հետազոտական բաղադրիչ), Կովկասի
ինստիտուտը, «Նորավանք» գիտակրթական
հիմնադրամը, Միջազգային և անվտանգության
հարցերի հայկական ինստիտուտը, Հայաստանի
պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ»
հետազոտական կենտրոնը և այլն: Ընդ որում, սա-
փաստարկված չէ միայն ՀՀ ուղեղային կենտրոնների
բնագավառի մեր դիտարկումներով: Մասնավորապես
Լաուդերի ինստիտուտի՝ 2016 թ. վարկանիշում
չներառված վերոնշյալ հայկական կենտրոնները
նույն թվականին ԱՊՀ-ի տարածաշրջանում առաջատար
ուղեղային կենտրոններից մեկի՝ ՌԴ նախագահին
առընթեր Բազմավարական հետազոտությունների
ռուսաստանյան ինստիտուտի կողմից հրապարակված
«Ուղեղային կենտրոնները ԱՊՀ-ի երկրներում և
Վրաստանում. կառուցվածքը, նպատակները, զարգաց-
ման հիմնական միտումները» գեկոլյցում ներառվել

²⁷⁴ James G. McGann, 2016 Global Go To Think Tank Index Report // University of Pennsylvania, The Lauder Institute, Think Tanks and Civil Societies Program, 2017, p. 28. // URL: http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1011&context=think_tanks

Են իբրև ՀՀ առաջատար ուղեղային կենտրոններ ²⁷⁵: Ավելին, նույն ՌԴ նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտություններին ռուսաստանյան ինստիտուտը ներառված չէ Լաոս դերի ինստիտուտի կողմից հրապարակվող վարկանիշում (ո՛չ գլոբալ վարկանիշում, ո՛չ Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի վարկանիշում ²⁷⁶): Դա այն դեպքում, որ նույն ամերիկացի փորձագիտական շրջանակների գնահատմամբ վերջինն այնպիսի ազդեցիկ կենտրոն է, որին անգամ ամերիկյան Լրատվամիջոցները մեղադրում էին ԱՄՆ-ի վերջին նախագահական ընտրությունների արդյունքների վրա ազդելու տեսնելու լոգիաների և տեղեկատվական դաշտում ամերիկացի ընտրողների կողմնորոշմանն ուղղված քայլերի մշակման մեջ ²⁷⁷: Թեև ռուսական կողմը հերքում է նման մեղադրանքները ²⁷⁸, սակայն ամերիկյան կողմի ռուսական վերոնշյալ հաստատության ազդեցության ճանաչման փաստը ինքնին խոսում է:

Չնայած, ըստ գեկոլյցի հեղինակների, վերոնշյալ վարկանիշավորման մեթոդաբանությանն ամեն տարի կատարելագործվում է, սակայն վերջինիս թերություններին պարբերաբար անդրադառնում են բազմաթիվ մասնագետներ: Այսպես, ոլորտի ճանաչված պերուացի փորձագետ է Մենդիգաբալը, ով ուղեղային կենտրոնների գլոբալ հարթակի՝ «On Think Tanks» նախածեռնությունների հիմնադիրն է, ի թիվս տարբեր թերությունների, նշում է, որ առանցքային խնդիր է մնում գեկոլյցի

²⁷⁵ *Гузенкова Т.С., Петровская О.В., Александров Д.А., Попов Д.С., Неменский О.Б., Каширин В.Б., Иванов В.А., Ипполитов И.В., Шевченко А.М., Сургуладзе В.Ш., Лихачев М.А., Андреева Е.С., Крамарова Е.Н.*, «Мозговые центры» в странах СНГ и Грузии: структура, задачи, основные тенденции развития // «Проблемы национальной стратегии», № 1 (34), 2016, с. 52-54.

²⁷⁶ Տարածաշրջանային վարկանիշերում ներառված կենտրոններից շատերը ներառված չեն Լինոլմ ընդհանուր վարկանիշում (քանի որ այն 150 կենտրոնի կտրվածքով է):

²⁷⁷ Տե՛ս *Ned Parker, Jonathan Landay, John Walcott*, Putin-linked think tank drew up plan to sway 2016 US election - documents // URL: <http://www.reuters.com/article/us-usa-russia-election-exclusive-idUSKBN17L2N3>

²⁷⁸ Տե՛ս «Директор РИСИ М. Е. Фрадков ответил на публикацию агентства Reuters», (20/04/2017) // URL: <https://riss.ru/events/40207/>

հեղինակները կողմից ուղեղային կենտրոնի սահմանման խնդիրը, քանի որ գեկոլյոցում արտացոլվում են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսին է *Amnesty International*-ը, որը կարելի է բնութագրել որպես միջազգային ոչ կառավարական կազմակերպություն, բայց ոչ ուղեղային կենտրոն: Ավելին, նրա կարծիքով նման մեթոդով իրականացվող վարկանիշավորումը վտանգավոր է, քանի որ վերջինս առավելապես նպատակաուղղված է ներդրումների խթանմանը և ուղեղային կենտրոնների տեսանելիության բարձրացմանն ու պրոֆիլի գարգացմանը, քան բուն հետազոտության և հետազոտական ներուժի կատարելագործմանը²⁷⁹:

Վերոնշյալ հարցի կապակցությամբ հետաքրքրական է նաև ՅՊՏՅ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից Ծ.Մովսիսյանի դիտարկումը, ով, վերլուծելով նույն կազմակերպության՝ 2015 թ. գեկոլյոցը, նշում է.

- վերոնշյալ գեկոլյոցում ուղեղային կենտրոններին բավականին լայն սահմանում է տրվում, ինչի արդյունքում որոշ կազմակերպություններ, որոնք փաստացի վերլուծական կենտրոն չեն, ներառվում են վարկանիշավորման տվյալների բազա, իսկ որոշ ուղեղային կենտրոններ դուրս են մնում այդ ցուցակից: Օրինակ, «Ջամալ սարանին կից գործող լավագույն ուղեղային կենտրոններ» կատեգորիայում ընդգրկված է Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտ (MGIMO) համալսարանը: «Կրթական քաղաքականության ոլորտում լավագույն վերլուծական կենտրոն» կատեգորիայում

²⁷⁹ *Mendizabal Enrique*, Another year, another ranking of think tanks (and surprise surprise, Brookings is still the best), (21/01/2011) // URL: <http://onthinktanks.org/2011/01/21/another-year-another-ranking-of-think-tanks-and-surprise-surprise-brookings-is-still-the-best/>

Ներկայացված Կրթություն և վերապատրաստման բաժինը (Education and Training Unit), ըստ էության, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ICHD) մի ստորաբաժանում է:

- Չկան կենտրոններին գնահատման քանակական չափորոշիչներ. գեկոլյցում ներկայացվում է 28 չափանիշ, որոնցով փորձագիտական խորհրդի անդամները պետք է առաջնորդվեն վարկանիշավորում հրականացնելիս: Տվյալ չափորոշիչներին մեծ մասն օբյեկտիվ գնահատման ենթակա չէ (օրինակ, «քաղաքական իշխանություն և հասարակություն միջև խզումը հաղթահարելու կենտրոնի ունակությունը»): Բացակայում են խորհուրդներում փորձագետների ընդգրկման հստակ չափորոշիչներ. փորձագետների ընտրությունը կատարվում է վերլուծական կենտրոններին առաջարկությամբ:
- Յուրաքանչյուր կատեգորիայի համար փորձագետների առանձին խորհուրդ է կազմվում, արդյունքում նույն կենտրոնը գեկոլյցի տարբեր կատեգորիաներում երբեմն ստանում է իրար հակասող գնահատականներ: Օրինակ, 2014 թ. Վրաստանի «Խաղաղության, ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտը» (Caucasus Institute for Peace, Democracy and Development) աշխարհի լավագույն ուղեղային կենտրոններին շարքում գրադեցնում է 150-րդ տեղը, այն դեպքում, երբ «Կենտրոնական Ասիայի առաջատար ուղեղային կենտրոններ» կատեգորիայում հետ է մնում լավագույն կենտրոններին ցանկում չներառված մի շարք այլ կենտրոններից, օրինակ՝ հայաստանյան «Արմատ» ժողովրդավարության և քաղաքացիական զարգացման կենտրոնից:

- Գնահատվում են ոչ թե որոշակի ժամանակահատվածում (օրինակ, 2014 թ.) վերլուծական կենտրոնների գործունեության արդյունքները, այլ դրանց գործունեությունը նդհանրապես: Վարկանիշավորման աղյուսակում նախորդ տարվա համեմատությամբ ավելի բարձր դիրքեր գրադեցնելն ուղղակիորեն չի բխում տվյալ ժամանակահատվածում ավելի և՛ արդյունքներ ցուցաբերելուց²⁸⁰:

Ըստ երկրան մատնանշված բացթողումները պայմանավորված են ինչպես վարկանիշավորման հիմքում ընկած մեթոդաբանության ու սահմանված գործունեության թերություններով, այնպես էլ վարկանիշավորմանը մասնակցող փորձագետների գնահատման սուբյեկտիվությամբ և հատկապես տեղեկատվության հավաքման ու մշակման գործընթացում առկա թերություններով: Ընդ որում, շատ դեպքերում հենց սահմանված գործունեության էլ սուբյեկտիվ գնահատումների պատճառ են դառնում, քանի որ դրանցից շատերը, պայմանավորված դիտարկվող երկրների առանձնահատկություններով, միասնական գնահատման հնարավորություններ չեն ընձեռում: Չասկանալու համար խնդիրները դիտարկելն ըզգեկույցի պատրաստման մեթոդաբանության հիմքում ընկած գործունեության ու դրանց ընկալման, գնահատման կամ դրսևորման առանձնահատկությունները՝ ըստ տարբեր երկրների: Փաստացի զգեկույցի պատրաստման հիմքում ընկած են հետևյալ չափանիշները²⁸¹.

²⁸⁰ **Մոլսիսյան Շ.**, Վերլուծական կենտրոնների վարկանիշավորման մեթոդաբանական հարցեր (մայիս, 2015), էջ 2-3:// URL: <http://media.asue.am/upload/TTmethodology.pdf>
²⁸¹ Տե՛ս **James G. McGann**, opt. cit., pp. 21-23.

- *Ուղեղային կենտրոնների ղեկավարող թյան նրակավորումը և հանձնառությունը.* կազմակերպող թյան առաքելության և ծրագրերի արդյունավետ կառավարում, առաքելության իրագործման համար անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսների համախմբում և որակի մշտադիտարկում, ուղեղային կենտրոնի անկախությունը ազդեցությունը:
- *Ուղեղային կենտրոնների աշխատակազմի նրակավորումը և հեղինակությունը.* համապատասխան հետազոտության ասպարեզում կայացած, ճանաչված, փորձառու, բարձրակարգ և արտադրունակ գիտնականների, փորձագետների և վերլուծաբանների կրիտիկական զանգվածի ներգրավելու կարողությունը:
- *Կատարած հետազոտության և վերլուծության նրակությունը հեղինակությունը.* քաղաքականություն մշակողների, մամուլի և հանրության համար հասանելի՝ բարձրորակ, ճշգրիտ, քաղաքականության որոշակի ոլորտում հետազոտությունը իրականացնելու կարողությունը:
- *Ակադեմիական գործունեությունը և հեղինակությունը.* իրականացվող հետազոտություններում ակադեմիական խստապահանջությունը, գիտական հրապարակումներ (գրքեր, թերթեր, զեկուլցումներ և այլ գիտնականների աշխատանքներում տվյալ ուղեղային կենտրոնի մասնագետների հրապարակումների վրա արված հղումներ):
- *Չրապարակումների որակ, քանակ և հասանելիությունը:*
- *Ուղեղային կենտրոնների հետազոտությունների և ծրագրերի ազդեցությունը քաղաքականությունը*

մշակողներին և քաղաքականության այլ դերակատարներին վրա. քաղաքականության երաշխավորություններ, որոնք դիտարկվել կամ պարզապես ընդունվել են քաղաքականություն մշակողներին, քաղաքացիական հասարակության կամ քաղաքականության ոլորտի այլ դերակատարներին կողմից:

- *Քաղաքականություն մշակողներին մոտունեցած հեղինակությունը*. ռազմավարական փաստաթղթերի, ծրագրերի մշակում, գործադիր ու օրենսդիր մարմիններում պաշտոնական ընդունելություններին պարբերականություն և այլն:
- *Անկախ հետազոտություն և վերլուծություններ հրակայանացնելու հանձնառության ցուցաբերում*. ճշգրիտ փաստերի վրա հիմնված հետազոտություններին և վերլուծություններին հրակայանացում, որոնք տեղադրվում և վերահսկվում են կազմակերպության, հետազոտական թիմերի և անհատ հետազոտողներին կողմից: Սա նաև ընդգրկում է շահերի բախման բացահայտումը (\$ինանսական, ինստիտուցիոնալ կամ միջանձնային), ապակուսակցական հանձնառության և հասարակագիտական ոլորտում հետազոտության հրակայանացման համար մասնագիտական չափանիշները:
- *Առանցքային կառույցներ մուտքի հնարավորություններ*. կապեր հաստատելու կարողություններ և մուտք դեպի առանցքային և սարաններ ու աշխատակազմեր, ինչպիսիք են՝ պետական պաշտոնյաներ (ընտրովի և նշանակովի), քաղաքացիական հասարակություն, ՉԼՄ-ներ և ակադեմիական հաստատություններ:
- *Քաղաքական դերակատարներին հրավիրելու, ինչպես նաև վերջիններին և այլ ուղեղային*

կենտրոններին հետ արդյունավետ ցանցեր ու
համագործակցություններ հաստատել ու
կարողություններ:

- Կազմակերպություններ գործունեություններ
ընդհանուր արդյունք. քաղաքականություն
շուրջ առաջարկներ, ճեպագրություններ,
համացանցային կայքայցելություններ, հրապարակումներ,
հարցազրույցներ, գիտաժողովներ և
կենտրոնի աշխատակազմի
ներկայացուցիչների՝ պետական
պաշտոններում նշանակումներ:
- Յետագոտություններին, քաղաքականություններ
Հայտնի է, որ ակադեմիական հաստատությունների հիմնական առաքելությունը հիմնարար ակադեմիական բնույթի հետազոտություններն են: Այդ համատեքստում պետք է նշել, որ որոշ ակադեմիական հաստատություններ (ինչպես, օրինակ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը) կարող են իրականացնել նաև ուղեղային կենտրոններին բնորոշ գործառնություններ, մասնավորապես, պետական իշխանության տեղեկատվական-վերլուծական ապահովման առումով: Ըստ Դ. Չայցևի, հենց նման «հիբրիդային» ձև են ժամանակին ունեցել խորհրդային ակադեմիական հաստատությունը, ինչպիսիք են Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտը, ԱՄՆ-ի և Կանադայի ինստիտուտը և այլն ³⁰⁷:

Ավելացնենք նաև, որ որոշ երկրներում (օրինակ՝ Չինաստանում) քաղաքական մշակույթի առանձնահատկությունն էլ նեղված՝ ակադեմիական հաստատությունները նույնպես հաշվառվում են որպես ուղեղային կենտրոններ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ ինստիտուտների խոր և առավելապես ակադեմիական բնույթը, ինչպես նաև՝ առաջնորդվելով հանրային քաղաքականության փորձագիտական-վերլուծական կառույցների և ակադեմիական հաստատությունների հստակ տարանջատման սկզբունքով՝ նպատակահարմար ենք գտնում այս առեւտրային տնտեսության շրջանակներում ՀՀ ԳԱԱ հասարակագիտական հաստատությունները չդասել ուղեղային կենտրոնների շարքում:

³⁰⁶ ՀՀ ԳԱԱ պաշտոնական կայք // URL: <http://www.sci.am/index.php?p=1&langid=3>

³⁰⁷ *Зайцев Д.Г.*, Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук., 23.00.02 – Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии. М., 2009, с. 64.

Նշեմք, որ ժամանակակից իմաստով ուղեղային կենտրոնների ձևաչափին համապատասխանող առաջին պետական հաստատությունը հիմնադրվեց 2000 թ., երբ ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը (ԳԿՀ): Ներկայումս հաստատությունը ռազմավարական հետազոտությունների և նորարարական մշակումների Հայաստանի առավելակտիվ և առաջատար կազմակերպություններից է, որը գործում է ուղեղային կենտրոնների ոճով: Հիմնադրամում գործում է թվով հինգ կենտրոն.

1. հայագիտական,
2. քաղաքական հետազոտությունների,
3. տեղեկատվական հետազոտությունների,
4. ուսումնական,
5. հրատարակչական-տեղեկատվական³⁰⁸:

«Նորավանք» ԳԿՀ-ում հրապարակվում է եռալեզու «21-րդ ԴԱՐ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գիտական և «ԳԼՈԲՈՒՄ» վերլուծական պարբերականները:

2005 թ. ՀՀ պաշտպանության նախարարության կազմում՝ որպես ապագա Պաշտպանական ազգային համալսարանի հետազոտական քաղաքիչ, ստեղծվել է Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ՀՀ ՊՆ ԱՌՀԻ): Այսպես, 2003 թ. ՀՀ պաշտպանության նախարար, ՀՀ գործող Նախագահ Ս. Սարգսյանի հանձնարարությամբ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանում (ՊԱՀ) ուսումնասիրվել է ՊԱՀ-ի ամերիկյան մոդելը՝ ՀՀ-ում տեղայնացմամբ ՊՆ կազմում նմանատիպ կազմակերպություն ստեղծելու համար: Որպես այդ բարդ գործընթացի մեկնարկային փուլ՝ 2005 թ. ստեղծվեց ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ՀՀ ՊՆ ԱՌՀԻ), որը, լինելով քաղաքագիտական-անվտանգային

³⁰⁸ «Նորավանք» ԳԿՀ պաշտպանական կայք // URL: <http://noravank.am/arm/about/structure.php>

ուղեղային առաջին պետական կենտրոնը, դարձավ «Յայաստանի
 Յանրապետության ազգային
 անվտանգության նազմավարության» և «Յայաստանի
 Յանրապետության նազմական դոկտրինի»
 միջգերատեսչական մշակման մեթոդաբանության
 կերտողն ու գիտական համադասողը: 2007 թվականից
 ԱՌՀԻ-ն կատարում է տարածաշրջանային և
 ֆունկցիոնալ հետազոտություններ՝ Յայաստանի
 նազմաքաղաքական դեկավարությանը տրամադրելով
 արտաքին մարտահրավերներին ու սպառնալիքներին
 գնահատումներ և դրանց չեզոքացմանը վերաբերող
 առաջարկություններ³⁰⁹: Ինչպես նշում է վերոնշյալ
 ինստիտուտի պետև դրաստեղծման գիտական նախագծի
 հեղինակ, ք.գ.դ. Յ. Քոթանջյանը, ՅՅ ՊՆ ԱՌՀԻ-ն իր
 գործունեության տարիներին վերածվեց մի գիտահե-
 տազոտական կառույցի, որը, ժամանակին արձագան-
 քելով հանրապետության և նրաշուրջը ձևավորված
 անվտանգային միջավայրում ծագող պրոբլեմներին,
 համապատասխան գիտակիր առական
 վերլուծություններով կողմնորոշում էր
 պետության նազմաքաղաքական դեկավարությանը,
 առաջին հերթին՝ ՅՅ ՉՈԻ-ի Գերագույն գլխավոր
 հրամանատարին և Պաշտպանության նախարարին,
 անվտանգության ոլորտում նազմավարական
 որոշումներին ընդունման ասպարեզում: Միևնույն
 ժամանակ, Ինստիտուտում գործող անվտանգային
 քաղաքագիտության գծով ասպիրանտուրան և
 դոկտորական աստիճաններ շնորհող մասնագիտական
 խորհուրդը հետզհետե վերածվեցին տվյալ
 ոլորտում գիտական որակավորում ունեցող երիտա-

³⁰⁹ **Քոթանջյան Յ., Պողոսյան Բ., Փարվանյան Մ.,** ՅՅ ՊՆ Ազգային
 նազմավարական հետազոտություններին և Ինստիտուտի կողմից
 ՅՅ պաշտպանական-անվտանգային քաղաքականության գիտական
 բաղադրիչի ապահովման 2013 թ. ծրագիր // «Աշխատանքային
 տետրեր», ՅՅ ՊՆ Դ. Կանայանի անվ. Ազգային նազմավարական
 հետազոտություններին ինստիտուտի «Յայկական բանակ»
 նազմագիտական հանդեսի հավելված, N4(24), 2012, էջ 107:

սարդ խոստումնալից կադրերի դարբնոցի, կադրերի որոնք իրենց մտավոր ներուժն ու գիտելիքներն իսպաս դնելով ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործին, նպաստում են երկրում քաղաքագիտական միջավայրի ներդաշնակեցմանն ու համասեռացմանը³¹⁰: Ինստիտուտը զգալի գործունեություն է ծավալել նաև միջազգային ասպարեզում: Դրանով լավ նախադրյալներ են ստեղծված առաջավոր մտավոր կենտրոնների հետ կապերի հետագա սերտացման համար: Այս առումով հատկապես կարևոր է երևանում ամենամյա ռազմավարական քաղաքական ֆորումների կազմակերպումը: Դրանց, ՀԱՊԿ-ի ներկայացուցիչներից բացի, մասնակցում են փորձագետներ նաև արևմտյան պետություններից, ինչի շնորհիվ Հայաստանը, ՌԴ-Արևմուտք հարաբերությունների սրման պարագայում, դարձավ երկու կողմերի համար գիտավերլուծական երկխոսության հարթակ՝ ամրապնդելով և բազմազանեցնելով իր անվտանգության միջազգային երաշխիքները³¹¹: Ինստիտուտը գործընկերային հարաբերություններ էր հաստատել միշտ քառաշատար հաստատությունների հետ, ինչպիսիք են՝ Հարվարդի համալսարանը, Սևծովյան անվտանգության ծրագիրը, ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանը, Արտաքին քաղաքականության ամերիկյան խորհուրդը, Բրանսնի համալսարանը, Քարնեգիի հիմնադրամը, Օքսֆորդի համալսարանը, Չաթեմ Հոլը, Լինոնի ժան Մուլլին համալսարանը, Մոսկվայի միջազգային

³¹⁰ **Քոթանջյան Յ.**, ԱՄՆ-ի և ՌԴ առաջատար ուղեղային կենտրոնների հետ համագործակցությունը ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կերպափոխումը ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի // «Աշխատանքային տետրեր», ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, N3(35), 2015, էջ 7:
³¹¹ Նույն տեղում, էջ 10:

հարաբերություններն էլ պետական ինստիտուտը, Ռազմավարական հետազոտություններին նույնպես չեն հասնում, ՌԴ Գիտություններին ակադեմիայի Յամաշիտարիան է կոնոմիկայի և միջազգային հարաբերություններին նույնպես չեն հասնում, Քաղաքական գիտություններին նույնպես չեն հասնում, ՅԱՊԿ-ի ինստիտուտը, ՅԱՊԿ-ի գիտափորձագիտական խորհուրդը, Ղազախստանի նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտություններին նույնպես չեն հասնում, Բելառուսի նախագահի աշխատակազմին առընթեր տեղեկատվական-վերլուծական կենտրոնը և այլն³¹²:

2016թ. հունվարին ինստիտուտի հենքի վրա որպես ՅԱՊԿ-ի ակադեմիային անվտանգության մտավոր ապահովման «խելացի ուժի» ռազմավարական գործիք բացվեց ՅԱՊԿ-ի աշխատանքային նախարարության Պաշտպանական ակադեմիան հետազոտական համալսարանը: Տարածաշրջանում բնույթով տեղեկատվական հետազոտական համալսարանի նպատակն է ՅԱՊԿ-ի անվտանգային-պաշտպանական համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացումը՝ հետազոտական և կրթական գործունեության կամրջմամբ: Յամալսարանի խնդիրներն են շարքում են տարածաշրջանային անվտանգության դինամիկայի, կիբեռանվտանգության, տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների, ռազմավարական խաղերի, ինչպես նաև կիբեռթվային ռեսուրսներին կառավարման ուղղություններով հետազոտություններին կատարումը: Դրանց հիման վրա ՅԱՊԿ-ի ռազմաքաղաքական դեկավարությունը ներկայացվում են համապատասխան վերլուծություններ:

³¹² Տ՛ե ս **Պողոսյան Բ., Ավետիսյան Մ., Գիգորյան Ա.**, Ազգային ռազմավարական հետազոտություններին ինստիտուտը՝ որպես ՅԱՊԿ-ի Պաշտպանական ակադեմիան հետազոտական համալսարանի հետազոտական բաղադրիչ // «Աշխատանքային տերեր», ՅԱՊԿ-ի Կանայանի անվ. Ազգային ռազմավարական հետազոտություններին ինստիտուտի «Յայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, N3(35), 2015, էջ 37-38:

յ ու ն ն ե ր և առաջարկ ու թյ ու ն ն ե ր , ի ն չ ը ն պաստու մ Ե պե տու թյ ան ղ ե կ ա վ ա ր կ ա զ մ ի ք ա ղ ա ք ա կ ան - ան վ տ ա ն գ ա յ ի ն գ ի տ ե լ ի ք ն ե ր ի ը ն դ լ ա յ ն մ ա ն ա պ ա հ ո վ մ ա ն ը ³¹³: Հ ա ս տ ա տ ու թյ ու ն ը հ ր ա պ ա ր ա կ ու մ Ե «Հ ա յ կ ա կ ան ք ա ն ա կ » ռ ա զ մ ա գ ի տ ա կ ան հ ա ն դ ե ս ը և դ ր ա հ ա վ ե լ վ ա ծ «Ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն տ ե տ ր ե ր » պ ա ր ք ե ր ա կ ան ը :

2008 թ . հ ի մ ն ա դ ր վ ե լ Ե Հ Հ Ն ա խ ա գ ա հ ի ա շ խ ա տ ա կ ա զ մ ի Հ ա ն ր ա յ ի ն կ ա պ ե ր ի և տ ե ղ ե կ ա տ վ ու թյ ան Պ Ո Ա Կ - ը : Կ ե ն տ ր ո ն ի հ ի մ ն ա կ ան գ ո ր ծ ա ռ ու յ թ ն ե ր ի ց ե ն պ ե տ ա կ ան կ ա զ մ ա կ ե ր պ ու թյ ու ն ն ե ր ի գ ո ր ծ ու ն ե ու թյ ան թ ա փ ա ն ց ի կ ու թյ ու ն ը , Չ Լ Մ - ն ե ր ի ը ն դ հ ա ն ու ր և թ ե մ ա տ ի կ մ շ տ ա դ ի տ ա ր կ ու մ ն ու վ ե ր լ ու ծ ու թյ ու ն ը , Չ Լ Մ շ ու կ ա յ ի ու ս ու մ ն ա ս ի ր ու թյ ու ն ը , մ ա ս ն ա վ ո ր ա պ ե ս վ ա ճ ա ռ ք ի ծ ա վ ա լ ն ե ր ը , տ պ ա ք ա ն ա կ ը , թ ա փ ա ն ց ի կ ու թյ ու ն ը և ա յ լ ն : Կ ե ն տ ր ո ն ն ի ր ա վ ա ս ու Ե ն ա խ ա ձ ե ռ ն ու թյ ու ն ն ե ր ո վ հ ա ն դ ե ս գ ա լ ու Չ Լ Մ գ ո ր ծ ու ն ե ու թյ ան ի ր ա վ ա կ ան կ ա ր գ ա վ ո ր մ ա ն ո լ ո ր տ ու մ : Ա վ ե լ ա ց ն ե ն ք , ո ր Հ Հ Ն ա խ ա գ ա հ ի ա շ խ ա տ ա կ ա զ մ ու մ 2004 թ . ս տ ե ղ ծ վ ա ծ ք ա ղ ա ք ա կ ան հ ե տ ա գ ո տ ու թյ ու ն ն ե ր ի ի ն ս տ ի տ ու տ ը 2011 թ . Հ Հ կ ա ռ ա վ - ա ր ու թյ ան հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ո ր ո շ մ ա մ ք մ ի ա վ ո ր վ ե լ Ե վ ե ր ո ն շ յ ա լ կ ե ն տ ր ո ն ի հ ե տ :

2016 թ . դ ե կ տե մ ք ե ր ի ն Հ Հ կ ա ռ ա վ ա ր ու թյ ան կ ո ղ մ ի ց հ ի մ ն ա դ ր վ ե լ Ե «Ռ ա զ մ ա վ ա ր ա կ ան ն ա խ ա ձ ե ռ ն ու թյ ու ն ն ե ր ի կ ե ն տ ր ո ն » հ ի մ ն ա դ ր ա մ ը ³¹⁴: Ա ն հ ր ա ժ ե շ տ Ե ն շ ե լ , ո ր ա յ ս հ ա ս տ ա տ ու թյ ան ա ռ ա ն ց ք ա յ ի ն ա ռ ա ք ե լ ու թյ ու ն ը Հ Հ կ ա ռ ա վ ա ր ու թյ ան կ ո ղ մ ի ց տ ա ր ք ե ր ո լ ո ր տ ն ե ր ու մ ի ր ա կ ան ա ց վ ո ղ ք ա ր ե փ ո խ ու մ ն ե ր ի ն ա ջ ա կ ց ու թյ ու ն ն Ե : Կ ե ր ո ն շ յ ա լ հ ի մ ն ա դ ր ա մ ի կ ան ո ն ա դ ր ա կ ան ն պ ա տ ա կ ն ե ր ի ու ս ու մ ն ա ս ի ր ու թյ ու ն ի ց պ ա ր գ Ե դ ա ռ ն ու մ , ո ր ա յ դ

³¹³ Հ Հ պ ա շ տ պ ա ն ու թյ ան ն ա խ ա ր ա ր ու թյ ան պ ա շ տ ո ն ա կ ան կ ա յ ք // URL: <http://www.mil.am/hy/institutions/60/p/history>

³¹⁴ Տ ե ' ս Հ Հ կ ա ռ ա վ ա ր ու թյ ան ո ր ո շ ու մ N 1342-Ա , (22/12/2016) // URL: <https://www.e-gov.am/gov-decrees/item/28033/>

կառույցին ևս վերապահվել են ուղեղային կենտրոնների կողմից սովորաբար իրականացվող (կամ դրանց վերապահվող) որոշ գործառնություններ: Մասնավորապես ՀՀ կառավարությունն աջակցություն ցուցաբերում է ՀՀ երկարաժամկետ նազմավարական տեսլականի և նազմավարություն մշակման և իրագործման հարցում, բարեփոխումների փաթեթների (հայեցակարգերի կամ ծրագրերի) մշակումը, մշակման գործընթացի համակարգումը կամ դրանց մշակման մասնակցությունը, ՀՀ նազմավարություն և բարեփոխումների իրականացման աշխատանքների մշտադիտանցումը և արդյունքների վերաբերյալ վերլուծությունների իրականացումը, ՀՀ պետական կառավարման ոլորտում մշակվող նազմավարությունների, բարեփոխումների փաթեթների (հայեցակարգերի կամ ծրագրերի) և այլ նմանատիպ փաստաթղթերի վերաբերյալ եզրակացություններ կազմելն ու ներկայացնելը ՀՀ կառավարությունն՝ ՀՀ նազմավարությունը և նախաձեռնած բարեփոխումներին դրանց համապատասխանությունն ապահովելն և պատակով, ներդրումային՝ ներառյալ հանրային-մասնավոր գործընկերության ծրագրերի նախագծումը, մշակումը և ընթացիկ սպասարկմանն աջակցությունը, ՀՀ կառավարության նազմավարական տեսլականի և բարեփոխումների փաթեթների վերաբերյալ հանրության հետ պատշաճ հաղորդակցության ապահովումը, նշված նպատակներին հասնելու համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցառումների, ծրագրերի և գործողությունների իրականացումը և այլն:

Համալսարանական (համալսարանի կառուցվածքում գործող) ուղեղային կենտրոններն անցնելով ՀՀ համալսարանական ուղեղային

Կենտրոններին ներկայացմանը՝ նշենք, որ չնայած խորհրդային ժամանակներում համալսարանական ամբիոններին հենքի վրա գործում էին բազմաթիվ գիտական լաբորատորիաներ, այնուամենայնիվ ակադեմիական հետազոտություններն առավելապես կենտրոնացած էին Գիտությունների ակադեմիայի համակարգի գիտահետազոտական ինստիտուտներում: Ավելացնենք նաև, որ այդ տարիներին համալսարանում գործող լաբորատորիաներն իրականացնում էին փոքր-ինչ այլ գործառույթներ, որոնք տարբերվում էին հանրային քաղաքականության ժամանակակից հետազոտական հաստատությունների աշխատանքի ձևաչափից և ուսումնասիրությունների ուղղվածությունից:

Ինչևիցե, անկախությունը վերականգնումից հետո ՀՀ բուհերում սկսեցին ի հայտ գալ ուղեղային կենտրոններին ոճով աշխատող կենտրոններ: Դրանցից կարող ենք հիշատակել Հայաստանի շուկայական տնտեսության անցման գործընթացի արագացմանը և տնտեսության զարգացմանը նպաստելու նպատակով Հայաստանի ամերիկյան համալսարանում 1992 թ. ստեղծված Բիզնեսի հետազոտության և զարգացման Փոլ Ավեդիսյանի անվան կենտրոնը և 1995 թ. նույն համալսարանում ստեղծված Քաղաքականության վերլուծության Թրփանճյան կենտրոնը: Կարևոր է ընդգծել, որ այս կենտրոնները Հայաստանի հանրային քաղաքականության ոլորտներում ուժեղացին համալսարանական ուղեղային կենտրոններին ստեղծման մշակույթը:

Ավելի ուշ Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ) ստեղծվել է Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը (2006թ.), որը հիմնվել է ԵՊՀ-ի և ՀՀ-ում Եվրամիության պատվիրակության համագործակցության արդյունքում: Կենտրոնին պատակն է բազմակողմանի և միջառարկայական

հետազոտող թյուններին, ինչպես նաև եվրոպական չափանիշներին համապատասխանող կրթական ծրագրերի իրագործման միջոցով ՀՀ-ԵՄ համագործակցության խթանումը և ՀՀ եվրոպական ինտեգրման գործընթացին նպաստումը: Բացի հետազոտող թյուններից, կենտրոնն ունի նաև կրթական քաղաքիչ և եվրոպական ուսումնասիրող թյուններին ուղորտում իրականացնում է մագիստրոսական ծրագիր, ինչպես նաև տրամադրում է խորհրդատվող թյունն ԵՄ-ի հետ գործակցության մեջ գտնվող հանրային, ոչ կառավարական կազմակերպող թյուններին ու մասնավոր ընկերություններին³¹⁵:

ԵՊՀ-ում ուղեղային կենտրոնների ձևաչափով գործող հաստատություններից կարելի է առանձնացնել նաև համապատասխանաբար 2007 թ. և 2014 թ. ստեղծված Քաղաքակրթական և մշակութային հետազոտող թյունների կենտրոնը (ՔՄՀԿ) և Ռազմավարական հետազոտական լաբորատորիան (ՌՀԳԼ): Հարկ է ավելացնել, որ ՔՄՀԿ-ն զբաղվում է արժեքային համակարգերի, քաղաքակրթական հոսքերի, միջմշակութային համագործակցության մեխանիզմներին, տարածաշրջանային քաղաքական և հասարակական գործընթացներին, ինչպես նաև հանրային քաղաքականության տարբեր խնդիրներին ուսումնասիրող ամբ³¹⁶: Ինչ վերաբերում է ՌՀԳԼ-ին, ապա պետք է նշել, որ չնայած ժամանակին ակտիվ գործունեությունը կենտրոնի գործունեության ակտիվությունն էականորեն նվազել է: Մասնավորապես պաշտոնական կայքում

³¹⁵ Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրող թյունների կենտրոնի պաշտոնական կայք // URL: <http://www.ces.am/online/hy/about-us/about-us>

³¹⁶ Երևանի պետական համալսարանի քաղաքակրթական և մշակութային հետազոտող թյունների կենտրոնի պաշտոնական կայք // URL: <http://cccsysu.com/category/about-us/cccs/>

տեղեկատվություն վերջին թարմացումը եղել է 2016 թ. հունիսին ³¹⁷:

Վերջին տարիներին հիմնադրված համալսարանական ուղեղային կենտրոններին հարկ է առանձնացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (2013 թ.), Պետական կառավարման ակադեմիայի Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնը (2014 թ.), Հայ-ռուսական համալսարանի Ազգային անվտանգություն ոլորտում հետազոտությունների լաբորատորիան (2015 թ.):

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ մասնավորապես «Ամբերդ» հետազոտական կենտրոնը ներկա պահին ՀՀ համալսարանական ուղեղային կենտրոնների մեջ ամենաակտիվ գործող հաստատություններից մեկն է, որի հետազոտություններից շատերը կատարվել են տարբեր ոլորտային նախարարությունների պատվերով: Օրինակի համար նշենք, որ իր գործունեության տարիներին ընթացքում «Ամբերդ» կենտրոնի կողմից իրականացվել և հրապարակվել են ավելի քան երեք տասնյակ հետազոտություններ, որոնք վերաբերել են սոցիալ-տնտեսական զարգացման, գիտության և կրթության, անվտանգության, բնապահպանության և այլ ոլորտներին ³¹⁸: Ավելին, 2017 թ. հունիսի 21-ին ՀՀ Ազգային ժողովի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի` ի դեմս «Ամբերդ» հետազոտական կենտրոնի, միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որով վերջինս

³¹⁷ Տե՛ս ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիայի պաշտոնական կայք // URL: <http://www.armcsr.com/>

³¹⁸ Տե՛ս ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի պաշտոնական կայք // URL: www.amberd.am

դարձել է ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի պաշտոնական գիտական խորհրդատու-գործընկերը³¹⁹:

Արտերկրի ուղեղային կենտրոնների մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, անցացված կամ միջազգային ցանցային ձևաչափի տեղական կազմակերպություններ. ՀՀ ուղեղային կենտրոնների ոլորտում առանձնակի տեղ են գրավում ուղեղային կենտրոնների ոճով աշխատող արտերկրի համանման կազմակերպությունների մասնաճյուղերը կամ միջազգային ցանցի մաս կազմող հայաստանյան հաստատությունները:

Նման կազմակերպություններից է 1997 թ. ՀՀ-ում բացված Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան հաստատությունը (ԲՀՀ-Հայաստան), որը հայտնի միլիարդատեր, ֆինանսիստ Ջորջ Սորոսի հիմնադրած Բաց հասարակության հիմնադրամների միջազգային ցանցի մաս է: Ինչպես նշված է կազմակերպության պաշտոնական կայքում, ԲՀՀ-Հայաստանի նպատակն է աջակցել դեպի ժողովրդավարություն անցմանը և խթանել բաց հասարակության արժեքները, հասարակություն, որին բնորոշ են օրենքի գերակայությունը, ժողովրդավար եղանակով ընտրված կառավարությունը, հարգանքը փոքրամասնությունների և նրանց իրավունքների հանդեպ և հզոր քաղաքացիական հասարակությունը: Վերոնշյալին հասնելու նպատակով ԲՀՀ-Հայաստանն օժանդակել է բազմաթիվ ծրագրերի և նախաձեռնությունների քաղաքացիական հասարակության, իրավունքի, կրթության, լրատվության, տեղեկատվության, ներառյալ հրատարակության, էլեկտրոնային հաղորդակցություն և գրադարանների աջակցության,

³¹⁹ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք // «Հուլիսի 21-ը հիշողության տոհմը» Ազգային ժողովում, URL: http://parliament.am/news.php?cat_id=2&NewsID=9398&year=2017&month=07&day=21&lang=arm

հանրային առողջուժյան, կանանց իրավունքների, արվեստի և մշակույթի ոլորտները³²⁰:

Միջազգային ձևաչափի կազմակերպություններից է նաև Հետազոտական ռեսուրսների կոմպասյան կենտրոն-Հայաստան հաստատությունը: Վերջինս միջազգային ցանց է, որը 2003 թ. Քարնեգի հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ հիմնադրվել է Եվրասիա հիմնադրամի կողմից և ներառում է տարածաշրջանային գրասենյակներ Թիֆլիսում, Երևանում և Բաքվում:

Այս տեսակին են պատկանում նաև ՀՀ-ում հիմնադրված Եվրասիա համագործակցության հիմնադրամը (2007 թ.), ԱՊՀ երկրների ինստիտուտի Հայաստանի մասնաճյուղը (2007 թ.) և Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (2008 թ.): Այսպես, Եվրասիա համագործակցության հիմնադրամը (ԵՀՀ) անկախ տեղական հիմնադրամ է դարձել 2007 թվականին: Այն Եվրասիա հիմնադրամի «Ժառանգ» կազմակերպությունն է: Հայաստանյան ԵՀՀ-ն ծրագրային, կազմակերպական և ֆինանսական առումներով անկախ տեղական հիմնադրամ է, որը ցանցային կապերով կապված է Եվրասիա հիմնադրամի ցանցի հետ և ռազմավարական համագործակցության մեջ է Եվրասիայի մյուս գրասենյակների, հատկապես Վրաստանի և Ադրբեյջանի «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամների հետ³²¹: ԱՊՀ երկրների ինստիտուտի Հայաստանի մասնաճյուղի մայր կառույցը ստեղծվել է 1996 թ. Մոսկվայում: Հայաստանում մասնաճյուղի ստեղծման նպատակն է հայ-ռուսական հարաբերություններին զարգացումը, Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության

³²⁰ «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան» կազմակերպության պաշտոնական կայք // URL: <http://www.osf.am/about-company/who-we-are/?lang=am>

³²¹ Եվրասիա համագործակցության հիմնադրամի պաշտոնական կայք // URL: <http://am.epfarmenia.am/am/epf/about-us/>

համալիր ուսումնասիրությունը, աջակցությունը միջպետական բազմաոլորտ համագործակցությանը, ԱՊՀ երկրների ինտեգրացման գաղափարների հանրայնացումը և այլն³²²:

Միջազգային բնույթ է կրում նաև Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնը: Վերջինս ստեղծվել է 2000 թ. հիմնադրված «Տարածաշրջանային զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության հենքի վրա: 2001 թ. հոկտեմբերին կազմակերպությունը հավատարմագրվել է «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» համաշխարհային հակակոռուպցիոն շարժման կողմից՝ որպես ազգային մասնաճյուղ: 2008 թ. փետրվարին կազմակերպությունը վերագրանցվել է որպես Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն³²³:

Խոսելով ՀՀ ուղեղային կենտրոնների տիպաբանության մասին՝ պետք է նշել, որ, չնայած քաղաքական կազմակերպությունների կողմից կատարված մի շարք փորձերին և բազմաթիվ հայտարարություններին, մեզանում դեռևս չկայացած քաղաքիչ են մնում կուսակցությունների կից գործող ուղեղային կենտրոնները: Նման կենտրոնները ոչ մեկ անգամ ստեղծվել են կուսակցություններում, սակայն դրանց գործունեությունը, ցավոք, չէր առանձնանում երկարակեցությամբ, և տարբեր գործոնների ազդեցության հետևանքով վերջիններս կամ չէին գործում կամ լավագույն դեպքում կարճ ժամանակ անց դադարեցնում էին ակտիվ գործունեությունը:

³²² «Армянский филиал Института стран СНГ открылся в в Ереване», (10/05/2007) // URL: <http://newsarmenia.am/news/politics/arm1-20070510-41682587/>

³²³ Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական կայք // URL: <https://transparency.am/hy/about/history>

Այսպես, 2009 թ. Յայ Եղափոխական դաշնակցությունը կոնսակցությունը (ՅՅԴ) հիմնադրեց «Յայր Մարուխյան» հիմնադրամը: Ինչպես նշված է կազմակերպության պաշտոնական կայքում, հիմնադրամը ՅՅ-ում գործող սոցիալ-դեմոկրատիայի ուսումնասիրության վերլուծական կենտրոն է: Նրան պատակն է խրախուսել հանրային քննարկումներ և ապահովել հավասարություն, ազատություն և ժողովրդավարություն ՅՅ-ում և տարածաշրջանում: Յիմնադրամն իրականացնում է ակադեմիական ուսումնասիրություններ՝ կապված քաղաքականության և քաղաքական որոշումների կայացման հետ, կազմակերպում է խորհրդաժողովներ ու կլոր սեղաններ, հրատարակում ուսումնասիրություններ սոցիալ-դեմոկրատիայի վերաբերյալ թեմաներով, անցկացնում թրեյնինգներ Երիտասարդ քաղաքական առաջնորդների համար³²⁴: Այն հայտ է, որ ՅՅԴ-ի կողմից «Յայր Մարուխյան» հիմնադրամի ստեղծումը նոր մշակույթ էր հայաստանյան քաղաքական իրականության մեջ, սակայն թեև գործունեության առաջին տարիներին վերոնշյալ հիմնադրամը բավականին ակտիվ գործունեություն էր ծավալում, ցավոք, 2013 թ. փետրվարից հանրային ոլորտում հաստատությունը գործնականում ոչ մի ակտիվություն չի ցուցաբերում:

2011 թ. գործող հայկական ամենահին կոնսակցությունը՝ 1887 թ. հիմնադրված Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կոնսակցությունը (ՍԴՅԿ) հայտարարեց իր կառույցում վերլուծական կենտրոն ստեղծելու մասին: Սակայն հիմնադրումից ի վեր այդ կենտրոնի գործունեության մասին բացարձակապես ոչինչ հայտնի է:

³²⁴ Յ. Մարուխյան հիմնադրամի պաշտոնական կայք // URL: <http://www.maroukhanfoundation.org/am/>

2014 թ. Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) 15-րդ համագումարի ընթացքում կուսակցության նախագահի տեղակալ Ա. Աշոտյանն առաջարկեց կուսակցության կազմում ստեղծել ուղեղային կենտրոն, որի նպատակը կլինի կուսակցության ներսում վերլուծական մտքի զարգացումը և երկրի առաջընթացին նպաստումը³²⁵: Այնուամենայնիվ կուսակցության ներսում նման ուղեղային կենտրոն դեռևս չի հիմնվել:

2015 թ. օգոստոսին հայտնի դարձավ, որ «Հայկական վերածնունդ» քաղաքական-հասարակական միությունը (2016 թ. փետրվարից՝ նույնանուն քաղաքական կուսակցություն) ստեղծել է վերլուծական կենտրոնի ձևաչափով գործող քաղաքական վերլուծական հանձնաժողով: Հիմնադիրներն են երի խոսքով այս կառույցի նպատակն էր քաղաքական-հասարակական և այլ ոլորտներում համապարփակ ուսումնասիրությունների, հետազոտությունների իրականացումն ու վերլուծությունների ապահովումը, հասարակական-քաղաքական գործընթացների վերաբերյալ վերլուծությունների իրականացումը, փորձագիտական գնահատականների տրամադրումը, ինչպես նաև հնարավոր զարգացումների սցենարների մշակումը: Բացի հետազոտություններից և վերլուծություններից, հանձնաժողովը պետք է անցկացներ կլոր սեղան-քննարկումներ, բանավեճեր, սեմինարներ և կոնֆերանսներ³²⁶: Այնուամենայնիվ, առայսօր այդ հանձնաժողովի հրապարակային գործունեության վերաբերյալ նույնպես ոչինչ հայտնի չէ, և, ամենայն հավանականությամբ, այն ևս չի գործում:

³²⁵ «Արմեն Աշոտյանն առաջարկում է ստեղծել ՀՀԿ ուղեղային կենտրոն» (24/05/2014) // URL: <https://armenpress.am/arm/news/763128/armen-ashotyann-arajarkum-e-stextsel-hhk-uxexayin-kentron.html>

³²⁶ «Հայկական վերածնունդը» վերլուծական կենտրոն էլ ունի (21/08/2015) // URL: <http://hraparak.am/?p=85613&l=am/haykakan+veracunudy+verlucakan+kentron+elvo%D6%82ni>

Հատկանշական է, որ քաղաքական կուսակցություններ-ն ղեկային կենտրոններ փոխգործակցության մշակույթի թուլլ զարգացածության պատճառով հաճախ փորձագիտական հետազոտական հմտություններով օժտված և բավարար մեդիաակտիվություն և հասարակական ակտիվություն և նեցող բազմաթիվ անհատներ սկսում են անձնական խորհրդատվության մակարդակով շփվել քաղաքական կուսակցություններին առաջնորդների հետ: Սա հաճախ պատճառ է դառնում, որ վերջինները համալրեն դրանց շարքերը կամ կուսակցական նախընտրական ցուցակները՝ պատասխանատու լինելով այդ կուսակցությունների քաղաքական ծրագրերի՝ իրենց գործունեության ոլորտին առնչվող դրույթների ձևակերպմանը իսկ Ազգային ժողովում մանդատ ստանալուց հետո նաև համապատասխան ոլորտային հանձնաժողովներում կուսակցության դիրքորոշումների ներկայացման համար: Նշենք սակայն, որ սա առավել ապես կրում է միջանձնային, անհատական բնույթ և որևէ կերպ ինստիտուցիոնալացված չէ, ինչպես որ արևմտյան քաղաքական մշակույթի երկրներում է ընդունված: Մյուս կողմից, կուսակցությունները որևէ կերպ չեն \$ինանսավորում այդ անհատների և նրանց ձևավորած թիմերի հետազոտական փորձագիտական գործունեությունը, իսկ նրանց խորհրդատվությունը բավարարվում է սեփական փորձառություն արդյունքների վրա՝ չունենալով ինստիտուցիոնալ հիմքեր: Այսինքն՝ այդ խորհրդատվությունը ոչ թե կուսակցության պատվերով (նաև \$ինանսավորմամբ) իրականացված հետազոտությունների արդյունքներով որոշակի խմբի երաշխավորությունների տեսքով, այլ սահմանափակվում է մեկ-երկու անհատների

ի մացաբանական շրջանակներով՝ հաճախ բացառելով այլ ընտրանքային կարծիքներն ու մոտեցումները, երբեմն անգամ ձգտելով բավարարել կամ լեզվի տիմացնել կուսակցության ղեկավարի անձնական տնտեսական-քաղաքական հետաքրքրություններն ու նախապատվությունները:

Այս առումով դրական քայլ պետք է համարել 2017թ. հունիսին ՀՀ ԱԺ արտաքին հարաբերություններին մշտական հանձնաժողովին կից ստեղծված «Անալիտիկ խորհուրդ» աշխատանքային խմբի հիմնումը, որը բաղկացած է քաղաքականության և անվտանգության հարցերով փորձագետներից, ուղեղային կենտրոնների ներկայացուցիչներից և ԱԺ նախկին պատգամավորներից: Այս աշխատանքային խմբի նպատակն է լինել ու ԱԺ-ին աջակցել տարբեր թեմատիկ քննարկումներով և առաջարկություններով³²⁷: Կարծում ենք, որ վերոնշյալ խմբի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ է մշակել նաև գործունեության, փորձագետների ընտրության և խրախուսման հստակ կանոնակարգ ու աշխատակարգ, իսկ հաջողության դեպքում այս փորձը տարածել նաև ՀՀ ԱԺ մյուս մշտական հանձնաժողովներին:


Ամփոփելով ՀՀ-ում ուղեղային կենտրոնների ոլորտի ձևավորման գործընթացի և գործող ուղեղային կենտրոնների տիպաբանության ներկայացումն ու քննարկումը՝ պետք է փաստել, որ ուղեղային կենտրոնների ոլորտի ձևավորումը Հայաստանում, հատկապես անկախության առաջին տարիներին, ուղեկցվում էր երկրում սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակով, ինչն էականորեն

³²⁷ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք՝ «Տեղի է ունեցել «Անալիտիկ խորհուրդ» աշխատանքային խմբի փորձագետների առաջին հանդիպումը» (13/06/2017) // URL: http://parliament.am/news.php?cat_id=2&NewsID=9265&year=2017&month=06&day=13&lang=arm

դանդադեցնում էր այս գործընթացը: Ներկայումս թեև վաղ է խոսել 33-ում ուղեղային կենտրոնների ոլորտի ձևավորված և կայացած լինելու մասին, սակայն երկրում արդեն իսկ առկա են բավականին թվով ուղեղային կենտրոններ, որոնց մի մասն արդեն իսկ ճանաչված և կայացած հաստատություններ են: 33-ում ուղեղային կենտրոնների ոլորտն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք ոլորտին առնչվող այլ խնդիրների հետ մեկտեղ կփորձենք քննարկել հաջորդ հարցի շրջանակներում:


**4.2.3 ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՂԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

33 ուղեղային կենտրոնների ոլորտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին երկուս ու կես տասնամյակի ընթացքում 33-ում \$որմալ առումով ստեղծվել է առնվազն 130 ուղեղային կենտրոն կամ վերջինիս ձևաչափին որոշակիորեն համապատասխանող հաստատություն: Դրանց մեծամասնությունը ստեղծվել է 2005 թ. հետո (գծապատկեր 7): Սակայն այդ կազմակերպությունների գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից շատերը գոյություն են ունեցել կամ բացառապես ձևական, \$որմալ առումով, կամ ունեցել են ակտիվ գործունեության չափազանց կարճ ժամանակահատված, որից հետո պասիվացրել կամ ընդհանրապես դադարեցրել են հանրային գործունեությունը և փակվել: Ասվածի լավագույն օրինակը 2005 թ. ստեղծված «Միտք» վերլուծական կենտրոնն էր, որը բավականին ակտիվ գործող անկախ/ոչ պետական ուղեղային կենտրոն էր: Ցավոք,



Գծապատկեր N7.33 ռեզյուլտային կենտրոնների հիմնադրումը՝ ըստ ժամանակաշրջանի, 1991-2015 թթ.

Այնուամենայնիվ, իրականացված դիտարկումներով ներկայումս գործում է շուրջ հինգ տասնյակ ռեզյուլտային կենտրոն կամ վերջինիս ձևաչափին որոշակիորեն համապատասխանող կազմակերպություն (աղյուսակ 15), որոնց հիմնական մասնակախ ռեզյուլտային կենտրոններ են (գծապատկեր 8), ինչը թերևս նախորդ ենթահարցում ներկայացված ռեզյուլտային կենտրոնների զարգացման օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների ու հետազոտությունների ֆինանսավորման ներկայիս գործող սկզբունքների անմիջական ազդեցություն հետևանքն է:



Գ ծ ապատկ եր 8.33 ուղեղային կենտրոնների տիպերի տոկոսային հարաբերակցությունը

33 ուղեղային կենտրոնների ոլորտի բնորոշ առանձնահատկություններից է վերջիններիս գերկենտրոնացումը մայրաքաղաքում: Օրինակի համար նշենք, որ եթե ԱՄՆ-ում գործող 1835 ուղեղային կենտրոններից միայն 2 ուրջ 22%-ն է գտնվում մայրաքաղաք Վաշինգտոնում, ապա 33 49 ուղեղային կենտրոններից միայն երկուսը՝ «Գյումրու առաջընթաց քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» և «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» կազմակերպություններն են գործում հանրապետության երկրորդ քաղաք Գյումրիում, մնացածը կենտրոնացած են Երևանում:

Աղյուսակ 15.33 ուղեղային կենտրոնների և դրանց ձևաչափի նմոտկազմակերպությունների ցանկ

| N | ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԵՎ ՏԵՍԱԿ | ՀԻՄՆԱԴՐՈՒՄ |
|---------------------------|---|------------|
| ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ | | |
| 1. | «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ | 2000 |
| 2. | ՀՀ Նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ | 2008 |
| 3. | ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան | 2016 |
| 4. | «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ | 2016 |
| ԱՆԿԱԽԿԵՆՏՐՈՆՆԵՐ | | |
| 1. | «Այլընտրանք» հետազոտական կենտրոն | 1991 |
| 2. | Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն | 1994 |
| 3. | «Մոդուլս Վիվենդի» կենտրոն | 1999 |
| 4. | «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» վերլուծական կենտրոն | 2000 |
| 5. | «Սպեկտր» ռազմավարական վերլուծության կենտրոն ՀԿ | 2001 |
| 6. | «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ | 2001 |
| 7. | Քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոն | 2001 |
| 8. | «Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային առաջընթացի նստիտուտ» ՀԿ | 2001 |
| 9. | Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն | 2002 |

| | | |
|--|--|------|
| 10. | Կո վ կ աս ի ի ն ս տ ի տ ու տ | 2002 |
| 11. | Մ ի ջ մ շ ա կ ու թ ա յ ի ն ու ս ու մ ն աս ի թ ու թ յ ու ն ն եր ի ու ս ու գ մ ա ն և եր կ խ ո ս ու թ յ ա ն մ ի ջ ա գ գ ա յ ի ն կ ե ն տր ո ն Յ Կ | 2003 |
| 12. | Ս ո գ ի ա լ ա կ ա ն ք աղ ա ք ա կ ա ն ու թ յ ա ն և գ ա ր գ ա գ մ ա ն կ ե ն տր ո ն | 2004 |
| 13. | «Ա յ Փ ի Է ս Ս ի» ք աղ ա ք ա կ ա ն և ս ո գ ի ո լ ո գ ի ա կ ա ն խ ո թ ի թ դ ա տ վ ու թ յ ու ն ն եր ի ի ն ս տ ի տ ու տ | 2006 |
| 14. | «Ար ա ր ա տ» ռ ա գ մ ա վ ա ր ա կ ա ն հ ե տ ա գ ո տ ու թ յ ու ն ն եր ի ի ն ս տ ի տ ու տ | 2006 |
| 15. | «Ն ո թ ս ո գ ի ա լ ա կ ա ն հ ե տ ա գ ո տ ու թ յ ու ն ն եր ի ի ն ս տ ի տ ու տ» Յ Կ | 2007 |
| 16. | «Ռ ե գ ի ո ն» հ ե տ ա գ ո տ ա կ ա ն կ ե ն տր ո ն Յ Կ | 2008 |
| 17. | «Ս ո գ ի ո ս կ ո պ» հ ա ս ա ր ա կ ա կ ա ն ու ս ու մ ն աս ի թ ու թ յ ու ն ն եր ի և խ ո թ ի թ դ ա տ վ ու թ յ ա ն կ ե ն տր ո ն | 2008 |
| 18. | «Գ ու մ թ ու ա մ ա ջ ը ն թ ա գ ք աղ ա ք ա գ ի ա կ ա ն հ ա ս ա ր ա կ ու թ յ ա ն գ ա ր գ ա գ մ ա ն կ ե ն տր ո ն» Յ Կ | 2008 |
| 19. | Տ ա ր ա ծ ա շ ը ջ ա ն ա յ ի ն հ ե տ ա գ ո տ ու թ յ ու ն ն եր ի կ ե ն տր ո ն | 2012 |
| 20. | Եր ի տ ա ս ա թ դ ա կ ա ն ու ս ու մ ն աս ի թ ու թ յ ու ն ն եր ի ի ն ս տ ի տ ու տ | 2013 |
| 21. | «Ար ա ր» ք աղ ա ք ա կ թ ա կ ա ն հ ե տ ա գ ո տ ու թ յ ու ն ն եր ի հ ի մ ն ա դ թ ա մ | 2014 |
| 22. | «Ե փ ա տ» մ եր ծ ա վ ո թ ար ն ե լ յ ա ն ու ս ու մ ն աս ի թ ու թ յ ու ն ն եր ի կ ե ն տր ո ն | 2014 |
| 23. | «Կ ո մ պ ա ս» գ ի տ ա հ ե տ ա գ ո տ ա կ ա ն , կ թ ա կ ա ն և խ ո թ ի թ դ ա տ վ ա կ ա ն կ ե ն տր ո ն Յ Կ | 2014 |
| Ա ղ յ ու ս ա կ 15-ի շ ար ու ն ա կ ու թ յ ու ն ը | | |
| 24. | «Յ ա յ ա գ ք» վ եր լ ու ծ ա կ ա ն կ ե ն տր ո ն | 2014 |
| 25. | Յ ա յ կ ա կ ա ն ու ս ու մ ն աս ի թ ու թ յ ու ն ն եր ի «Ա Ն Ի» կ ե ն տր ո ն | 2014 |
| 26. | «Յ ա ն թ ա յ ի ն ք աղ ա ք ա կ ա ն ու թ յ ա ն ի ն ս տ ի տ ու տ» հ ե տ ա գ ո տ ա կ ա ն կ ե ն տր ո ն | 2014 |
| 27. | Յ ա ն թ ա յ ի ն ք աղ ա ք ա կ ա ն ու թ յ ա ն և եր կ խ ո ս ու թ յ ա ն «Ա պ ե լ լ ա» ի ն ս տ ի տ ու տ | 2014 |
| 28. | Մ ի ջ ա գ գ ա յ ի ն և ա ն վ տ ա ն գ ու թ յ ա ն հ ա թ գ եր ի հ ա յ կ ա կ ա ն ի ն ս տ ի տ ու տ | 2014 |
| 29. | Յ ա ս ա ր ա կ ու թ յ ա ն հ ե տ ա գ ո տ ու թ յ ու ն ն եր ի հ ա յ կ ա կ ա ն կ ե ն տր ո ն հ ի մ ն ա դ թ ա մ | 2015 |
| 30. | Եր ի տ ա ս ա թ դ վ եր լ ու ծ ա ք ա ն ն եր ի հ ա յ ա ս տ ա ն յ ա ն կ ե ն տր ո ն | 2016 |
| 31. | «The Armenian Interest» գ ի տ ա վ եր լ ու ծ ա կ ա ն կ ե ն տր ո ն | 2017 |
| Մ Ի Ջ Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ց Ա Ն Ց Ա Յ Ի Ն Ձ Ե Վ Ա Չ Ա Փ Ի Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ն Ե Ր | | |
| 1. | Բ ա գ հ ա ս ա ր ա կ ու թ յ ա ն հ ի մ ն ա դ թ ա մ ն եր - Յ ա յ ա ս տ ա ն | 1997 |
| 2. | Յ ե տ ա գ ո տ ա կ ա ն ռ ե ս ու թ ս ն եր ի կ ո վ կ ա ս յ ա ն կ ե ն տր ո ն - Յ ա յ ա ս տ ա ն | 2003 |
| 3. | Ե վ թ ա ս ի ա հ ա մ ա գ ո թ ծ ա կ գ ու թ յ ա ն հ ի մ ն ա դ թ ա մ | 2007 |
| 4. | Ա Պ Յ Եր կ թ ո ն եր ի ի ն ս տ ի տ ու տ ի Յ ա յ ա ս տ ա ն ի մ ա ս ն ա ճ յ ու ղ | 2007 |
| 5. | «Թ թ ա ն ս փ ա թ ն ս ի ի ն թ եր ն ե յ շ ն լ» հ ա կ ա կ ո ռ ու պ գ ի ո ն կ ե ն տր ո ն | 2008 |
| Յ Ա Մ Ա Ն Ս Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ն Ե Ր | | |
| 1. | Յ ա յ ա ս տ ա ն ի ա մ եր ի կ յ ա ն հ ա մ ա լ ս ա ր ա ն ի Բ ի գ ն ե ս ի հ ե տ ա գ ո տ ու թ յ ա ն և գ ա ր գ ա գ մ ա ն Փ ո լ Ա վ ե դ ի ս յ ա ն ի ա ն վ ա ն կ ե ն տր ո ն | 1992 |
| 2. | Յ ա յ ա ս տ ա ն ի ա մ եր ի կ յ ա ն հ ա մ ա լ ս ա ր ա ն ի ք աղ ա ք ա կ ա ն ու թ յ ա ն վ եր լ ու ծ ու թ յ ա ն Թ թ փ ա ն ճ յ ա ն կ ե ն տր ո ն | 1995 |
| 3. | Եր ն ա ն ի պ ե տ ա կ ա ն հ ա մ ա լ ս ա ր ա ն ի Ե վ թ ո պ ա կ ա ն | 2006 |

| | | |
|---|--|------|
| | Ուսումնասիրությունները | |
| 4. | Երևանի պետական համալսարանի քաղաքակրթական և մշակութային հետազոտությունները | 2007 |
| 5. | Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոն | 2013 |
| 6. | Երևանի պետական համալսարանի Գեներալային հետազոտությունների և առաջնորդությունների կենտրոն | 2013 |
| 7. | ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն | 2014 |
| 8. | ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների գիտահետազոտական կաբորատորիա | 2014 |
| 9. | Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի Ազգային անվտանգության ոլորտում ռազմավարական հետազոտությունների կաբորատորիա | 2015 |
| Ը ն դ ամ Ե ն ը ` 49 հ աս տատ ու թ յ ու Ե ն | | |

Ինչպես նշեցինք, ուղեղային կենտրոնները մեծամասնությամբ ստեղծվել է 2005 թ. հետո: Պետք է ենթադրել, որ այս երևույթը պայմանավորված է հետևյալ հիմնական պատճառներով.

- երկրում սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը զուգահեռ գիտությունների պետական ֆինանսավորման չափերի որոշակի մեծացումը, նաև պետական ակադեմիական հաստատությունների արտաքին ֆինանսավորման մեծացումը,
- հասարակական կազմակերպությունների և արտերկրից ստացվող ֆինանսավորման էական բարելավումը, դրամաշնորհային ծրագրերի մասնակցելու մշակույթի ձևավորումը,
- պետական, քաղաքացիական և ժողովրդավարական ինստիտուտների կայացումն ու ամրապնդումը,
- համացանցի հասանելիության ընդլայնումը և հայկական համացանցային տիրույթում սոցիալականացման ակտիվացումը,

- ուղեղային կենտրոնների առանցքային փորձագետների կամ ղեկավարների մեդիաակտիվության համեմատական աճը,
- ուղեղային կենտրոնների ինտելեկտուալ արտադրանքի և փորձագիտական խորհրդատվության նկատմամբ քաղաքական վերնախավի հետաքրքրության որոշակի աճը:

Նշենք նաև, որ ՀՀ-ում ուղեղային կենտրոնները գրանցվում են տարբեր ձևաչափերով և ունեն տարբեր իրավաբանական կարգավիճակներ: Ուղեղային կենտրոնները Հայաստանում ստեղծվում են պետական և ոչ պետական, հասարակական կազմակերպությունների ձևաչափով, հիմնադրամների և որոշ դեպքերում նույնիսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ՍՊԸ) ձևաչափով: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ուղեղային կենտրոնների ՍՊԸ կարգավիճակով ստեղծումը որոշակիորեն հակասում է ուղեղային կենտրոնների ավանդական ընկալմանը, հանրային քաղաքական գործընթացներում ունեցած առաքելությանը որպես շահույթ չհետապնդող կազմակերպություններ:

Քննարկվող հարցի համատեքստում կարևոր գործոն է համարվում լայն հանրության և հասարակական, պետական, քաղաքական տարբեր շրջանակներում հայկական ուղեղային կենտրոններին ճանաչվածության խնդիրը: Ընդհանուր առմամբ մեզանում գործող շուրջ հինգ տասնյակ կազմակերպությունների մեծամասնությունը հայտնի չեն ոչ միայն հասարակության լայն շերտերին, քաղաքական շրջանակներին, այլ նաև, ինչն առավել քան խոսուեն փաստ է, ակադեմիական, փորձագիտական ոլորտի ներկայացուցիչներին:

Վերոնշյալ երևույթը նկատել են նաև տարբեր փորձագետներ: Մասնավորապես Յայաստանում Ամերիկյան համալսարանի դասախոս Էվ. Պատուրյանի կարծիքով հայկական ուղեղային կենտրոնները հանրության համար գործնականորեն մնում են անհայտ՝ ներառյալ այնպիսի կարևոր շրջանակներ, ինչպիսիք են լրագրողական դաշտը, գիտական հանրությունը և այլն, որոնք կարող էին օգուտ քաղել ուղեղային կենտրոնների կողմից գնեցրացվող, համակարգվող և պահպանվող տեղեկատվությունից³²⁸:

Նման իրավիճակը կարելի է բացատրել հետևյալ հիմնական պատճառներով.

- կայուն գործունեության ապահովման և մարքեթինգային գործիքակազմի համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությունը կամ սղությունը,
- ուղեղային կենտրոնների կառավարման ոչ բավարարողյունավետությունը,
- արհեստավարժ գիտնական-փորձագետ-վերլուծաբանների պակասը, որը պայմանավորում է տեղեկատվական տիրույթում և հանրային հարթակներում տվյալ կազմակերպության ոչ բավարարակ տիվությունը,
- ուղեղային կենտրոնների կարևորության ոչ բավարարունկալման աստիճանը,
- հանրային քաղաքականության բնագավառում ուղեղային կենտրոնների հիմնականում սահմանափակ մասնակցությունը:

Վերոնշյալի համատեքստում նշենք, որ ՀՀ-ում անկախ, ոչ պետական ուղեղային կենտրոնները,

³²⁸ *Paturyan YJ.*, Think tanks in Armenia: Who Needs their thinking?, (Oct. 05/2015) // URL: <https://onthinktanks.org/articles/think-tanks-in-armenia-who-needs-their-thinking/>

որպես կանոն, հենված են առավել արտաքին
ֆինանսավորման, հիմնականում արտերկրի
կազմակերպություններից ստացվող դրամաշնորհ-
ների վրա առավել նվազ չափով են օգտվում ներքին
աղբյուրներից: Այս պարագայում դրամաշնորհային
ծրագրի ավարտից հետո նման
կազմակերպությունները ստիպված են լինում
հիմնականում պասիվացնել իրենց
գործունեությունը մինչև հաջորդ դրամաշնորհի
ստացումը կամ ընդհանրապես փակվում են: Այսպիսի
իրավիճակը խոչընդոտում է նաև երկարաժամկետ
նախագծերի ծրագրումը: Մյուս կողմից, նման պայ-
մաններում հայկական ուղեղային կենտրոնների
հետազոտական և ընդհանրապես գործունեության
օրակարգը ձևավորվում է արտերկրում, քանի որ
դրամաշնորհային ծրագրերը, որպես կանոն, տրվում
են արտերկրի համապատասխան կառույցի կողմից
հետաքրքրություններ կայացնող ոլորտների
ուսումնասիրության համար, ինչը նույնպես
մտահոգիչ երևույթ է:

Եթե պետական ուղեղային կենտրոններն
ուղղակիորեն պետական բյուջեից են ստանում
իրենց ֆինանսավորումը, ապա որոշ ուղեղային
կենտրոններ, ինչպես, օրինակ՝ ՀՀ պետական
կառավարման ակադեմիայի Տարածաշրջանային
հետազոտությունների կենտրոնը, հիմնականում
ֆինանսավորվում են ՀՀ կրթության և գիտության
նախարարության գիտության պետական կոմիտեի
կողմից տրամադրվող դրամաշնորհների հաշվին:
Ֆինանսավորման մեկ այլ եղանակով է գործում,
օրինակ, Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնը,
որի բյուջեն ձևավորվում է համալսարանի
ֆինանսավորման հաշվին: Հարկ է նշել, սակայն, որ
«Ամբերդ» կենտրոնը հետազոտական նախագծեր է

իրականացնում են 33 օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների և այլ կազմակերպությունների համար, որոշ դեպքերում վճարովի հիմունքներով, ինչը եկամտի լրացուցիչ աղբյուր է:

Ընդհանուր առմամբ \$ի նախազորման խնդիրը հայկական ուղեղային կենտրոնների համար ամենասուղի է: Համացանցային կայքերի և ոչ պետական ուղեղային կենտրոնների գործունեության մշտադիտարկման հիման վրա կարելի է հետևություն անել, որ որպես դոնոր հանդես են գալիս հիմնականում արևմտյան հիմնադրամները, ինչը պայմանավորում է գործունեությունը, ուղղվածությունը և հետազոտությունների թեմատիկ բովանդակությունը: Դատելով դիտարկվող կենտրոնների հրապարակումների ուղղվածությունից՝ կարելի է առանձնացնել հայկական ուղեղային կենտրոնների հետևյալ հիմնական հետազոտական նախապատվությունները.

- Ժողովրդավարացում, քաղաքացիական հասարակություն և մարդու իրավունքներ,
- հակամարտություններ և տարածաշրջանային անվտանգության հարցեր (Հարավային Կովկաս, Մերձավոր Արևելք),
- տնտեսություն, քաղաքական, տնտեսական ինտեգրացիան գործընթացներ և հիմնահարցեր (ԵՄ, ԵԱՏՄ),
- հայկական Սփյունք և հայագիտություն,
- սոցիոլոգիական հետազոտություններ,
- կրթության և երիտասարդության հարցեր:

Նշենք, որ Հայաստանում նվիրատվության, մեկենասության ավանդույթն այս ոլորտում նույնպես դեռևս չի ձևավորվել: Այս երևույթի

նշանակալի ապացույցն է նվիրատվության համաշխարհային վարկանիշավորման գեկոյցը: Մասնավորապես 2016 թ. հոկտեմբերին հրապարակված գեկոյցում 140 երկրների շարքում նվիրատվության ցուցիչով ՀՀ-ն զբաղեցնում է ընդամենը 130-րդ տեղը³²⁹:

Օրինակի համար նշենք, որ բազմաթիվ երկրներում ուղեղային կենտրոններն իրենց գործունեության համար անհրաժեշտ \$ինանսական աղբյուրները ձևավորում են հանգանակության (fundraising) հավաքագրումից, ինչպես նաև կորպորացիաներից, անհատներից ստացվող միջոցներից, պետական դրամաշնորհներից, պայմանագրերից և նպատակային հիմնադրամներից (endowment) ստացվող եկամուտներից: Տարբեր հաստատություններում վերոնշյալ աղբյուրներից ստացվող եկամուտների մասնաբաժինը տարբերվում է, սակայն ուղեղային կենտրոններն ամեն կերպ փորձում են բազմազան դարձնել իրենց \$ինանսական աղբյուրները, որպեսզի խուսափեն չափից ավելի մեկ աղբյուրից կախվածությունից: Ավելին, ուղեղային կենտրոնները չեն կարող, օրինակ, հենվել բացառապես անդամավճարների վրա, ոչ էլ հրապարակումներից կամ ծառայություններից ստացվող եկամուտների վրա: Նվիրատվությունները, մեկենասությունը, կորպորատիվ աջակցությունն անհրաժեշտ են նրանց գոյատևելու համար: Անհատների ներդրումը բավականին բարձր է այն կազմակերպություններում, որոնք ունեն անդամության մարմիններ³³⁰:

ՀՀ ամենահայտնի ուղեղային կենտրոններից մեկի՝ Կովկասի ինստիտուտի կողմից պատրաստված

³²⁹ CAF World Giving Index 2016, p. 34 // URL: https://www.cafonline.org/docs/default-source/about-us-publications/1950a_wgi_2016_report_web_v2_241016.pdf?sfvrsn=4
³³⁰ **Md. Rahat Hasan**, Foreign Policy and Strategic Issues: Think Tanks in US and South Asia // New Century Publications, New Delhi, 2012, p. 5.

գեկույցում Զայաստանում միջազգային կառույցների կողմից հետազոտությունների \$իսանսավորումը բաժանվում է 6 կատեգորիայի: *Առաջին կատեգորիան* ներառում է միջազգային կամ եվրոպական կազմակերպությունների տեղական և տարածաշրջանային բյուրոները, որոնց համար հետազոտական նախագծերին աջակցություն առաջնահերթությունն է: Դրանց մեջ կարելի է առանձնացնել ՄԱԿ-ը, ԵՄ-ը, Եվրոպայի խորհուրդը, ԵԱՀԿ-ն, Զյուլսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ), Զամաշխարհային բանկը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, ԱՄՅ-ն և այլն: *Երկրորդ կատեգորիան* ներառում է ԶՅ-ում արտերկրի դեսպանատները, հիմնականում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լեհաստանի, Ծվեյցարիայի և Յունաստանի: Դրամաշնորհների մեծությունը տատանվում է 5-10 հազար ԱՄՆ դոլլարի շրջանակներում: Ինչպես նշված է գեկույցում, դեսպանատներն ունեն որոշակի քաղաքական օրակարգեր, իսկ դրանց դրամաշնորհային ծրագրերը հիմնականում կայուն չեն: *Երրորդ կատեգորիայի* մեջ են մտնում զարգացման գործակալությունները, ինչպիսիք են՝ *USAID-ն, SDC-ն, DFID-ն, GTZ-ը, SIDA-ն* և այլն, ինչպես նաև կազմակերպություններ, որոնք գործում են մշակույթի ոլորտում, ինչպես, օրինակ՝ *British Council* և *American Council*-ը: Տվյալ կազմակերպությունների դրամաշնորհները հիմնականում տրամադրվում են երկարաժամկետ կտրվածքով և ուղղված են ենթակառուցվածքների ստեղծմանը: Վերջիններս աջակցում են հետազոտություններին՝ որպես մարդու իրավունքների ոլորտի, քաղաքացիական հասարակության զարգացման, հակամարտությունների կարգավորման, գյուղական շրջանների զարգացմանն ուղղված նախագծերի քաղադրիչ: Այս նախագծերն աջակցում են ներուժի

ավելացմանը կամ սոցիալական գիտությունների կարողությունների զարգացմանը, փորձագետների, ուսանողների փոխանակման և երիտասարդ գիտնականների համար կրթաթոշակային ծրագրերին: *Չորրորդ կատեգորիայի* մեջ են մտնում թեմատիկ կազմակերպությունները, ինչպես օրինակ՝ *International IDEA, The International Organization for Migration, World Vision Armenia, NDI, IREX, Environmental Public Advocacy Center, Open Society Institute* և այլն: Դրանց մեծամասնությունն ակտիվորեն գործում են ՀՀ-ում անցյալ դարի 90-ական թվականների կեսերից և վերջերից: Ամենաակտիվ կազմակերպություններից մեկը՝ *Open Society Institute Assistance Foundation of Armenia*-ն, աջակցում է մեդիա-և ախագծերին, կրթության և փոխանակմանը, հասարակական (նչ կառավարական) կազմակերպությունների զարգացմանը, եվրոպական ինստիտուտների հետ փոխգործակցությանը, իրավական և դատական բարեփոխումներին: *Յինգերորդ կատեգորիայի* են վերաբերում Գերմանիայի քաղաքական հիմնադրամները, ինչպիսիք են «Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամը», «Ֆրիդրիխ Նաումանի հիմնադրամը», «Յենրիխ Բյոլի հիմնադրամը» և այլն: Նման կազմակերպությունների ունեցած են մտնում գիտաժողովների ֆինանսավորումը, քաղաքական կուսակցությունների ակտիվիստների վերապատրաստումը, ընտրական համակարգի բարեփոխումը, մշտադիտարկումները և այլն: Վերջին՝ *վեցերորդ կատեգորիան* հատուկ է ՀՀ-ի համար և ներառում է հայկական ավանդական քաղաքական կուսակցությունների կողմից աջակցություն ստացող հայկական Սփյունքի կազմակերպությունները, որոնք մասնաճյուղեր ունեն տարբեր երկրներում: Այս կատեգորիայում պետք է դասել «Հայկական ընդհանուր բարեգործական միությունը», «Թեքեյան հիմնադրամը» և այլն³³¹: Մասնավորապես *Manoogian Simone*

³³¹ An Assessment of Research Capacities in Social Sciences and Humanities in Armenia // Caucasus Institute Research Papers, N 4.

Foundation-ը բարեգործության նպատակով ՀՀ-ում և արտերկրում հետազոտական նախագծեր է հովանավորում հայագիտության ոլորտում³³², *Nazarian Family Foundation*-ը տարեկան շուրջ 30 դրամաշնորհ է տրամադրում՝ էթնոլոգիայի և բարձրագույն կրթության ոլորտում հետազոտություններ իրականացնելու համար, որոնցից օգտվում են ԱՄՆ-ի և ՀՀ քաղաքացիներն ու կազմակերպությունները³³³ և այլն:

Պետք է նշել, որ անկախ ուղեղային կենտրոնների ֆինանսական հոսքերը մեզանում մնում են վերլուծության համար ամենաբարդ հարցերից մեկը: Հայկական ուղեղային կենտրոնների ներկայացուցիչները, որպես կանոն, չեն կիսվում նման տեղեկատվությամբ, բաց, հրապարակային աղբյուրներում ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակ է, իսկ ուղեղային կենտրոնների համացանցային պաշտոնական կայքերի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ վերջիններիս տարեկան հաշվետվությունները, որպես կանոն, բացակայում են կամ մի քանի տարվա վաղեմություն ունեն: Այնուամենայնիվ, կարելի է հիշատակել հանրային հաշվետվողականությամբ դրականորեն տարբերվող ուղեղային կենտրոններից երկուսին՝ «Տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին և «Կովկասի ինստիտուտ» հաստատությանը: Մասնավորապես Տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտը, որը գլխավորում է ՀՀ-ում հայտնի ամերիկահայ քաղաքագետ Ռ. Գիրագոսյանը, իր 2015 թ. հաշվետվության մեջ նշել է, որ

Yerevan, February 2011, pp. 26-28. URL: http://c-i.am/research/paper%204_eng.pdf
³³² *Demas K.*, Manogian Simone Foundation gives \$ 1.2 million for Armenian Studies // URL: http://www.ur.umich.edu/0708/Nov19_07/24.shtml
³³³ *Սիմավորյան Ա.*, ԱՄՆ հայկական հիմնադրամները // «ԳԼՈՒԲՈՒՍ», N 8-9 (65-66), 2015, էջ 63:

դրամաշնորհներ է ստացել Եվրոպական հանձնաժողովից (շուրջ 9 հազար ԱՄՆ դոլլար) «Եվրասիա-համագործակցություն» հիմնադրամից (Յայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների բարելավման գործընթացին նպաստելու համար՝ շուրջ 42 հազար ԱՄՆ դոլլար), *Black Sea Trust for Regional Cooperation* կազմակերպությունից (Յայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների բարելավմանը նպաստելու նպատակով՝ շուրջ 21 հազար ԱՄՆ դոլլար), *Academic Swiss Caucasus Net* կազմակերպությունից (հետազոտական նախագիծ՝ շուրջ 25,5 հազար դոլլար)³³⁴: Կովկասի ինստիտուտի գործունեության վերաբերյալ տարեկան 2015 թ. հաշվետվության մեջ որպես \$ ինանսական աղբյուրներ նշված են «Academic Swiss Caucasus Net» կազմակերպությունը (տարբեր ծրագրերի ընդհանուր գումարը շուրջ 103 հազար ԱՄՆ դոլլար), «Ֆրիդրիխ Նաոմանի հիմնադրամը» (շուրջ 17 հազար ԱՄՆ դոլլար), Բազելի համալսարանը (շուրջ 7 հազար ԱՄՆ դոլլար), Նորվեգիայի Յելսինկյան կոմիտեն (շուրջ 34 հազար ԱՄՆ դոլլար)³³⁵:

Ինչ վերաբերում է տեղեկատվական տիրույթում հայկական ուղեղային կենտրոնների անբավարարակ տիվություն հետկապված հարցին, ապահարկ է նշել, որ թեև հայկական ուղեղային կենտրոնների մեծամասնությունը համացանցում ունի պաշտոնական կայք, սակայն վերջիններիս զգալի մասը բավականին ուշ են թարմացնում տեղեկատվությունն իրենց էջերում: Յայկական ուղեղային կենտրոնների շրջանում ամենատարածված սոցիալական կայքը «Ֆեյսբուքն» է, որտեղ պաշտոնական էջեր ունեն ուղեղային կենտրոնների

³³⁴ Յայաստանի ճանուգումների հիմնադրամի կայքը // URL: <https://www.azdarar.am/announcements/org/131/00157270/>

³³⁵ Յայաստանի ճանուգումների հիմնադրամի կայքը // URL: <https://www.azdarar.am/announcements/org/131/00157486/>

